Բարեկամ

1951 թ. № 7-8

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ

Ա. ԷՋՄԻԱԾԻՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը՝ Երուսաղեմի հայոց պատրիարքական տեղապահ ամենապատիվ Տ. Եղիշե սրբազանին արքություն շնորհելու մասին 3

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը 5

ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, Սուրբ և բարի ձեռնարկ . 8

Անտիոքի, Ռուսաստանի, Ռումինիայի և Բուլղարիայի ուղղափառ եկեղեցիների դիմումը ողջ աշխարհի քրիստոնյաներին . . . 10

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ շնորհավորական հեռագիրը Քենտերբերյան տաճարի վանահայր Հյուլետտ Ջոնսոնին՝ խաղաղության Միջազգային Ստալինյան մրցանակով պարգևատրվելու կապակցությամբ և նրա պատասխանը 13

ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, Էջմիածնի պատվիրակությունը Անթիլիասում 14

ՌՈՒԲԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ, Եպիսկոպոսների ձեռնադրություն 23

ԹՂԹԱԿԻՑ, Զրույց Երուսաղեմի հայոց պատրիարքական տեղապահ գերաշնորհ Տ. Եղիշե եպիսկոպոս Տերտերյանի հետ՝ Մայր Աթոռից և Մայր Հայրենիքից իր տպավորությունների մասին . . . 36

ՎԱՉԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ, Շողակաթ լուսո խորան՝ Էջմիածին 39

ՆՈՐԱՅՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԾՈՎԱԿԱՆ, Երևան (բանաստեղծություն) . . 41

ՌՈՒԲԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, Ամենայն Հայոց Հայրապետությունը և մեր թեմերը 42

ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, Գիոսկորիդեսի պատառիկը . . . 44

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ, «Բարձրաքաշ» վանքը և նրա վիմագրությունը . . . 55

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ 62

Հ. ԱԲԱՄՅԱՆ, Նոր-Արարկիրում 64

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ 72

ՆՈՐԱՅՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՐՅԱՆ, Համառոտ ակնարկ հայ Երուսաղեմի վրա 77

Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի . . . 81

Հանգիստ Կոստանդնուպոլսի պատրիարքական տեղապահ Տ. Գեորգ արքեպիսկոպոս Արսլանյանի 89

Երվանդ Շահազիզ 91

Վեռն Աճեմյան 93

Ա. Ա., Նոր հրատարակություններ—«Հայ ժողովրդի պատմություն», I-ին մաս 94

Գիտական և գեղարվեստական նոր հրատարակություններ . . . 95

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀՕՑԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ՍՍՍԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magasine „Etchmiadzin", Armenia, USSR

Երևան, 1951 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՑ Զ.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ՝ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԻՇԵ ՍՐԲԱԶԱՆԻՆ ԱՐՔՈՒԹՅՈՒՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԵՈՐԳ ԾԱՌԱՑ ՑԻՍՈՒՍԻ ԳՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ՏԵՎԱՆ ԵՒ ԿԱՄՈՒՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ՆԱԽԳԼԽԱՎՈՐ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՑ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐՔՈՅ ԿԱԹՈՂԻԿԻ ԷՋՄԻԱԾՆԻ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ԵՂԻՇԷ ՍՐԲԱԶԱՆԻՆ, ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀԻՆ ՍՐԲՈՅՆ ՍԱՂԻՄԱՅ, ՀԱՐԱԶԱՏԻ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՍԻՐԵԼԻ ԶԱՒԱԿԻ ՄԵՐՈՒՄ, ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Հոգով ուրախ եմ, որ առիթ ներկայացավ անձամբ տեսնելու Ձեզ և ճանաչելու Ձեր հոգու բարոյական և մտավոր կարողությունները, Ձեր խորարափանց միտքը, Ձեր զգայուն սիրտը, Ձեր հայրենասիրությունը, Ձեր ժողովրդասիրությունը, Ձեր զորավոր վերաբերմունքը նանդեպ Ս. Էջմիածնի և Սովետական նորածին Հայրենիքի, Ձեր ոգևորությունն ու ճիգացումը Հայրենիքի վերելքով և Ձեր հաստատուն կամքը, որ գրավական է մեզ համար, թե Ձեր վսեմ և ազնիվ զգացմունքները ու գաղափարները տևական պիտի լինեն և հաստատուն և ոչ՝ անապատի եղեգի նման՝ քամու հուսանքով շարժուն:

Ձեր այս առաքինությունները և Ձեր դիրքն ու կոչումը թելադրում են Մեզ՝ այս Հայրապետական կոնդակով շնորհել Ձեզ արքության պատիվ՝ ի բարի վայելումն:

Մաղթում ենք Փրկչին, որ՝ Իր քառոգած և սիրած վայրերը, Իր վեհ ապրումների ճիշտատակարանը և այնտեղ ապրող Իր սիրած ժողովրդի սերունդը՝ Իր հովանու տակ անսասան պահե:

Հայցում ենք Ամենակալին, որ հայ հավատացյալ ժողովրդի և համայն քրիստոնեության Սրբություն-Սրբոցը՝ Ս. Երուսաղեմն իր վանքերով և հավատացյալ ժողովրդով հավետ պահպանե:

Աղոթում ենք Բարձրյալին, որ Զեզ արժանացնե Ս. Երուսաղեմի պատրիարքական Աթոռի արժանավոր Գահակալը դառնալու և արևշատություն ու կամքի կորով պարգևե՝ Ձեր լուսավոր գաղափարները ու Ձեր սուրբ ուխտը ի կատար ածելու և Ձեր սրտի խորքում արմատ ձգած սիրո կապը՝ Ս. Էջմիածնի և Հայ Հայրենիքի հետ՝ անբաժան ու անխաթար պահե:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՎ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տրված կոնդակս ի 18-ն յուլիսի 1951
Փրկչական ամի և ի Տումարիս Ռն,
յԵրեւանոյ ամի Հայրապետութեան մերոյ,
ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԱՑՐ ՍԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆԸ ԵՎ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին միասնական Եկեղեցի է, թե՛ իր կազմակերպչական դրվածքով և թե՛ բարոյական-գաղափարական բարձր սկզբունքով: Միասնականության այդ գաղափարը բխում է քրիստոնեական վարդապետության էությունից: Փրկչի մեզ ավանդած յուրաքանչյուր խոսքի մեջ սիրո, միասնականության և համերաշխության պատվիրանն է խտացված:

Հայոց փոքրիկ, բայց ինքգույն եկեղեցին, իր ուղեգրած գիտակից միասնականության գաղափարին է ամենից շատ պարտական, որ կարողացել է տասնյակ դարեր շարունակ դիմանալ անցյալի չարաղետ փորձությունների, դիմադրել ներքին և արտաքին պառակտողական ուժերին և հարատևել վաղ քրիստոնեական անաղարտ և հարազատ նկարագրով: Ճիշտ է, մեր եկեղեցու պատմության մեջ եղել են մոլի, փառասեր անձինք, որոնք ցնցիմ եսասիրությամբ տարված, փորձել են եկեղեցական այս կամ այն հատվածը շեղել միասնականության ճշմարիտ ուղուց, սակայն հասարակական կարծիքը և գիտակից ու պարտաճանաչ հոգևորական ընտրանին իրենց վճռական խոսքն են ասել և փառասեր այդ անձանց փորձերն ապարդյուն են անցել:

Միասնականության և համերաշխ գործակցության ոգով են համակված եղել Հայոց եկեղեցու բոլոր եկեղեցականները, բոլոր թեմերը, պատրիարքարանները և կաթողիկոսական աթոռները: Մեր եկեղեցու բազմերախտ և հեղինակավոր գործիչները միշտ էլ ստտարել են միասնականության վեհ գաղափարին ու շեշտել այն: Միասնականության և համերաշխ գործակցության գաղափարի օրինակելի կիրառումը մենք տեսնում ենք, առանձնապես, Ամենայն Հայոց Հայրապետության և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության փոխհարաբերությունների միջև:

Սկսած այն օրից, երբ առաջացավ Կիլիկիայի կաթողիկոսական աթոռը, և Ամենայն Հայոց Հայրապետությունը վերահաստատվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, միասնականության գաղափարը հայ եկեղեցիներում ոչ միայն չթուլացավ, այլ ավելի շեշտվեց: Կիլիկիայի կաթողիկոսական աթոռի զուգահեռ գոյությունը չդիտվեց որպես հակաթոռ Ամենայն Հայոց Հայրապետությանը, այլ նրա անբաժանելի, օրգանական մասը:

Եվ երկու աթոռների միջև հաստատվեցին շատ սերտ և մտերմական հարաբերություններ:

Կիլիկիայի կաթողիկոսական աթոռի գոյությունը ոչ թե թուլացրեց, այլ ավելի քան ուժեղացրեց տարագիր հայության շրջանում վաղուց արմատացած այն հավատքը, որ Ս. Էջմիածինն է հանդիսանում այն լուսավոր խարիսխը, որ հայրենասեր հայությունը կապում է իր հայրենի սրբություններին: Արդարացի է մեր պատմագիրներից Առաքել Դավրիժեցին ճշել, որ «ի վերայ Աջոյն և Էջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ կան»: Այդ հավատքի հիման վրա է ստեղծվել ազգային այն ավանդությունը, որ բառացա-

զար Արագածի բարձունքին հայ ժողովրդի մշտավառ կանթեղն է կախված, որի մեջ վառվող յուղը սրբի արցունքներն են: Հայ հավատացյալ ժողովրդի սրտում միշտ վառ է մնացել իր որդիական սերը դեպի Ս. Էջմիածինը, իսկ որդեսեր մայրը արել է հնարավոր ամեն ինչ՝ վառ պահելու իր զավակների հույսն ու հավատը:

Հավատացյալ ժողովրդի այս նվիրումի հարազատ բարգմանն է հանդիսացել հայ հոգևորականությունը: Հայ եկեղեցական բոլոր բեմերը և կաթողիկոսական աթոռները անխիր ընդունել են Ս. Էջմիածնի գերագանությունը, ենթարկվել են ազգային-եկեղեցական ժողովների որոշումներին, իսկ հասարակական և պավանական կարևոր հարցերում միշտ էլ ակնկալել են Ամենայն Հայոց Հայրապետության հրահանգները: Եվ Էջմիածինը չի բերացել իր գորովագութ մորը կատարել իր որդիների նկատմամբ: Տեղին է այստեղ հիշել Տիրոջ խոսքերը. «Ցո՞ որ ի ձէնջ հայր՝ խնդրիցէ որդի իւր ձուկն, միթէ փոխանակ ձկան օ՞ձ տայցէ նմա: Եւ կամ խնդրիցէ ձու, միթէ կարի՞ն տայցէ նմա»:

Եղել են, իհարկե, Կիլիկիայի և Էջմիածնի գահակալների մեջ առանձին և ոչ հեռատես ու շրջահայաց անձինք, որոնք առաջնորդվել են ոչ այնքան Հայ եկեղեցու ընդհանուր շահերով, որքան իրենց անձնական փառքով, սակայն դրանք միայն առանձին անհատներ են եղել և անկարող են գտնվել ամենափոքր իսկ չափով փոխել միասնականության և հաստատուն գործակցության բնական ընթացքը:

Ս. Էջմիածնի և Կիլիկիայի կաթողիկոսական աթոռների միջև գոյություն ունեցող հարաբերությունները ավելի անկեղծ և սեռ բնույթ ստացան վերջին հիսնամյակում: Այդ ուղղությամբ մեծ գործ են կատարել առանձնապես մեծանուն երկու հայրենասեր գահակալներ՝ Խրիմյան Հայրիկը և Սահակ Բ. Կաթողիկոս Խապայանը: Այդ երկու լուսամիտ հայրապետների սկսած շնորհակալ գործը շարունակեցին Բաբգեն աթոռակից և Խորեն կաթողիկոսները: Այդ հարաբերությունները իրենց բարձրագույն աստիճանին հասան ներկայիս Ամենայն Հայոց նամեծ Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ.ի և Մեծի Տանն Կիլիկիո շնորհազարդ Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գարեգին Ա.ի օրոք: Ս. Էջմիածնում հայրենասիրական և եկեղեցական լավագույն ավանդություններով դաստիարակված, գաղափարապես կոփված և հայ ժողովրդին անձնուրաց ծառայելու պատրաստ այս երկու մեծ հովվապետները արել և անում են իրենց կարելիության գերագույնը: Նրանց ամբողջ ջանքն ու աշխատանքն է եղել, որպեսզի անխախտ և անաղարտ պահվի Հայաստանյաց Առաքելական ինքնանկախ Ս. եկեղեցին: Որպես հայրենասեր հոգևորականներ, նրանց տարիների մաղթանքն է եղել, որ ավելի ծաղկի և բարգավաճի իրենց նվիրական Հայրենիքը՝ Սովետական Հայաստանը և աշխարհի հեռավոր ծայրերում ցրված հայությունը վերադառնա Մայր Հայրենիքի գիրկը:

Թե ինչպիսի անկեղծ և սեռ համագործակցության ոգի են ցուցաբերել այդ երկու լուսամիտ հայրապետները՝ կարելի է դատել հետևյալ փաստերից:— Երբ Ս. Էջմիածնում գումարվեց 1945 թվի Ազգային-Եկեղեցական ժողովը և օրակարգում դրված էր Ամենայն Հայոց Հայրապետի ընտրության հարցը, Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսը իր բեմերի պատգամավորներով միասին մասնակցեց ընտրությանը, ինքն անձամբ նախագահեց ժողովներին և բարձր դնահատականով առաջարկեց իր սրտակից ընկերոջ բեկնածությունը: Իսկ 1948 թվին երբ տոնվեց Գարեգին Կաթողիկոսի ութսունամյա հոբելյանը, Ամենայն Հայոց Հայրապետը իր գործուն մասնակցությունը բերեց հոբելյանին, հատուկ կոնդակ գրեց այդ առթիվ՝ դրվատելով Գարեգին Կաթողիկոսի մեծագույն արժանիքները. «Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանը,— կարդում ենք Վեհափառ Հայրապետի կոնդակում,— Հայ եկեղեցու եզակի դեմքերից մեկն է հանդիսանում, եզակի իր եկեղեցաշինարարական, հայրենասիրական, գրական-գիտական գործունեությամբ: Նրա անունը ծանոթ է ոչ միայն Հայրենիքին ու հայկական գրեթե բոլոր գաղութներին, այլև օտարազգի հասարակական և գիտական շրջաններին: Որպես առաքինի ու շիտակ եկեղեցական, որպես առողջ մտքի ու լայն սրտի տեր անձնավորություն, նա վայելում է ոչ միայն հայերի, այլև բարեկամ ժողովուրդների սերն ու հարգանքը: Մեծ է նրա ավանդը Հայ եկեղեցու բարգավաճման և հայ արվեստի, մշակույթի, պատմության ուսումնասիրության գործում»:

Այդ բոլորից հետո, հասկանալի է, թե որքա՜ն մեծ վիշտ պատճառեց Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսին, երբ Անթիլիասի Կաթողիկոսարանից հեռագիր ստացվեց, որ Տ. Տ. Գարեգին Ա. շնորհազարդ Կաթողիկոսը ճիվանդացել ընկել է մահճի: Այդ լուրն ստացվելուց անմիջապես հետո, Վեհափառ Հայրապետը կարգադրեց միաբանությանը աղոթք մատուցանել Մայր Տաճարում Գարեգին Կաթողիկոսի առողջության համար և ինքը քաջալերական հեռագիր ուղարկեց Անթիլիասի միաբանությանը: Սակայն հե-

տազայում, երբ Ամենայն Հայոց Հայրապետը տեղեկացավ, որ Գարեգին Կաթողիկոսի հիվանդությունից ապաքինումը դանդաղ է բնթանում, անհրաժեշտ համարեց հատուկ պատգամավորություն ուղարկել Անթիլիաս, պատգամավորության կազմում նշանակելով Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանին և հայագետ պրոֆեսոր-դոկտոր Աշոտ Արբահամյանին:

Ամենայն Հայոց Հայրապետի նրահանգով պատգամավորությունը մեկնել է Անթիլիաս և արժանացել Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսի բացառիկ գոհունակությանը և հարգանքին: Գարեգին Կաթողիկոսը շատ բարձր է գնահատել իր հոգևոր եղբոր բացառիկ ուշադրությունը իր նկատմամբ և ժողովրդի ու միաբանության ներկայության հուզմունքով հայտարարել է. «Աստված կյանք տա, երկա՜ր կյանք մեր Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ.-ին, որ եղբայրական շնորհք, օրհնություն ցույց տվեց: Նա իր եղբորը հիվանդասենյակ-պատգամավոր է ուղարկել... սա մեր պատմության մեջ չտեսնված երևույթ է»:

Պատգամավորությունը ամիս ու կես Անթիլիասում գտնված ժամանակ, բացառիկ սիրով է ընդունվել Անթիլիասի միաբանության կողմից, որ բոլոր տեսակ դյուրություններ է ստեղծել նրա համար, նյութասիրել է, մեծարել: Միաբանության պատգամավորության նկատմամբ ունեցած վերաբերմունքի հարազատ արտահայտությունն է պատգամավորության Անթիլիաս ժամանման կապակցությամբ գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոսի հետևյալ հայտարարությունը. «Ուրախ ենք այսօր Ձեզ մեր հարկի տակ ընդունելու համար: Մեկ է մեր եկեղեցին, մեկ են մեր աթոռները, բոլորս մեկ ենք հոգիով և սրտով: Ձեր ներկայությունն ավելի կգորացնե մեր միությունը: Ձեզմե կասենք մեր կարոտը վսեմական Արարատին, հավերժական Ս. Էջմիածնին և անմահական Հայրենիքին»: Անչափ բարեկամական վերաբերմունք են ցույց տվել տեղի հայկական բերրեն ու ամսագրերը՝ «Հասկ», «Զարթոնք», «Արարատ» և ուրիշները:

Լիբանանի բազմահազար հայությունը, որը պատգամավորության Անթիլիասում գտնված օրերին ուխտատեղի է դարձրել Անթիլիասը, խանդավառությամբ է ընդունել պատգամավորությանը: Բազմաթիվ հայրենակարոտ հայրենասերներ եկել և հետաքրքրվել են Հայրենիքով, Մայր Աթոռով, հայրենազարդ բարեկամներով:

Պատգամավորությունը ի տես այդ ամենի, վերադարձել է անչափ խանդավառված:

Ամենայն Հայոց Հայրապետի ներկա պատգամավորության առաքումը դեպի Անթիլիաս հիվանդասենյակ, մի նոր ապացույց է այն սերտ ու սեռն համակցության, որ գոյություն ունի երկու աթոռների՝ Ամենայն Հայոց Հայրապետության և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միջև:

Երկու աթոռների միջև գոյություն ունեցող կապը զարդված է փրկչավանդ միասնականության բարձր գաղափարներով, ամրացված է այն դարերի բնթացքում ողջմիտ ձգտումներով և այժմ միս և արյուն է դարձել ամեն մի հայրենասեր և էջմիածնասեր հավատացյալի մոտ: Կասկած լինել չի կարող, որ զնալով այդ կապը ավելի պիտի սերտանա և արդյունավորվի:

Աստված առողջություն և երկար կյանք տա մեր երկու հայրապետներին՝ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գարեգին Ա. շնորհազարդ Կաթողիկոսին և Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսին, որոնք մեր եկեղեցու ավանդական սրբությունների դրախտեղիր պահապաններն ու պաշտպաններն են հանդիսանում:

Աստված թող հաստատուն պահի Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐՈՂՆԵՐԻ ԺԱԿԱՏՈՒՄ

ԳԵՈՐԳ Զ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՍՈՒՐԲ ԵՎ ԹԱՐԻ ՁԵՌՆԱՐԿ[1]

Գոհ ենք, որ հնարավորություն է տրվում Մեզ՝ Հայ Եկեղեցու ալեոր Հովվապետիս, խոսել աշխարհի և մեր վտարանդի ժողովրդի հետ, պարզել նոցա Մեր հայացքը աշխարհն ալեկոծող հարցերի մասին, որ զգուշանան, գայթակղությունից հեռու կենան և ճշմարիտ ճամբով ընթանան՝ ի սեր միլիոնավոր մարդկանց կյանքի փրկության, մարդու ստեղծած նյութական և հոգևոր կուլտուրայի պանպանության և նորա երջանկության:

Երկու տարի է, ինչ աշխարհը ալեկոծված է. մարդկությունը հուզված և խաղաղությունը պայքարում է պատերազմի դեմ:

Մարդկության ստվար մեծամասնությունը խաղաղություն է աղաղակում, որովհետև ճաշակել է պատերազմի չարիքները, ըմպել է պատերազմի դառնության բաժակը և քամել նորա մրուրը:

Նա գիտե, որ պատերազմ նշանակում է՝ միլիոնավոր մարդկանց մահ՝ շեն քաղաքների և գյուղերի կործանումն ու ավեր, և կուլտուրայի ու մշակույթի արժեքավոր ստեղծագործությունների ոչնչացումն:

Նա գիտե նաև, որ խաղաղություն նշանակում է՝ ապրել, ստեղծագործել և երջանիկ կյանք վայելել:

Կան նաև պատերազմ աղաղակողներ, որոնք, բարեբախտաբար, փոքրաթիվ են: Այդպիսիները՝ ֆրիստոնյա անունը կրող սուտ ֆրիստոնյաներ են, կուլտուրայի պաշտպան ձևացող կուլտուրայի թշնամիները, մարդասիրության գաղափար շահագործող մարդատյացները, ժողովրդասեր ձևացող ժողովրդի թշնամիները: Նոքա ապրում են ընչասիրության և փառասիրության տենչով և աշխարհակալության անհագ փափագով: Նոքա աշխարհի վայելչությամբ հղփացած գերհարուստներն են և նոցա հյու հպատակները:

Մարդկության արդար դատը՝ խաղաղության պաշտպանությունը՝ պիտի վարեն Միավորված Ազգերի Կազմակերպությունը, որ հիսուն պետությունների կողմից հաստատված կանոնադրությամբ՝ կոչված է միջազգային կենսոտ հարցերը խաղաղ ճանապարհով լուծելու, աշխարհում խաղաղություն հաստատելու և պետությունների մեջ համագործակցություն ստեղծելու: Սակայն, դժբախտաբար, նա իր կոչմանը հավատարիմ չէ:

Հայ ժողովուրդը, որ իր պատմական անցյալում լիապես ճաշակել է պատերազմի դյուցազնությունը, որ՝ առաջին Համաշխարհա-

1. Վեհափառ հայրապետի այս հոդվածը տպագրված է «В защиту мира» («Հանուն խաղաղության պաշտպանության») ամսագրի 1951 թվի հուլիսի № 2-ում: – ԽՄԲ.

յին պատերազմում մեկ ու կես միլիոն զոհ է տվել և երկրորդ Հայրենական պատերազմում իր հարազատների և բազմաթիվ սիրասուն զավակների կորուստը ողբացել՝ խաղաղություն է պահանջում:

Իմ սիրելի՝ վտարանդի զավակներս, ի սեր Հայ Ազգի և Հայրենիքի, ի սեր ազատության և անկախության՝ խաղաղություն պահանջեցեք և ձեր ստորագրություններով վավերացրեք ձեր արդար և իրավացի պահանջը:

Հայ Եկեղեցին, որ միշտ հավատարիմ է եղել Քրիստոսի ավետարանի վարդապետությանը՝ միշտ աղոթել և աղոթում է «ՎԱՆՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻ»:

Հայ Եկեղեցին, որ՝ իր գոյության ամբողջ ընթացքում՝ երազել է խաղաղություն և խաղաղության օրերին ստեղծել է իր ազգային կոյանուրան, որի շնորհիվ պահպանել է իր Ազգի գոյությունը և փառք ու պատիվ վաստակել, նա այսօր էլ խաղաղության ջերմ կողմնակից է և հակառակ պատերազմին:

Հայ Եկեղեցին, հանուն խաղաղության պաշտպանության, սիրով մասնակցեց՝ Ռուս Պրավոսլավ Եկեղեցու Սրբազան Պատրիարքի նախաձեռնությամբ՝ Ռուսաց, Վրաց և Հայոց Եկեղեցիների երեք Պատրիարքների մասնակցությամբ կազմված խորհրդակցության, ուր որոշվեցավ դիմել բոլոր քրիստոնեական եկեղեցիների Պետերին և խնդրել նոցա, որ իրենց հովվության ներքո գտնված համայնքներին առաջարկեն պաշտպանել խաղաղության գաղափարը՝ ընդդեմ պատերազմի:

Այսօր էլ Հայ Եկեղեցին, ուր հայ կա և Հայ Եկեղեցի, հորդորում է պաշտպանել խաղաղությունը ընդդեմ պատերազմի՝ համոզված լինելով, որ խաղաղությունը բերում է կյանք և երջանկություն, իսկ պատերազմը՝ ավեր և մահ:

Աշխարհի բոլոր ժողովուրդների անհանգիստ կամքն ու որոշումն է՝ պայքարել հանուն խաղաղության և նոցա պահանջը՝ հինգ մեծ պետությունների խաղաղության Դաշինքի կնքումը: Մենք, Մեր ամբողջ էությամբ, ողջունում ենք այս մարդասեր ձեռնարկը և Մեր ամբողջ էությամբ միանում նորան՝ և հայտարարում ենք, որ յուրաքանչյուր գիտակից մարդու պարտքն ու պատիվն է ստորագրել այս պահանջի տակ, որովհետև այս պահանջը սուրբ է և բարի՝ և նպատակը արդար ու ազնիվ:

ԱՆՏԻՈՔԻ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ, ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԵՎ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ ՈՂՋ ԱՇԽԱՐՀԻ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻՆ

Քրիստոսի ծննդյան 1951 թվի ամռանը տեղական օրթոդոքս եկեղեցիների արքեպիսկոպոսներս նիստ գումարեցինք ռուսական ռազմավառության օջախի մեջ և «նոգով միասնականությամբ» զգալով մեր ժամանակի սարսափելի անը, անհրաժեշտ համարեցինք աշխարհի քրիստոնյաներին դիմել նոր բոցավառ կոչով՝ բազմապատկելու իրենց ճիգերը աշխարհի խաղաղության պաշտպանության գործի մեջ և հավատի ու խղճի, սիրո և ողջմտության հանդեպ իրենց պարտականության ճանապարհով կատարումով անկարելի դարձնել նոր համաշխարհային պատերազմի դժոխային զալումը մեր կյանքում:

Բոլորիս ծանոթ է՝ թե որքան լրջորեն սրված է միջազգային կացությունը, որն սպառնում է խաղաղությանը իր կորստաբեր հետևանքներով: Կորեայի անողոք պատերազմի անհելի հրդեհը ոչնչացրեց ավելի քան մեկ միլիոն մարդկային կյանք և բոլորովին փչացրեց կորեական խաղաղ ժողովրդի բարությունը: Նման սպանիչ փորձիկ կախված է նաև մնացյալ ժողովուրդների գլխին: Այս կարելի է զգալ այն բանից, թե ինչպես ագրեսիվ պետությունները, Միացյալ Նահանգների գլխավորությամբ, զինվում են՝ տարապանքների և թշվառության մատնելու ժողովուրդներին ներկայումս և ամբողջական ոչնչացման դատապարտելով ապագային: Վջտի անլուր ծանրությունը արդեն իսկ պատրաստ է իջնելու մարդկության վրա, սակայն աղետների սպառնալիքի տակ գտնվող մարդիկ, հանուն ճշմարտության, արդարության և ազատության, ձգտում են իրենցից թոթափել ճնշումի, անարդարության և ցեղային անհավասարության շղթաները: Նրանք եռանդուն կերպով ջանում են իրենցից թոթափել պատերազմը մոտեցնող սպառազինումների ավելի ևս ծանր շղթաները և պահանջում են խաղաղության ուխտի կնքումը մեծ տերությունների միջև: Այս պահանջի տակ դրված միլիոնավոր ստորագրությունները չարիք խորհողների համար սարսափազդու ճզոր ուժի են վերածվում և վկայում են՝ թե բարի կամքի տեր մարդիկ ցանկանում են խաղաղության բազմվորության և ուզում են, որ «այն գա այստեղ, և ոչ թե հեռավոր մի վայր, գա հիմա և ոչ թե հեռավոր ժամանակի մեջ»:

Ի տես այս երևելի ձգտումների, մենք չենք կարող մեկուսի մնալ աստվածային նախախնամության ճամբից, որը մարդկությունը դեպի փրկությունն է ուղղում, առանց խանգարելու նրանց ազատությունը: Մենք տես-

նում ենք, որ այստեղ և այժմ «խաղաղության հաստատման պայքարի մեջ արդեացան ազատությունը» և մարդասիրությունը, որոնք գալիս են փոխարինելու ճնշումն ու անգթությունը և հանդիսանում տեսնում ենք խաղաղության փրկությունը աստվածային գործի մեջ, բարի կամքի տեր մարդկանց ազատ գործակցությունը: Իզուր չէ, որ բազմաթիվ դարերի ընթացքում Աստվածաշնչի էջերից կոչ է հնչում ամեն տեսակ չարիքներից ազատվելու և այնպիսի մի վիճակի, երբ մարդիկ «ձուլեսցեն զսուսերս իւրեանց ի խոփս, և զսուինս իւրեանց ի մանգաղս, ոչ առնուցու ազգ յազգի վերայ սուր, եւ ոչ ևս ուսանիցին տալ պատերազմ» (Եսայի, Բ 4): Քրիստոնեական եկեղեցին չի խուսափի մարդկության ներկայի կարիքներից, այլ նրանց է ծառայում իր կյանքի և շնորհի փոխանակությունով: Լուսավորված Աստվածորդու մարտիրոսության նշմարտությունով, եկեղեցու այս ծառայությունը կայանում է նրանում, որ քրիստոնյան իր կյանքի մեջ միացնի Աստծու հանդեպ հավատարմությունը իր մարդկային ուժերի արտահայտության հետ: Թշվառության ենթակա և անարդարության դեմ մեր պայքարը մեր՝ քրիստոնյաների մեջ պիտի գտնի և կգտնի բնական դաշնակիցներ: Ավելին, մեր ուղղակի և փրկարար պարտականությունն է մարդկանց և ժողովուրդների միջև խաղաղության ի նպաստ տարված աշխատանքը, որովհետև «ի խաղաղութիւն կոչեաց զմեզ Աստուած» (Ա. թուղթ առ Կորնթացիս, է 15): Որովհետև խաղաղությունը, որի համար պայքարում է մարդկությունը, Քրիստոսի հրամանն է, իսկ մեր քրիստոնեական գործն է կատարել այդ հրամանը:

Այսպիսով, տարբեր համոզմունքների և կրոնի, սակայն միասնական բարի կամքի տեր հարյուր միլիոնավոր մարդիկ, խաղաղության պաշտպանության մեջ միանում են ո՛չ թե արտաքին որևէ դրդումով, այլ բարոյական օրենքի զորությամբ: Այդ պատճառով խաղաղության պաշտպանների շարքերի մեջ են գտնվում նաև մեր տեղական ուղղափառ եկեղեցիները:

Ներկայումս, երբ խաղաղության Ոխտի վրա դրվում են մեծագույն հույսեր, խաղաղության ձեռք բերումը աստվածային կամքով ուղղակի կախում ունի մարդկանց բարի կամքից: Նա կարող է ստիպել մեծ տերությունների կառավարություններին՝ խաղաղության Ոխտ կնքել երկու սիստեմների միասին խաղաղ համակեցության հիման վրա: Երբ տեղի ունենա այս, այն ժամանակ բոլոր ժողովուրդները ազատ շունչ պիտի քաշեն և պիտի ցրվի անվստահության և երկյուղի խավարը և պիտի գան մեր խաղաղության և բարեկեցության օրերը: Այն ժամանակ երկրների միջև հակասություններ պիտի կարգադրվի ո՛չ թե բռնությունով, այլ հշմարտության զորձերով: «Պտուղ արդարութեան խաղաղութեամբ սերմանի այնոցիկ՝ որ առնեն զխաղաղութիւն» (Հակոբոս, Գ 18): Մենք համոզված ենք, որ այս պիտի իրականանա, երբ մեր երկրային կյանքը ղեկավարող բարի կամքը վճռապես դեմ կանգնի խաղաղության թշնամիների մութ խորհուրդներին, և զանազան համոզմունքների տեր մարդկանց միասնականությամբ ապացուցի նրանց իրագործման կատարյալ հնարավորությունը այն հինավուրց ակզբունքի, թե «ոչ լինի զաւակ չարաց, և նրագ ամպարշտաց շիջցի» (Առակ, ԻԴ 20): Այս պիտի լինի, երբ տեղական բոլոր ուղղափառ Եկեղեցիները խաղաղության իրենց Բարոզը հաստատեն՝ խաղաղության Ոխտ կնքելու ընդհանուր պահանջին միանալով: Անա թե ինչո՞ւ, դիմելով մեր միջից բացակա Կոստանդնուպոլսի, Աղեքսանդրիայի, Երուսաղեմի, Հելլադայի, Կիպրոսի, Սարբիայի, Ալբանիայի և Լեհաստանի Եկեղեցիների ազգակալներին, խոր վստահություն ենք հայտնում՝ թե նրանք պիտի օրհնեն

նման նվիրական մի ձեռնարկ, որպիսին միջազգային բոլոր հարցերը խաղաղ միջոցներով լուծելու մասին մեծ պետությունների փոխադարձ համաձայնությունն է:

Այս պիտի իրականանա, ինչպես որ ակնկալվում է, երբ բոլոր դավանանքների քրիստոնյաները մեզ հետ միասին բարձրացնեն աշխարհի ճակատագրի մասին ունեցած մեծ պատասխանատվության գիտակցության մեջ և ընդունեն միակ ուղիղ որոշումը՝ օժանդակելու «ամբողջ աշխարհի միլիոնավոր մարդկանց ձգտումներին, ինչ որ էլ լինի նրանց կարծիքը այն պատճառների մասին, որոնք համաշխարհային պատերազմի» վտանգ են ստեղծում և «օժանդակելու բոլոր պետություններին համար բաց՝ խաղաղության Ուխտի կնքումի պահանջին»:

Սույն օժանդակությունը պիտի լինի գալիք խաղաղության բազավորության մասին մեր ունեցած հավատքի խոստովանությունը, բազավորություն, որը մեզ ավանդվել է այս մասին Տեր Հիսուսից (Հովհ., ԺԴ 27) և դատապարտելու նրանց, ովքեր պաղարյունորեն նախապատրաստում են ատոմական և ջրածնային ռումբեր, միկրոբներ և թունավոր նյութեր, հեղձուցիչ գազեր և միլիոնավոր մարդկանց ոչնչացնելու ուրիշ միջոցներ, հակառակ ատվածային նախազգուշության, թե «զի ամենեքեան որ սուր առնուցուն՝ սրով անկանիցին» (Մատթեոս, ԻՁ 52):

ԱԼԵՔՍԱՆԴՐ՝ Պատրիարք Անտիոքի և համայն Արևելքի.
ԱԼԵՔՍԻ՝ Պատրիարք Մոսկվայի և համայն Ռուսաստանի.
ԿԱԼԻՍՏՐԱՏ՝ Կարողիկոս-Պատրիարք համայն Վրաստանի.
ԺՈՒՍՏԻՆՅԱՆ՝ Պատրիարք Ռումինիայի Ուղղափառ եկեղեցու.
ԿԻՐԻԼ ՓԼՈՎՏԻԼԻ՝ Բուլղարիայի Ուղղափառ եկեղեցու Ս. Սինոդի նախագահի տեղակալ:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՔԵՆՏՐԲԵՐՅԱՆ ՏԱՃԱՐԻ ՎԱՆԱՀԱՅՐ ՀՅՈՒԼԵՍՏ ՋՈՆՍՈՆԻՆ՝ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱԼԻՆՅԱՆ ՄՐՑԱՆԱԿՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՆՐԱ ՊԱՏԱՍԽԱՆԸ

ՔԵՆՏՐԲԵՐՅԱՆ ՏԱՃԱՐԻ ՎԱՆԱՀԱՅՐ ՀՅՈՒԼԵՍՏ ՋՈՆՍՈՆԻՆ

Ողջունում ենք Ձեզ «Ժողովուրդների միջև խաղաղության ամրապնդման համար» Միջազգային Ստալինյան մրցանակով պարգևատրվելու կապակցությամբ՝ խաղաղության պահպանման և ամրապնդման գործում Ձեր մատուցած բացառիկ ծառայությունների համար: Ձեր պայքարը սրբազան պայքար է, որ վարում եք մարդու կյանքի պահպանության, նրա երջանկության և համաշխարհային կուլտուրայի փրկության համար: Փա՞ռք և պատի՞վ Ձեզ: Աղոթում ենք Ամենակալին՝ պարգևելու Ձեզ արեշատություն հանուն Ձեր հետագա բեղմնավոր գործունեության՝ խաղաղության վերջնական հաղթանակի, որ հանդիսանում է մարդկության իղձն ու ակնկալությունը:

ԳԵՈՐԳ Զ.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՆՈՐԻՆ Ս. ԾՈՒԹՅՈՒՆ ԳԵՈՐԳ Զ. ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՍԻՐԵՑՅԱԼ ԵՂԲԱՅՐ Ի ՔՐԻՍՏՈՍ.

Զափազանց դժվար է ինձ արտահայտել այն հաճույքը, որ ես զգացի Ձեր հեռագիրն ստանալով:

Ոչ մի բան ավելի սերտ կերպով չի կապում քրիստոնյաներին միմյանց, որքան նրանց աշխատանքը համաշխարհային խաղաղության և մարդկանց եղբայրության ընդհանուր նպատակի համար: Անձամբ Ձեր և այն մեծ նիեղեցու ջանքերը, որի Գահակալն եք Դուք, խիստ կարևոր քաջալերանք են մեզ Արևմտյան աշխարհում:

Ինձ հանդեպ եղած մեծարանքը բարձր պատիվ է և ջերմագին ողջունելի: Երանի՞ թե ես ավելիին արժանի լինեի: Դրամական պարգևը կօգտագործվի որպես խաղաղության պայքարի ֆոնդ: Այդ կրկնակի պատվաբեր է, որովհետև մրցանակը տրվում է մի մեծ ժողովրդից, որը կռվել է և այնքան արիաբար դեռևս կռվում է խաղաղության համար, որն այնքան փառապանծ կերպով առաջնորդվում է Դենեռալիսիմուս ՍՏԱԼԻՆԻ և իր պաշտոնակիցների կողմից:

Ես երբեք չեմ մոռանա գերազանցապես ազնիվ այն ընդունելությունը Ձեր գեղատեսիլ Վեհարանում, Էջմիածնի Մայր Տաճարում տեղի ունեցած այն հրաշալի օծման արարողությունից հետո:

Ես անկեղծորեն հավատացած եմ, որ այն դատը, որի համար պայքարում եք, պիտի ունենա փառապանծ արդյունք, իսկ վերջնական հաջողության մասին երբե՛ք չեմ կասկածում:

Մնամ Ձերդ հույժ գորովալից ողջույններով՝
Հ. ՋՈՆՍՈՆ

ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԷՋՄԻԱԾՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԹԻԼԻԱՍՈՒՄ

Ի. ԷՋՄԻԱԾՆԻՑ ԴԵՊԻ ԱՆԹԻԼԻԱՍ

Ապրիլի սկզբներում Մայր Աթոռում հեռագիր ստացվեց Մեծի Տանն Կիլիկիո շնորհազարդ Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Ա.ի ծանր հիվանդության մասին։ Հեռագիրը ճընշող տպավորություն թողեց նրա բոլոր բարեկամների, ծանոթների և աշակերտների վրա։ Լուրն առանձնապես հուզեց Ամենայն Հայոց Հայրապետ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսին — չէ՞ որ երկու Հայրապետները Էջմիածնի Գեորգյան Ճեմարանում դպրոցական աշակերտներ էին եղել, միասին սարկավագության կոչումն ընդունել, միասին արտասահման մեկնել ուսանելու և վերադառնալով Մայր Աթոռ, տասնյակ տարիներ աշխատել Ս. Էջմիածնում որպես իրար սրտակից և մտերիմ ընկերներ։

Հնարավորություն չունենալով անձամբ այցելել մահճի մեջ ընկած իր օծակից ընկերոջը, Ամենայն Հայոց Հայրապետը որոշեց, ի հարգանս իր հոգևոր եղբորը՝ Էջմիածնասեր և հայրենասեր Գարեգին Կաթողիկոսին, երկու հոգուց բաղկացած հատուկ պատգամավորություն ուղարկել նրա մոտ տեսության։

Պատգամավորության կազմը որոշելիս, Վեհափառ Հայրապետը նկատի ունեցավ հետևյալ երկու սկզբունքը— ուղարկվող պատգամավորության մեջ անպայման լինի մի բարձրաստիճան հոգևորական և մի հայագետ, և, ապա, ուղարկվող երկու հոգին էլ լինեն Գարեգին Կաթողիկոսի աշակերտներից։ Վեհափառ Հայրապետը հոգևորական անձնավորությունը որոշեց մեզ, որպես Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ, իսկ հայագետներից՝ պրոֆեսոր-դոկտոր Ա. Աբրահամյանին։

Մեզ համար, իսկապես, շատ դժվար էր այդպիսի հեռավոր ճամբորդություն հանձն առնել, նկատի ունենալով մեր տարիքը և առողջությունը, քաղաքական ներկա լարված վիճակի հետ կապված ճանապարհորդական դժվարությունները և այլն։ Սակայն Վեհափառ Հայրապետին չվշտացնելու հանգամանքը և մեր հիվանդ ուսուցչին տեսնելու անզուսպ ցանկությունը, մեզ ստիպեցին հանձն առնել այդ դժվար և ոչ ուրախ առիթ ուղևորությունը։

Մի քանի օրվա մեջ անհրաժեշտ պատրաստություններ տեսնելուց հետո, մենք և պրոֆ. Ա. Աբրահամյանը Երևանի օդանավակայանից թռանք Մոսկվա՝ այնտեղ արտասահմանի անցագիր և վիզաներ ստանալու համար։ Վեհափառը նախապես դիմել էր Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ Եկեղեցու գործերի խորհրդին և խնդրել դյուրություններ ստեղծել մեզ՝ արտասահման մեկնելու համար։

Մոսկվայում մենք հարկադրված եղանք երկար սպասել, որովհետև այստեղ պիտի ստանայինք ոչ միայն Լիբանանի կառավարության թույլտվությունը, այլ նաև այն երկրների, որոնց միջով պիտի անցնեինք։ Պարզվեց, որ Մոսկվայից Բեյրութ գնալու ամենամոտիկ և արագընթաց ճանապարհը՝ Չեխոսլովակիայի և Հռոմի վրայով դեպի Բեյրութ գործող օդային գիծն է, ուստի և մենք պիտի ունենայինք նշված պետությունների տրանզիտ վիզաները։

Անհրաժեշտ բոլոր ձևակերպությունները կատարելուց հետո, արտասահման ճանապարհվեցինք մայիսի 4-ին։

Առավոտյան շատ կանուխ գնացինք Մոսկվայի Վնուկովո կոչվող օդանավակայանը, որտեղից թռչում է Պրագայի սավառնակը։

Վիգեն Դերասանները 1945 թվին Ազգային-Ինքնիշխան Ժողովում

Օդանավակայանի մաքսատանը մեր ճամբրուկները թեթևակի նայելուց հետո, թույլ տվին սավառնակ նստել։ Օդ բարձրացանք ժամը 7-ն անց 45 րոպեին։ Սավառնակում շատ քիչ մարդիկ կային — կարմիր խաչի պծով աշխատող երկու չինացի երիտասարդներ էին, մեկ ֆրանսիացի լրագրող՝ իր տիկնոջ հետ, մեկ սովետական քաղաքացի՝ տեխնիկ, և մի քանի չեխեր։ Սավառնակը սովետական էր։

Սավառնակը թռավ Մինսկի և Վարշավայի վրայով, որոնցում մեկական ժամով վայրէջք կատարեց, վերցրեց անհրաժեշտ բենզինն ու յուղը և շարունակելով թռիչքը, տեղ հասավ ժամը 3-ին (Պրագայի ժամանակով՝ ժամը 5-ին)։ Ճանապարհին օդային վիհերը շատ կային և տատանումները շատ ուժեղ էին։ Դլխապտույտ ունեցավ պրոֆ. Ա. Աբրահամյանը, որն ընդհանրապես վատ է տանում սավառնակը։

Մեր սավառնակը վայրէջք կատարեց ո՛չ թե Պրագայի օդանավակայանում, այլ նրանից մոտ երկու հարյուր կիլոմետր հեռավորության վրա գտնվող Բռնո կոչվող օդանավակայանում։

Օդանավակայանից հատուկ ավտոբուսով տեղափոխվեցինք Բռնո քաղաքը, թեթև ճաշեցինք և երկաթուղու տոմս վերցնելով, նույն օրը մեկնեցինք Պրագա։

Բռնոյից Պրագա տանող երկաթուղին անցնում էր Չեխոսլովակիայի բնակչաշատ շրջաններով։ Անձրևային օր էր։ Լուսամուտից հաճելի էր դիտել Չեխոսլովակիայի գեղեցիկ բնությունը, նրա բարեկարգ քաղաքներն ու գյուղերը։— Չեխոսլովակիան, ընդհանրապես, զարգացած արդյունաբերական երկիր է, այնտեղ, կարելի է ասել, որ գյուղի և քաղաքի տարբերությունը վերացել է, երբեք գյուղը չես տարբերի քաղաքից։

Երկաթուղային մեր ճանապարհորդությունը տևեց մոտ չորս ժամ, և մենք, երեկոյան ժամը 9-ի մոտերքը, հասանք Պրագա, որը տեղական արտասանությամբ «Պրահա» է կոչվում։

Պրագայի երկաթուղային կայարանում մեզ դիմավորելու էր եկել տեղի Պրավոսլավ եկեղեցու գործերի կառավարիչ Բորիս Լեոնտևիչ Չերկեսը, որն ունի պրոֆեսորի կոչում և Պրագայի աստվածաբանական ֆակուլտետում վարում է պրոդեկանի պաշտոն։ Զարգացած և անչափ քաղաքավարի անձնավորություն է։ Նա իր ավտոմեքենայով մեզ տարավ «Ալկրոնս» կոչվող հյուրանոցը։ Հյուրանոցի վարչությունը մեզ ընդունեց և առանձին համարներ հատկացրեց։

Հաջորդ օրը, մայիսի 5-ին, շաբաթ, մեր մտահոգության դլխավոր խնդիրն էր պարզել՝ թե ի՞նչ սավառնակով մենք պիտի թռչեինք դեպի Հռոմ, իսկ այնտեղից՝ Բելգրադ։ Պրոֆ. Չերկեսի հետ գնացինք քաղաքի օդանավակայանի վարչության գրասենյակը։ Պարզվեց, որ Պրագայից Հռոմ կարելի է թռչել միա՛յն սկանդինավյան մի ընկերության սավառնակով, որը տրանզիտ դալիս ի Պրագայի վրայով թռչում է շաբաթական միայն մեկ անգամ, ուրբաթ օրերը։ Ուրեմն, այդ հաշվով, մենք պիտի սպասեինք վեց օր։ Սակայն մեր այդ ակնկալությունն էլ ի դերև անցավ, որովհետև պարզվեց, որ նշված ընկերության առաջիկա սավառնակի բոլոր տեղերն արդեն բռնված են, և մենք թռչելու համար երկու շաբաթ պետք է սպասենք։ Դժվարությունից դուրս գալու համար մեզ մի ելք էր մնում՝ թռչել Ամստերդամ, իսկ այնտեղից, ուղիղ գծով, առանց Հռոմ մտնելու, թռչել Բելգրադ։ Ճիշտ է, դա հեռու դիծ էր, բայց ուրիշ ելք չկար։ Օդանավակայանի դրասենյակը մեզ խոստացավ Պրագայից նախապես հեռագրով պատվեր տալ մեր տոմսերը, իսկ ինչ վերաբերում է հոլանդական վիզային, բացատրեցին մեզ, որ սավառնակով, առանց կանգառի, Հոլանդիայի վրայով թռչողներից վիզա չի պահանջվում։

Վճռեցինք թռչել այդ ճանապարհով և պատվիրեցինք տոմսերը։ Գեղեցիկ առիթ էր մեզ տեսնել Ամստերդամը, որը մեր տպագիր դրքի երախայրիքն է տվել և որի հետ պատմական շատ հիշատակներ կան կապված։

Նույն օրը ցերեկվա ժամը 12-ին մեզ այցելեց Չեխոսլովակիայի Պրավոսլավ Եկեղեցու էկզարխ Ելիֆերեյ միտրոպոլիտը, որը միաժամանակ Պրաժսկի և Չեխիայի միտրոպոլիտն է, ունի ավելի քան 400.000 հավատացյալ։ Պրոֆ. Ա. Աբրահամյանի հետ նա ծանոթ էր Լուգաչովիցոյի կոնֆերանսից, իսկ մեզ հետ նոր էր ծանոթանում։ Զրույցի ժամանակ պարզվեց, որ նա հայոց մոտիկ ծանոթ անձնավորություն է, հոգևորական բարձր աստիճանով երկար պաշտոնավարել է Ռոստովում և մոտիկ հայ ծանոթներ է ունեցել այնտեղ։ Ելիֆերեյ եպիսկոպոսը իր ուրախությունը հայտնեց Հայոց, Ռուսաց և Վրաց եկեղեցիների միջև ստեղծված սերտ համագործակցության համար, որի լավագույն ապացույցը նա համարում էր խաղաղության համար երկնք եկեղեցիների Պետերի համատեղ կոչը՝ ուղղված բոլոր քրիստոնյա եկեղեցիներին։

Ճաշից հետո, Չերկեսի ուղեկցությամբ, պատեցինք Պրագայում և տեսանք նրա աչքի ընկնող գեղեցկություններից կարևորները։ Անհրաժեշտ ենք համարում նրանցից մի քանիսի վրա կանգ առնել։

Մենք, ամենից առաջ, եղանք Վացլավայի

փողոցում և տեսանք Վացլավի նշանավոր հուշարձանը՝ Ս. Վացլավը ձիու վրա նստած, որը աշխարհահռչակ արձանագործ Հովսեփ Միսլբեկի ստեղծագործությունն է և 19-րդ դարի չեխական արձանագործության գլուխգործոցը կարելի է համարել։

Վացլավայի փողոցից հետո, մենք գնացինք դեպի Վլտավա գետը և դիտեցինք Պրագայի հայտնի գեղեցկություններից մեկը՝ Կարլոսյան քարե կամուրջը, որն Եվրոպայի հնագույն կամուրջներից մեկն է։ Նա կառուցվել է 1357—1358 թվականներին Պյուոր Պարլերի կողմից և իր վերջնական ձևավորումն ստացել 1706—1714 թվականներին, երբ 15 տեղերում դրվել են զույգ-զույգ հրաշակերտ արձաններ, որոնք 18-րդ դարի չեխական արձանագործության գեղեցիկ նմուշներ են։

Անցնելով Կարլոսյան կամուրջով, բարձրացանք Պրագայի արևմտյան կողմի բլուրը, որի վրա գտնվում է Ս. Վիտայի տաճարը։ Վիտայի տաճարը գոթական ոճով մեծ հասած քրիստոնեական ճարտարապետության գլուխ-գործոցներից մեկն է։ Նա կառուցվել է Կարլոս 4-րդ և նրա որդի Վացլավ 4-րդ կայսրների ժամանակ (14-րդ դարում)։ Տաճարի ճարտարապետներն են հանդիսացել Մատթեոս Արրասիին և Պյուոր Պարլերը։ Տաճարի երկարությունը 100 մետր է։ Ներսից հրաշալի գարդարված է։ Տաճարում թաղված են Չեխիայի անցյալի քաղաքական աշխի ընկնող բազմաթիվ գործիչներ։

Վիտայի տաճարից վերադառնալով քաղաքի կենտրոնը, մենք տեսանք Ս. Ասովածածնի տաճարը և նրա մոտիկ ցան Հուսի՝ հուսիտական շարժման առաջնորդի հուշարձանը. հպարտ կանգնած պաղի դատաստանի առաջ ույրվելու պահին։ Այնուհետև տեսանք Պրագայի թատրոնի շենքը, Հայրենական պատերազմի ժամանակ օգնության եկած առաջին սովետական տանկը՝ դրված քարյա բարձր պատվանդանի վրա, և Պրագայի պատմական, ճարտարապետական այլ ընկնող շատ կոթողներ և հուշարձաններ։

Հունիսի 6-ին Չեխոսլովակիայի ազատագրման 6-րդ տարեդարձն էր։ Քաղաքը տոնական տեսք էր ընդունել։ Փողոցներն ամենուրեք զարդարված էին նկարներով, դրոշակներով և նշանախոսքերով։ Ժամը 10-ին տեղի ունեցավ զորահանդեսը, որից հետո ժողովուրդն զբոսնում էր փողոցներում։

Դեւաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոսը՝ Հոլանդիայի ռուսական եկեղեցու վարչության անդամների և Դիոնիսի վարդապետի հետ։

Ճաշից հետո պրոֆ. Չերկեսը այցելեց մեզ և մենք միասին գնացինք Պրագայի գերեզմանատունը, ուր գտնվում էին նաև Հայրենական պատերազմի ժամանակ Պրագայում ընկած մեր կարմիր-բանակայինների գերեզմանները։ Մենք այստեղ հոգոց ասացինք զոհված կարմիր-բանակայինների վրա։

Ի պատիվ չեխ ժողովրդի, պիտի ասել, որ նրանք անչափ լավ գերեզմաններ են պա-

հում— բացառիկ խնամք են տանում իրենց հարազատների գերեզմաններին, ճաշակավոր տապանաքարեր կամ արձաններ են դնում մահացածի գերեզմանին, շուրջը ծաղիկներ են ցանում, ծրագ. լույս են դնում և այլն։

Մայիսի 7-ին պատրաստվեցինք հաջորդ օրվա թռիչքի համար։ Մենք եղանք Պրավոսլավ եկեղեցու էկզարխատում։ Այստեղ մեզ հայտնեցին, որ իրենք Ամստերդամում ունեն ներկայացուցիչ՝ Դիոնիսի վարդապետը, որին և հեռագրված է դիմավորել մեզ և հարկավոր օգնությունը ցույց տալ։

Նույն օրը երեկոյան մենք փոխադարձ այցելություն տվինք էկզարխ Սիլֆերել եպիսկոպոսին։ Մեզ հետ էր պրոֆ. Ջերկեսը։ էկզարխը մեզ ընդունեց բացառիկ հարգանքով և հյուրասիրեց։

Մայիսի 8-ին կանուխ պատրաստվեցինք թռչելու։ Կազմեցինք անգլերեն լեզվով հեռագիր Գարեգին Կաթողիկոսի վրա՝ մեր մեկնման մասին։

Պրոֆ. Ջերկեսի ուղեկցությամբ գնացինք օդանավակայան։ Դեպի Ամստերդամ թռանք հոլանդական սավառնակով։ Սավառնակը դրեթե դատարկ էր—սավառնակում մենք երկուսով էինք և մեկ հոլանդացի մարդ՝ իր կնոջ և փոքրիկ երեխայի հետ միասին, և ուրիշ ոչ ոք։

Թռիչքը տևեց ընդամենը երեք ժամ, և ճաշից շատ առաջ հասանք Ամստերդամ։ Օդանավակայան մեզ դիմավորելու էր եկել Դիոնիսի վարդապետը, Հաագայի Պրավոսլավ եկեղեցու վարչության անդամներից մեկի հետ, որի անունը չենք հիշում։

Նրանք մեզ ուղեկցեցին դեպի օդանավակայանի դահլիճը։ Քահանան և իր ուղեկիցը թույլտվություն խնդրեցին համապատասխան իշխանություններից մեզ Հաագան տանելու համար և իրավունք ստանալով մեկնեցինք Հաագա։

Հաագա մենք մեկնեցինք ավտոմեքենայով։ Բավական հեռու էր. ժամ ու կիսի չափ տևեց մինչև մենք հասանք Հաագա։ Ճանապարհը անցնում էր վարդի դեղեցիկ դաշտերի միջով—արվեստական ցանված դույզ-դույզ վարդերի դաշտերը փոված էին ճանապարհի երկու կողքերում։ Հոլանդիայի արտահանման գլխավոր ապրանքներից մեկը վարդն է։

Հաագայում մենք իջանք Դիոնիսի վարդապետի առնը։ Այստեղ Պրավոսլավ եկեղեցու վարչությունը մեզ հյուրասիրելու համար պատրաստություն էր տեսել։ Դիոնիսի տունը հավաքվեցին վարչության անդամներից մեկ հոգի՝ երեքը տղամարդ, երեքը կին։ Ուրախ ժամանց ունեցանք և վերջում նկարվեցինք։

Դիոնիսի մոտ հյուրասիրվելուց հետո, այցելեցինք ռուսաց եկեղեցին, որը քահանայի տան կողքին էր գտնվում։ Այնուհետև ավտոյով պտտեցինք Հաագայում, թիթեռի ծանոթացանք քաղաքի հետ, և մեկնեցինք Ամստերդամի օդանավակայանը։

Նույն օրը, մայրամուտին, նստեցինք սկանդինավյան ընկերության 52 տեղանոց սավառնակը և թռանք դեպի Բելգրադ։

Ճանապարհում մենք միայն մի տեղ վայրէջք կատարեցինք— Ճենովայում։ Վայրէջք կատարելուց առաջ սավառնակը մի քանի անգամ պտտվեց քաղաքի վրա։ Մուրի դիշերին, վերից մենք դիտեցինք էլեկտրական լույսով ողողված Ճենովան՝ միջնադարյան առևտրաշահ և նշանավոր այս քաղաքը։

Ճենովայի օդանավակայանում մենք մնացինք մոտ մի ժամ։ Հանդստացանք օդանավակայանի դահլիճում. նարնջի սառը օշարակ խմեցինք։ Օշարակը, պետք է ասել, Իտալիայում ամենատարածված և սիրելի ըմպելին է։

Մեր սավառնակը շարունակեց իր ճանապարհը և ամբողջ դիշեր թռավ Միջերկրական ծովի վրայով։ Երեկոյան, ընթրիքից հետո, իջեցրին աթոռների դիրքերը, սավաններ բաժանեցին և մենք պառկեցինք քնելու։ Օրվա հոգնությունից ջարդված էինք, ուստի և անմիջապես մեր քունը տարավ։ Առավոտյան երբ լույսը բացվեց, մենք արդեն մոտենում էինք Բելգրադին։ Շտապ լվացվեցինք և կարգի դրինք հագուստներս։ Ժամը վեցն անց կեսին մեր սավառնակը վայրէջք կատարեց Բելգրադի օդանավակայանում։

2. ԱՆԹԻԼԻԱՍ ԺՍՄԱՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Մեզ շատ էր մտահոգում այն հարցը, թե Անթիլիասում ստացե՞լ են արդյոք մեր հեռագիրը և մեզ դիմավորողներ լինելո՞ւ են։ Սավառնակից դուրս գալուն պես նկատեցինք օդանավակայանում երկու հայ հոգևորականի ներկայությունը։ Պարզվեց, որ մեզ դիմավորելու էին եկել Կիլիկիո Կաթողիկոսարանի դուռն եպիսկոպոս գերաշնորհ Տ. Խորեն Բարոյան սրբազանը և Կիլիկիո միաբանության անդամ հոգեշնորհ Տ. Եղիշե արեղան։

Բելգրադ մտնելու համար նախապես անհրաժեշտ էր, որ մենք մեր փաստաթղթերը դրանցել տայինք տեղի մաքսատանը։ Շտապ կատարեցինք այդ ձևականությունը։ Սակայն մենք մի դժվարության հանդիպեցինք. մար-

ատան աշխատողները դարձին մեր համբուրկներից մեկը և հայանարեցին, որ մեզ մոտ քսան տուփ ծխախոտ ավելի է, քան օրենքով սահմանված քանակն է։ Մաքսատան վարիչը, նիհարակազմ մի երիտասարդ տարր, հայտարարեց, որ մեր քսան տուփ ծխախոտը բռնագրավված է։ Որքան մենք և խորին սրբազանը աշխատեցինք համոզել, որ Լատակիայի որոշման տասից չիմաշեն, որ անհարմար է մեզ հետ տարվող մի քանի տուփ ծխախոտ բռնագրավելը, բայց մաքսատան աշխատողը, քրմական անտարբերությամբ, մերժեց մեր խնդրանքը։ Վերջում, երբ մենք խնդրեցինք բռնագրավված ծխախոտների համար ստացագիր տալ և

Անթիլիասում, ատաջին Համազգային պատերազմի տարիներին, ամերիկյան որբանոց է տեղավորված եղել, իսկ հետո, այդ տարածությունը և ամերիկյան բարակները դնել է Կիլիկիո Կաթողիկոսությունը, և այնտեղ վերջնականապես հաստատել Կիլիկիո Կաթողիկոսարանը իր հարակից Դպրեվանքով։

Վանքին կից կառուցված է փոքրիկ մատուռ, ուր տեղավորված են ատաջին Համաշխարհային պատերազմում տաճիկների կողմից Տեյր-Էպ-Զորում և Բաս-յոլ-Այնում չարչարված հայերի ոսկորները, որոնք հավաքված և թաղված են այստեղ։ Մատուռը ճնշող տպավորություն է թողնում այցելուի վրա։

Գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոսը՝ Գարեգին Ա. Կաթողիկոսի հիվանդության մահճի մոտ։

վերցնել ծխախոտի տուփերը, մաքսատան աշխատողը, քսան երեսլիին, ղգաց իր պարտքի անհարմարությունը, բռնագրավված ծխախոտի տուփերը մեզ վերադարձրեց առանց մաքսային հարկ վերցնելու։

Օդանավակայանից ճանապարհվեցինք Անթիլիաս, որը գտնվում է Բեյրութից 5 կիլոմետր հեռավորության վրա։

Գարեգին կաթողիկոսը նախապես ստացել էր Գեորգ Կաթողիկոսի հեռագիրը։

Անթիլիասի միաբանությունը և Դպրեվանքի ուսանողությունը սպասում էին մեզ բակում։ Տեղ հասնելուն պես, վանքի զուգ զանգերն սկսեցին զողանջել, և շարականներ երգելով մեզ տարան եկեղեցի։

Վեհարանում մեզ բարի գալստի խոսք

ասաց Դերենիկ սրբազանը։ Բերում ենք համառոտ գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոսի ողջույնի խոսքը.

«Ուրախ ենք այսօր Ձեզ մեր հարկի տակ ընդունելու համար։ Մեկ է մեր եկեղեցին, մեկ են մեր աթոռները, բոլորս մեկ ենք հոգիով և սրտով։ Ձեր ներկայությունն ավելի կզորացնե մեր միությունը։ Ձեզմե կառնենք մեր կարոտը վսեմական Արարատեն, հավերժական Ս. Էջմիածնեն և անմահական Հայրենիքեն։ Բարով եկաք։ Պիտի ուզեինք, որ ճիշտ Ձեր տան պես զգայիք»։

Պատասխան խոսքով հանդես եկանք մենք, Գեորգ Զ. Կաթողիկոսի անունից ողջունելով Անթիլիասի միարանությանը և Դպրեվանուց ուսանողությանը, նշեցինք այն սերտ կապը, որ գոյություն ունի Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության և Ամենայն Հայոց Հայրապետության միջև։ Ծանոթացրինք նաև պատգամավորության գալու նպատակի հետ, հայտնելով, որ պատգամավորությունը եկել է հիվանդ Վեհափառին տեսության։

Ներկաները բոլորը եկան և բարի գալուստ մաղթեցին մեզ։ Նրանց մեջ էին գերաշնորհ Տ. Փառեն եպիսկոպոսը, գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոսը, հոգեշնորհ Տ. Գնել Ծ. վարդապետը, պարոն Սիմոն Սիմոնյանը և ուրիշները։ Այնուհետև մեզ առաջնորդեցին հին Վեհարանի շենքը՝ մեզ համար նախապես պատրաստված սենյակները։

Նույն օրը, լվացվելուց և փոխվելուց հետո, մենք ներկայացանք հիվանդ Վեհափառին։ Նա ճանաչեց մեզ, հուզվեց և արտասվեց. հայրենասեր և էջմիածնասեր Վեհափառի միտքը մեզ տեսնելիս, երևի այդ բոպեին թռավ պտույտի իր սիրելի Հայրենիքում և Ս. Էջմիածնում...։

Վեհափառը պառկած էր մահճակալին, բայց մեզ ընդունեց նստած վիճակով։ Նրա հիմնական հիվանդությունը արյան երակախցում է, բայց որովհետև շատ է հյուծվել, այդ պատճառով շուտ-շուտ բարդություններ է տալիս։ Վեհափառի բուժման վրա աշխատում են Բեյրութի աչքի ընկնող գրեթե բոլոր հայ բժիշկները, պրոֆ. Ենիդոմշուլյանի գլխավորությամբ։ Նրանք բացառիկ ուշադրությամբ են շրջապատել Վեհափառին և անում են կարելին, նրա թոնկագին կյանքը փրկելու համար։

Բեյրութի լավագույն բժիշկները, պետք է ասել, հայեր են, նրանց մեջ կան մի քանի պրոֆեսորներ, որոնք մեծ համարում ունեն ո՛չ միայն Լիբանանում, այլև ողջ Արևելքում։

Վեհափառը սկսեց հարցնել իր հոգևոր եղբոր՝ Ամենայն Հայոց Հայրապետի առողջության, Էջմիածնի վիճակի, առանձին հայագետների, նոր հրատարակվող հայագիտական աշխատությունների մասին։

Տեսնելով, որ Վեհափառը շատ խոսելուց հոգնում է, ցանկացանք հանգիստ թողնել իրեն։ Նա կանչեց իր միարաններից մի քանի հոգու և հայտարարեց, որ՝ «Ամենայն Հայոց Հայրապետի ինձ տեսնելու համար այսքան հեռու ճանապարհներով պատգամավորություն ուղարկելը վեր է ամեն տեսակ գնահատանքից և շատ ազնիվ ժեստ է»։ Նա հանձնարարեց Դերենիկ եպիսկոպոսին և դռան եպիսկոպոս Խորեն սրբազանին՝ բոլոր տեսակի դյուրություններ ստեղծել մեզ համար։ Նա հայտնեց նաև, որ իր անձնական ավտոմեքենան դնում է մեր տրամադրության տակ, մինչև մեր մեկնման օրը։ Մենք համբուրեցինք Վեհափառի աջը և դուրս եկանք։

Տեղական առաջադիմական բոլոր հայկական թերթերը տպագրել էին Կաթողիկոսարանի ուված հաղորդումը՝ մեր ժամանման մասին։ Լիբանանի հայկական շրջանում արդեն տարածվել էր մեր դալուստյան լուրը և Բեյրութից սկսել էին ժամանել առանձին կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ բարի գալուստի ողջույններով։ Եկան որոշ թերթերի թղթակիցներ տեղեկատվություն վերցնելու։

Մեր ժամանման օրը, երեկոյան, Երուսաղեմից Անթիլիաս եկավ Երուսաղեմի Հայոց Պատրիարքական Տեղապահ գերաշնորհ Տ. Նշիշ վարդապետ Տերտերյանը։ Պարզվեց, որ նա Ամենայն Հայոց Հայրապետից հեռադիր էր ստացել, որպեսզի մեզ հետ հանդիպի Անթիլիասում և մեր վերադարձի ժամանակ մեզ ընկերանա իր երկու միաբանակից ընկերներով (նրանք Ս. Էջմիածին էին գալիս եպիսկոպոսական ձեռնադրության համար)։

Մայիսի 10-ին, մեր ժամանման հայորդ օրը, մենք պաշտոնական այցելություն տվինք սովետական մեր դեսպանատանը և գրանցել տվինք մեր անձնագրերը, ինչպես պահանջվում է օրենքով։ Դեսպանատանը մեզ շատ սիրալիր ընդունեց դեսպանը և հյուրասիրեց։ Պարզվեց, որ դեսպանատանը կան և հայ աշխատողներ— պարոն Սարգսյանը և պարոն Խանգուլյանը, որոնք վերին աստիճանի սիրալիր էին մեր նկատմամբ։

Մեր ժամանման լուրն առնելով, մեզ տեսության էր եկել Դամասկոսից Հոգեշնորհ Շավարշ վարդապետ Գուլումջյանը,— մեծ պատրաստություն ունեցող, հայրենասեր և եկեղեցական ավանդությունները րծախնդիր պահպանող մի հոգևորական։

3. ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊԱՏԱՐԱԳԸ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատգամավորությունը Անթիլիասում մնաց մոտ մեկ և կես ամիս՝ մայիսի 9-ից մինչև Հունիսի 24-ը։ Այդ ժամանակվա ընթացքում մենք առիթ ունեցանք հանդիպելու և խոսելու բազմաթիվ մարդկանց հետ, ընդունեցինք մի շարք կազմակերպությունների ներկայացուցիչների, հյուրասիրվեցինք մի քանի անգամ, խոսեցինք, ելույթներ ունեցանք տասնյակ անգամ։ Այդ բոլորը մանրամասնությամբ հիշել և պատմելը, իհարկե, երկար է։ Ես պատկանում եմ միայն կանգ տալով մեր ունեցած կարևոր հանդիպումների և ելույթների վրա։

Մեր Անթիլիաս ժամանելուց մի քանի օր հետո, մայիսի 13-ին, կիրակի օրը, Անթիլիասի տաճարում տեղի ունեցավ պատարագ, ուր մենք պաշտոնապես պիտի հաղորդեինք Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունները։ Կաթողիկոսարանի կողմից թերթերում, նախապես, հայտարարություն էր տեղավորվել, որ «Վանան արքեպիսկոպոսը պատարագի ժամանակ հաղորդելու է Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական օրհնություններն ու հայրական ողջույնները»։ Պատարագին ներկա լինելու էր եկել հավատացյալների հսկայական բազմություն։ Պատարագի վերջում, հակիրճ քարոզով հանդես եկանք մենք։

Պատարագի վերջանալուց հետո բարձրացանք Վեհարան։ Ժողովուրդը խռնվեց ներսը, առնիքների վրա և բակի մեջ։ Վեհարանի մեջ նորից խոսեցինք մենք և հաղորդեցինք Ն. Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Վեհափառի սրտագին ողջույնները և օրհնեցինք ներկաներին։

Անթիլիաս ժամանելու մեր հաջորդ օրվանից սկսվեց այցելությունների հեղեղը։ Գալիս էին, անվերջ գալիս Սիրիայի և Լիբանանի հայկական շրջաններից։ Այցելուների համար հերթ էր ստեղծվում, որովհետև

Անթիլիասի Կաթողիկոսարանի միաբանությունը՝ գերաշնորհ Տ. Վանան արքեպիսկոպոսի հետ։

սև մենք չլինք կարողանում անմիջապես լոլորին ընդունել և բավարարել։ Այստեղ մեզ օգնության էին հասնում գերաշնորհ Տ. Խորեն եպիսկոպոսը, հոգեշնորհ Տ. Գնել Ծ. վարդապետը և պարոն Սիմոն Սիմոնյանը— նրանք էին հերթ սահմանում, այցելողներին ներկայացնում և նստում, որ ժամանակից ավելի մեզ չդրաղեցնեն։

Մեր նկատմամբ անչափ սիրալիր էր առանձնապես Գնել Ծ. վարդապետը,— երիտասարդ, դործունյա, հրաժշտական բարձրը պատրաստությամբ մի հոդևորական, որը մեծ հեղինակություն ունի Անթիլիասի միաբանության մեջ և սիրված է Գարեգին Կաթողիկոսի կողմից։

Մեզ այցելողների հետաքրքրության հիմնական հարցերը՝ Հայրենիքի ներկա վիճակն էր, հայրենադարձ իրենց բարեկամները, Մայր Աթոռը և այլն։ Մեզ անչափ սարսափացնում էր, որ հակառակ թշնամական շրջանների թունոտ պրոպագանդային, հակառակ ամեն տեսակ բռնություններին և ճնշումներին, հայկական աշխատավոր զանգվածն իր ճնշող մեծամասնությամբ, հարդելով հանդերձ տեղական իշխանությունը, մնում է կապված իր սիրելի Հայրենիքին։

Զարմանալիորեն սխալ պատկերացում էր ստեղծվել մեր պատդամավորության իրավասության նկատմամբ. մարդիկ չէին կարողանում ըմբռնել, որ էջմիածնի պատդամավորը ոչ մի լիազորություն և իրավասություն չունի զբաղվելու հայրենադարձության և, ընդհանրապես, քաղաքականության հետ կապված որևէ հարցով։

Պետք է ասել, որ արտասահմանի հայկական շրջանը պարզ պատկերացում չունի եկեղեցու և պետության փոխհարաբերությունների մասին մեզ մոտ։ Ցույց տալու համար, թե ինչ աստիճանի թյուր հասկացողություն կա եկեղեցու և պետության հարաբերությունների ըմբռնողության հարցում, ցանկանում ենք բերել մի փոքրիկ փաստ։ —Առաջադիմական թերթերից մեկը, անվստահելի մի աղբյուրից առնելով, հաղորդել է, որ իբր սովետական կառավարությունը Ամենայն Հայոց Հայրապետի համար Երևանում վիլլա է կառուցել և իր հաղորդումն ավելի վստահելի դարձնելու համար, տվել նրա նկարագրությունը,— թե այն բաղկացած է դեղաղարդ այսքան դահլիճներից, այսքան առանձնասենյակներից, ներսը ունի այս ձևը, դուրսի հակատն այսպիսին է, և այլն և այլն։ Թշնամական թերթերից մեկը, որը տառապում է Մայր Աթոռը վարկաբեկելու անհրաժեշտությամբ, իսկույն օգտագործել է այդ— առաջի բերել է առաջադիմական այդ թերթի հաղորդումը և մեծախոսելով ավելացրել թե՝ Բոլշևիկները դիտե՞ն թե ինչու համար են Ամենայն Հայոց Հայրապետի համար վիլլա կառուցում։ Արտասահմանում չեն կարողանում ըմբռնել, որ պետությունը ո՛չ մի դեպքում, ո՛չ մի նյութական օգնություն չի կարող ցույց տալ եկեղեցուն. նման օգնություն տալը, ինքնին, Սովետական Միության կոնստիտուցիայի կոպիտ խախտումն կլիներ։ Սովետական կառավարությունը ոչ օգնում է և ոչ միջամտում եկեղեցական գործերում։

Վիլլայի հետ կապված իրողությունն այն է, որ Վեհափառ Հայրապետը, իրոք, ցանկանալով մի փոքրիկ վիլլա, տվեալ դիշտ կլինի ասել՝ առաջնորդարան կառուցել Երևանում, ուր կարողանան ինքը, ինչպես և Մայր Աթոռ հեռավոր տեղերից եկող հյուրերը կանգ առնել, դիմել է կառավարությանը, հողամաս ստացել։ Շենքի նախագիծը կազմվել է և առաջին հարկի որոշ մասերը կառուցվել են, սակայն Վեհափառ Հայրապետի նյութական միջոցները չներելու պատճառով, երեք տարի է, որ մնացել է այն թերավարտ վիճակում։

Մայիսի 15-ին մեր պատդամավորությանը թեյասեղանի հրավիրեց դոկտոր Ենիդոմշյանը, այն բժիշկ-պրոֆեսորը, որը պետական է Վեհափառի բժշկությունը։ Թեյասեղանին հրավիրված էին Թեյրութի չեղոք մտավորական շրջանից 30—40 հոգի։ Թեյասեղանի շուրջ հավաքված մտավորականները հետաքրքրվում էին Հայաստանի վերելքով, հայրենադարձների վիճակով, Երևանի շինարարությամբ, բարձրագույն ուսումնական հաստատություններով։

Մայիսի 13—17-ը մեզ այցելեցին դրեթե բոլոր առաջադիմական կազմակերպությունների ներկայացուցիչները և բարի գալուստ մաղթեցին մեզ։

Մայիսի 18-ին մեզ այցելեցին Թեյրութի մի խումբ քահանաներ, թվով 10 հոգի։ Նրանք հետաքրքրվում էին Մայր Աթոռի վիճակով, Ամենայն Հայոց Հայրապետի առողջությամբ, քահանաների, առանձնապես հայրենադարձ քահանաների վիճակով և այլն։

Մայիսի 27-ին, բացառիկ հանդիսավորությամբ, Անթիլիասում տոնվեց էջմիածնի տոնը։

(Շարունակելի)

ՌՈՒԲԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ

ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Պարտ է եպիսկոպոսին անարատ լինել, որպէս և Աստուծոյ տնտնսի. մի՛ յանդուգն, մի՛ բարկացող, մի՛ ըշնամանող, մի՛ հարկանող, մի՛ զօրամաղ, այլ հիւրասէր, բարեսէր, ցած, արդար, սուրբ, ժուժկալ, վերակացու լինել, հաւատարիմ բանին վարդապետութեանն, զի կարող իցէ և մխիթարել օրհնութեամբ վարդապետութեանն և զհակառակորդս կշտամբել»:

(ՏԻՏՈՍ, Ա. 7—9)

Ամենայն Հայոց Հայրապետի նվիրակները արդեն երկու ամսից ավելի է, ինչ դուրս են եկել Մայր Աթոռից և Լիբանան մեկնել՝ Մեծի Տանն Կիլիկիո Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գարեգին Հիվանդ Կաթողիկոսին տեսնելու և Ամենայն Հայոց Հայրապետից ողջույններ տանելու համար։

Անթիլիասի կաթողիկոսարանից հեռագիր է ստացվել Ս. Էջմիածնում, որ պատգամավորությունը վերադառնում է։ Նրանց են միացել Երուսաղեմի Ս. Հակոբյանց միաբանության երեք վարդապետները, որոնք պիտի դան Ս. Էջմիածին եպիսկոպոսական ձեռնադրություն և օծում ստանալու։ Մեկ ամիս առաջ Մայր Աթոռ է ժամանել սուրբ հայ թեմի առաջնորդ Տ. Վազգեն Ծ. վարդապետ Պալճյանը, նույնպես եպիսկոպոսանալու համար։ Հյուրերին դիմավորելու համար Մոսկվա է ուղարկվել Գեղարդի Հոգևոր խորհրդի քարտուղար Հ. Ագուլյանը։

Մ. Էջմիածնի միաբանությունը, Վեհափառն ինքը, բոլորը օրեցօր սպասում են արժանապատիվ հյուրերի գալուստը հայտնող հեռագրին։

Հուլիսի 2-ին, երեկուշաթի, ուրախասիրտ լուր։ Հեռագիր է ստացվում, որ պատգամավորները, հյուրերի հետ միասին արդեն մեր լայնածավալ Հայրենիքի շքեղ մայրաքաղաք Մոսկվայի հյուրընկալ երկնքի տակ են։

Նոր հեռագիր։ Հյուրերը Մոսկվայից թռչելով, օդանավով, հուլիսի 4-ին, ժամը 5-ին կլինեն Երևանի օդանավակայանում։ Նրանց դիմավորելու համար օդանավակայան են գնում Սահակ և Վազգեն ծայրագույն վարդապետները, Հոգևոր Ճեմարանի ռեկտորը և սարկավագներ։

Սպասվող ժամին մի քանի հանդարտ պտույտներից հետո սահուն կերպով վայրէջք է կատարում Երևանի օդանավակայանի հսկա մարդատար օդանավը։ Բացվում են օդանավի դռները։ Դիմավորողների հայացքները մի ակնթարթ բեռնվում են դեպի օդանավի այն դռնակը, որանցից պիտի դուրս դան թանկագին հյուրերը։ Առաջինը երևում են Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ուղարկած նվիրակները։ Նրանք ձեռքով ողջունում են և ժպտում։

Խցիկի դռնակից դուրս են գալիս հյուրերը, Երուսաղեմի հոգեշնորհ սուրբ հայրերը՝ Եղիշե, Նորայր և Սուրեն վարդապետները։

Նրանց սրտերը թրթռում են, նրանց հայացքները խոհուն են և լուռ, արցունքի շիթեր են կախվել նրանց կարոտակեղ աչքերից։ Հիշո՞ւմ են արդյոք նրանք՝ իրենց երբեմնի աղարտոտ Հայրենիքի թշվառ անցյալը, ոտաբոբիկների՝ հագիերտների, շինդիկների, լենկթիմուրների սեփականերով ու նախճիրներով ծածկված, ավերակների կույտի վերածված Մայր Հայաստանը։ Հիշո՞ւմ են հայ շինարար, երբեմնի տանջված ու հոգնաբեկ ժողովրդին, պանդիտու-

թյան ցույցը ձեռին, թափառական, անտուն ու անտեր, օտար երկնքի տակ, հեռու Հայրենիքից, արհավիրքներից, փոթորկալից սարսափներից փախած, խաղաղիկ կյանքի մի հանգրվան ու կայան փնտռելիս։ Հիշո՞ւմ են նրանք հայ անմեղ ժողովրդի մոտիկ անցյալի ծանր, հեղձուցիչ մղձավանջը, երբ նա կանգնած էր կորստյան անդունդի եզրին, երբ թյուրքական արյունռուս յաթաղանը սպառնում էր իսպառ բնաջինջ անել բազմադարյան կուլտուրայի տեր խաղաղասեր մի ժողովուրդ։ Դժվար է ասել։ Բայց մի բան պարզ է, որ նրանց աչքերի առջևից վայրկենապես վազում անցնում են անցյալի տխուր, ծանր ու մղձավանջային պատկերները, սև ուրվականները անհետանում են և բացվում է նորը, շքեղն ու պայծառը, մոխիրների միջից վերածնված խրոխտ ու վեհ, նրանց առաջ կանգնում է մեր շքեղ ու ծաղկուն, այլ շորեր հագած, 30-ամյա երիտասարդ Սովետական Հայաստանը։ Ո՞ր պանգուխտ ու հեռավոր հայի սիրտը չի տրոփել իր նոր Հայրենիքի անունը լսելիս, այն ո՞ր հայն է, որի սիրտը չի լցվում անհուն կարոտով ու բերկրանքով, երբ լսում է իր բարգավաճող ու ծաղկող Հայրենիքի նորանոր նվաճումները։

Հյուրերն իջնում են օդանավի փոքրիկ սանդուղքով։ Վիշտ ու թախիծի քոռը, որ մի րոպե առաջ պատել էին նրանց հոգին, իսպառ չքացել են և տեղի են տվել մի նոր, անսովոր մի, հոգեպարար հրճվանքի։ Գրկախառնվում են նրանք իրենց դիմավորելու եկած հարազատ եղբայրների հետ, և, հորդացած զգացմունքներով, բառեր չեն գտնում ասելու սիրո և երջանկության մասին։

Այնուհետև բոլորը միասին անցնում են օդանավակայանի գլխավոր դահլիճը։ Հյուրերին բարի գալուստ է մաղթում Սահակ Ս. վարդապետը։ Նա ողջունում է հյուրերին Վեհափառ Հայրապետի և միաբանության անունից. և, իր խոսքը վերջացնելով, ասում. «Բարով եք եկել մեր սրտի լույս, մեր թանկագին հյուրերս։ Եղբայրական հարգանք, ջերմ մթնոլորտում զրուցելուց և մի փոքր հանգստանալուց հետո, ավտոմեքենաներով մեկնում են Երևանի «Ինտուրիստ» հյուրանոցը։ Հյուրերն առաջնորդվում են շքեղ կահավորված առանձնասենյակները, ուր նրանք իրենց հանգիստը և սնունդը հոգալուց հետո, պետք է մեկնեն Մայր Աթոռ Ս. Էջմիածին։

Մայր Աթոռը արտակարգ եռուզեռի մեջ է, պատրաստվում է ընդունելու իր հյուրընկալ հարկի ներքո Ս. Երուսաղեմից Մայր Հայրենիք ժամանած հյուրերին, որոնք Ամենայն Հայոց Հայրապետից եպիսկոպոսական ձեռնադրություն և օծում պիտի ընդունեն։

Վանքի ամբողջ միաբանությունը, կապա ու պատրաստ, զգեստավորված, սպասում է հյուրերի գալստյանը։

Հանկարծ լսվում է ավտոմեքենաների շչակների երկարատև ազդանշանը, որն ազդարարում է հյուրերի ժամանումը Մայր Աթոռ։ Ահա ավտոմեքենաները ներս են մտնում վանքի հնադարյան պարիսպների դարպասից և շհասած վանքին, կանգ առնում։ Հյուրերին օգնում են դուրս գալու ավտոմեքենաներից և հանդիսավոր թափորը, «Ուրախ լեր» շարականի ախորժալուր հնչյունների տակ, առաջ է շարժվում դեպի Մայր Տաճար։ Թափորը կանգ է առնում Իշման Սեղանի առաջ։ Մի հաճելի զովություն և խնկի բուրմունք է տարածվում Տաճարի ներսում։ Երգի վերջին հնչյունները մարում են աստիճանաբար, և տիրում է մի պահ խորհրդավոր լռություն։ Լռությունը խզում է կաթողիկոսական նվիրակ Վահան արքեպիսկոպոսը, որը ողջունի հանդիսավոր խոսքով հայտնում է Վեհափառ Հայրապետի և Էջմիածնի միաբանության ուրախությունն ու հրճվանքը՝ հյուրերի Մայր Աթոռ ժամանելու առթիվ։ Ապա տաղ է գալիս Ս. Երուսաղեմի պատրիարքական տեղապահ Եղիշե վարդապետ Տերտերյանը։

Նրա ձայնը սկսում է դողալ, բեկբեկվել. վեղարի տակից փայլում են երիտասարդական կյանքով ու ավյունով լեցուն կրակոտ աչքերը, իսկ ձայնի մելոդիկ հնչյունները մեղմորեն շոյում են յուրաքանչյուրի լսելիքը. որքա՜ն կարոտ, որքա՜ն հույզ կա այդ խոսքերի մեջ. «Մեկի բախտ վիճակեցավ,— ասում է նա,— Ս. Էջմիածնի գարավոր կամարներուն տակ շնչել, զրայ ու տեսնել այն, ինչ որ մեր պապերու, մեր երանելի նախնիքներու մտքի խոյանքն ու ստեղծագործությունը կկազմեն։ Մովսես մարգարեին չվիճակեցավ տեսնել իր Ավետյաց Երկիրը, իսկ մեզ՝ եկեղեցվո հասարակ պատանիներուս, մեծագույն շնորհքն ու բախտը վիճակեցավ տեսնելու մեր մայր օջախը, մեր շեն օջախը, մեր Սրբություն-Սրբոց Ս. Էջմիածինը։ «Էջմիածի՜ն», այս բառը նվիրական կհնչէ ամեն մեկ հայու բերանին մեջ։ Այսօր Սփյուռքի մեջ, իր խանձարուրին մեջ փաթթված մանուկը անով կրանա իր բերանը, և ծերունին դայն արտասանելով հոգ իմանա։»

Հոգեշնորհ հայրը իր և իր ընկերակիցների կողմից շնորհակալության խոսք է ուղղում Վեհափառ Հայրապետին, միաբանությանը, ժողովրդին, իրենց ցույց արված



Ամենայն Հայոց կաթողիկոսը վերադարձից իջնում է Տրդատ

սիրալիր ընդունելության և այն բոլոր դյուրությունների համար, որ ընձեռվել են իրենց ճանապարհին։ Նրանք հերթով, ծընրադիր, համբուրում են Իջման Սեղանի առջև դրված նվիրական սրբությունները։ Խոնավություն կա նրանց աչքերում։ Նրանց տարիների երազն ու բաղձանքը իրականացան այսօր։ Կարելով հազարավոր դիլոմետրեր, ծով ու ցամաք անցնելով, նրանք իրենց երջանիկ են զգում Մայր Հայրենիքում, դարավոր Էջմիածնի վեր խոյացած խնկաբույր կամարների տակ։ Ով շատերի յիրականացած իղձերն ու ցանկությունները են բերել նրանք իրենց հետ։ Բազմաթիվ ծերունի հայրեր ու մայրեր, քույրեր ու եղբայրներ խնդրած կլինեն նրանց՝ իրենց փոխարեն համբուրել Ս. Էջմիածինը, աղոթել այնտեղ և իրենց կարոտակեզ ողջույնը հաղորդել Հայոց Կաթողիկոսին, իրենց փոխարեն համբուրել նրա Աջը։

Մայր Աթոռի միաբանությունը ծանոթանում է հյուրերի հետ։ Հեռու երկրից են եկել, իրար առաջին անգամ են տեսնում, բայց նրանք միևնույն ազգի հարազատ եղբայրներն են, հայրենի հողն ու ջուրը կապում, միացնում են նրանց սրտերը մի անքակտելի, ամուր կապով։ Թափորը դուրս է գալիս և ուղղվում Վեհարան։ Մայր Աթոռի երիցագույն միաբանները առաջնորդում են հյուրերին դեպի Վեհարանի կաթողիկոսական դահլիճը։ Ճոխ կահավորված և զարդարված ընդունելության դահլիճում, կաթողիկոսական գեղեցիկ բազկաթոռին բազմած է ալեհեր Հայրապետը։ Նրա դեմքը հեռվից հավատ ու պատիվառանք է ազդում դիմացինին։ Մեր է Վեհափառ Հայրապետը, բայց նրա շարժուն աչքերում դեռ կա ապրելու և գործելու տենչ ու եռանդ։ Ներս են մտնում հյուրերը և մեկը մյուսի հետևից պատկառանքով մոտենում և վերցնում են ծերունազարդ Կաթողիկոսի Աջը, իսկ Վեհափառը, այդ պարթևահասակ 93-ամյան, հոգով երիտասարդ եռանդուն մարդը, տեղից մի փոքր բարձրանում է և դողդոջուն համբուրում Հայ Եկեղեցու հարազատ զավակների ճակատները։ «Ապրի՛ր, զավակնե՛րս»,— մրմնջում են նրա շրթունքները։ Հյուրերը տեղավորվում են Վեհափառի աջ ու ձախ կողմերը, և կարծես մի փոքր առաջ ընդհատված զրույցը վերսկսում է։

Կեսօրին հյուրերը ճաշում են Վեհափառ Հայրապետի հետ։ Ճաշից հետո նրանք ցանկություն են հայտնում լինելու Էջմիածնի մոտակա վանքերում։ Ուղեկցությամբ Մայր Աթոռի մի քանի միաբանների, նրանք լինում են Ս. Գայանեի և Ս. Հռիփսիմեի վանքերում, Զվարթնոցում։ Ս. Հռիփսիմեի վանքի վանահայրը դիմավորում է հյուրերին մեծ ուրախությամբ։ Նրանք հիացած են հայկական ճարտարապետության անեման կոթողներով։ Դարերի իմաստությունն է խտացել այդ կոթողների մեջ, ժողովրդի ստեղծագործական մտքի եռանդն ու խոյանքն է մարմնացել այնտեղ, կործանարար ժամանակը չի կարողացել ավերել և իսպառ անհետացնել նրանց։ Կարծես մի անհերևույթ ձեռք պահել է նրանց դալիք սերունդներին և դալիք մարդկության ի տես, որպես անժխտելի փաստեր հայ ժողովրդի բազմահարուստ կուլտուրական անցյալի։

***

Շաբաթ երեկո է։ Քիչ հետո կսկսի կիրակամտի երեկոյան ժամերգությունը։ Վեհափառ Հայրապետը հանդիսավոր իջնելու է Եկեղեցի։ Ամբողջ միաբանությունը՝ արքեպիսկոպոսներից սկսած մինչև սարկավագները, անխտիր ներկա են և Կաթողիկոսարանի դռանը սպասում են Վեհին։ Աստիճաններից դանդաղ իջնում է Վեհը։ Նրան օգնում են միաբաններից Երկուսը։ Կարմրաշղգնատ շաթիրները առջևից ճանապարհ են բաց անում, թափորը ուղղվում, հավասարվում է և հանդիսավոր երթը առաջ է շարժվում։ Թափորի մի ծայրը հասավ արդեն Տաճարի դռներին, իսկ մյուսը նոր է դուրս գալիս Վեհարանից։ Հանդարտ են գալիս թափորի գնացքերը, լուռ ու խոհուն, լսվում է միայն թեթև քամուց սվսվացող ծառերի տերևների ձայնը։ Քայլում է Վեհը, գլուխը բարձր, նայվածքը շեշտակի, հայրապետական ասան ձեռքին։ Նրա ամեն մի քայլը հաստատ է։

Վեհի գալուստն են ազդարարում դանդակատան զանգերը, որոնք այնքան մեղմ ու հանդարտ են զողանջում, որ կարծես վերջալույսի թրթռացող, ծերերացող, կիսաստվերների ցոլքն են անդրադարձնում իրենց հալվող, դողդոջուն ձայների մեջ։

Սկսվում է երեկոյան ժամերգությունը։ Տաճարը ամբողջովին լեցված է աղոթողներով։ «Լույս զուարթ» մեղեդիի սիրտ հալող ելևէջները հալվում, անէանում են Կաթողիկեի կամարների տակ։ Խորհրդավոր է երեկոյան ժամերգության այդ պահը։ Տաճարի նեղ պատուհաններից մարող արևադեղի տակեգույն շողերը, շեղակի թափանցելով ներս, ոսկեփայլ նրանդ են սփռում իրենց շորս կողմը։ Օդը լեցվել է թուրվառից բարձրացող նուրբ, կապտավուն մշուշի նմանվող կնդրուկի բուրմնամեծ ծխով։ Տաճարում լսվում են աղոթքի մրմունջներ։ Աղոթում է Վեհը, աղոթում են բոլորը։

Ժամերգության վերջում, Վեհափառ Հայրապետի առջև շոքում են նվիրյալները, որոնք

Վեհափառ Հայրապետը օծում է Երուսաղեմի Հայոց պատրիարքական տեղապահ Եղիշե եպիսկոպոսի ճակատը

մյուս օրը պիտի ընդունեն եպիսկոպոսական ձեռնադրություն և օծում։ Նվիրյալներն են՝ Երուսաղեմի Ս. Հակոբյանց ուխտի միաբան և պատրիարքական տեղապահ Եղիշե վարդապետ Տերտերյանը, Մայր Աթոռի միաբան և ավագ լուսարար Սահակ Ծ. վարդապետ Տեր-Հովհաննիսյանը, Ռումինահայ թեմի առաջնորդ Վազգեն Ծ. վարդապետ Պալճյանը, Երուսաղեմի Ս. Հակոբյանց ուխտի միաբաններ Սուրեն վարդապետ Քեմհաճյանը և Նորայր վարդապետ Պողարյանը։ Վեհափառը, շուրջառազգեստ և վրան եմիփորոն առած, կանգնած, ավետարան է կարդում ընծայալների գլխին։ Բառերը նրա բերնից դուրս են գալիս այնքան շեշտված ու հատ-հատ, որ թափանցում ես ավետարանի ամեն մի խոսքի խորքը։ Լսվում են ավետարանի վերջին բառերը. «Գնացէ՛ք այսուհետև, աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս, ...ուսուցէ՛ք նոցա պահել զամենայն որ ինչ պատուիրեցի ձեզ...»։ Այո՛, վաղը նրանք կգնան երկրե երկիր, Փրկչի ավանդը՝ խաղաղության, սիրո և եղբայրության վեհ պատգամը քարոզելու ժողովրդին. կգնան, հետու պահելու իրենց հոտին գառնազգեստ գայլերից, որոնք գարանամուտ սպասում են հարմար առիթի, որպեսզի փախցնեն անմեղ տչխարներին։

Վեհափառը խաչով օրհնում է նվիրյալներին և աղոթում։ Թո՛ղ օրհնյալ լինեն նրանք, Լուսավորչի Ս. Աջը թո՛ղ զորավիգ լինի նրանց, փրենց ծանր ու դժվարին պարտականությունները կատարելիս։

Ժամը արձակվում է։ Թափորը նույն կարգով դուրս է գալիս։ Ուշ երեկո է։ Դրսում չորս կողմը ճառագում են էլեկտրական լամպերը, իսկ զանգակատան վրա, էլեկտրական լույսերով երփզված, փայլում է հայրապետական էմբլեման՝ կաթողիկոսական խույրը, խաչն ու գավազանը։ Ժողովուրդը խուռներամ լցվել է վանքի բակը։

Գիշերը տեղի է ունենում հսկում։

***

Կիրակի է։ Մայր Տաճարում սկսվել է առավոտյան ժամերգությունը։ Դպիրները սաղմոսերգում են։ Լսվում են սաղմոսի վերջին բառերը. «Ողորմութեամբ քով սատակեա՛ զթշնամիս իմ, և կորո՛ զամենայն նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ»։

Տաճարում ծայր է առնում «Առաւօտ լուսոյի՝ ժողովրդականացած այդ հոգեոր երգի քաղցրալուր, ռիթմիկ եղանակը, որն արձագանքում է երկա՛ր ու կերկերուն։ Որքա՛ն խնդրվածք ու աղերս կա երգի բառերի ու եղանակի մեջ. «Սէր անուն Յիսո՛ւս, սիրով քով ճմլեա՛ սիրտ իմ քարեղէնս»։

Երկար է տևում ժամերգությունը։ Հայ եկեղեցու ժամակարգության ամեն մի տողը իր մեջ ունի ներծծած Փրկչի ավանդած խաղաղասիրական, մարդասիրական վեհ ու առողջ գաղափարները։

Առավոտյան ժամերգությունից հետո տեղի պիտի ունենա եպիսկոպոսական օծում ընդունելու եկածների հանդիսավոր հավատարմության ուխտն ու երդումը։ Ահա Իշման Սեղանի առաջ շոքել են եպիսկոպոսացուները շուրջառազգեստ, իսկ նրանց առջև և չորս կողմը կանգնած են եպիսկոպոսներ, միաբանները, հավատացյալ ժողովուրդը։ Նվիրյալներից ավագագույնը կարդում է երդումը, իսկ մյուսները կրկնում են։ Սրբազան է այդ ուխտը և նվիրական։ Նրանք ուխտում են չշեղվել աստվածային ուղիղ վարդապետությունից, ընթանալ ճշմարտության ուղիղ ճանապարհով, ճանաչել իրենց աստիճանն ու կոչումը, ըստ արժանվույն վարվել ժողովրդի հետ և մինչև վերջ լինել նրա հետ։ Նրանք երդվում են մինչև վերջ հավատարիմ մնալ Մայր Աթոռին և ճանաչել նրա գերագահությունն ու նրա գահակալի իշխանությունը։ «Խոստանամք և ուխտեմք հաւատարիմ լինել Սրբոյ Էջմիածնի մինչև ցվախճան կենաց մերոց։ Եւ կալ մնալ հլու հպատակութեամբ ի ներքոյ իշխանութեան և հրամանաց Սրբոյ Կաթուղիկէ Մայր Աթոռոյս...»։ Նրանք այսօր իրենց եպիսկոպոսական ձեռնադրությամբ դառնում են Ս. Էջմիածնի անդամ և միաբան, ուխտելով ծառայել նրան. «...Սատար լինելով մերովանն ջանիւք յառաջադէմ զարգացման և պայծառութեան տրին յամենայնի»։

Այնուհետև նվիրյալները ահավոր երդումով և փրենց ստորագրություններով վավերացնում են իրենց սրբազան ուխտը, առաջի Աստուծո և ժողովրդյան։

Այսպես է Հայ Եկեղեցու եպիսկոպոսական ձեռնադրության նվիրական օրենքը՝ հանդիսավոր երդում տալ հավատարիմ լինելու Ս. Էջմիածնին, Հայրենիքին և ժողովրդին։ Եվ այն ո՞վ է, որ պիտի համարձակվի դրժել այդ սրբազան ուխտը, ուրանալ Ս. Էջմիածինն ու դավաճանել Հայրենիքին։

Երդման արարողությունից հետո, երգմնագիրը առած, նվիրյալները գնում են Վեհափառ Հայրապետի մոտ, որը նրանց խրատում է իր հայրական հորդորներով և պահպանիչ աստերով, արձակում։

***

Հուլիսի 8-ն է, կիրակի։ Դրսում հուլիսյան կիզիչ արևը իր կրակն է թափում երկնքից։ Վանքի բակում ժողովուրդը պատսպարվել է ստվերախիտ ծառերի տակ։ Բակի մի հեռավոր ծայրում հայ հավատացյալը իր մատաղն է անում, լսվում է մորթվող գոհի օրհասական բառաչը։ Մեկ ուրիշ տեղ, մատաղ-

Վեհափառ Հայրապետը օծում է Վազգեն եպիսկոպոսի ճակատը

ների մոտ լի կախաններն են եռում։ Այսօր բազմությունը սովորականից շատ է։

Մայր Աթոռի միաբանությունը արտակարգ տենդագին դրության մեջ է։ Թանգարանի պահարաններից հանում են թանկագին շուրջառներ, եմիտորաններ, եպիսկոպոսական խույրեր, դավազաններ, հայրապետական նուրբ, ասեղնագործ զգեստներ, ամեն տեսակ շապիկներ, դուլնզդուլն ուրարներ, բուրվառներ, զանազան սպասներ և այլն։ Ավագ լուսարարի դլուխը շափից դուրս խառն է այսօր։

Ձեռնադրության մասնակցողները բոլորը Ս. Գեորգյան պահարանումն են։ Նվիրյալները զգեստավորվում են սարկավագների ոգնությամբ։ Խարտավիլակ քահանան հագնում է մետաքսյա գեղեցիկ շապիկ, փորուրար, կապում է արծաթապատ գոտին, անց է կացնում աջ ձեռին բազպան և դրվին դնում սաղավարտ։ Եվ այսպես, զգեստավորվում են բոլոր հանդեսին մասնակցողները և կազմ ու պատրաստ, սպասում Վեհափառ Հայրապետին։ Միաբանների մի մասը գնում է Վեհին բերելու։ Տաճարում այնպիսի մի բազմություն է լցվել, որ անկարելի է տեղից շարժվել։ Թափորը, դժվարությամբ ճանապարհ բաց անելով, մտնում է Տաճար։ Պահարանում զգեստավորում են Վեհին։ Հայրապետական գեղեցիկ ասեղնագործված զգեստները անչափ պատշաճում են նրան։ Արդեն գցում են կաթողիկոսական ձյունաթույր շուրջառը, կողքից կախված է հայրապետական կոնքեռը։

Երբ ամեն ինչ պատրաստ է, զանգակի հընչյունները ազդարարում են թափորի դուրս գալը։ Դպիրները առջևից ընթանալով երգում են «Սուրբ Սուրբ» շարականը։ Նրանցից հետո տանում են խաչն ու խաչվառը, կողքերից անցնում են կերոնակիրները։ Ապա դալիս են սարկավագները, հագած սպիտակ շապիկներ, գոտի մեջքներին և սաղմոս ձեռքներին։ Նրանցից հետո գալիս են դռնապանները, սպիտակ շապիկներով, ձեռքներին բանալիներ։ Ապա հետևում են ընթերցողները, երգմնեցուցիչները, ջահընկալները՝ վառված աշտանակները ձեռքներին, ապա կիսասարկավագները, սարկավագները՝ տսկեզուն ուրարներ ուսներին, ավետարան և բուրվառ ձեռքներին, քահանաները՝ մասնատուփերով։ Ապա գալիս են երկու եպիսկոպոսներ՝ զգեստավորված և դավազանները ձեռքներին։ Նրանց հետևում են վերոնակիր դպիրները, ապա երկու վարդապետներ՝ կարմիր շուրջառներով, ձեռքներին հայրապետական խաչն ու դավազանը, ապա երկու բուրվառակիրներ՝ խաչմերուկ ուրարներով, դլխներին սաղավարտներ, երկու սարկավագներ տանում են հայրապետական քողը։ Ապա գալիս է ինքը՝ Հայրապետը, որից հետո հերթով շարժվում են խարտավիլակը, քշոցակիրները, և ապա, ամենից վերջը, նվիրյալները։ Հսկայական շքեղ թափորը հասնում է Տաճարի հարավային խորանի՝ Հովհաննես Մկրտչի սեղանի աստիճանների մոտ։ «Հրաշափառ Աստուած» շարականի հոգեցունց հնչյունները թնդացնում են օդը։ Երգի հնչյունները այնքան վարակիչ են, ազդու և խորխոր, որ անկարող ես չերգել, չձայնակցել։ Իշխան Սեղանի մոտ Վեհափառը լվանում է ձեռքերը, լվում են «մեղայի» մրմունջները։ Այսօր Վեհը սովորականից դուրս հագված է։ խաչակնքելիս, հուզմունքից նրա ձեռքը դողում է։

Թափորի մի մասը մնում է հարավային խորանի մոտ, իսկ Հայրապետը մյուս մասի հետ դարձրանում է Տաճարի հյուսիսային՝ Ս. Ստեփանոսի սեղանը, պատարագի սպասը դնելու։ Դպիրները ներքևում երգում են «Ընտրեալդ» մեղեդին, վարագույրը փակ է։ Անչափ խորհրդավոր է այսօր Ս. Պատարագը։ Ներսնազարդ Հայրապետը ծնկաչոք, արտասվալից աչքերով, սեղանի առաջ բազկատարած, երկյուղածությամբ կարդում է Ս. Գրիգոր Նարեկացու աղոթքը. «...Մաուչիմք մեծաւ դողութեամբ, սաստիկ երկիւղիւ մատուցանել նախ զքանդանաս զայս պատարագ քում անզնին զօրութեանդ, իբր ամենակալի, փառակալի և արարչակալի հայրենի անկապատ պատուոյդ, և քնարդի ծածկութեան խորոց խորհրդոց ամենակատար կամաց հօրդ էմմանուէլի, զքեզ առաքչի, Փրկչի և կենդանատուի և արարչի ամենայնի...»։ Սահում են տողերը իրար հետևից և արցունքները հանդարտիկ հոսում։ Այդ վեհ բոպեին նա նման է իր ազգի, իր ժողովրդի հոգու փրկության համար աղոթող, սիրտ և խոհ ազգության պատգամը շրթներին մի նոր մարգարե-առաքյալի։

Ս. Պատարագի սպասը դրվելուց հետո, քաշում են վարագույրը։ Դպիրները երգում են «Հովիւ քաջ բանաւոր հօտիս»։ Հայրապետը խնկարկում է շուրջ կողմը և ապա նստում հայրապետական աթոռին։ Նրա ուրքերի տակ փռված է արծվեկոդրը։ Աջ ու ձախ կանգնած են հայրապետական խաչն ու դավազանը բռնող վարդապետները։ Երկու սարկավագներ բռնել են Վեհափառի դիմաց Ձեռնադրության Մաշտոցը։

Առաջ է անցնում խարտավիլակ քահանան և բարձր ձայնով կարդում.

«Շնորհաղարդ Սուրբ Հայրապետ։ Այս ինչ յայտնի լիցի մեծի սէրութեան քում, զի միաբանք մեծի Սրբոյ և Առաքելական Աթոռոյս Էջմիածնի, հանդերձ համօրէն ուխտիս, այս ինքն եպիսկոպոսունք, քահանայք, սարկա-

Մի տեսարան եպիսկոպոսական ձեռնադրության հանդեսից

ւագունք, կիսասարկաւագունք, շարունակաւք, երգմնեցուցիչք, ընթերցողք, դռնապանք և սաղմոսասացք, այլ և իշխանք և աղքատք, խնդիր ունիմք ի բարձրագոյն Տէրութենէդ, վասն որոյ հայցեմք աղաչանօք, զի հրամայեսցես մեզ յանդիման լինել մեծանձնութեան քո և բացահայտել զխնդիր մեր»։

Մտածում ես խարտավիլակի արտասանած խոսքերի վրա և զարմանում, թե որքա՞ն ժողովրդական սկզբունքների վրա է հիմնված եղել և է մեր Եկեղեցու ձեռնադրության կարգը—մինչև հասարակության բոլոր խավերը, եկեղեցական պաշտոնեությունը վկայություն չեն տվել, նվիրյալին չեն ձեռնադրել եպիսկոպոս։

Հայրապետը պատասխանում է.

«Հրամայեալ է ձեզ ի Տեառնէ յառաջ մատչիլ և ողջամիտ դիտաւորութեամբ բացայայտել մեզ զոր ինչ խնդրէքդ»։

Ապա խարտավիլակը, դեմքը դեպի հարավային խորանը դարձնելով, բարձր ձայնով կանչում է.

«Հրամայեցէ՛ք սաղմոսասացք»։

Երկու բուրվառակիր սարկավագներ, «Սուրբ Աստուած» երգելով, բերում են սաղմոսասացներին, որոնք գալով աստիճանների մոտ, խոնարհաբար ծնրադրում են։ Ավագ սարկավագը ձայնում է. «Օրհնեա՛ Տէր»։ Վեհափառը օրհնում և խաչակնքում է նրանց վրա։ Լսվում է դպիրների ձայնը՝ «Ամէն»։ և եկածները, աստիճաններից ցած, կանգնում են իրար հանդեպ աջ ու ձախ։ Ապա նույն կարգով գալիս են և մյուսները և շարվում հերթով։

Գալիս են երկու եպիսկոպոսներ։ Վեհափառը խաչակնքում է նրանց վրա և ասում.

«Ցիշեսցէ Տէր զամենայն դպատարագս ձեր, և զուխտս ձեր ընդունելի արասցէ»։

Եպիսկոպոսները բարձրանում են սեղան և բազմում Վեհափառի աջ ու ձախ կողմերում։

Ամենից վերջ խարտավիլակ քահանան և մյուսները գնում են բերելու Նվիրյալներին։ Ահա գալիս են նրանք՝ օրվա հանդեսի շուքն ու պատճառը հանդիսացողները, ծնկաչոք, գլուխները կախ։ Ժամանակ առ ժամանակ լսվում են Վեհափառի կարդացած օրհնությունները, սարկավագների և դպիրների ձայնը, իսկ նվիրյալները արդեն ծնկաչոք հասել են խորանի առաջին աստիճանին։

Լսվում է Վեհի ձայնը՝ «Ընտրեաք և մարդասիրութեամբ Տեառն Աստուծոյ կոչեմ զնուիրեալսդ առ իս, որ եկեալ կոխեսցեն զառաջին աստիճանն»։

Նվիրյալներին հանում են առաջին աստիճանը, ապա սկսում են Կաթողիկոսի և խարտավիլակի հարց ու պատասխանները Նվիրյալների մասին։ Ապա կարդում են Նվիրյալների վկայության թուղթը, որից հետո լսվում է Վեհի ձայնը. «Որովհետև այդպէս է, ածէք զդոսա յերկրորդ աստիճան»։ Ապա կարդացվում են հոգևորական ու խարտական աղոթքները և Նվիրյալների պատասխանները։

«Հովուեսցիք զեկեղեցի ձեր արիապէս, և դատեսջիք զժողովուրդ ձեր անթիւր և անկաշառ ուղղութեամբ, և այց արասջիք որոց և այրեաց և ամենայն վտանգելոց և աղքատաց ժողովրդեան, ձեռն տալով ողորմութեան որչափ կարասջիք»։

«Յօժարի՞ք կատարել և ուսուցանել զողջոյն և զանիւք զամենայն ինչ ժողովրդեան ձեր, յորոց վերայ կարգիք, որպէս խրատիք ի տուրս գրոցս»։

Լսվում է պատասխանը, «Այո՛, Տէ՛ր, կամիմք»։

Ահա թե որպիսի մեծ չափերով է շեշտվում ձեռնադրության խորհրդի մեջ եպիսկոպոսի ժողովրդասիրության և ուղղամտության հարցը։ Եվ այսպես հարց ու պատասխանի միջոցով փաստվում է, որ եպիսկոպոսը պիտի լինի հեզ, ժուժկալ, հեռու ամեն տեսակ ախտերից, վատ սովորություններից, շահասիրությունից, նա պիտի լինի աղքատասեր, բարի ու առաքինի։ Նվիրյալները արդեն բարձրացել են 7-րդ աստիճանը։ Այստեղ ևս հարցում է տրվում նրանց Մայր Աթոռի և նրա ներկա Գահակալի և նրա հաջորդներին հավատարիմ լինելու վերաբերյալ, այնուհետև նրանց հանում են հայրապետական արծվեզորգին և Հայրապետը մեկ առ մեկ հարցնում է Նվիրյալներին Քրիստոնեական Եկեղեցու հավատի սկզբունքների մասին, հարցնում է թե, արդյո՞ք նրանք կողմնակից են երեք տիեզերական ժողովներին, ապա Հայ Եկեղեցու հայրապետների, աստվածաբան վարդապետների դավանանքին աջակերտո՞ւմ են, թե ոչ։ Մի փոքր հետո Նվիրյալներին նշանվել են տալիս ամեն տեսակի աղանդավորներին, հերձվածներին և նրանց առաջնորդներին։

Մինչև այստեղ վերջանում է Վեհի աղոթքով՝ «...Արժանաւորեա զսոսա խնդրել զփրկութիւն ժողովրդեան քո, և քեզ լանել ձայնի դոցա...»։

Դպիրները երգում են «Բարեխօսութեամբ», Վեհափառը իջնում է սեղանից եպիսկոպոսներով և մնացած պաշտոնեությամբ և խընկարկում Տաճարում։ Հասնելով ավագ սեղանին, բարձրանում է վեր, նրա հետ և մյուսները։ Մյուս դասակարգությունները կանգնում են ներքևում։ Աստիճաններով չոքչոք բարձրանում են Նվիրյալները։

«Օրհնեա, Թագաւորութիւնն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ...», լսվում է Վեհափառի ձայնը և պատարագը շարունակվում է մինչև «Զի որդեան և մարգարէք ես Աստուած...», տպա Վեհը նորից նստում է աթոռ և շարունակվում է ձեռնադրության խորհուրդը։ Վե-

հափառը Աչը հերթով դնելով նրանց գլխներին, կարդում է համապատասխան աղոթքը.

«Դո՛ւ Տէր, ...տո՛ւր սոցա նմանել քեզ ճըշմարիտ հովուիդ՝ դնել դանձինս իւրեանց ի վերայ ոչխարաց, առաջնորդ լինել կուրաց, լոյս խաւարելոց, խրատիչ անզգամաց, յուսատու տիեզերաց...»

Նվիրյալները իրենց գեմքերը դարձնում են դեպի արևմուտք և ձեռների ափերը վեր բարձրացնում։ Արդեն երդում են՝

«Աստուածային և երկնաւոր շնորհ, ...կոչէ զնոդիշն, զՍահակ, զնորայր, զՍուրէն և զՎազգեն վարդապետսն ի քահանայութենէ յեպիսկոպոսութիւն...»

Երդը երեք անգամ կրկնվելուց հետո, նրանք հետ են դառնում և Վեհափառը շարունակում է աղոթքները, ուր նրանց պատվիրում է միայն արժանավորներին ձեռնադրել, սր սիրով, հեզությամբ, հավատով ու ժուժկալ համբերությամբ անցկացնեն իրենց կյանքը։

Ապա երգում են «Փառաստութիւն երկնային» շարականը, կարդում են մարգարեությունների, առաքյալների թղթերից, ավետարաններից, ապա Հավատամքը, և պատարագը շարունակվում է մինչև «Ողջոյն տուք միմեանցաւ։

Լսվում է դպիրների և սարկավագների մեղմաձայն երգեցողությունը։ Վեհափառը, Աչը դնելով նվիրյալների գլխներին, կարդում է պոհարանական աղոթքները։

Ս. Գեորգյան պահարանից բերում են մյուռոնաթափ աղավնին։ Ջուլդ քուրվառափրները համաչափ ու գեղեցիկ խնկարկում են, աղավնին բերող եպիսկոպոսի կողքերով քայլում են կերոնակիրները և քշոցակիրները։ Կաթողիկոսը ելնելով նստած տեղից, երեք անգամ խնկարկում է, և ապա վերցնելով մյուռոնաթափ աղավնին, տյառնադրում է ժողովրդի վրա։

Որքան գեղեցիկ իմաստ են դրել մեր նախնիք՝ սիմվոլացնելով աղավնուն։ Դարերի ընթացքում ժողովուրդների կողմից այն ըմբռնվել է որպես բարի ավետաբեր, ձիթենու դալար շյուղը բերնին։ Այդ ձյունաթույր, սպիտակ թռչունը անմեղության է նշանակ. մարդկանց, անգամ Ս. Հոգուն պատկերացրել են աղավնակերպ, և մեր օրերում էլ նա պահել է իր հին նշանակությունը, ավելացնելով և նորը։ Այսօր աղավնին խորհրդանշանն է խաղաղության, բազմադդ խաղաղասեր ժողովուրդները իրենց դրոշների վրա նկարում

Մի տնտարան եպիսկոպոսական ձեռնադրության ճանկնոցից

են ձերմակ աղավնիներ, մանուկները իրենց կրծքերին կրում են աղավնիներ։

Ահա թե ինչպիսի խոներ ու մտածումներ է առաջ բերում արծաթափայլ, սրբալույս մյուռոնով լեցուն աղավնին, որը երկյուղածությամբ բռնել է Կաթողիկոսը և երգելով Առաքելոյ աղամոյս շարականը, թափում է մյուռոնը աղավնուց մի այլ մյուռոնամանի մեջ։ Թոռնի կաուցից կաթկթում է ոսկեգույն, անուշաբույր յուղը, իսկ աղավնին թվում է թե հիմա, ուր որ է կթռչի և համայն աշխարհին կավետի, որ խաղաղություն կհաստատի։ Նվիրյալները եպիսկոպոսական զգեստավորումով կանգնած են սեղանի աջ կողմում, կաթողիկոսը հերթով օծում է նրանց ճակատները և աջ ձեռքի բթամատները և կարդում է վերջին աղոթքները։

«Օծումնս, զոր հեղեր առատութեամբ ի գլուխս սոցա, սփռեսցի լիապէս ընդ ամենայն մարմինս սոցա... մնասցեն միշտ ի հաւատս և ի սէր ճշմարտութեան, ի պարզամտութեան և ի խաղաղութեան, որ իւրեանց եղիցին զեղեցիկք յաւետարանել զխաղաղութիւն և զամենայն բարութիւն։ ...Մի դիցեն զլոյսն՝ խաւար, և զխաւարն՝ լոյս, զչարն՝ բարի, և զբարին՝ չար, այլ արդարութեամբ կացցեն ի գլուխս ժողովրդեան քոյ։

Ապա նորընծա եպիսկոպոսներին տրվում է գավազան և մատանի, համապատասխան աղոթքներով։

Վեհը կարդում է արդեն վերջին ավետարանը, որից հետո պահպանիչով ավարտում է ձեռնադրության հանդեսը։

Վեհափառ Հայրապետը մեկ մեկ մոտենում է նորաօծ եպիսկոպոսներին, համբուրում նրանց ճակատները և ասում. «Սիրելինե՛ր, հավատարիմ ծառայեցեք ժողովրդին և Եկեղեցուն, երբե՛ք մի մոռացեք ձեր Հայրենիքը, ձեր խանդակաթ մորը՝ Մայր Աթոռ Կաթուղիկե Ս. Էջմիածինը։ Մի՛ մոռացեք, որ ձեր վրա այսօրվանից խոշոր բարոյական պարտավորություններ են դրվում, աշխատեցե՛ք պատվով կատարել դրանք։

Վեհը վերջացնելով իր խոսքը, իջնում է սեղանից և անցնում պահարան. անչափ հոգնեց նա այսօր, նրանից ավելին պահանջել անկարելի է։ Տաճարում անասելի տոթ է, քրտինքը թափվում է բոլորի վրայից ուղղակի հեղեղի նման։ Վեհը մի փոքր հանգստանալուց հետո, միաբաններից մի քանիսի առաջնորդությամբ անցնում է Վեհարան։

Սուրբ Պատարագը շարունակում է ավագույն հոգևորական Ռուբեն արքեպիսկոպոս Դրամբյանը։ Հինգ նորընծա եպիսկոպոսներ, գավազանները ձեռքներին, կանգնած են սեղանի աջ կողմում, դեղեցիկ տեսարան կազմելով։

«Հայր մերոյից առաջ պատարագիչ սրբազանը ավուր պատշաճի քարոզ է տալիս։

Իր քարոզի մեջ նա այն միտքն է հաղորդում, որ եպիսկոպոսական ձեռնադրությունը դարերով սրբագործված Հայ Եկեղեցու նվիրական արարողություններից է։ Ձեռնադրվողները սոսկ հոգևորականներ չեն, այլ նրանք ստանում են մեծ պատասխանատվություն ժողովրդի և Եկեղեցու առաջ։ «Սրանք են, որ պիտի պահեն ու պահպանեն Հայոց Եկեղեցու, Հայ հավատացյալի կրոնական պայծառ կերպարը, Հայ ժողովրդի բարոյական կերպարը, հանուն քրիստոնեական լուսապայծառ գաղափարների։ Աստված այսօր սրանց մեծ շնորհի արժանացրեց։ Տա Աստված, որ նրանք իրենց կոչման բարձրության վրա լինեն, աջակցեն մեր ազգային և եկեղեցական միասնությանը, ի փառս մեր ժողովրդի և Հայոց Հայրապետության։ Սփյուռքում, ուր չունենք Հայրենի պետություն, որ հոգա ժողովրդի առօրյա կարիքներն ու կյանքը, կրոնական և ազգային բազմաթիվ խնդիրներ են ծառանում դրսի հայ հոգևորականության առաջ և դրա համար էլ, նրանցից պահանջվում է անսահման ճիգ ու ջանք և նվիրվածություն։ Խորապես համոզված եմ,— վերջացնում է սրբազանը իր խոսքը,— որ Տերը կօժանդակե նրանց և նրանք ի վիճակի կլինեն իրենց հովվության ընթացքում Սփյուռքի հայ ժողովրդին դիմել բոլոր առաքինություններով և է՛լ ավելի ամրացնել Սփյուռքի հայությունը, Մայր Հայրենիքի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միասնական կապը։

Ս. Պատարագից հետո նորաօծ եպիսկոպոսներին շնորհավորում են վանքի միաբանները, որից հետո նրանք իջնում են բեմից ցած, ուր ժողովուրդը շնորհավորում է նրանց և համբուրում նրանց սուրբ աջերը։

Վերջում բոլորը գնում են Վեհի մոտ ճաշի։ Մինչև ուշ երեկո տեղի է ունենում հարկերույթ, խմում են պանագան կենացներ, երգում, ուրախանում և սիրալիր մթնոլորտում անց կացնում սիրս այդ անմոռանալի երեկոն։

***

Հայ Եկեղեցին այսօր ստացավ իր արժանավոր հինգ եպիսկոպոսները։ Տերը թո՛ղ գորավիգ և օգնական լինի նրանց, ժողովրդի և Վեհափառ Հայրապետի օրհնությունը թո՛ղ անպակաս լինի նրանցից։

Աստուծով, որպես Հայ Առաքելական Եկեղեցու անձնվեր ու քաջ հովիվներ, թո՛ղ իրենց հոտը հովվեն ու պահեն ոչ վայրի

դալարուշ և «սառ ջուրս հանդստեանն» անուշանեն։

Նրանք դեռ մի քանի շաբաթ կմնան Սովետական Հայաստանում, իրենց աչքերով տեսնելու այն վիթխարի հաջողություններն ու նվաճումները, որ կատարվել են մեր երջանիկ երկրում։ Ամեն առավոտ նրանց կտրթնացնեն մեր ռեսպուբլիկայի վիթխարի գործարանների շչակների երգարտաև, ուրախ ձայնները, ուր գործարանների հսկա մեքենաների կենսատու ժիտրի, դղրդ ու ճռինչի մեջ եռում է աշխատանքը և կոփվում է նոր աշխարհի, նոր մարդկանց կամքն ու հերոսությունը։

Նրանք կտեսնեն մեր վիթխարի շինարարությունները՝ զարմանահրաշ նորակառույց վարդագույն պալատները, որոնց պատերից կախված են հայ վարպետի բանդսնված նուռն ու խաղողը։ Նրանք մեր դաշտերում այլևս չեն տեսնի նախնադարյան արօրն ու գութանը։ Նրանք կլսեն հանդացող տրակտորների և կոմբայնների ձայնը, և խաղաղության առատ բերքը ժողովող մեր կոլտնտեսականների՝ մեքենաների ազմուկին խառնվող ուրախ ու երջանիկ երգը։ Կտեսնեն նրանք մեր արվեստի հոյակապ ստաձարները, կհիանան, կապշեն հսկայական նվաճումներով և կժպտան իրենցով։ Եվ ի վերջո նրանք կծանոթանան մեր ժողովրդի հետ և մանուկից սկսած մինչև ծեր դուխանը։ Նրանք կլսեն հանդացող տրակտորների և կոմբայնների ձայնը, և խաղաղության առատ բերքը ժողովող մեր կոլտնտեսականների՝ մեքենաների ազմուկին խառնվող ուրախ ու երջանիկ երգը։ Կտեսնեն նրանք մեր արվեստի հոյակապ ստաձարները, կհիանան, կապշեն հսկայական նվաճումներով և կժպտան իրենցով։ Եվ ի վերջո նրանք կծանոթանան մեր ժողովրդի հետ և մանուկից սկսած մինչև ծեր

Նորաձև եպիսկոպոսները Օշականում, Ս. Լուսավորիչ ուղեկցող անձանց հետ։

բուներին նրանց կպատմեն իրենց երջանիկ կյանքի, պայքարի ու աշխատանքի մեծամեծ հաջողությունների մասին։

Շուտով նրանք կմեկնեն։ Այժմ բարի ճանապա՛րհ, բարի վերադա՛ռձ, մեր թանկագին բարեկամնե՛ր, կռունկի թևով բարի լուրեր տարե՛ք մեր հարազատներին, մեր հողից ու ջրից, մեր ժողովրդից՝ կապուտաձ սրտերին սիրո ավետաբեր ողջույններ տարեք։

ԶՐՈՒՅՑ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԵՂԻՇԵ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ՀԵՏ՝ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՑ ԵՎ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ ԻՐ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ինչպես հաղորդվում է ներկա համարի ուրիշ էջերում, վերջերս Սիդյուրքից Մայր Աթոռ ժամանեցին չորս հոգևորականներ, Վեհափառ Գեորգ Զ.-ի կողմից եպիսկոպոսական օծում ստանալու համար։ Նրանցից մեկն էր երիտասարդ և շնորհալի մտավորական Եղիշե եպիսկոպոս Տերտերյանը, որը Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց Առաքելական Աթոռում վարում է միաժամանակ պատրիարքական տեղապահի, լուսարարապետի և Պատրիարքարանի տրգան «Սիոն» ամսագրի պատասխանատու խմբագրի պաշտոնները, մեծագույն ձեռնհասությամբ։

Եղիշե սրբազանը հայտնի է նաև որպես տաղանդավոր բանաստեղծ։ Ցնայած իր հարաբերաբար երիտասարդ հասակին, ունի արդեն տպագրված մի շարք արժեքավոր ժողովածուներ— «Մագիաղինեն մեղրամոմեռ», «Հորտակման գիշերներս», «Անցորդը» և այլն։

«Էջմիածին» ամսագրի ընթերցողների համար շահեկան համարեցինք, իր Հայրենիքից մեկնումի նախօրեին, իմանալ բանաստեղծ հոգևորականի տպավորությունները Մայր Աթոռից և Մայր Հայրենիքից։

— Սրբազա՛ն, ի՞նչ է Ձեր տպավորությունը Մայր Աթոռից։

— Մայր Աթոռի մասին իմ տպավորությունը ավելի քան սրտապնդիչ է։ Հայրենի կառավարությունը, մա՛նավանդ Հայրենական մեծ պատերազմեն վերջ, ոժանդակ կհանդիսանա Մայր Աթոռին և Հայ Եկեղեցիին, լայն իրավասություններով և առանձնաշնորհումներով ոժտելով զանոնք։ Հայրենի կառավարության այդ դրական վերաբերմունքն ունի անշուշտ իր պատճառները։ Տարիներու փոխադարկությեն հետո, մեր հայրենի երկրի կառավարությունը հաստատեց, թե Հայ Եկեղեցին եղած է միշտ ու շարունակ իր պետության, իր Հայրենիքին և իր ժողովուրդին հետ։ Դարեր ու դարեր Հայ Եկեղեցիին գերագույն բաղձանքն ու երազն էր եղած՝ տեսնել իր Հայրենիքը ազատագրված։ Ու երբ այսօր, Հայ Եկեղեցին իր այդ դարավոր բաղձանքն ու երազը իրականացած կտեսնե, չի կրնար չհանդավառվիլ։ Իսկ փոխադարձաբար հայ պետականությունը, երբ Հայ Եկեղեցիին մեջ կհաստատե դարավոր հայրենասիրության սկզբունքն ու իրականությունը, չի կրնար չնվատել զանոնք։ Հակառակ արտասահմանի մեջ շրջան ընող այլընդայլ զրույցներու կրոնի և Մայր Աթոռի ի՞նչ թե կաշկանդված ըլլալու մասին, կրնամ անվարան հայտարարել, թե էջմիածինը մեր Հայրենիքին մեջ միանգամայն ազատ է և բացարձակ ոչ ոք չի միջամտեր անոր գործերուն։

Առայժմ էջմիածինը չունի երիտասարդ և պատրաստված ուժեր, բայց մեծ հույսեր կան, որ ճեմարանավարտ սարկավագները շուտով պիտի լեցնեն տարիներով պակսածները տեղը, ինչ որ Վեհափառին մեծագույն մխիթարանքն ու երազն է։ Հոգևոր ճեմարանի ծրագիրը մեր կրոնական բարձրագույն ընծայարաններու ծրագիրն է, որ տարիներե ի վեր առաջ կտարվի վերին աստիճանի պատրաստված, ձեռնհաս դասախոսներու անձնակազմի մը կողմե։

Ես էջմիածին հասա, երբ արդեն ավարտած էին ճեմարանի տարեվերջի քննությունները, և, դժբախտաբար, չկարողացա ներկա ըլլալ այդ քննություններուն։ Բայց փնթի ընծայվեցավ քաղցրագին առիթը աչքն անցընելու ընծայացուներու ավարտական թեզերը, և այդ թեզերեն երկուքին՝ Նարեկացիի և Սայաթ Նովայի մասին ուսումնասիրությունները։

ներուն քննարկումը ես կատարեցի։ Իմ տպավորությունը այդ թեզերու հեղինակներուն ուսումնական մակարդակին և հասկացողության մասին ավելի քան դրական է։

Շնորհիվ Նորին Ս. Օծության Հայրապետին իմաստուն ղեկավարության և տեսուչ պարոն Մինասյանի ջանքերուն, ինչպես նաև պրոֆ.-դոկտ. Աշոտ Աբրահամյանի, պրոֆ. Առաքել Առաքելյանի, ֆիլոլոգիական գիտություններու թեկնածու Արմենակ Պողոսյանի և ուրիշ դասախոսներու աշխատանքին, Հոգևոր Ճեմարանը կմնա իրեն վայել բարձրության վրա։

— Ի՞նչ տպավորություն ստացաք Վեհափառի անձնավորությունից։

— Ամենայն Հայոց Հայրապետը մեր անցյալ և ներկա անվանի և մեծ եկեղեցականներեն է, մին այն բացառիկ դեմքերեն, որ մեր վերջին հարյուրամյակի ընթացքին մատներու վրա միայն կրնան համրվիլ։ Իմաստուն, գիտուն, և ժամանակն ու ճշմարտությունը իրարու հետ հաշտեցնել կրցող պատմական դեմք մըն է Վեհափառը։

Շատ քիչերը, գուցե ոչ ոք, պիտի կրնային իրագործել այն առանձնաշնորհումներն ու իրավունքները, զորս Նորին Վեհափառությունը կրցավ արժևորել էջմիածնի վերաբերմամբ։ Հարգանքն ու համակրությունը, զորս ան կվայելե ինչպես մեր Մայր Հայրենիքի վարիչներեն, այնպես ալ բովանդակ Միության ղեկավարներեն, իրենց դերն ու նշանակությունը ունին և պիտի ունենան անտարակույս մեր եկեղեցիի կյանքին մեջ։

Իր մեծագույն և վառ բաղձանքներն են՝ Էջմիածնի Մայր Տաճարին վերանորոգումը, բարձրագույն կրթությամբ օժտված հոգևորականներու հույլի մը պատրաստությունը, խաղաղության վերջնական հաստատումը աշխարհի վրա, և հայ ժողովուրդի հայրենահավաքման գործին իրականացումը Հայաստանի մեջ։

Քիչ եկեղեցականներու հանդիպած եմ մեր նվիրապետական բարձրագույն աստիճաններուն վրա, որ իմ վրաս թողուցած ըլլան այնքան մեծ տպավորություն, որքան Ամենայն Հայոց ներկա Հայրապետը՝ Վեհափառ Գեորգ Զ.։

Ուրախ եմ հայտնելու թե, նախախնամականորեն կարծեք, Նորին Ս. Օծությունը, հակառակ իր տարիքին, քաջառողջ է ֆիզիկապես և առույգ ու կորովի մանավանդ իր մտքով և հոգիով։

— Ի՞նչ տպավորություն կրեցիք մեր մայրաքաղաքից և Մայր Հայրենիքում Ձեր տեսած մյուս վայրերից առհասարակ։

— Պատահական ճամբորդներեն և տեղեկատուներեն շատ բան լսած և կարդացած էի մեր Հայրենիքի կրթական, մշակութային-գեղարվեստական, արդյունաբերական, գյուղատնտեսական և շինարարական աշխատանքներուն և հառաջդիմություններուն մասին, սակայն երբե՛ք չէի կրնար երևակայել, թե իմ տեսածս շատ ավելին պիտի ըլլար լսածներես և կարդացածներես։

Երևան քաղաքը, հայկական ոճով և հայրենի երկրի սրտեն արտահանված քարերով կառուցված հոյակապ շենքերով է զարդարուն, մեծ մայրաքաղաքի մը վայել արդիականությամբ։ Իր լայնարձակ, ասֆալտված, ծառազարդ պողոտաները, իր պետական և քաղաքական հիմնարկները, իր մտավորական օջախները, իր հիվանդանոցները և այլն, մեր մայրաքաղաքին կրնծայեն հմայք մը և վայելչություն մը, որոնց առջև չի կրնար չխանդավառվիլ և շհպարտանալ հայրենասեր հոգին։ Իսկ մեր մայրաքաղաքին որոշ թաղամասերուն մեջ և շրջակաները կառուցված ընդարձակ գործարաններն ու ֆաբրիկաները, իրենց այլազան և մեծաքանակ արտադրություններով, պատիվ կբերեն մեր երկրի իմաստուն վարիչներուն և մեր շինարար ժողովուրդին, որոնց նկատմամբ միայն երախտագիտական պարտք կրնանք զգալ Սփյուռքի հայերս։

Բանաստեղծ եկեղեցականը ոտքի է կանգնում և երթևեկում Ինտուրիստ հյուրանոցի իր հարկաբաժնի հյուրասենյակում։ Իր ասելիքները դեռ չի վերջացրել. սև ու խիտ հոնքերի ներքո իր սև աչքերը բոցկլտում են հորդահոս հրճվանքից. հայրենի երկիրը տեսած ու վայելած մարդու հոգեկան բավականությունը արտացոլվում է իր հայացքի և ժպիտի մեջ։ Ջերմ ու սիրազեղ ձայնով շարունակում է նա.

— Ինձի պատեհություն տրվեցավ այցելելու մեր պատմական զանազան վայրերը. տեսա Կարմիր Բլուրը, Դվինը, Զվարթնոցը... Հիացա առաջ տարված աշխատանքներով՝ ի խնդիր մեր անցյալի վերբերումներուն։

Եղա Աշտարակ, Օշական, Սևան, Գիլիջան, Գեղարդ, Գառնի, Բյուրական, Ծաղկաձոր և ուրիշ զանազան վայրեր, ու հոգիս լեցվեցավ դմայլանքով, մեր հայրենի բնության գեղեցկություններուն առջև։ Տեսա Մասիսը...։

Այցելեցի կոլտնտեսություններ և սովխոզներ, տեսա այն աշխատանքն ու արդյունքը, որ գիտականորեն կազմակերպված կերպով առաջ կտարվի տարիներե ի վեր հայրենի հողի սրտին վրա, արժևորելով հողը և պտղավորելով զայն։ Այցելեցի նույնպես կոլտնտեսականներու անհատական բնակարանները և ուրախացա անոնց ակներև բարոր և ունևոր կյանքին ի տես։

Այցելեցի նույնպես բազմաթիվ մեծ ու փոքր գործարաններ և հիացումով լեցվեցա տեսնելով աշխատանքն ու արդյունքը։ Հայաստանը դարձած է արդյունաբերական ծաղկուն երկիր, որու արտադրությունները երկրին կարիքները բավարարելեն հետո՝ կոզոդեն նաև Սովետական Միության շատ երկիրներուն շուկաները։

Զանց կընեմ խոսելու, ճշտիվ այն պատճառով, որ կարելի է ժամերով խոսիլ ու նյութը չսպառել՝ մեր մայրաքաղաքի կրթական, գեղարվեստական, մշակութային օջախներուն մասին. եղա համալսարանը, օպերան, թատրոնը, հանրային գրադարանը, մատենադարանը, օպերետային թատրոնը և այլն, և ըսեմ միայն, թե անոնք ավելի քան պայծառ են, հիանալի...։ Եվ անոնք որեօր կհառաջդիմեն ու պատիվ կբերեն մեր ժողովուրդին։

Ուրախության ուրիշ պատճառ է մեզ համար ա՛յն, որ հայրենի երկրի մեր ժողովուրդը դարձած է ամեն մարդի մեջ հառաջդիմության ընդունակ տարր մը։

Հայաստանի մեջ աշխատանքը սուրբ է, հառաջդիմությունը՝ նպատակ, և համագործակցությունը՝ ուժ։ Ահա թե ինչո՛ւ այնքան ուժգին կերպով կհառաջդիմե հայրենի աշխարհը։

Եթե բաղդատենք Մայր Երկրի և Սփյուռքի հայ զանգվածները, բաղդատությունը Սփյուռքի հայության օգտին չէ, և ասիկա անշուշտ հասկնալի է։ Սփյուռքի հայությունը անտարակույս որ հայրենասեր է իր ստվար մեծամասնության մեջ. այս մասին տարբեր կարելի չէ մտածել։ Եվ սակայն անոր մեկ փոքրաթիվ մասը կմտածե իր Հայրենիքին մասին ճիշտ այնպես, ինչպես կմտածե վաճառականը՝ իր գնելիք ոչխարին դմակին, բուրդին և մսին մասին...։ Այդ հոգեբանությամբ վարակված մասը կուզե թե՛ հայրենասեր ըլլալ և թե՛ մնալ նույն ատեն հավատարիմ այն պայմաններուն, որոնց մեջ կապրի...։

Այս հոգեբանությենեն դուրս կմնան այն զանգվածները, որոնք իսկապես հայրենասեր են, որոնց սիրտը կգտնվի Հայրենիքին մեջ, և որոնք անմար բաղձանքն ունին դալու իրենց ալ, վերջ տալով պանդխտության դառնություններուն։

Շնորհալի խոսակիցս, որ զրուցում էր երթևեկ կատարելով սենյակում, կանգնեց իմ դեմ և ինտերվյուն եզրափակեց այսպես։

— Ցանկալի Հայրենիքը կսիրեի հեռվեն, երբ դեռ անձամբ ծանոթ չէի անոր. այժմ, երբ սեփական աչքերով տեսա ամեն ինչ, կսիրեմ զայն առավե՛լ հավատքով և առավե՛լ համոզումով։ Իրո՛ք, սքանչելի է մեր երկիրը. Տարիներե ի վեր իմ լսած և կարդացած զրվասանքներս իրականության ընդդիմումեն, պարապնդումեն վար կմնան։ Սքանչելի է մեր երկիրը և սքանչելի է մեր ժողովուրդ։

ԴՂԹԱԿԻՑ

ՎԱՉԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՇՈՂԱԿՆԱՓ ԼՈՒՍՍ ԽՈՐԱՆ՝ ԷՋՄԻԱԾԻՆ

«Լոյծ զկոշիկս քո յոտից քոց. զի տեղիդ յորում կաս դու՝ ի դմա, երկիր սուրբ է»։

(ԳԻՐՔ ԵԼԻՍ, Դ 5)

Ուսաբնակ նախնիք մեր անխախտ կերպով հավատացին, թե Աստված կխոսի մարդկանց հետ իր ընտրյալներուն միջոցով։ Հավատացին, թե կան ժամանակներ, երբ երկինքը կմոտենա երկրին, տառապող մարդկության ցույց տալու համար փրկության ճանապարհը։

Եվ ահա, Որդին Աստուծո ու Փրկիչը մեր, շատ դարեր առաջ խոսեցավ մեր աշխարհին, հայոց աշխարհին, մեծ Լուսավորիչ Գրիգոր Պարթևի հրաշք-երազով։ Պատգամն էր երկնային, խոսքն աստվածային, որ իջավ ի Հայաստան աշխարհ, հյուսելով հրաշալի լուսե երազը Սուրբ Լուսավորչին։

Մենք վավակներն ենք այդ լուսե երազին։

Ու այսօր ալ, ինչպես մեր նախնիք, կխոստովանինք՝ «Ցայսմ հաստատց զմեզ ոչ ոք կարէ խախտել»։

Այստեղ, Արարատյան դաշտի սրտին վրա, Իջման այս Սուրբ Սեղանի առաջ, մեզ համար հայտնված է խոսքը։ Այստեղ մորենին վառյալ է հրով, և չայրիր մորենին։ Այստեղ է Մայր Աթոռն մեր «աստվածակերտ, սքանչելի, հրեղեն»։

Հա՛յ ժողովուրդ, խոնարհի՛ր հավատով ու երկյուղածությամբ, վասնզի այստեղ «երկիր սուրբ է»։

Ազգիս Վեհափառ Հայրապետը, շատ տարիներ առաջ, այն ատեն վարդապետ, խոսելով Ս. Էջմիածնի մասին, ըսեր էր՝ «Քրիստոսի սիրո կրակը և լուսո հրաղը վառվեցին նաև մեր երկրում Ս. Լուսավորչի շնորհիվ, որ հիմը դրավ բոլոր հայ եկեղեցիների մայր՝ Սուրբ Էջմիածնին»։

Այսպես է իրոք։ Դարեր շարունակ Միածնի Իջման այս Սուրբ Սեղանը, եղավ սիրո և լույսի աղբյուր, ինչպես Խորենացին կվկայե՝ «մերոյ լուսաւորութեան լուսաւոր վերակացուն», եղավ հայ ժողովուրդի մայր դաստիարակը Տիրոջ Ավետարանի վեհ ու ազնիվ գաղափարներու ուղիով։ Եղավ նաև պահապան ու պաշտպան իր զավակներուն, պահապան ու պաշտպան Հայրենյաց ոչխարներուն, պահապան ու պաշտպան հայ պետության։ Ճշմարիտ է, և մեր հազարամյա պատմությամբ նվիրագործված Առաքել Դավրիժեցիի խոսքը թե՝ «Ի վերայ Աջոյն և Էջմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալ կան»։

Այսօր ևս տարբեր չէ իրականությունը։

Այսօր ևս Հայաստանյայց եկեղեցին, իր հայրենասեր մեծ Հայրապետի ղեկավարությամբ, հայ ժողովուրդի կողքին է, հայ հարազատ պետության կողքին է, ազգային միասնականության, ազգահավաքման, հայրենաշինության, խաղաղության և հառաջդիմության լույս գաղափարներով ու ծրագիրներով առաջնորդված։ Հայ ժողովուրդն ու Հայ Եկեղեցին անբաժանելի եղած են ու պիտի մնան։ Մեկը առանց մյուսին պիտի չկարենար ապրիլ, առանց կորսնցնելու իր հարազատ դիմագծությունը։

Ահա թե ինչո՛ւ միայն Հայաստանյայց Եկեղեցվո ծոցին մեջ, միայն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կենարար լույսի մեջ, հայ հավատացյալը կգտնե աղբյուրը երկնային շնորհներուն և ստեղծագործ հանճարին։

Հայաստանյայց Եկեղեցիեն դուրս, ինչքան ալ շողշողուն երևնան ծիրանավորներու

հրավերներն ու խոստումները, հայուն համար կմնան անոնք օտար ու հավետ խորթ։ Հայ մարդը լավ գիտե, թե մեր ժողովուրդը ունի մեկ հարազատ եկեղեցի՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, որ ճշմարիտ ու անբաժանելի մասն է մեր Տիրոջ՝ Քրիստոսի մարմնույն։

Հայ ժողովուրդն ու Հայ Եկեղեցին, դրեթե միասին ծնած որպես հոգեկան-մշակութային իրականություններ, միասին ապրեցան դարեր շարունակ, միասին աճեցան ու ծաղկեցան, միասին հյուսեցին մեծափառ երգը Հայոց Աշխարհի կյանքին։ Եվ միասին այլ կուրծք տվին ճակատագրի ահավոր հարվածներուն, միասին տառապեցան երկա՞ր ու մարտիրոսացան...։

Բայց վերջապես հասավ օրն այն մեծ երկունքի, երբ ճեղքվեցավ հանկարծ ծանր կապարը հայոց երկնակամարի և հայ ժողովուրդը ողջունեց ցնծալի, իր նոր կյանքի արևը վառ։

Հիմնվեցավ Սովետական Հայաստանի պետությունը։

Մեր ժողովուրդը գտավ իր ազատությունը, գտավ իր կյանքի և ինչքի ապահովությունը, գտավ հառաջդիմության ու բարգավաճման բոլոր պայմանները։

Այսօր հայ շինականին արտը դալար է, գարտեկը՝ ծաղկած, տունը՝ շեն, պայծառ ու սեղանին վրա լեցուն հաց և լույս։

Այսօր մեր Հայրենիքին մեջ ապրող ամեն մի հայու— տեղացի թե հայրենադարձ— ամենախոր ու ամենակենդանի զգացումն է՝ այն, ինչ որ մեր բանաստեղծներեն մին է արտահայտած սա խոսքերով՝ «Մեռելներուս որպես խաչ ես այս ծառը տնկեցիր»։

Ու կբարձրանա պտուղներով լի, հպարտ ու նախշուն կենաց ծառը հայ ժողովուրդին՝ ժողովուրդներու մեծ եղբայրության, սովետական աշխարհի խաղաղ, արևոտ անդաստանին մեջ։

Թող Տերը անսասան պահե ու ամեն փորձություններեն հեռու՝ մեր Հայրենիքի կենաց ծառն այս։

Թող Տերը ամբողջ և անխոով պահե ժողովուրդներու բարի ու հզոր եղբայրությունն այս մեծ։

Թող Տերը անշարժ ու միշտ կանգուն պահե Մայր Աթոռն այս Սուրբ Էջմիածնի և արևոտ, երկար, երջանիկ օրեր պարգևե մեր մեծ Հայրապետ՝ Գեորգ Զ. Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին։

ՆՈՐԱՅՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԾՈՎԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆ

Սիրեցի քեզ, լույսի քաղաք,
Հույսի քաղաք, Երևա՛ն.
Քեզ սիրեցի, լույսերու ծով,
Հույսերու բով, Երևա՛ն:

Մեր անցյալի օտաններուն օտանն ես
դուն.
Գրվին, Անի և Արտաշատ
Մեջդ կապրին կյանքով մ'ազատ.
Շուրջդ անա պար են բոներ,
Զեյթուն, Խարբերդ և Արաբկիր.
Հայերն ամբողջ քեզմով միայն կըպարծենան.
Հայաստանի պերն բազունի, Երևա՛ն:

Մըշակներուդ երգերն անուշ, արևաշող,
Բանվորներուդ մուրճերն հրգոր, արագաշարժ,
Գործարաններդ՝ կուռ վերելքի անդուլ
դարբնոց,
Աշխատանքի անմար հրեղց, Երևա՛ն:

Մեր երազին իրագործված հրաշքն ես դուն,
Մեր հայրերուն պաշտամունքի բագինն ես
դուն,
Երգի քաղաք,
Ոերքի քաղաք, Երևա՛ն:

Մեր ցավերուն և վերքերուն դարմանն ես
դուն,
Մեր դարավոր արգունքներուն վախճանն ես
դուն,
Վշտի ծովեն մեզ ազատող լաստակն ես դուն,
Երջանկության ամուր խարիսխ, Երևա՛ն:

Դերիներու շղթան փշրող կրտանն ես դուն,
Թափառական հայ պանդուխտին վրանն ես
դուն,
Հայրենիքի անմահներուն խորանն ես դուն,
Ազատության անառ ամրոց, Երևա՛ն:

Քեզի կուտամ սրտիս սերերը հրավառ,
Մրտածումներս քեզ կրծոնիմ շար ի շար,
Կյանքս ու հոգիս մատաղ ըլլան քեզի
համար,
Հավերժության անխախտ կոթող,
Անմահության սյուն անսասան,
Իմ հայրենի, իմ տենչալի,
Երևա՜ն, Երևա՜ն:

ՒՈՒԻԲԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԵՐ ԹԵՄԵՐԸ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Ամենայն Հայոց Հայրապետության փոխհարաբերությունը մեր թեմերի հետ Հայ Եկեղեցու կենտրոնական խնդիրներից մեկն է։ Այդ փոխհարաբերությամբ է բնորոշվում մեր եկեղեցական միասնությունը։

Մեր թեմական պատգամավորական ժողովները, թեմական խորհուրդները և հոգաբարձությունները իրենց առաջնորդներով կազմում են մեր եկեղեցական միասնականության շղթայի օղակները, որոնք կոչված են կենդանի կապ պահպանել Մայր Աթոռի հետ, լուծելու համար այն կենցաղային և դժվարին հարցերը, որոնք երբևիցե կարող են ծառանալ մեր եկեղեցական-կրոնական գործունեության առաջ։ Միաժամանակ նրանք կոչված են տեղերում անվթար և անաղարտ պահպանելու և զարգացնելու մեր եկեղեցական միասնությունը, լուծել տեղական բնույթ ունեցող հարցերը, աշխույժ ու հետաքրքրություն ստեղծելու Եկեղեցու շուրջը, պահպանելով մեր Եկեղեցու սահմանադրությունը և դարերից ի վեր որդեգրված ազգային-եկեղեցական ավանդները, ստանալով պատշաճ սնօրինություններ Մայր Աթոռից և նրա Գահակալից։

Բնականորեն այս բոլորից բխում են փոխադարձ կապի պահպանումը Մայր Աթոռի և նրա Գահակալի հետ, պետք եղած ցուցումներն ու հրահանգները ստանալու համար, որպեսզի թեմական մարմինները ի վիճակի լինեն պահպանելու դավանաբանական, ծիսային, պաշտամունքային և եկեղեցական կարգապահությանը և օրինապահությանը վերաբերող օրենքներն ու կանոնները ըստ Հայաստանյայց Եկեղեցու սահմանադրության և ըստ ամենայնի կարողանան պահել նաև սրանց միօրինակությունը բոլոր թեմերում և եկեղեցիներում, մի հույժ կարևոր հանգամանք, որ դարերից ի վեր գորավիգ է հանդիսացել Հայ Եկեղեցու կրոնական կերպարի անաղարտ պահպանմանը և նրա յուրահատուկ, ինքնուրույն գոյությանը։

Հայ Եկեղեցու եկեղեցական միասնականության այսպիսի կուռ կազմակերպվածությունը, որ պահպանվել է և կարող է պահպանվել միայն Հայոց Հայրապետի և մեր թեմական առաջնորդների և խորհուրդների փոխադարձ, աշխույժ և կենդանի փոխհարաբերությամբ, հենարան է եղել նաև մեր ազգի միասնականության, մեր լեզվի, մշակույթի, արվեստի ու դրականության պահպանմանը և զարգացմանը։

Պատմական այս արժեքավորումն ինքնին արժեքավորում է Մայր Աթոռի և նրա Գահակալի, նույնպես և մեր թեմական առաջնորդների գործունեությունը։

Ակներև է խնդրի լրջությունը, քանի որ այսպիսի փոխհարաբերությամբ է ստեղծվել մեր Եկեղեցու կենսունակությունը, նրա միասնականությունը և նրա դարավոր գոյությունը։

Մեր եկեղեցական միասնականությունը պատմական նշանակություն է ստանում նաև այն տեսակետից, որ այն հետապնդում է զարգացնել մեր ժողովրդի կրոնա-բարոյական հասկացողությունները, պահպանել նրա ոգին ու կերպարը և նրա հայրենի ավանդությունները ու սովորությունները։

Այս հանգամանքն իսկ առաջացրել է եկեղեցական միասնության անկուսակցական բնույթը։

Եվ այս երևույթը խիստ նշանակալից է հայության համար, այն կոդմնորոշում է և ուղղագծում մեր Եկեղեցու կերպարը, վերծ պահելով նրան բողոքական և կուսակցական պայքարներից ու ազդեցություններից։ Այսպիսով իսկ Եկեղեցին այդպարացնում է իր կոչումն ու դերը, ծառայելով ժողովրդին առանց խտրականության և առանց թեքումների։

ին։ Եվ Եկեղեցին դառնում է համօրեն ազգային-ժողովրդական, որով և ինքնին հնարավորություններ են ստեղծվում Հայության կրոնական-եկեղեցական ապառ և անկաթ գործունեության համար։

Այս լույծ և պատմական գշանակություն ունեցող խնդիրը հրրեք չի վրիպել մեր իմաստուն Հայրապետի՝ Տ. Տ. Գեորգ Զ. մեծագործ Կաթողիկոսի տեսողությունից։

Վեհափառ Հայրապետը իր կոչերում և հորդորներում, իր սրբատառ կոնդակներում ու քարոզներում բազմիցս նշել է և իրատել իր ժողովրդին՝ Հայ Եկեղեցին հեռու պահել քաղաքական գործունեությունից և կուսակցական ազդեցություններից, լոյալ լինել և լոյալ մնալ օտար երկրների իրավակարգի և վարչակարգի հանդեպ, քանի որ հակառակ դիրքավորումը հրրեք չի զուգորդվում մեր եկեղեցական միասնականության գաղափարի հետ, այլ, ընդհակառակը, այն կխաթարի ժողովրդի համար անհրաժեշտ ու կարևոր այդ միասնականությունը, և կարող է ստեղծել մեր Եկեղեցու և ժողովրդի համար նորանոր դժվարություններ ու կնճիռներ։

Այս տեսակետից ելնելով էր, որ Համազգային վերջին ժողովում մեր Եկեղեցու բարձրաստիճան հայրերը, Մեծի Տանն Կիլիկիո Շնորհազարդ Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Ա.ը, Կոստանդնուպոլսի և Երուսաղեմի պատրիարքները և բոլոր թեմական առաջնորդները աննկարագրելի խանդավառությամբ ողջունեցին եկեղեցական և ազգային միասնականության գաղափարները և համազգային ժողովում իրենց միաբան գործունեությամբ կենսագործեցին այն։ Համազգային ժողովը փոթորիկի ձափահարություններով և սիրալեր զգացմունքներով դիմավորեց Մայր Աթոռի շուրջն ստեղծված համերաշխությունն ու խանդավառությունը։ Եվ այն նշանավորվեց Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսի և Գերագույն Հոգևոր Խորհրդի ընտրությամբ։

Միասնության գաղափարը ողջունեցին նաև մեր բոլոր թեմերը, թեմական կազմակերպությունները, առաջնորդները և հոգևոր դասը։ Այն ոգևորության նոր ալիք առաջացրեց Հայ հավատացյալների սրտերում, ամրապնդվեց Հայ Եկեղեցու դիրքը և հոգևոր կյանքի պայծառ արշալույսներ ցոլացին Հայ Եկեղեցու երկնակամարում։

Այս համատարած ոգևորությունը նորանոր խանդավառությունների և գործունեության մղեց մեր եկեղեցիներին և համայնքներին, որոնք իրենց լուրջ ուսումնասիրությունները կատարեցին Մայր Աթոռի օրերին։ Թեմերի գործունեությունը և տեղական խնդիրների և աշխատանքների կատարումը նոր թափ ստացան։ Մեր ժողովրդի հոգևորական կազմակերպվածությունը և դասակարգությունը Հայ Եկեղեցու դլխավորությամբ մտավ նոր և առողջ հունի մեջ։

Համատարած այս ոգևորության և եռագործության մեջ լացառություն չկազմեցին նաև թեմացումները։ Որոշ թեմեր եկեղեցական միասնության անհրաժեշտությունը լիակատար չըմբռնելու հետևանքով, ժամանակին չուղարկեցին իրենց գործունեության հաշվետվությունները կամ այն ուղարկեցին խիստ ուշացումներով, չկատարեցին նաև իրենց հանձնաժողովները։ Մայր Աթոռի և Հոգևոր Ճեմարանի հանդեպ, թուլացրին Մայր Աթոռի և նրա Գահակալի հետ ունեցած փոխհարաբերության կապը, որով և փոխհարաբերության հարցը պատահական բնույթ ստացավ— մի երևույթ, որ երբեք համատեղելի չէ մեր կրոնական-եկեղեցական ըմբռնումների, մեր եկեղեցական սահմանադրության և մեր նախնյաց ավանդների հետ։ Այն համատեղելի չէ նաև հայ հավատացյալի և հայ ժողովրդի ոգու ու տրամադրությունների հետ։ Որոշ թեմեր կլանվեցին տեղական հոգսերով ու պայքարներով, մոռացության տալով հիմնականը՝ եկեղեցական միասնությունը, որ հայ ժողովրդի և Եկեղեցու ողնաշարն է։

Մայր Աթոռի հետ կանոնավոր փոխհարաբերություն պահպանելու հարցը մեր Եկեղեցու և ժողովրդի համար առաջնահերթ և կենսարոնական հարց է, այն կապված է իրշդ՝ համազգային նշանակություն ունեցող խնդիրների հետ, քանի որ եկեղեցական միասնությամբ միայն հնարավոր է անվթար և անաղարտ պահել Հայ Եկեղեցու կերպարն ու ոգին, քանի որ պատրաքի եւ դիտակցակցության լրիվ ըմբռնումը Մայր Աթոռի հետ՝ իարող է որակավորել և արժեքավորել մեր թեմերի գործունեությունը։ Այս հանգամանքն է, որ նոր վերելքի վրա պիտի դնե մեր Եկեղեցին, այս է, որ մեր հաջողությունները պիտի կրկնապատկի և զերծ պահի մեզ սայթաքումներից ու սխալներից։

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԴԻՈՍԿՈՐԻԴԵՍԻ ՊԱՏԱՌԻԿԸ

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 141 (187) ձեռագիրը նշանավոր է ո՛չ այնքան իր բնագրով, որքան իր երեք պահպանակներով[1]։ Նա պարունակում է տարբեր ժամանակներում գրված երեք պատառիկ, որոնցից երկուսը հայերեն ձեռագրերից են, իսկ մեկը՝ հունարեն։

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 141 ձեռագրի բովանդակությունը «Հնգամատեան» է։ Նա պարունակում է հետևյալ գրքերը. «Առաջածք ի ծննդոց» (թ. 2ա—84բ), «Ելք» (թ. 85ա—158ա), «Ղեւտացիք» (թ. 158ա—208բ), «Թիւք» (թ. 208բ—271ա), «Երկրորդ օրէնք» (թ. 271ա—327բ)։

Զեռագրի գրության ժամանակը չի հիշատակված, սակայն հայտնի է, որ նա կազմված է եղել 1447 թվականին ոմն Աբրահամ աբեղայի կողմից։ Կազմարարը թողել է հետևյալ հիշատակարանը. «Շնորհիւ եւ օգնականութեամբ Տեառն Աստուծոյ մերոյ, ես սուտանուն Աբրահամ աբեղայս ձեռնարկեցի եւ սակաւ գծով եւ կազմեցի զմատեանս Հին Կտակարանացս։ Արդ՝ աղաչեմ զհանդիպողսդ սմա, յիշման արժանի առնել զիս, զանարժանս, նայեւ հայրն իմ պՁովանէս մղտսին եւ զամենայն աղգայտոհմս մեր զկենդանիս եւ զհանկուցեալս։ Եւ որ յիշէքդ սրտի մտաք եւ Աստուած ողորմի ասէք մեզ, նոյն ինքն Քրիստոս Աստուած ձեզ եւ մեզ տացէ զիւր անսպառ բարիսն, եւ նմա փառք յաւիտեանս ամէն։ Ի թուականութեանս Հայոց ՊՂԶ (1447 թ.) եւ ի յամսեան յունիսի Ը (8)»[2]։

Պարզ է, որ ձեռագիրը պիտի գրված լինի կազմելուց՝ 1447 թվականից առաջ։ Գրիչն է Մխիթարը։

Մեծանուն ակադեմիկոս Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանում՝ 14—15-րդ դարերի ընթացքում Մխիթար անունով մի շարք գրիչներ են թվարկված[3], և դժվար է հաստատապես ասել՝ թե ո՞րն է մեր գրիչը, սակայն նկատի ունենալով, որ ներկա ձեռագրի գրիչ Մխիթարը բանաստեղծ է, ապա անհավանական չէ, որ նա լինի Մխիթար Երզնկացին, Գլաձորի դպրոցում սովորած բանաստեղծ գրիչը, որի չափածո մի անուշ հիշատակարանը հրատարակել է Հ. Ղ. Ալիշանը «Սիսականի մեջ»[4]։

---

1. Պահպանակ են կոչվում ձեռագրերի այն թերթերը, որոնք ձեռագրերի կազմերի մեջ գործ են ածվում իբրև ֆորզաց (առաջնաթերթ և վերջնաթերթ)։ Պահպանակ անունը ստացել են այն պատճառով, որ նրանց դերը ձեռագիրն ավելս պահել-պահպանելն է։ Միջին դարերում, գրելու նյութը թանկ լինելու պատճառով, պահպանակները, մեծ մասամբ, գործ են ածել ո՛չ թե չգրված թղթից կամ մագաղաթից, այլ հնացած, քայքայված ձեռագրի պատառիկներից, որոնք մի քանի դար, իսկ հաճախ ավելի մեծ հնություն են ունենում, քան ձեռագրի բուն տեքստը։ Բացի այդ, նոր գրված ձեռագրերը հաճախ ունենում են կրոնական-կանոնական անփոփոխ բովանդակություն, գրչական քիչ տարբերակներ են տալիս, և տրված տարբերակները, մեծ մասամբ, նորամուտ են լինում և անարժեք, իսկ նրանց կազմի մեջ գործ ածված պահպանակները, որպես ավելի հին, եկած ձեռագրի ներկայացուցիչներ, հաճախ մեզ անծանոթ տեքստեր են և գրչական արժեքավոր տարբերակներ են տալիս։ Նրանք արժեքավոր են նաև հնագրության համար։ Անցյալից մեզ հասած պահպանակ ունեցող ձեռագրերը — մի ձեռագիր միավոր չի կարելի համարել, այլ երկու, որոնցից մեկը ամբողջական, իսկ մյուսը՝ պատառիկով։

2. Հայկ. ՍՍՌ պետական մատենադարան, ձեռագիր № 141, թ. 327բ։

3. Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատոր Գ., Երևան, 1946 թ., էջ 378—388։

4. Հ. Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893 թ., էջ 135։

Ներկա ձեռագրում նա իր մասին հիշատակություն ունի մի քանի տեղերում, որոնցից անհրաժեշտ ենք համարում բերել միայն չափածո հիշատակարանը.

«Ես տառապե[ա]լս եւ թարմատար,
Նուաստ գրիչ եւ ապիկար,
Զձեզ աղաչեմ աղերսարար
Եւ պաղատիմ յաւժարաբար՝
Յիշել յաղաւթս զմեզ ի յար
Առ Տէր պարիցն խնամող հայր,
Զձերն ընգալցի նա հաշտարար,
Եւ ի մեզ գթա անխռովարար՝
Ի ձեզ եւ ի մեզ առհաւասար.
Քրիստոսի փառք, որ զայս մեզ արար.
Թէ զմեղքս ապշվէ լինի քեզ ճար
Զոյժ անարհեստ ո՞վ Մխիթար»[5]

Հնագրությամբ ևս ձեռագրի գրչության ժամանակը կարելի է որոշել 14-րդ դարով, այսինքն այն ժամանակով, երբ ապրել և ստեղծագործել է Մխիթար Երզնկացին, միայն թե կասկածելի է այն, որ այս չափածո հիշատակարանը չունի այն արվեստը և գեղեցկությունը, ինչ Ալիշանի հրատարակած Մխիթար Սասնեցու չափածո հիշատակարանն է։

Ձեռագիրը—թուղթ է, բաղկացած 328 թերթերից։ Մեծությունը՝ 22,3×16,8 սմ.։ Գրությունը՝ երկսյուն։ Գիրը՝ բոլորգիր։ Կազմը՝ դրոշմազարդ տախտակ։ Վիճակը՝ բավարար (տեղ-տեղ թափվել են թերթերից և նորերն են դրվել)։ Ձեռագրի ներսից կազմին փակցված է մետաքսյա ասեղնագործ կտոր, դեղին ֆոնի վրա կարմիր և կապույտ զարդահյուսվածքով։ Կերպասն, անկասկած, 14—15-րդ դարի հնությամբ է։

Ձեռագրի առաջին կազմի տախտակից հետո, ներսից, փակցված է հունարեն պատառիկը։ Նրա նյութը մագաղաթից է, որը, ժամանակի աղդեցության տակ, դեղնել, ոսացել է շագանակի գույն։ Պահպանակի մեծությունն է 22,3×16,5 սմ.։ Գիրը մի՛սյուն է։ Պահպանակի վրա եղած նկարները մուգ կապույտ գույն ունեն։

Հունարեն պատառիկի հետ միասին, ձեռագրի տեքստից առաջ, դրված է հայերեն մի պատառիկ, որը «Մաշտոց»ից է։ Այս պատառիկի նյութը թուղթ է, գրված է երկսյուն, ուղղագիծ երկաթագրիչ բոլորգրին անցնող գրի տեսակով։ «Մաշտոցը» լայն ծալադիրը է ունեցել — կազմելու ժամանակ մոտ երկու սանտիմետր կտրվելուց հետո, մնացել է 22,4 սանտիմետր լայնքը և 33 սանտիմետր երկայնությունը, որը կրկնակի անգամ լայն լինելով ձեռագրից, կազմելիս, հավասար ձևով ծալվել է։ («Մաշտոց»-ի նման մեծությունը բացառիկ է և, հավանական է, հատուկ է եղել հին շրջանում. ավելի ուշ դարերում «մաշտոց»ները փոքրիկ ծալադիրքով էին անում. առօրյա գործածության համար փոքր վիճակով ավելի հեշտ է տեղից տեղ տանել և օգտագործել)։ «Մաշտոցի» տեքստն սկսում է. «Ասէ զաղաւթս զայս, Տէր Աստուած...»։

Ձեռագրի վերջից, երկրորդ կազմից առաջ փակցված է երրորդ պահպանակը, որն «Աստվածաշունչից է։ Սկսում է Հորի վեցերորդ գլխի 9-րդ հատվածի կեսից. «...սպանանիցէ զիս։ Եղիցի ինձ քաղաքն իմ ի զերեզման՝ յորոյ վերա պարսպացն ճեմեի, եւ ի նա ոչ խնայէցիս. զի ոչ սուտ արարից զբանս սրբոյն Ա[ստուծո]յ իմոյ...» և վերջանում է յոթերորդ գլխի 3-րդ հատվածով. «Նոյնպես եւ ես սպասեցի ցամսոյ սնոտեացս։ Պահպանակի նյութը—մագաղաթ է։ Գրված է երկսյուն։ Գիրը—հնագույն բոլորձև երկաթագիր է։ Պատառիկի մեծությունն է 22,4×33 սմ.։ Գրության ժամանակը կարելի է որոշել ոչ ուշ քան իններորդ դարը։

Թվարկված պատառիկներից մեզ հետաքրքրում է հունարեն պատառիկը, ուստի և ցանկանում ենք փոքր ինչ հանգամանորեն կանգ առնել նրա նկարագրության վրա։

***

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 141 ձեռագրի պատառիկի հետ կապված առաջին կարևոր հարցը, այդ պատառիկի բովանդակած տեքստի ինչ աշխատության հատվածը լինելու և ո՛ւմ հեղինակությանը պատկանելու հարցն է։

Կարինյան ցուցակի հեղինակը, որ նշված ձեռագիրը գրանցել է № 180-ի տակ, լուռ է անցել պատառիկի վրայով— բացարձակ ոչինչ չի գրել պատառիկի մասին[6]։

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագրաց առաջին ցուցակ կազմող հեղինակները դժվարացել են ճշտորեն որոշել տեքստի բովանդակությունը և նրա հեղինակը. սակայն, դատելով պատառիկի վրա նկարված բույսերի նկարներից, ենթադրել են, որ բուսաբանական մի ինչ որ աշխատության հատված պիտի լինի և իրենց ենթադրությունը արձանագրել ձեռագրի քարտում։

5. Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռագիր № 141, թ. 208բ։

6. Մայր ցուցակ ձեռագիր մատենից գրագարանի Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի, Թիֆլիս, 1863 թ., էջ 13։

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագրերի նոր ցուցակում, ճիշտ է, ենթադրաբար ու հարցականով. բայց, այնուամենայնիվ, հեղինակները փորձել են մոտավոր ձևով որոշել պատառիկի բովանդակությունը, ձեռագրի քարտի վրա նշելով՝ «Մասն բուսաբանական մատենի Դիոսկորիդէսի»:

Տպագիր կրականության մեջ նշված պատառիկի վրա առաջին անգամ կանգ է առել պրոֆ. Լ. Ա. Հովհաննիսյանը իր «История медицины в Армении» խորագրով աշխատության առաջին հատորում, ուր նա հրատարակել է պատառիկի լուսանկարները[7]. Պրոֆ. Լ. Ա. Հովհաննիսյանն իր հիշյալ աշխատության մեջ հաստատապես նշել է, որ պատառիկը Դիոսկորիդեսինն է։ Սակայն հարգելի պրոֆեսորը ձեռքի տակ չի ունեցել Դիոսկորիդեսի հունարեն տեքստը, հնարավորություն չի ունեցել համեմատական աշխատանք կատարել և գիտականորեն հիմնավորել իր ենթադրությունները ու բավականացել է պատառիկի մասին Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի հին աշխատողներից մեկի տված ընդհանուր տեղեկությամբ։

Այս պատառիկի գիտական հրատարակության համար փորձեր արվել են. 1926—1927 թվականներին Մատենադարան է այցելել Վատիկանի ձեռագրաց մատենադարանի հունագետ մասնագետներից մեկը, որը հնարավորություն է ունեցել ծանոթանալ պատառիկի բովանդակության հետ և ցանկացել ստանալ այդ պատառիկի լուսանկարները՝ Հռոմում հրատարակելու համար։ Հետագայում նամակներով ևս խնդրել է, որ ուղարկեն պատառիկների լուսանկարները, սակայն Մատենադարանի դիրեկցիան արդարացիորեն մերժել է բավարարել նրա խնդրանքը, նկատի ունենալով, որ մեզ մոտ, ՍՍՌՄ-ում, քիչ չէ մասնագետ հունագետների թիվը, որոնք և ի վիճակի են վերծանել և հրատարակել նրանք, պահելով մեր ձեռքում նշված տեքստի հրատարակության առաջնությունը։

1934 թվին աշխատանքի անցնելով Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանում, ինձ հայտնի էր Դիոսկորիդեսին վերագրված այս պատառիկների հետ կապված ողջ պատմությունը և ես աշխատում էի ժամանակ գտնել դրաղվելու այդ պատառիկով։ Ցանկությունս, ինձնից անկախ պատճառով, ձգձգվում էր, որովհետև Հայկական ՍՍՌ դրադարաններում չկար Դիոսկորիդեսի ոչ մի հունարեն հրատարակություն, իսկ այդ հեղինակի աշխատությունը միջդրադարանային կարգով ստանալ Մոսկվայի կամ Լենինդրադի կենտրոնական դրադարաններից դժվար էր, որովհետև նշված աշխատությունս մեկ օրինակից լինելով դրադարաններում, որպես հազվագյուտ օրինակ, դուրս չէր տրվում, իսկ ես Մոսկվա գտնվելիս, ժամանակ չէի ունենում դրանով դրաղվել։

Ցանկությունս վերջապես հնարավոր եղավ իրագործել այս տարի։ Արտասահման գնալիս Մոսկվայում որոշ ժամանակ մնալու առիթից օգտվելով, հնարավորություն ունեցա Լենինի անվան կենտրոնական դրադարանում և Լոմոնոսովի անվան պետական համալսարանի դրադարանում ծանոթանալ այնտեղ եղած Դիոսկորիդեսի հրատարակությունների հետ, կատարեցի անհրաժեշտ համեմատական աշխատանքը՝ ձեռքի տակ, իհարկե, ունենալով մեր պատառիկից արտագրված տեքստերը։

Առաջին երկու շաբաթն ինձ համար անցավ միանգամայն ապարդյուն, որովհետև մեր պատառիկի առաջին էջը, մեծատառ, սկսում է μυος բառով, որը, ըստ Դիոսկորիդեսի հունարեն տեքստի, պիտի լիներ այն բույսի անունը, որը նկարագրվում է։ Որքա՞ն Դիոսկորիդեսի մոտ փնտրեցի այդ բույսի անունը, չկարողացա գտնել։ Պարզվեց, որ նման բառ, ընդհանրապես, չկա հին հունարեն ոչ մի ընդարձակ բառարանում։ Հարկադրված եղա անցնել պատառիկի հաջորդ էջի բովանդակության համեմատությանը, ուր խոսվում էր χαμαίπιτυς-ի՝ գետնամայրի մասին։ Ցնայած այս բույսի անունը մեր պատառիկի ուղղագրության ձևով ևս չկար, սակայն դժվար չէր կռահել, որ այդ Դիոսկորիդեսի հրատարակված տեքստի χαμαίπιτυς-ը պիտի լիներ։ Տեքստերի համեմատությունը ցույց տվեց, որ իրոք այդպես է։

Այսպիսով, անվիճելի դարձավ, որ մեր պատառիկի պարունակած տեքստը Դիոսկորիդեսից է։ Ինձ մնում էր նորից վերադառնալ նախորդ տեքստին և փնտրել ու գտնել այն Դիոսկորիդեսի հրատարակված տեքստում։ Որոշեցի ծայրեծայր կարդալ Դիոսկորիդեսը։ Այդ շատ ձանձրալի մի աշխատանք էր, որովհետև իմ ձեռքի տակ ունեցածը Լայպցիգի 1829 թվականի բարդ կապդրերով հրատարակված հունարեն տեքստն էր։ Երկար շարշարվելուց հետո, վերջապես, ինձ հաջող-

---

[7]. Л. А. Оганесян, История медицины в Армении, от древнейших времен до конца X века, ч. I, Ереван, 1946 г. (տես գրքի հավելվածը)։

վեց դանել Դիոսկորիդեսի այդ հատվածը ևս։ Պարզվեց, որ մեր պատառիկի մեջ թյուրիմացություն է պատահել. μυος բառը թիրի է, այդ բառը θάμνος-ն է, իսկ մեր պատառիկում մնացել է նրա երկրորդ կեսը՝ μυος-ը, որը սխալմամբ մեծատառով է գրվել, և այդ է, որ թյուրիմացության մեջ է գցել մեզ։

***

Նախ քան բուն տեքստի մասին խոսելը, մի քանի խոսք ասենք իրեն՝ հեղինակի անձնավորության մասին։

Պեդանիուս Դիոսկորիդես Անազարբացին — հույն բժիշկ է, Կիլիկիայից։ Ապրել է մեր թվարկության առաջին դարում՝ Ներոն և Վեսպասիանոս Հռոմեական կայսրների դահակալության շրջանում[8]։ Հռոմեական բանակի տրենչյան արշավանքների ժամանակ, որպես բժիշկ, նա ուղեկցել է զորքին, պատել արևելյան մի շարք երկրներում և հնարավորություն ունեցել մոտից ուսումնասիրել արևելյան բժշկությունը և այն բույսերը, որոնք օգտագործվում են բժշկության մեջ։ Իր ուսումնասիրության արդյունքները նա ամփոփել է իր նշանավոր περὶ ὕλης ἰατρικῆς կամ «De materia medica» խորագրով աշխատության մեջ, ուր նա նկարագրել է 600 բույսեր, կանդ առնելով նրանց վրա դիտավորապես բժշկական օգտագործման տեսակետից։ Այդ աշխատությունը նա գրել է մոտ 77—78 թվականներին։ Ամեն մի բույսի նկարագրությունը անելիս, նա նախ տալիս է տվյալ բույսի նկարը, ապա կանգ առնում բժշկության մեջ ի՞նչպես օգտագործվելու հարցերի վրա[9]։

Ըստ բժշկության պատմության մասնագետների գնահատության, Դիոսկորիդեսը հույն բժշկության պատմության մեջ գրավում է միջին տեղը։— Մեր թվարկությունից երեք դար առաջ հանդես է եկել Թեոֆրաստեսը, որը հույն իրականության մեջ առաջին տեսաբան բժիշկն է, որ հիմնել է բժշկական բոտանիկայի ընդհանուր սկզբունքները։ Որպես խոշոր մեծություն նրան հաջորդում է Դիոսկորիդեսը, ուր ծանրացել է կիրառական բոտանիկայի վրա, և ապա, նրանից մեկ դար հետո գալիս է Գալենոսը, որը նույնպես դեղագործ է եղել, բայց ավելի դիտող բոտանիկ, քան Դիոսկորիդեսը[10]։

Դիոսկորիդեսի աշխատությունը միջին դարերում թարգմանվել է արաբերեն և լատիներեն լեզուներով, նրա տեքստը կոմենտարիայի է ենթարկվել բյուզանդական շրջանի բազմաթիվ մեկնաբանողների կողմից։ Նրա աշխատությունը օգտագործվել է որպես բոտանիկայի դասագիրք և ավելի քան 1500 տարի բոտանիկայի ալֆան և օմեգան է հանդիսացել։

Դիոսկորիդեսի աշխատությունը բաղկացած է չորս մասից. ա) անուշահոտ բույսեր, բ) սննդատու բույսեր, գ) բժշկական բույսեր և դ) գինեգործական բույսեր։ Նորագույն բոտանիկներից մեկի կարծիքով, տասնութերորդ, մասամբ և տասնիններորդ դարերում, բոտանիկայի ասպարեզում հրատարակված գրականության մեծ մասը հանդիսանում է Դիոսկորիդեսի աշխատության անոտացիան։

Դիոսկորիդեսի «De materia medica» աշխատությունը մեզ հասել է ավելի քան 12 ձեռագրերով, որոնք ցրված են աշխարհի մի շարք մատենադարաններում։ Այդ ձեռագրերից ամենահինը — Վիեննայի Մատենադարանի սեփականությունը կազմող № 1 ձեռագիրն է, որն ընդօրինակված է մեր թվականի 512-ին բյուզանդական կայսեր դուստր Հուլիանա Անցիայի պատվերով և գիտության մեջ հայտնի է «Հուլիանայի ձեռագիր» անունով[11]։ Այս ձեռագիրը ձեռք է բերել Բուսբեկ անունով մի ճանապարհորդ Կոստանդնուպոլսում 16-րդ դարում Մաքսիմիլիանոս 2-րդ կայսեր համար, իսկ հետագայում բերվել է Վիեննա։ Ձեռագիրը հրատարակվել է լուսատիպ նմանահանությամբ[12]։

Հուլիանայի ձեռագրի չափ գրեթե հնություն ունի նույն մատենադարանի Նեապոլիտանական կոչվող ձեռագիրը՝ յոթերորդ դարի[13]։

Բացի այս ձեռագրերից, հայտնի են նաև Դիոսկորիդեսի հետևյալ ձեռագրերը՝ Փարիզի

---

8. Հին հունական մատենագրության մեջ չորս Դիոսկորիդեսներ են հայտնի՝ 1) Դիոսկորիդես Հերոփիլի՝ Փիկաս մականունով, որը ապրել է Կլեոպատրայի ժամանակ (առաջին դար ն. թ. մեր թվականը), 2) մեր հեղինակ Դիոսկորիդեսը (մեր թվականի առաջին դար), 3) Դիոսկորիդես Տարսոնացին և, 4) վերջին, Դիոսկորիդես Ալեքսանդրացին՝ Գայիանոսի ժամանակակից (մեր թվականի 2-րդ դար)։ (Տե՛ս այս մասին Wilhelm Christ, Geschichte der Griechische Litteratur. München, 1920, p. 453).

9. Pedanii Dioscoridis Anazarbei. De Materia Medica. Lipsiae. 1829.

10. К. К. Серебряков, Очерки по истории ботаники, ч. I. Москва, 1911 г., стр. 24.

11. Cpolitanus Vindob. med. gr. № 1.

12. W. Christ, Geschichte der Griechische Litteratur, p. 454

13. Neapolitanus Vindob. suppl. gr. № 28.

Ազգային մատենադարանի հունական ֆոնդի № 2179 ձեռագիրը՝ 9-րդ դարի[14], Մադրիդի Սքորիալյան մատենադարանի ձեռագիրը՝ 11-րդ դարի[15], Ֆլորենցիայի Լաուրենցիանյան մատենադարանի ձեռագիրը՝ 12-րդ դարի[16], Վենետիկի Սուրբ Մարկոսի մատենադարանի ձեռագիրը՝ 12-րդ դարի[17], Հռոմի Պալատինյան մատենադարանի հունական ֆոնդի № 77 ձեռագիրը՝ 14-րդ դարի[18], Վենետիկի Սուրբ Մարկոսի Մատենադարանի ձեռագիրը՝ 15-րդ դարի[19], Փարիզի Ազգային մատենադարանի հունական ֆոնդի № 2183 ձեռագիրը՝ 15-րդ դարի[20]։

Դիոսկորիդեսի «De materia medica» աշխատությունը հրատարակվել է մի շարք անգամներ։ Մոսկվայի գրադարաններում մենք ծանոթացել ենք Քոլոնեյի 1529 թվի, Վենետիկի 1542 թվի, Փարիզի 1549 թվի, Լայպցիգի 1554 թվի, Լիոնի 1554 թվի, Փարիզի 1516 թվի և Լայպցիգի 1829 թվի հրատարակությունների հետ։ Դիոսկորիդեսի աշխատությունների ավելի հին հրատարակություններ ևս կան։

Դիոսկորիդեսի նշված աշխատության համեմատական տեքստը կազմել է գերմանացի գիտնական Մաքս Վելմանը և հրատարակել երեք հատորով 1906—1914 թվերին[21]։ Մենք մեր պատառիկի տեքստը համեմատության մեջ ենք դրել Վելմանի հրատարակության հետ։

***

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի պատառիկի առաջին էջը, ինչպես պարզվում է, պարունակում է Դիոսկորիդեսի «De materia medica» աշխատության երրորդ, այսինքն բժշկական բույսերի գրքի հրատարակված տեքստի 156-րդ գլուխը միայն, սկզբից երկու տող պակաս, իսկ պատառիկի երկրորդ էջը՝ 158-րդ գլուխն ամբողջությամբ։ Պատառիկի վրա հունարեն ոչ մի խոսք չկա՝ դրա Դիոսկորիդեսին պատկանելու մասին։

156-րդ գլխից հետո բերված է մուգ կապույտ գույնով մի բույսի նկար (հավանական է հաջորդ գլխում նկարագրված բույսի նկարը, և տակը գրված χόρις բառը։ Պարզ երևում է, որ պատառիկն իր նախկին էջի մեծության կեսի չափովն է միայն մնացել — էջը կես են արել և նրա վերին կեսը գործ ածել կազմելու ժամանակ։ Կտրված կես էջում, անկասկած, պիտի եղած լինի նշված բույսի տեքստը։

Դիոսկորիդեսի աշխատության գլուխները մեր պատառիկի տեքստում թվահամարներ չունեն. երևի եղել են վերևից և կտրվել են։ Պատառիկի տեքստը չի ունեցել ընդգծված վերնագիր։

Ուշադրության արժանի է պատառիկի առաջին էջի վրա նկատված χόρις բույսի կողքին հայերեն մի քանի տառով արված նշումը՝ «ԴԺ ՆԿ Տի»։ Մենք այդ վերծանում ենք հետևյալ ձևով՝ «Զորեքտասանն[երորդ] նկ[ար] Տ[իոսկորիդէս]ի»։ Եթե ճիշտ է մեր վերծանությունը, ապա հայ հեղինակներից մեկը, անկասկած, հայ բժիշկ, ժամանակին, իր ձեռքի տակ ունեցել է Դիոսկորիդեսի հունարեն աշխատության մի շարք գլուխները, որոնց նկարները համարակալելով, χόρις-ը 14-րդ թվահամարի տակ է առել։ Այդ անհավանական ենթադրությունն չի կարող համարվել, եթե նկատի ունենանք, որ Դիոսկորիդեսը մեծ հեղինակություն է հանդիսացել Արևելքում, իսկ հայ բժշկությունը, ինչպես ապացուցել է բժշկության պատմության ձեռնհաս մասնագետ Խուրշուդ Մելիք-Փարսադանյանը, նախարարական շրջանում սերտ փոխհարաբերության մեջ է գտնվել հունական բժշկության հետ[22]։

Անհրաժեշտ ենք համարում նախ բերել Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի հունարեն պահպանակի մեր վերծանած տեքստը։ Պահպանակի տեքստի բառանցատումը մենք ենք կատարել։ Մենք ենք կատարել նաև կետադրումը և շեշտադրումը[23]։

---

14. Parisinus gr. № 2179.
15. Scorialensis III R 8.
16. Laurent. № 74, 23.
17. Marc. Venetus, № 273.
18. Palat. gr. № 77.
19. Marc. Venetus, № 272.
20. Parisinus gr. № 2183.
21. Pedanii Dioscuridis Anazarbei, De materia medica, edidit Max Wellmann, v. I, II, III. Berolini 1906—1914.

22. Խ. Հ. Մելիք-Փարսադանյան, Հայ բժշկական ենթադրյալ տերմինները հին և միջնադարյան գրականության մեջ (տե՛ս «Աշխատություններ Հայ բժշկության և բիոլոգիայի պատմության սեկտորի», I, Երևան)։

23. Վերծանության ժամանակ մենք օգտվել ենք Պապիշևի «Греческо-русский словарь»-ից և F. Passow-ի «Handwörterbuch der Griechischen Sprache» երեք հատորանոց բառարանից։



Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի Դիոսկորիդեսի պատառիկի առաջին էջը № 141 ձեռագրից

1. χαμαέπιτυς, ἣν ἔνιοι ἐν Ποντῷ ὀλόκυρον καλοῦ-
2. σιν, ἐν Εὐβοίᾳ δὲ σιδηρῖτιν, Ἀθήνησιν δὲ ἰωνιάν.
3. πόα ἐστὶν ἐπὶ γῆς ἕρπουσα ὑπόκυρτος· ἔχει δὲ φύλλα
4. μικραζῷῳ ὅμοια λεπτότερα τὲ καὶ λιπαρώτερα καὶ
5. δασέα, πυκνὰ περὶ κλάδους, ὁσμὴν ἔχοντα πίτυος,
6. ἄνθη δὲ λεπτά, μήλινα, ῥίζαν δὲ ὡς κιχώριον. ταύτης τὰ
7. φύλλα πινόμενα σὺν οἴνῳ ἡμέρας Ζ (ἑπτὰ) ἕκτεραν θερα-
8. πεύει ἐφ' ἡμέρας δὲ Μ (τεσσαράκοντα) ἰσχιάδα ἴαται μεθ' ὑδρομέλιτος
9. πινόμενον. δίδοται δὲ καὶ ἡπατικοῖς καὶ δυσουριῶ-
10. σιν καὶ νεφριτικοῖς. θέως ἁρμόζον καὶ πρὸς στροφ-
11. μένους. χρῶνται δὲ αὐτῇ οἱ ἐν Ἡρακλείᾳ τῇ Ποντικῇ
12. καὶ ἀντιδότῳ ποτίζοντες πρὸς ἀκόνιτον τὸ ἀφέψη-
13. μα, καταπλάσσεται δὲ καὶ πρὸς τὰ εἰρημένα μετὰ ἀλφί-
14. των δεδευμένων τῷ ἀφεψήματι τῆς πόας. λεανθεῖ-
15. σα δὲ σὺν σύκοις καὶ καταποτίον διδομένη μαλάσσει κοι-
16. λίαν, μετὰ λεπίδος λεπτῆς ῥητίνης ἀναθλασθεῖσα ἡ
17. τοῖ ἀναλημφθεῖσα καθαίρει [ἄγε]· δὲ καὶ τῆς φυστέρας
18. προστεθεῖσα σὺν μέλιτι, διαφορεῖ σκληρίας μαστῶν
19. καὶ τραύματα κοιλᾷ καὶ ἕρπητας ἐπέχει μετὰ μέλιτος
20. καταπλασσομένη.

(Թարգմանություն)

Գետնամայր, որին ոմանք Պոնտոսում օլոկուրոն են անվանում, Եվբեայում՝ սիդերիտիս, իսկ Աթենքում՝ իոնիա: Բույս է, որ բուսնում է գետնի երեսը փռված: Ունի տերևներ նման սոճու (տերևներին), միայն ավելի նուրբ և ավելի լայնուն ու կոշտ՝ խիտ ճյուղերի վրա: Եղևնու հոտ ունի. նուրբ են ծաղիկները՝ դեղնագույն: Արմատը նման է եղերդի:

Սրա տերևները գինու հետ 7 օր խմելիս, բուժում է դեղնախտը, իսկ 40 օր մեղրաջրի հետ գործածելիս, բուժում է իշիասը: Տրվում է նաև լյարդի ցիվանդությամբ, դժվարամիզությամբ և երիկամացավով տառապողներին: Օգտակար է համարվում առանձնապես փորացավի համար: Գործածում են այն Պոնտոսի Հերակլիայի բնակիչները նաև խմելու որպես հակամիջոց ակոնիտոն կոչվող թունավոր բույսի դեմ: Քսում են նաև հացի հետ խառնելով բույսի եփվածքը: Աղացված բույսը թզի հետ տրվելով խմելիս՝ թուլացնում է փորը: Բարակ կեղևը խեժի հետ մանր ձեծված և մեղրով խառնված՝ մաքրում է (արգանդը): Մեղրի հետ խառնած քսելիս, փափկացնում է ստինքի կարծրացումը, վերքը փակում և կանգնեցնում սողնակաև ախտը:

***

«Քամեպիտուս»ը— Գաղիանոսի բառարանի ձեռագրերում հիշված է մի քանի տարբերակներով, որոնցից ամենից ճիշտ ձևը պահել է Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի № 2381 ձեռագրի ընդօրինակությունը՝ «Քամէպիտիս-խուտն»[24]։ Նույն մատենադարանի Գալիանոսի բառարանի մի այլ ձեռագրում[25] «Քամեպիտուսը թարգմանված է գետնամայրը» բառով[20]։ Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հայ բժշկության պատմության սեկտորի դիտական աշխատակից Հ. Սեպուհյանի «Պատմական դեղարույսերը» անտիպ աշխատությունից երևում է, որ «քամեպիտուսին մեզ մոտ ասում են զարոշ կամ զկենարար»։ Նա—Ajuga chamaepytis-ն է։

24. Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռագիր № 2381, թ. 243բ։

25. Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռագիր № 7117, թ. 91բ։

20. Ալիշանն ևս «գետնամայրը» է անվանում, սակայն ծանոթ լինելու Ամիրդովլաթի կողմից այդ բառի գործածության (տե՛ս «Հայբուսակ», Վենետիկ, 1895, էջ 116)։ Գաղիանոսի բառարանի գիտական տեքստը կազմել է բժշկական գիտությունների թեկնածու Ա. Մելիք-Փարսադանյանը։



Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի Դիոսկորիդեսի պատառիկի երկրորդ էջը № 141 ձեռագրից

«Քամեպիտուսի մանրամասն նկարագրությունը տալիս է Ամիրդովլաթը իր «Անգիտաց անպէտի» մեջ։ Անհրաժեշտ ենք համարում կրճատումով բերել Ամիրդովլաթի այդ հատվածը. «3588 Քամայֆիտոս, որ է սանավպար թլ յարդն, որն է գետնին փիճին. և տերևն նման է փիճուն (սոճու) տերևին. և ծաղիկն գեղին է. և լաւն այն է, որ նա լինի. տաք է և չոր՝ Բ տարաճան (աստիճան). բացող է և ճլի (փալլ) տուող. և ի նորա բնութիւնն՝ լուծումն կայ, և զփորոքն յստակէ. և զլերդին և զփայծղան կալուածն բանայ. նարդանին (դեղնութեանն) ուգտէ, և զճիճիքն հանէ, և զգոգն որդորէ. և զխոցերն կու եփէ, և յերդնիսային (իշլազին) ուգտէ. և ոսկրացաւին այլ. և թէ խմեն, և թէ հուքնայ առնին, և թէ ուծես, և թէ խմես, ուգտէ պարասին (բոր հիվանդությանը). և իր տալուն չաքն Ա մթխալ է. և իր փոխանն ճաւտան է (մարմխոտը)... Եւ ի Շիրազ՝ մաշարար կու ասեն. և լեզուիթիւնն աւելի է քան զգաւրութիւնն. և տերևն բարակ կու լինի. և Դիոսկորիտոս ասէ թէ ո՛վ զինքն մեղրաջրով խմէ՝ ուգտէ յերդնիսային...»[27], Կասկած լինել չի կարող, որ Ամիրդովլաթի աղբյուրը, արաբ բժշկության միջնորդությամբ, դարձյալ դալիս է Դիոսկորիդեսից, որը, ինչպես ասել ենք վերևում, հնում թարգմանված էր և ծանոթ արաբներին։

1. ...μνος λεπτόκαρπος, φρυγανώδης, πεφοινιγμένος
2. τὰ ῥαβδία· φύλλα τριπλάσιον πηγάνου, διατριφθ-
3. [ἐν]τα οἰνώδη χυλὸν ἀνίησιν, μασχάλας τε ἔχει πλείο-
4. νας ἐπ' ἄκρῳ τεταρσωμένας, περὶ ἃς ἀνθύλλια μικρά.
5. μηλίαν· καρπὸς ἐν καυλίοις ὁμοίας τῷ τῆς μελάνης
6. μήκωνος, οἷονεὶ κατάγραφος· ἀνατριφθεῖσα δὲ ἡ κό-
7. μη ῥητινώδη προείησιν ὀσμήν. καὶ αὐτῶς δὲ ὁ καρ-
8. πὸς λίος δραχμῶν δύο πλῆθος πεθεὶς ἄγει χολώδη καὶ
9. κόπρια. θεραπεύει δὲ μάλιστα ἰσχηάδας· δεῖ δὲ μετὰ τὴν
10. κάθαρσιν ὕδατος ἐπίροφφιν καὶ πυρίκαυτα δὲ ἡ πό-
11. α θεραπεύει καταπλασθεῖσα.

(Թարգմանություն)

... Թուփ, որն ունի նուրբ պտուղներ, երկարուն, կարմրագույն ճյուղեր։ Տերևները երեք անգամ մեծ են փեգանայից։ Տրոբելիս գինու նման ճյուրք է արտաթորում, ավելի շատ ճյուղիկներ ունի, որոնք փետրաձև ծայրերումն են տեղավորված, որոնց շուրջը՝ ծաղիկներն են փոքր՝ դեղնագույն։ Պտուղը կոթի վրա է ինչպես սև կակաչինը։ Տերևները ծեծելիս խեժանման ճուտ են արձակում։

Այս պտուղը, մաքրված, երկու դրախմայի չափով խմելիս, քանդում է մաղձը և կղկղանքը։ Բժշկում է ամենից շատ իշլազը։ Պետք է մաքրվելուց հետո ջուր խմել։ Այրվածքները ևս այս բույսը բուժում է խելով։

***

«Անդրոսայմոն»ը — Ամիրդովլաթի «Անգիտաց անպէտում» հիշված է «անդրոսայմանս» ձևով։ Ամիրդովլաթը նույնացնում է այդ բույսը «հայֆարիզոն»ի հետ, տալով հետևյալ ծանոթությունը նրա մասին. «Հայֆարիզոն» ինքն ճոմցի տատին է. և երկու ցեղ կու լինի. լաւն այն է որ ճուղն կարմիր լինի, և կատարեալ հասուն լինի. և հոտն նման է բոթիանաճին (խեժի տեսակ) հոտին. տաք և չոր է Բ տարաճան. նուրբ այնող է. սավտան և սաֆրան (սև և սպիտակ մաղձը) լուծէ. զգոգն և զհայզն (կանանց ամսականը) կու յորդորէ. և զտղան ձգէ. և թէ տիմէտ(քսվածք) առնես՝ զուռէցն կու հալէ, և կրակին այրածին ուգտէ. և թէ զջուրն ի աւր խմեն՝ ուգտէ յերդնիսային, և ճռան ցաւութեան (coxalgie), և հին ջերմերուն. և իր առնելուն չաքն Ա մթխալ է. իրիկամաց զեն կառնէ. և դիր չարութիւնն տանի դաղձն. և իր փոխանն հաշան (ծոթրին) է։ Իպն ասէ թէ հայֆարիզոնն այն է, որ տերևն նման է սաղապին (փիգինայի) տերևին. և թիզ այլ աւելի երկանութիւն ունի, և սպիտակ ծաղիկ ունի. և հունդն երկանուկ է և ամնի մէջ կու լինի. և հունդն բոլորկեկ և սևուկ կու լինի. և մեծութիւնն գարէհատի չաք է. և այս խոտիս գունն կարմիր լինի, և ցեղ մըն այլ կայ որ ծաղիկն դեղին կու լինի, և ինքն կարմիր...»[28]։

Ըստ ռուս հայտնի բուսաբան Աննենկովի, այդ բույսը, որ հնում կոչվել է նաև Ascyron.— Hypericum perforatum-ն է։ Նա մեկ մոտ կոչվում է, «դաշտի եղնածաղիկ», ռուսների մոտ՝ «зверобой»[29]։

27. Ամիրդովլաթ Ամասացի, Անգիտաց անպէտ, Վիեննա, 1927 թ., էջ 594։

28. Նույնը, էջ 62 և 268։

29. Анненков, Ботанический словарь, стр. 172.

***

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի Դիոսկորիդեսի պատառիկի տեքստի համեմատությունը հրատարակված տեքստի հետ, մեզ բերում է այն համոզման, որ մեր պատառիկի տեքստը միանգամայն այլ է մեզ չհասած խմբի ընդօրինակությունն է. Ցույց տալու համար մեր եզրակացության ճշտությունը, անհրաժեշտ ենք համարում բերել այն տարբերակները, որոնք նկատվում են հրատարակված տեքստի համեմատությամբ։

Պատառիկի առաջին երեսի տեքստում

1ա. Բառի կեռն է մնացել—միայն լոյս. բառն է ἀμνος.

1բ. Բոլոր ձեռագրերն ունեն ἀμνος ὢν—մեր պատառիկը, Վելմանի E ձեռագրի նման, չունի ὢν օժանդակ բայը։

2ա. Բոլորն ունեն τριπλασίονα - մեր պատառիկը՝ τριπλάσιον ձևով։

2բ. Բոլորն ունեն ἃ τριφύεντα—մեր պատառիկը՝ διὰ τριφύεντα ձևով։

3ա. Բոլորը՝ ἀνίησι - մերը՝ ἀνίᾳσιν.

5ա. Բոլորը՝ μῆλινα—մերը՝ μηλίανα.

5բ. Բոլորը՝ κάλυκι - մերը՝ καυλίοις.

5գ. Բոլորը՝ μελαίνης—մերը՝ μελένης.

7ա. Բոլորը՝ ὀσμὴν προσδίδωσι—մերը՝ προείνσιν ὀσμήν.

7բ. Բոլորը՝ τούτου—մերը՝ αὐτός.

7գ. Բոլորը՝ չունեն δὲ մասնիկը։

8ա. Բոլորը՝ λεῖος—մերը՝ λίος.

8բ. Բոլորը՝ δυεῖν ὁλκῇ—մերը՝ δύο πλήθος.

10. Բոլորը՝ ἐπιρροῇεῖν—մերը՝ ἐπίρροφιν.

11. Բոլորը՝ καταπλασθεῖσα θεραπεύει—մերը՝ θεραπεύει καταπλασθεῖσα

Պատառիկի երկրորդ երեսի տեքստում

1. Հրատարակված բոլոր ընդօրինակությունները տալիս են χαμαίπιτυς կամ περὶ χαμαιπίτυος ձևով, միայն մեր պատառիկը տալիս է χαμέπιτυς տարբերակը։

2ա. Հրատարակված բոլոր ընդօրինակությունները՝ Εὔβοιᾳ δὲ իսկ մեր պատառիկը՝ δὲ Εὔβοίᾳ ձևով։

3բ. Հրատարակված ընդօրինակությունների մեծ մասը՝ Ἀθήνησι, իսկ մեր պատառիկը՝ Ἀθήνησιν ձևով։

3ա. Բոլոր ընդօրինակություններում բացակայում է մեր պատառիկի ἐστὶν օժանդակ բայը, բացի Վելմանի N օրինակից։

3բ. Բոլորը՝ ἕρπουσα ἐπὶ γῆς, մերը՝ ἐπὶ γῆς ἕρπουσα.

3գ. Բոլորը՝ φύλλα δὲ ἔχει, մերը՝ ἔχει δὲ φύλλα.

4ա. Բոլորը՝ ὅμοια ἀειζῴῳ μικρῷ, մերը՝ μικραζωίῳ ὅμοια.

4բ. Բոլորը՝ λεπτότερα δὲ, մեր պատառիկում՝ λιπότερατε.

5. τοὺς κλάδους, մեր պատառիկում՝ τοὺς հողը չկա։

7ա. Բոլորը՝ μετὰ οἴνου, մերը՝ σὺν οἴνῳ.

7բ. ἐπὶ ἡμέρας, պատառիկում չկա ἐπὶ բառը։

8. ἐπὶ δὲ ἡμέρας, մերը՝ ἐφ' φήμερας.

9ա. Բոլորը՝ πινόμενα, մերը՝ πινόμενον.

9բ. Բոլորը՝ δυσουροῦσι, Վելմանի E օրինակը և մեր պատառիկը՝ δυσουριῶσιν ձևով։

10ա. Բոլորը՝ ἁρμόζοντα, բացի N ձեռագիրը, որն ունի պատառիկի ἁρμόζον ձևով։

10բ. Բոլորը՝ στροφουμένοις, իսկ պատառիկում՝ πρὸς στροφμένους ձևով։

11ա. Բոլորը՝ αὐτῇ καὶ, բացի NE ձեռագրերը, որոնք մեր պատառիկի նման չունեն καὶ շաղկապը։

11բ. Բոլորը տալիս են՝ ἐν Ἡρακλείᾳ ձևով, իսկ մեր պատառիկը՝ ἐν Ἡρακλίᾳ ձևով։

12ա. Բոլորը՝ ὡς, իսկ NEΔ և մերը փոխարինել են καὶ շաղկապով։

12բ. Բոլորը՝ καὶ πρὸς ἀκόνιτον, մեր պատառիկը, ինչպես և ΝΔΕ ընդօրինակությունները, չունեն καὶ շաղկապը։

12գ. Բոլորը՝ καὶ πρὸς ἀκόνιτον ποτίζοντες, մեր պատառիկը՝ ποτίζοντες πρὸς ἀκόνιτον ձևով։

13. Բոլորը՝ προειργμένα, ΔΕΔ: և մերը՝ εἰργμένα ձևով։

15. Բոլորի մեջ՝ ἀντὶ καταποτίου, իսկ Վելմանի PV և մերը չունեն ἀντὶ նախդիրը։

16. Բոլորը՝ δὲ καὶ ῥητίνης, մեր պատառիկը՝ λεπτῆς ῥητίνη ἀναθλασθεῖσα ἢ τοῖ ձևով։

17ա. Բոլորը՝ ἀναληφθεῖσα, մեր պատառիկում՝ ἀναλημθεῖσα ձևով։

17բ. Բոլորը՝ τα ἀπὸ ὑστέρας, մեր պատառիկում՝ καὶ τῆς ῥυστέρας ձևով։

Այսպիսով, համեմատությունից տեսնում ենք, որ պատառիկի երկու էջերի 23 տողերի մեջ կան ավելի քան 42 տարբերակներ, որոնցից տասն ունեն տարբեր ձեռագրեր և նշված են Վելմանի կողմից տողատակ ծանոթության մեջ, իսկ մեր պատառիկի մնացած 32 տարբերակները չունեն հրատարակության համար օգտագործված ոչ մի ձեռագիր։ Այդ փաստը, անվիճելի, ապացուցում է, որ մեր պատառիկի տեքստը միանգամայն առանձին ընդօրինակության խմբի է պատկանում և շատ քիչ նմանություն ունի VII դարի «Neapolitanus Vindob»ի, ինչպես և Վելմանի օգտագործած մյուս ընդօրինակությունների խմբերի հետ։

***

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի Դիոսկորիդեսի պատառիկի արժեքը ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է որոշել պատառիկի գրության ժամանակը։

Պատառիկի վրա, դժբախտաբար, չկա ոչ մի հունարեն կամ հայերեն հիշատակություն, որպեսզի հնարավոր լինի որոշակի ասել նրա գրության ժամանակը։ Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի մեր ձեռագիրը, ինչպես ասել ենք, կազմվել է 1447 թվին և այդ ժամանակ է, որ Դիոսկորիդեսի պատառիկը, հունական քայքայված ձեռագրից վերցվել և դարձ է ածվել որպես առաջնաթերթ։

Պահպանակի ժամանակը որոշելու համար մեր վստահելի կռվանը—հնագիտությունն է, ուստի և մենք անհրաժեշտ համարեցինք պատառիկի գրության տառաձևերը համեմատության մեջ դնել Գարդհաուզենի «Griechische Palaeographie»[30] աշխատության վերջում հրատարակված հունական տարբեր դարերի տառատեսակների աղյուսակների հետ և եկանք վճռական այն եզրակացության, որ մեր պատառիկի տառաձևերը նմանվում են Լոնդոնի Քրիստոնեական թանգարանի № 17.148 հունարեն ձեռագրի տառաձևերին, որը գրված է 650—660 թվականներին։ Այս հիման վրա, Դիոսկորիդեսի պատառիկի գրության ժամանակը մենք որոշում ենք VII դարով։

Դիոսկորիդեսի ամենահին ձեռագիրը, ինչպես ասել ենք վերևում, Վիեննայի մատենադարանի Հուլիանայի ձեռագիրն է, 512 թվականից, այնուհետև գալիս է նույն մատենադարանի Նեապոլիտանական կոչվող ընդօրինակությունը VII դարից։ Դիոսկորիդեսի երրորդ ձեռագիրը, ժամանակի հնությամբ, անվիճելի, մեր պահպանակը կարելի է համարել։

Սակայն մեր պատառիկի արժեքը միայն իր հնության մեջ չէ, այլ նրա պարունակած տարբերակների, որոնցից երևում է՝

ա) որ Դիոսկորիդեսի ինքնագիրը ժամանակի ընթացքում խոշոր փոփոխություններ է ենթարկվել և

բ) որ Դիոսկորիդեսի մեջ հասած ընդօրինակություններից ոչ մեկը չի պահել հնում գոյություն ունեցող ընդօրինակության խիստ տարբերվող և արժեքավոր մի խմբի տեքստը, որի ներկայացուցիչն է մեր պահպանակը։

Թե ո՞րն է Դիոսկորիդեսի նախագաղափար օրինակին ավելի մոտ գտնվողը — հրատարակված ընդօրինակություններից մեկն ու մեկի՞, թե՞ մեր պատառիկի ընդօրինակության տեքստը, այդ դժվար է մեզ ասել այժմ, որովհետև մեր պատառիկի տեքստը շատ փոքր է նման լուրջ հարցին վճռական պատասխան տալու համար։

Մի բան անվիճելի է, որ Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 141 ձեռագրի պահպանակի տեքստը մեծ արժեք ունի դիտության պատմության համար և արժանի է հատուկ ուշադրության։

[30]. V. Gardthausen. Griechische Palaeographie, Leipzig. 1913, taf. 2-3.

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

«ԲԱՐՁՐԱՔԱՇ» ՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Տագրևանդի ճակատամարտից հետո (775 թ.) պատմական ասպարեզից ելնում է Մամիկոնյան հռչակավոր տոհմը, որը չորս դար շարունակ (4—8 դ. դ.) Հայաստանի պատմության մեջ առաջավոր դեր խաղացող տոհմերից մեկն էր։ Շատ անդամ նրա ականավոր զավակները զենքը ձեռքին դուրս են ելել պաշտպանելու իրենց երկիրը և ժողովրդին, նրա անկախությունը, կյանքը և պատիվը, զոհաբերելով իրենց անձը և ստացվածքը։

Մամիկոնյան տոհմի մի ճյուղը՝ թերևս վերջին մնացորդը Հայաստանի սահմաններում, 13-րդ դարի սկզբում, երևում է Լոռու անմատչելի լեռներում, ներկայիս Թումանյան (նախկինում Դսեղ) գյուղում։ Այդ շրջանի Մամիկոնյանների մասին կարճ հիշատակություն ունի Կիրակոս Գանձակեցին[1], որը իր պատմության 161-րդ էջում, նկարագրելով մոնղոլների արտաքինը և նրանց սովորությունը, վերջում ավելացնում է. «Զայս պատմեաց մեզ Գրիգոր իշխանն, որդի Մարզպանին[2] եպրայր Ասլանապէկին, Սարգսի և Ամիրային, յազգէ Մամիկոնէից, զոր իւր իսկ լուեալ էր ի մեծ յառնէ միոջէ՝ ի կարի աւագացն, որում անուն Ղութու Նուին...» և ուրիշ օրինչ։

Հայտնի չէ թե Լոռու Մամիկոնյաններն այդ ժամանակ ինչ դեր են կատարել հայ ժողովրդի պատմության մեջ, սակայն նրանք մի մեծ և փառավոր հիշատակ են թողել, այս անդամ ոչ թե սուրի, այլ շինարարության ասպարեզում։ Այդ հիշատակը Մարզպան Մամիկոնյանի և նրա որդիների կառուցած «Բարձրաքաշ» վանքն է, մի փառավոր հուշարձան, ըստ ամենայնի արժանի այդ հռչակավոր տոհմի անվան։

Բարձրաքաշ հուշարձանը գտնվում է Ալավերդու շրջանի Թումանյան գյուղի սահմաններում, գյուղից 3 կիլոմետր հեռավորությամբ, դեպի հյուսիս արևելք, Ջաղեցոր հրակայուն կավի հանքերը տանող քարե և զառիվայր կածանի վրա, խոր, անտառապատ և սաղարթախիտ ընկուզենիներով հարուստ ձորում։

Հարթ ճանապարհը գյուղից մինչև ձորաբերանը գնում է փարթամ և ծաղկաշատ արտերի միջով մինչև նեղ ձորի դահավեժ ժայռերը, որտեղից կես կիլոմետր հեռավորությամբ, ցածում, խիտ ծառերի միջից երևվում են հուշարձանի ավերակները։ Դեպի ձորն իջնող կածանից քիչ դեպի ձախ, մնացել են մի փոքրիկ, սրբատաշ քարերից շինված մատուռի ավերակները։ Կես կիլոմետր հեռավորությամբ, դեպի աջ, ձորագլխին կանգնած է «Սիրուն խաչ» դեղեցիկ խաչքարը։

Կածանը ժայռերի, թփերի, ծալիկների և ծառերի միջով, կարճ զիգզագներով, գլխիվայր իջնում է ցած և ճանապարհի կիսում անցնում է խոշոր քարերից շինված, խորանարդաձև, ինքնատիպ և գեղեցիկ «Ագռավի մատուռի կողքով։ Մատուռի առաջ կան հին տապանաքարեր, իսկ մոտերքում՝ ընկած և շարդված խաչքարեր։ Մատուռից քիչ ցած, ժայռի վրայից մի սառնորակ և անուշահամ աղբյուրի ջուրն է բլբլալով թափվում քարե երկար նավի մեջ։ Աղբյուրից մոտավորապես 50 մետր ցած, կածանի ձախ կողմում, խիտ թփերի մեջ, վանքի ձիթհանի ավերակներն են, որից մնացել է միայն կլոր մեծ քարը, որի վրա բարձրարռնդակ գրեր կան։ Աղբյու-

1. Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց», Մոսկվա, 1858 թ.։

2. Մարզպան կամ Մարձպան, թե այստեղ և թե Բարձրաքաշի վիմագրության մեջ, հատուկ անուն է։

ից 150 մետրաչափ ցած. վանքի ավերակներն են բացվում այցելուի աչքի առաջ, խիտ ծառերի շրջանակում, երկնքի լազուր ֆոնի վրա։ Դիմացը, հեռվում, թեթև մշուշի շղարշի տակ, Լոռու պարծանքը՝ Լալվար սարն է երևում։

Առաջին թռուցիկ հայացքից այցելուն հիացմունք է զգում։ Հիացմունքի պատճառը ոչ հուշարձանների մեծությունն է և ոչ էլ դրանց արտաքինը, որը միխիթարական չէ, այլ գույների և երանգների բազմազանությունը և ներդաշնակությունը, մանավանդ ժամառան շենքում, որտեղ պատերի և կանդուն մնացած կամարների կաթնագույն,

Բարձրամաշի արևելյան ճակատը

դեղնագույն, վարդագույն և բաց մանիշակագույն քարերի զվարթ և ուրախ ֆոնի վրա ընդգծվում են դուսպ և դրավիչ, բաց կապույտ գույնի բազալտի սյուները, որմնասյուները և դրանց խոյակները։ Հուշարձանը ժպիտը դեմքին ջահել ու գեղեցիկ ննջեցյալի է նման կանաչ դաղաղում։ Եվ իրոք նա ննջեցյալ է՝ քանդված։ Այնուհետև, երբ սկսում ես ուշի-ուշով դիտել յուրաքանչյուր կողմդ, մերթ այս և մերթ այն անկյունում կամ տեղում, բազմաթիվ գրավիչ, գեղեցիկ և հիացմունքի արժանի մանրամասնություններ ես տեսնում. որոնք մի առ մի նկարագրելու համար երկար պետք կը գրել։

Հուշարձանների գլխավոր խումբը բաղկացած է երեք շենքից, իրար կողքի դասավորված, հյուսիսից հարավ, ձորալանջի մի նեղ ու փոքր հարթության վրա։

Առաջին շենքը, սկսած հյուսիսից, Սագաշեն փոքր եկեղեցին է, որին Լալայանը, հայտնի չէ թե ինչ աղբյուրից քաղելով, Ս. Հարությունն անունն է տալիս։ Դա փոքր չափերի (9,7×5,2 մ.) մի պարզ սրահ է կոփածո, մուգ կապտավուն բազալտից։ Արևելյան պատի ճակատը, աբսիդը, դռների շրջանակները, թաղակալ գոտին և զույգ կիսամույտերը, որոնց վրա երբեմն հենված է եղել թաղը դուսկող կամարը—բաց վարդագույն, սրբատաշ քարից են։ Տանիքը փլված է և եկեղեցու ներսը մոտավորապես երկու մետր բարձրությամբ փլվածքով լցված։ Ունի երկու դուռ՝ արևմուտքից և հարավից, և աբսիդի կողքերին՝ խորաններ։

Երկրորդ շենքը՝ Մեծ եկեղեցին, ամբողջովին սրբատաշ, բաց դեղնագույն և բաց վարդագույն քարերից է կառուցված։ Չափերը՝ 12,4×10,5 մ. են։ Արևելյան կողմից ունի շատ լայն և քիչ խորություն ունեցող հինգ կողանի աբսիդ, որի երկու կողքերին կան կրկնահարկ խորաններ։ Արևմտյան կիսում, պատերից քիչ հեռու տեղավորված են երկու հատ բազմակող, մոտ երեք մետրաչափ բուն ունեցող բազալտե սյուներ, գեղեցիկ խոյակներով, որոնց վրա հենված է բարձր, գեղեցիկ, միակ կանգուն մնացած կամարը, որի կենտրոնում վարդագույն ներկված երկրաչափական քանդակներով մի մեդալիոն կա։ Շատ գեղեցիկ և օրիգինալ բարդ քանդակներ ունի հարավային ուղղանկյուն խոյակը, որը ստալակտիտների պես, ճակատից, ունի խաչանման քանդակներ, արանքներում ծաղկեքանդակ զարդեր։ Հարակից պատերի և սյուների միջև եղած բաժանմունքները ծածկված են, հարավայինը՝ հորիզոնական, իսկ հյուսիսայինը՝ դմբեթաձև խորշ ունեցող առաստաղով։ Հարավային բաժանմունքի առաստաղը իրար միացրած երեք ուղղանկյուն եռանկյունիներից է։ Եռանկյունիներն իրենց հերթին կազմված են իրար հարմարեցրած, դանազան չափերի սեպաձև քարերից։ Հյուսիսային բաժանմունքի առաստաղի քարերը, ցածի կողմից, զարդարված են կարմիր, սպիտակ և մուգ կապույտ գույներով նկարված գեղեցիկ օրնամենտներով, որոնց մի մասը, մինչև օրս էլ, պահել է իր գույների թարմությունը։ Սյուները կապված

են հարակից պատերի հետ տարբեր ձևի փոքր կամարներով, հարավային բաժանմունքում սլաքաձև, իսկ հյուսիսայինում՝ աղեղնաձև։ Այս եկեղեցին ունեցել է երեք դուռ, հյուսիսայինը՝ դեպի փոքր եկեղեցին բացվող, հարավայինը՝ ժամատուն և արևմտյանը՝ դեպի դուրս տանող, որն այժմ գոյություն չունի, այդ կողմի պատի քանդվելու պատճառով։ Մի ժամանակ այս եկեղեցին ունեցել է բարձր գմբեթ[3], որը տանիքի հետ միասին փլվել է։ Փլատակների բարձրությունը եկեղեցու մեջ 2,5—3 մետր է։ Փոքր եկեղեցու մեջ ընկած մնացել է մի թամբաձև, երկթեք տանիքի ձևով տաղված քարի վրա, խաչաձև տանիք ունեցող գմբեթավոր մի եկեղեցու մակետ, որը հավանաբար դրված է եղել Մեծ եկեղեցու ցվիքի ծայրին։

Մեծ եկեղեցու շինությունն սկսել է Մարզպան Մամիկոնյանը 12 (1221) թվին, համաձայն այդ եկեղեցու հարավային պատի ցածի մասում 1950 թվին հայտնաբերված մեծ արձանագրության։

Երրորդ շենքը՝ ժամատունը, 14,4×13,2 մ. չափեր ունի, որը սովորական է այդ տիպի շենքերի համար։ Ունեցել է բազալտե չորս սյուներ և պատերին կից 8 հատ կիսասյուներ, որոնց վրայից բարձրացող կամարների վրա նստած են եղել տանիքը և երդիկը։ Սյուներից կանգուն մնացել են միայն երկուսը, ժամատան հարավային կիսում։ Այդ սյուների և հարակից պատերի որմնասյուների վրայից բարձրացող փոքր կամարները և դրանց վրա նստած միջնորմները դեռևս մնում են, սակայն խարխուլ վիճակում և առանց այդ բաժանմունքները ծածկող տանիքի։ Ժամատունը հարավ-արևելյան և հյուսիս-արևելյան անկյուններում ունեցել է կրկնահարկ խորաններ, որոնցից վերջին զույգը փլել է, իսկ առաջին զույգը խարխուլ վիճակում է։

Ժամատունն սկզբում ունեցել է երկու մուտք՝ արևմուտքից և արևելքից, և մի ելք՝ հյուսիսից, դեպի Մեծ եկեղեցին։ Արևմտյան մուտքի ճակատը զարդարված է վառ կարմիր տուֆ քարից պատրաստված հնգաթև աստղերով։ Արևելյան մուտքի արտաստվոր չափեր ունեցող լայն և բարձր բացվածքը հետագայում, մեր կարծիքով, օգտագործել են Մարզպանի որդիները (թերևս դրանցից Գրիգորը, որի մեծ, կամարաձև փորագրված արձանագրությունը դեռևս մնում է այդ մուտքի ճակատին), այդ տեղում աբսիդ կառուցելու նպատակով։ Աբսիդին խորություն տալու համար, ժամատան արևելյան պատի գծից դուրս, կառուցված է մի կցորդ, որի ճակատը, ծերկթեքի տակ, զարդարված է գեղեցիկ կերպով ոճավորված երկգլխանի արծվի քանդակով։ Արծիվը մագիլների մեջ ոլխար ունի բռնած։ Դա Մամիկոնյանների տոհմի զինանշանն է։

Թե ժամատան աբսիդի բացվածքն առաջ մուտք է եղել և աբսիդի կցորդը հետո է շինվել, հիմնավորվում է հետևյալ փաստերով.

ա) Ժամատան արևելյան պատի գծից դուրս կառուցված կցորդը, որն այժմ անջատվել է այդ պատից և թեքվել դեպի ձորը, օրգանական որևէ կապ չունի պատի հետ, այսինքն կցորդի և պատի քարերը հագցված չեն իրար մեջ, այլ կցորդն ընդհանուր շարված է պատի սրբատաշ քարերին։

բ) Աբսիդը պատից պոկվելուց հետո բացվել է նախկին մուտքի ձևավորված շրջանակը, որն առաջ, կցորդը շինելուց հետո, ծածկված է եղել աբսիդի աջ և ձախ կողմերի պատերի տակ։

Խուսափելով Բարձրաքաշի ժամատան նկարագրության շուրջ այստեղ երկար կանգ առնելուց, չենք կարող չհիշել մի երկու աշքի ընկնող և բացառիկ մանրամասնություններ։

1950 թվին, Ճարտարապետական հուշարձանների պահպանության կոմիտեի կողմից հուշարձանը բարեկարգելու նպատակով մաքրելու աշխատանքների ժամանակ, ժամատան հյուսիս-արևմտյան բաժանմունքում հայտնաբերվել են երկու հատ 0,34 մ. հաստությամբ 1,27×0,98 մ. չափերի սալեր, որոնց երեսը ծածկված է կարմիր, կապույտ, սպիտակ և մոխրագույն զարդանկարներով, դարչնագույն ֆոնի վրա։ Սալերի կենտրոնական մասում երկրաչափական ֆիգուրներ են, իսկ մեկի երկայնքով մի եզրը, իսկ մյուսի լայնքի և երկայնքի երկու եզրերը նկարազարդված են հայկական օրնամենտներով։ Սալերի կողերին կան երկուական, մոտ 5×15 սմ. չափի խոր փոսեր, որոնք ցույց են տալիս, որ սալերը հորիզոնական դիրքով կախված պահելու համար միացված են եղել մետաղե կապերով։ Այդ սալերի մոտ գտնվել են նաև երկու հատ եռանկյունաձև, փոքր չափերի նկարազարդ քարեր։ Ըստ երևույթին այդ քարերը և սալերը ժամատան հիշյալ բաժանմունքի հարթ առաստաղի բարդ կաղմության մասերն են։ Նման ծաղկենկարով ծածկված մի քարի բեկոր հայտնաբերվել է նաև հարավ-արևմտյան բաժանմունքում, որը նշան է, որ դրա առաստաղն էլ ծաղկենկար է եղել։ Առաստաղի քարերը ներկերով նկարազարդելու այս երևույթը մի հետաքրքիր նորություն է մեր կրոնական տիպի շենքերի Հարտարապետության մեջ։

3. Դատելով փլվածքի մեջ հայտնաբերված քարերից, եկեղեցու գմբեթը պատված է եղել գեղեցիկ երկրաչափական քանդակներ ունեցող դոտիներով։

Երկրորդ մանրամասնությունը, որի մասին չի կարելի չհիշել, ըստ ոճի բացառիկ բարձրաքանդակներն են, մեծամեծ քարերի վրա, որոնք նույնպես նոր են հայտնաբերվել ժամատան կենտրոնական մասում։ Ըստ երևույթին այդ քանդակազարդ քարերով պատված է եղել ժամատան երդիկը, թերևս և առաստաղը ներսից։ Տեղ-տեղ զարդաքանդակները 15 սմ. բարձրությամբ են քարի մակերեսից։ Նման ոճի բարձրաքանդակներ այլ տեղ մեզ չի պատահել[4]։

Այժմ աշխատենք պարզել հուշարձանին վերաբերող մի քանի կարևոր հարցեր։ Որովհետև մեր գրականության մեջ շատ քիչ տվյալներ կան, ուստի և մեզ հետաքրքրող հարցերի պատասխանը փորձենք գտնել հուշարձանի և նրա հարուստ վիմագրության մեջ։

«Սիրուն խաչ» Բարձրաքաշի ձորագլխին

Հուշարձանի անունը.— Գրականության մեջ այս հուշարձանների խումբը հայտնի է իբրև «Բարձրաքաշ Ս. Գրիգորս», և կամ, ինչպես Ջալալյանն է ասում՝ «Ս(ուրբ)ք ուխտն բարձրաքաշ յանուն Աստուածածնին»։ Դրանցից «Ս. Գրիգորս» անունը հուշարձանի վիմագրության մեջ հիշվում է միայն մեկ անգամ, այն էլ ժամատան արևմտյան պատին. մուտքից ձախ (դրսից), Սմբատի նվիրատվական № 38 արձանագրության մեջ և հավանաբար եղել է միայն ժամատան անունը, ուստի և ամբողջ խմբին վերագրել, մեր կարծիքով, չի կարելի։

«Աստվածածին» անունը հիշվում է 5 արձանագրությունների մեջ (№№ 4, 7, 13, 16 և 31), որոնցից առաջին երեքը Մեծ եկեղեցու, իսկ վերջին մերկուսը՝ ժամատան պատերին։

Նկատի ունենալով, որ յուրաքանչյուր կրոնական տիպի շենք իր հատուկ անունն է ունեցել, թվում է թե «Աստվածածին» եղել է Մեծ եկեղեցու անունը, որը տարածվել է ամբողջ վանքի վրա, ուստի ավելի ճիշտ կլիներ հուշարձանների խմբի անունն ընդունել ըստ Ջալալյանի։ Սակայն, նկատի ունենալով, որ գործածական է եղել նաև «Բարձրաքաշ» մականունը, որը թերևս ավելի հին է, և որ ինքը՝ վանքի կառուցող Մարգպան Մամիկոնյանը իր հին (№ 12) արձանագրության մեջ հուշարձանների խումբն անվանում է «Բարձրաքաշ վանք», մենք էլ իբրև հավաքական անուն ընդունում ենք վերջինը։

Հուշարձանների շինության ժամանակը, հերթականությունը և շինողները.— Մեր մեծանուն ճարտարապետ Թորոսյանը (հատոր Բ., էջ 124) Բարձրաքաշի հուշարձանները համարում է 11-րդ դարու գործ, առանց որևէ հիմնավորման և մանրամասնության մեջ մտնելու, կամ վիմագրական թվագիրները նկատի առնելու։

1. Հուշարձաններից ամենահինը՝ Սապաշեն փոքր եկեղեցին, ըստ ճարտարապետական հուշարձանների պահպանության կոմիտեի քարտերի, համարվում է 10-րդ դարու շենք։ Լալայանը շինված է համարում 1205 թվին (ՈՇԴ) Հովհաննես վարդապետի և նրա եղբայր Սարգսի բարեխոսությամբ (?) և իբրև քաղված արձանագրությունից, որից օգտվել է, չակերտների մեջ բերում է միայն «ուիշխանութեան մեծին Մարգպանայ եւ զատակաց նորա» խոսքերը[5]։ Դժբախտաբար արձանագրությունը լրիվ չի բերում և ոչ էլ հայտնում, թե դա որտեղ է եղել։ Այդ արձանագրությունն այժմ չկա, գուցե փլատակների տակ է մնացել։ Համենայն դեպս բերված քաղվածքը շինության մասին ոչինչ չի ասում։ Թերևս այդ անհայտացած արձանագրությունը վերանորոգության է վերաբերում և ոչ թե շինության, որովհետև շենքն իր

4. Ցանկալի է, որ Գնտական թանգարանը հիշված քարերից գոնե մեկական օրինակ փոխադրեր նրան, թանգարանում պահելու, կորստից փրկելու նպատակով։

5. Ադոնցի հանդես, VII—VIII, էջ 423.

ոնով և շինարվեստով Բարձրաքաշի մյուս հուշարձաններից ավելի հին է և վերանորոգության նշաններ ունի։ Այսքանը միայն կարելի է հաստատ ասել, որ դա շինված է եղել Մեծ եկեղեցուց առաջ, որովհետև նրա արևելյան պատի վրա (դրսից) պահպանված է Բարձրաքաշի թվագիր ունեցող արձանագրություններից ամենահինը (№ 3) ՈԿԲ (1212) թվագրով։

2. Բարձրաքաշի հուշարձաններից միջինը, որին մենք «Մեծ եկեղեցի» ենք անվանում, սկսել է շինել Մամիկոնյան տոհմից Համազասպի թոռ և Սարգսի որդի Մարզպանը 1221 թվին, Թամարայի որդի Գեորգիի թագավորության և Իվանե Աթաբեկի օրոք, համաձայն նոր հայտնաբերված, նույն եկեղեցու հարավային պատի ցածի մասում փորագրված, № 12, ՈՀ թվագիր ունեցող արձանագրության։ Շինությունը վերջացնելու մասին հիշատակություն չկա։

3. Երրորդ հուշարձանի՝ ժամատան շինության ճիշտ թվականը մենք համարում ենք անորոշ, չնայած Մարզպան Մամիկոնյանի երկրորդ՝ ՈՀ թվակիր շինարարական արձանագրության (№ 36), որը փորագրված է այդ հուշարձանի հարավային ճակատին, վերևում։

Մենք այդ եզրակացության ենք եկել հետևյալ պատճառներով.

ա) Իրար հետ համեմատելով № № 12 և 36, միևնույն թվագիր ունեցող արձանագրությունները, կտեսնենք, որ դրանք նույն բովանդակությունն ունեն, թեթև տարբերությամբ, հետևապես միևնույն արձանագրության երկու վարիանտներն են։

Շինարարության մասին № 12-ի (առաջին վարիանտի) մեջ ասված է. «Սկսա շինել զԲարձրաքաշս վանք եւ գերեզմանատեղ ինձ եւ զամենայն եկեղեցիքս», իսկ երկրորդի՝ № 36-ի մեջ՝ «Շինեցի զվանքս եւ զամէն եկեղեցիքս... եւ արարի ինձ տուն եւ գերեզմանատեղի եւ զաւակաց իմոց եւ ազգականաց...»։ Այս քաղվածքներից երևում է, որ առաջին վարիանտը (Մեծ եկեղեցու ճակատի արձանագրությունը) փորագրված է շինարարության սկզբում, իսկ երկրորդը (ժամատան ճակատինը) շինարարության վերջում և որ այդ ժամանակվա ընթացքում Մարզպանը իր միտքը փոխել է—սկզբում միայն իր համար նախատեսված գերեզմանատեղը դարձնելով նաև իր զավակների և ազգականների համար։ Հետևապես, երկու հիշատակությունների մեջ որոշ ժամանակ է անցել։ Սակայն այդ ժամանակամիջոցը միևնույն տարվա սահմաններում լինելու դեպքում, պետք է ընդունել, որ ՈՀ (1221) թվին սկսվել է Մեծ եկեղեցու շինարարությունը և վերջացել թե՛ դրա և թե՛ ժամատան շինարարությունը, մի բան, որը 13-րդ դարու տեխնիկական և նույնիսկ տնտեսական պայմաններում հնարավոր չէր, նման երկու մեծ և բարդ կառույցում ունեցող շենքերի համար։

բ) Թե իրոք ժամատան շինարարությունը 1221 թվին չի վերջացել, այլ շատ ուշ, ապացուցում են թվագիր ունեցող արձանագրություններից ՈՂԴ թվակիր № 14՝ Մարզպանի որդի Ասլանբեկի, և ՈՂԱ թվակիր՝ Մարզպանի ծառա Սեճիի արձանագրությունները, որոնցից պարզվում է, որ ժամատան մի մասի՝ խորանների (մատուռների) շինարարությունը վերջացել է 1242 և 1245 թվականներին։

Բացի այդ, ՈՀ-ից մինչև ՈՁՁ, այսինքն 16 տարիների ընթացքում ժամատան պատերին որևէ թվակիր արձանագրություն չկա։

Վերոհիշյալից պարզ է, որ ՈՀ (1221) թվականը ժամատան շինարարությունը վերջացնելու թվական համարել չի կարելի։

Ժամատունն ավելի ուշ շինվելու հետևյալ փաստերն ևս կան.

ա) Մարզպանի ՈՀ թվակիր առաջին վարիանտի (№ 12) արձանագրության մեջ Իվանե Աթաբեկն անվանվում է «մեծ», իսկ երկրորդ վարիանտի մեջ (№ 36) այդ ածականը չկա։ Դրանից կարելի է եզրակացնել, որ առաջին վարիանտը գրված է Իվանեի կենդանության ժամանակ, նրան հաճոյանալու նպատակով «մեծ» անվանելով, իսկ երկրորդ վարիանտը՝ նրա մահից հետո, երբ այլևս Իվանեին հաճոյանալու կարիքը վերացել էր։

բ) Ժամատան շինարարությամբ թե՛ Մարզպանի առաջին՝ ՈՀ թվակիր, և թե՛ դրա տակ փորագրված Գեորգեի որդի Աշոտի մեծ արձանագրությունները (№ № 12 և 13), որոնք փորագրված են Մեծ եկեղեցու հարավային՝ ժամատան մեջ ընկնող ճակատին, կիսով չափ ծածկվել են ժամատան որմնասյան և հյուսիս-արևելյան անկյունում շինված խորանների պատի տակ, որով արժեքազրկվել են։

Բացի այդ, Մեծ եկեղեցու հարավային պատին փորագրված արևի ժամացույցը նույն պատճառով անպետքացել է։

Մեծ եկեղեցու հարավային պատի սրբատաշ քարերը քերծել են, ժամատան հյուսիսային՝ միջին, որմնակամարը շաղախով նույն պատին զոդելու նպատակով։

Պարզ է, որ Մեծ եկեղեցու և ժամատան շինարարությունը միաժամանակ (միևնույն տարում) կատարվելու դեպքում, ոչ այդ արձանագրությունները և ոչ արևի ժամացույցը կփորագրվեին եկեղեցու հարավային պատին և որմնակամարը պատին կմիացնեին դրանց քարերն իրար մեջ հագցնելով։

Այս բոլորը նկատի ունենալով, գալիս ենք հետևյալ եզրակացության.

ա) Ժամատունը շինված է Մեծ եկեղեցու շինարարությունը վերջացնելուց բավական ուշ, իսկ թե երբ, այդ մասին մեր կարծիքը կհայտնենք քիչ հետո, ստորև։

բ) Ժամատան շինարարության հետևանքով Մարզպանի փչացած արձանագրությունը, թեթև փոփոխությամբ և հավելումով, փոխադրվել է ժամատան հարավային ճակատին, ինչպես նույն պատճառներով այդպես վարվել են—Մալիքա դայակը (№ 11-ի փոխարեն № 27-ը) և Գորգեի որդի Աշոտը (№ 13-ի փոխարեն № 16-ը)։

Մարզպանի հիշյալ (№ 12) արձանագրությունը համարյա նույնությամբ կրկնելու և, որ կարևորն է, հին թվագիրը պահպանելու հանգամանքն առիթ է տալիս ենթադրելու, որ այդ բանը կատարել են Մարզպանի մահից և ժամատան շինարարությունը վերջացնելուց հետո նրա որդիները, իրենց հոր հիշատակը պահելու նպատակով, հավանաբար Մարզպանի կենդանության ժամանակ ստացած լինելով նրա համաձայնությունը, նրա շինած հուշարձանները, կամ դրանցից մեկը՝ ժամատունը՝ իրեն գերեզմանատեղ դարձնելու նաև Մարզպանի զավակների և ազգականների համար, հակառակ դեպքում Մարզպանը նոր արձանագրություն կթողներ, նոր թվագրով։

Այժմ անդրադառնանք ժամատան շինարարության ժամանակի հարցին։

Այդ հուշարձանի պատերին պահպանված թվագիր ունեցող արձանագրություններից ամենահինը (չհաշված Մարզպանի № 36—ՈՀ թվակիրը) Գորգեի որդի Աշոտի № 16—ՈՁԿ (1237) թվակիր գրությունն է, որը, ինչպես վերը հիշեցինք, նրա հին՝ № 13-րդ արձանագրությանն է փոխարինել, տեքստի որոշ փոփոխություններով։ Հետաքրքիր է այն հանգամանքը, որ այս վիմագիրը տեղավորված է ժամատան հարավ-արևելյան վերին և ներքին խորանների մեջ (արևելյան պատին, դրսից), իսկ Սևեռի № 20 վիմագիրը ցույց է տալիս, որ վերին խորանը շինվել է ՈՂԱ (1242) թվին [6]։

Առաջին հայացքից թվում է, որ այդ թվագրերը հակասում են իրար, որովհետև 1242 թվին շինված կառուցվածքի վրա 1237 թվակիր արձանագրություն չէր կարող լինել։ Սակայն մենք այստեղ ոչ միայն հակասություն չենք գտնում, այլ ընդհակառակը՝ որոշակի տվյալ, շինարարության տեմպը ցույց տվող, որը մեզ կոգնի այդ շինարարության սկիզբը մոտավոր ճշտությամբ որոշելու։ Կարծում ենք, որ առարկություն չի լինի 1242 թվականը հիշյալ խորանի շինության վերջավորության թվական համարելը։ Իսկ եթե նկատի ունենանք, որ խորանների շինությունը կատարվել է ամբողջ շենքի շինությանը զուգընթաց, որ 13-րդ դարու տեխնիկական պայմաններում [7] նման բազմաժախս, բարդ և հոյակապ շինարարությունը կարող էր տևել երկար տարիներ, որին ապացույց է այն փաստը, որ Մարզպանի որդի Ասլանբեկը ժամատան հյուսիս-արևելյան կրկնահարկ խորանների շինարարությունը վերջացրել է ՈՂԴ (1245) թվին, այն ժամանակ հասկանալի կլինի, որ Գորգեի որդի Աշոտը իր նախորդ արձանագրության փչանալու պատճառով շտապել է դեռ չվերջացած շինության պատին փոխադրել տալ իր նոր արձանագրությունը [8]։ Սրանից պետք է եզրակացնել, որ Սևեռին 1237 թվին արդեն երկրորդ հարկի խորանի մի մասը շինել էր, ուրեմն և կարելի է ընդունել, որ նա նույն այդ թվին, կամ դրանից մի տարի առաջ, այսինքն 1236 թվին է սկսել երկրորդ հարկի խորանի կառուցումը, որով այդ թվականը կդառնա ժամատան շինության կեսն ավարտելու ժամանակը։

Ասլանբեկի № 14 արձանագրության (որը շինարարական ընույթի վերջին վիմագիրն է) ՈՂԴ (1245) թվականը համարելով ժամատան ավարտման թվականը, կստացվի, որ այդ շենքի վերին կեսը շինվել է մոտ 9 տարում։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ժամատան շինարարությունն սկսվել է Մարզպանի կենդանության ժամանակ և այդ պատճառով էլ առաջին կեսի շինությունն ավելի արագ տեմպով է ընթացել, կարծում ենք սխալված չենք լինի, որ առաջին կեսի շինարարության տևողությունը համարենք 4—5 տարի, որով ժամատան շինարարության ամբողջ ընթացքը կլինի 13—14 տարի, սկիզբը մոտավորապես 1231—1232 թվերին, իսկ վերջավորությունը 1245 թվին։

Ինչպես վերը հիշեցինք, բացի Մարզպանից, ժամատան շինարարությանը մասնակցել են նաև ուրիշները։ Մի կողմ թողնելով ենթադրաբար շինարարությանը մասնակցողներին, դրանց թվում առաջին հերթին Մարզ-

6. Սևեռի շինած խորանի վերինը լինելը մեր ենթադրությունն է. տես 15-րդ արձանագրության 5-րդ ծանոթությունը։

7. Այստեղ պետք է նկատի առնել և շինարարության քարը լեռնային ճանապարհներով հեռվից բերելու դժվարությունները։

8. Չվերջացած հուշարձանի վրա արձանագրելու սովորությանն ապացույց է Մարզպանի ՈՀ թվակիր № 12 վիմագիրը։ Մեծ եկեղեցու հարավային պատի ցածի մասում, որի մասին Մարզպանն ասում է «Սկսա շինելս։

պանի որդի Գրիգորին, այստեղ կհիշենք միայն նրանց, որոնց մասին վիմագրությունը որոշակի ցույց է տալիս։ Դրանք են.

ա) Մարզպանի որդի Ալանբեկը, որը համաձայն № 14 արձանագրության, շինել է ժամատան կրկնահարկ հյուսիս-արևելյան խորանները (մատուռները), ՈՂԴ (1245) թվին։

բ) Մարզպանի ծառա Սեճին, որը համաձայն № 20 արձանագրության, շինել է հարավ-արևելյան խորաններից, ըստ մեր կարծիքի, վերինը։

գ) Դրանից առաջ, ըստ անթվագիր և ազատ № 19 արձանագրության մեր վերծանման, Հաղբատի առաջնորդ Համազասպի եղբայր Գրիգորը[9] շինել է ցածի խորանը։

դ) Ժամատան չորս սյուներից երեքը հաստատապես շինել են զանազան մարդիկ, իբրև իրենց հիշատակ, համաձայն № № 32, 34 և 35 արձանագրությունների։ Դրանք հավանաբար եղել են Մարզպանի ծառաները կամ մերձավորները։

Այստեղ հաշվի չենք առնում նրանց, որոնք ընդհանուր խոսքով «օգնել» են շինարարությանը, դրանց թվում է և Խաղբակյան Պռոշը։

Մամիկոնյանների տոհմային պանթեոն.— ՈՀ թվակիր № 12 արձանագրության «սկսա շինել զԲարձրաքաշս վանք եւ գերեզմանատեղ ինձ» խոսքերից երևում է, որ Մարզպանը Մեծ եկեղեցին շինել է իրեն համար իբրև գերեզմանատեղ։ Այդ նպատակը հետագայում ընդարձակվելով. Բարձրաքաշը դառնում է ոչ միայն Մարզպանի, այլև նրա զավակների ու ազգականների գերեզմանատեղ՝ Մամիկոնյան տոհմի պանթեոն։ Դրա մասին որոշակի հիշատակություն կա Մարզպանի երկրորդ՝ ՈՀ թվակիր՝ № 36 արձանագրության մեջ. «Արարի ինձ տուն և գերեզմանատեղի եւ զաւակաց իմոց եւ ազգականաց...»։ Հետագայում Բարձրաքաշը գերեզմանատեղ է դառնում նաև Մամիկոնյանների բարեկամների համար. այսպես օրինակի համար, համաձայն ՈՂԵ (1246) թվակիր № 18 արձանագրության, Գոկայի որդի Քուրդը, Մարզպանի որդիների համաձայնությամբ, «միաբանում» է Բարձրաքաշին, ամենայն հավանականությամբ այդտեղ թաղվելու համար, որովհետև նա դուրս է գալիս Սանահնի իր տապանատնից։

Վերոհիշյալը նկատի ունենալով կարծում ենք, որ Մարզպանի, նրա որդիների, ազգականների և բարեկամներից ոմանց գերեզմանները գտնվում են Մեծ եկեղեցու և մասնավորապես ժամատան մեջ, ծածկված փլվածքի-հաստաշերտի տակ։

Բարձրաքաշի հուշարձանները Մանդվելու մասին.— Ինչպես արդեն հիշել ենք, այդ փլվածքի և ներսից շքեղ ձևավորված հուշարձանները քայքայված դրության մեջ են։ Ընդհանուր գծերով պատկերը հետևյալն է. Սադաշեն եկեղեցին ամբողջ երկայնքով, զգալի չափով թեքված է դեպի արևմուտք, այսինքն արևելյան մասը բարձրացել է, իսկ արևմտյանը՝ իջել։ Նույն դրության մեջ է, թեև ավելի փոքր չափով, նաև Մեծ եկեղեցին։ Ժամատան արևմտյան պատը նախորդ շենքերի հետ դեպի ձորալանջը թեքված լինելով, արևելյան պատը հակված է հակառակ ուղղությամբ՝ դեպի ձորը։ Հետագայում արևելքից ժամատան շենքին կցված արսիդի կցորդը պատից պոկվել ու ավելի է թեքված և եթե դրան իբրև հենարան շարված քարակույտը չլիներ, որը տեղացիների ասելով մեր մեծ բանաստեղծ Թումանյանի կարգադրությամբ է արված, հուշարձանի այդ մասը թերևս արդեն փլված լիներ։ Հուշարձանների այդպիսի դրությունը միայն երկրաշարժին վերագրել չի կարելի, թեև հուշարձանների կործանման մեջ դա քիչ դեր չի խաղացել։ Մեր կարծիքով, հուշարձանների նման դրությանը մեծապես նպաստել են տեղային որոշ սպեցիֆիկ պայմաններ, օրինակ ձորալանջի հողաշերտի դանդաղ սահումը դեպի ցած և այդ շարժման ճանապարհին առաջին երկու շենքերի առջև գտնվող թումբի տակի ժայռի ընդդիմակալելը սահանքին և այլն։ Հիշյալ հետաքրքիր երևույթի ճիշտ պատճառները որոշելը մասնագետի գործ է, ուստի և մեր ենթադրություններն այդ առթիվ սահմանափակում ենք։

Մարզպանի կառուցած շենքերի քայքայման և կործանման գլխավոր պատճառներից մեկն էլ, մեր կարծիքով, շաղախի վատորակն է, որովհետև շաղախն այնքան թույլ է, որ մատների թեթև ճնշման տակ փոշիանում է։

Այս կամ այն պատճառներով Բարձրաքաշի հուշարձանները, ինչպես երևում է, երկար կյանք չեն ունեցել, որին ապացույց է նաև այն հանգամանքը, որ թվագիր ունեցող արձանագրություններից ամենավերջինը՝ № 26-ը՝ ՈՂԹ (1250) թվականն ունի և իբրև վանահայրեր հիշատակվում են միայն երեք հոգի, որոնցից Տիրացու վարդապետը թվակիր արձանագրությունների, իսկ անթվակիրների մեջ՝ Երեմիա (№ 21) և Հովսեփ (№ № 30 և 38)։

(Շարունակելի)

9. Այս Գրիգորը հիշատակվում է Ջալալյանի «Մանապարհորդութիւն ի Մեծն Հայաստանեաց» մասի 75-րդ էջի առաջին արձանագրության մեջ։

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սույն թվի մարտի 18-ին, Ծաղկազարդի օրը, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, Էջմիածնի միաբանության անդամ 26-ամյա Ստեփանոս ավագ սարկավագ Տեր-Ստեփանյանը, Վեհափառ Հայրապետի բարեհաճ ցանկությամբ, ձեռնադրվեց աբեղա։ Նորընծա աբեղան իր անուշ ձայնի համար վերանվանվեցավ Կոմիտաս։ Ձեռնադրությունը կատարեց գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը, խարտավիլակությամբ Մայր Տաճարի ավագ դասապետ Տ. Նիկողայոս ավագ քահանա Բավեյանի։

***

Հուլիսի 4-ին ինքնաթիռով արտասահմանից Մոսկվայի վրայով Երևան ժամանեց Էջմիածնից արտասահման մեկնած պատվիրակությունը, գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի գլխավորությամբ։ Պատվիրակությանը ընկերակցում էին եպիսկոպոսական ձեռնադրություն ստանալու համար Մայր Աթոռ Ս. Էջմիածին եկող Երուսաղեմի հայոց պատրիարքական տեղապահ գերաշնորհ Տ. Եղիշե վարդապետ Տերտերյանը, Տ. Սուրեն վարդապետ Քեմհաճյանը, Տ. Նորայր վարդապետ Պողարյանը։ Գերագույն Հոգևոր Խորհրդի քարտուղար պ. Հ. Ագուլյանը կանխօրոք մեկնել էր Մոսկվա՝ դիմավորելու նրանց և ուղեկցելու Ս. Էջմիածին։

Օդանավակայանում հյուրերին դիմավորեցին Տ. Սահակ և Տ. Վազգեն ծայրագույն վարդապետները և Հոգևոր Ճեմարանի ռեկտոր պ. Մ. Մինասյանը։ Օդանավակայանի դահլիճում հյուրերին ողջույնի խոսք ասաց Տ. Սահակ Ծ. վարդապետը։ Պատասխան խոսքով հանդես եկան գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոսը և պատրիարքական տեղապահ Տ. Եղիշե վարդապետը։

***

Հունիսի 10-ին Մայր Տաճարում, Ս. Պատարագից հետո, Վեհափառ Հայրապետի ներկայությամբ, հանդիսավոր հոգեհանգիստ կատարվեց Կոստանդնուպոլսի նախկին պատրիարքական տեղապահ հոգելույս Տ. Գեորգ արքեպիսկոպոս Արսլանյանի հիշատակին։

***

Հուլիսի 7-ին Մայր Աթոռ այցելեց Շվեդիա-ՍՍՌՄ ընկերության պատվիրակությունը, որի կազմի մեջ կային պրոֆեսորներ, դրողներ, բանաստեղծներ և այլ մասնագիտության անձինք։ Հյուրերը դիտեցին տաճարը, թանգարանը և Վեհարանը։ Նրանք վերջում շնորհակալություն հայտնեցին և դոհ հեռացան Մայր Աթոռից։

***

Հուլիսի 8-ին Մայր Տաճարում, ապգիս Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Գեորգ Զ. Սրբազնագույն Կաթողիկոսը, խուռն բազմության ներկայությամբ, կատարեց եպիսկոպոսական ձեռնադրություն։ Եպիսկոպոս ձեռնադրվեցին Ս. Երուսաղեմի հայոց պատրիարքական տեղապահ գերաշնորհ Տ. Եղիշե վարդապետ Տերտերյանը, Մայր Տաճարի ավագ լուսարար Տ. Սահակ Ծ. վարդապետ Տեր-Հովհաննիսյանը, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց ուխտի միաբաններ Տ. Սուրեն վարդապետ Քեմհաճյանը և Տ. Նորայր վարդապետ Պողարյանը, և Ռումինահայ թեմի առաջնորդ Տ. Վազգեն Ծ. վարդապետ Պալճյանը։

Ի պատիվ նորընծա եպիսկոպոսների, Վեհարանում տեղի ունեցավ ճաշկերույթ Վեհափառ Հայրապետի և մի շարք հյուրերի ներկայությամբ։

***

Ռումինահայ թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյանի և Կոնստանցայի հայ համայնքի և քաղաքական խորհրդի միջնորդությամբ, Տ. Համազասպ ավագ քահանա Պետիկյանին՝ նրա ծննդյան 80-ամյակի և ուսուցչական գործունեության 50-ամյակի կապակցությամբ, որպես ժրաջան, նվիրված և հավատարիմ գործիչ, Ամենայն Հայոց Հայրապետը սույն թվի հուլիսի 18-ին շնորհել է օրհնության կոնդակ։

***

Հուլիսի 15-ին Մայր Տաճարում եպիսկոպոսական իր անդրանիկ Ս. Պատարագը մատուցեց Ս. Երուսաղեմի հայոց պատրիարքական տեղապահ գերաշնորհ Տ. Եղիշե Նորընծա եպիսկոպոսը։ Տ. Տ. Սուրեն, Նորայր և Վազգեն եպիսկոպոսներն ևս այդ օրը իրենց եպիսկոպոսական անդրանիկ Ս. Պատարագները մատուցին Երևանի Ս. Սարգիս, Ս. Զորավար և Ս. Հովհաննես եկեղեցիներում։ Պատարագներին ներկա էր հավատացյալների հոծ բազմություն։ Պատարագիչ սրբազանները քարոզեցին հավուր պատշաճի։

***

Հուլիսի 22-ին Մայր Տաճարում եպիսկոպոսական իր անդրանիկ Ս. Պատարագը մատուցեց նորընծա Տ. Սահակ եպիսկոպոսը։

***

Օգոստոսի 19-ին, Վեհափառ Հայրապետի կարգադրության համաձայն, Մայր Տաճարում, Ս. Պատարագից հետո, կատարվեց հոգեհանգիստ՝ Գերագույն Հոգևոր Խորհրդի հանգուցյալ անդամ բանասեր Երվանդ Շահազիզի հիշատակին։

***

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանն այս տարի հաջողությամբ փակեց ուսումնական տարին։ Այդ առթիվ Հոգևոր Ճեմարանի մեծ լսարանում հուլիսի 25-ին տեղի ունեցավ հանդես, որին ներկա գտնվեց նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսը։ Այս տարի Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը տվեց ինը շրջանավարտներ, որոնց ավարտական շարադրություններն ընդունված են «լավ» և «գերազանց» գնահատականներով[1]։

1. Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը առայժմ համարում տպագրելու է Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի շրջանավարտների ավարտական շարադրությունների ամփոփումները։— ԽՄԲ.։

ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Հ. ԱՐԱՄՅԱՆ

ՆՈՐ-ԱՐԱԲԿԻՐՈՒՄ

Ամատական երկրորդ Հայքի Արաբկիր քաղաքը, որպես հայաբնակ կենտրոն, համարյա գոյություն չունի այլևս։ Դարեր տևած օսմանյան ավատապետական կարգերը, 1896 թվականի Համիդյան շարդերը, 1915—1916 թվերի բռնագաղթն ու կոտորածները ամայացուցած և կիսով չափ ավերակույտի են վերածած հայկական հին Արաբկիրը։ Նրա հին բնակիչներից վերապրածները, կսկիծը իրենց սրտում, ցրիվ են եկած աշխարհով մեկ, իրենց նախկին բնակավայրում թողնելով մի քանի հարյուր հոգնատանջ խլյակներ միայն...։

Բայց թո՛ղ սփոփվեն հին Արաբկիրի գեղեցիկ պանդխտության մեջ թափառող որդիները, ինչպես նաև պանդխտության դառնությունները դեռ ճաշակող բոլոր հայերն առհասարակ։ Թո՛ղ սփոփվեն, որովհետև հին Արաբկիրի տեղ ծնվել և աճել է նորը, անբաղդատելիորեն ավելի ընդարձակ, ավելի շքեղ, ավելի բազմամարդ և ավելի բարօր ու երջանիկ քան հինն էր։

Ինքս հին Արաբկիրցի չեմ, և հին Արաբկիրում չեմ եղած երբեք։ Բայց թե՛ արտասահմանում և թե՛ այստեղ՝ Հայրենիքում, շատ եմ ունեցել և ունեմ հին Արաբկիրցի մտերիկ ծանոթներ, շատ եմ լսել և շատ եմ կարդացել հին Արաբկիրի մասին, և հստակ պատկերացնում եմ այն։

Նոր-Արաբկիրն որպես հիմնական կենտրոն և հիմնակետ ունեցող երևանյան Միկոյանի անվան նոր ռայոնը ընդգրկում է հյուսիս-արևմուտքից հյուսիս-արևելք մեր մայրաքաղաքը պայտաձև շրջապատող ամբողջ լեռնային գոտին։

Հին Արաբկիրը այսքան ընդարձակության և այսքան բնակչության կետը չի ունեցել։ Համաձայն հին արաբկիրցիների վկայությանց և «Բնաշխարհիկ Բառարանի» տվյալներին, հին Արաբկիրը, իր ամենաբազմամարդ եղած ժամանակ, ունեցել է ընդամենը 10.000 հայ բնակչություն, նույն քանակությամբ տաճիկ և այլ ազգերի պատկանող բնակչության հետ։

Հին Արաբկիրում գոյություն չի ունեցել ոչ իսկ մեկ հատ լրիվ միջնակարգ դպրոց. այնտեղ եղել են տարրական դպրոցներ. նախակրթարաններ միայն։ Իսկ մեր Նոր-Արաբկիրում կան երկու լրիվ միջնակարգ դպրոցներ, առանց հաշվելու նույնքան և ավելի թերի միջնակարգերը (յոթնամյա). առանց հաշվելու բանվոր երիտասարդության ուսման սահմանված գիշերային դպրոցը։ Բացի միջնակարգ և թերի միջնակարգ կրթության խիտ ցանցից, կան, նոր ռայոնում, բազմաթիվ նախադպրոցական հաստատություններ՝ մանկապարտեզներ, մանկամսուրներ։

Հին Արաբկիրը գուցե երազել է ակումբ, թատրոն, կինո-թատրոն ունենալու մասին, բայց չի ունեցել և չէր կարող ունենալ։ Նոր-Արաբկիրը, վարդագույն տուֆից մի երկհարկանի շքեղ շենքում ունի ակումբ, թատրոն, կինո-թատրոն, գրադարան, առանց հաշվելու զանազան թաղամասերի անչատ դրադարանները և կուլտ-լուսավորական կենտրոնները։

Հին Արաբկիրը երազել իսկ չէր կարող արամվալի, ավտոբուսի, ավտոյի մասին։

Նոր-Արաբկիրի բնակչության սպասարկում են բազմահամար տրամվայներ, ավտոբուսներ։ Չի անցնի շատ ժամանակ, և Նոր-Արաբկիրը կունենա և՛ տրոլեյբուս։ Բացի սրանցից, բնակիչներից շատեր ունեն իրենց գործածության համար սեփական ավտոներ։

Հին Արաբկիրը չի ունեցել ոչ իսկ մի հատիկ հիվանդանոց կամ բուժարան։ Նոր-Արաբկիրը ունի պոլիկլինիկա, հիվանդանոց, պրոտեզարան-ատամնաբուժարան, ծննդատներ, ռենտգենյան կաբինետ, զանազան այլ բժշկական-առողջապահական կետեր, մի շարք դեղատներ։

Հին Արաբկիրը որպես արդյունաբերություն ունեցել է տնայնագործություն՝ միայն ջուլհականոցներ։ Նոր-Արաբկիրը ամենաարդիական մեխանիզացիայով և սարքավորմամբ օժտված արդյունաբերության մեծ կենտրոն է։ Նոր-Արաբկիրում գործող բազմաթիվ գործարաններից և ֆաբրիկաներից հիշենք մի քանիսը— Արաբկիրի Հյուսվածեղենի արտելը, Ժամացույցի գործարանը, էլեկտրական լամպերի գործարանը, Գինուկոնյակի կոմբինատը, «Կարմիր Ջուլհակ», «Հայրենիք», «Արագած» արտելները, Կահույքի գործարանը և ուրիշներ։

Հին Արաբկիրը գիշերները ընկղմում էր խավարի մեջ. տներում պլպլում էին նավթի լամպարներ, առկայծում էին ձեթի ճրագներ։ Զանգվի գաբերով չօգտագործված ջրվեժները էլեկտրական լույսի վերածող Քանաքեռվէսը հենց Նոր-Արաբկիրում է և Նոր-Արաբկիրը, ինչպես բովանդակ ռայոնը, ինչպես բովանդակ Երևանը, էլեկտրական հոսդ լույսերի մեջ շողում է մայրամուտից մինչև լուսաբաց։

Հին Արաբկիրը կիսով չափ հայկական էր և այնտեղ իշխում էր օտարերկրյա բռնապետական կառավարության ամենավայրագը։ Նոր-Արաբկիրը հայրենի հարազատ հողի վրա է, Հայաստանի սրտի վրա, մեր սքանչելի մայրաքաղաքի մեկ ռայոնն է, և վայելում է հայկական հարազատ պետության հոգատարությունը։



Նոր-Արաբկիրի նորակառույց ակումբը

Հին Արաբկիրում իշխում էր մի դաժան գայմագամ (տաճկական չինովնիկ), ինչ որ Հասան էֆենդի, ինչ որ Հյուսեյին բեկ։ Նոր-Արաբկիրում վարչական ղեկավարն է հայ ժողովրդի լավագույն դուստրերից մեկը, հին արաբկիրցի, 1927 թվին Հալեպից ներ-դաղթած Մարի Թերիբեգյանը։

Հնի և նորի այս սեղմ, համառոտ զուգադրումից հետո, հանգամանորեն պիտի հասկանաք, թե ինչո՞ւ վերև ասացինք Նոր-Արաբկիրը անբաղդատելիորեն ավելի ընդարձակ է, ավելի շքեղ, ավելի բազմամարդ և ավելի լուրջ ու երջանիկ քան հինը։

***

Նոր-Արաբկիր, կամ պարզապես Արաբկիր, ինչպես սովորություն է եղած ասել կրճատումով, կարելի է բարձրանալ երկու գլխավոր ճանապարհներով և բազմաթիվ լեռնուղիներով։ Բոլորն էլ ունեն իրենց հմայքը, իրենց ուրույն գեղեցկությունը, նրանցներից մի բարձրանում ենք Բաղրամյան պողոտայով։

Հասնում ենք Նոր-Արաբկիրի գլխավոր, մագիստրալ փողոցը՝ Կոմիտասի անվան փողոցը։

Արաբկիրում քեզ ողջունում են սլացիկ բարդիներ, զուլալ առուների եզրին աճած ուռենիներ, ցանկապատերից դուրս ժայթքած սաղարթախիտ ճյուղեր. մրգածառեր են այստեղ՝ բալենի, փշատենի, ծիրանի, դեղձենի, ինձորենի և այլն և այլն։ Յուրաքանչյուր տուն ունի տասնյակներով, հարյուրներով մրգածառերով ու ծաղկաթփերով փարթամ տնամերձ այգիներ։ Արեգակը շոայլում է իր պայծառ և կենսատու շողերը։ Զեփյուռը սավսվում է ծառերի վրա։ Բնության բոլոր ընտանի և հաճելի ձայները, բոլոր ակնապարար տեսարանները դիմավորում են քեզ։ Անսահման հրճվանքով նայում ես բոլոր հայրենի տեսարաններին և հաճախ հայացքդ տանում ես հանգչեցնել կապուտակ երկնակամարի մեջ լողացող երկնամերձ լեռնագագաթին՝ արեգակնափայլ Մասիս սարին։

Տրամվայից իջնե՞ս Նոր-Արաբկիրի այս առաջին կանգառում, որպեսզի ավելի մոտիկից նայես բնության քեզ ընծայած շքեղ պատկերին, թե՞ շարունակես ճանապարհդ ես մի քանի կանգառ, մինչև տրամվայի այժմյան վերջնակայանը, Կոմիտասյան փողոցի վրա։

Տրամվայ է բարձրանում պայթեահասակ, հսկայատիպ մի մարդ ու մոտենում է ինձ ժպիտը կապույտ աչքերի մեջ։ Իսկական Տորք Անգեղ, առանց Տորքի տգեղության, ընդհակառակը, շատ գեղեցիկ և ուժեղ դիմագծությամբ, սիրուն, խարտյաշ վարսերով, լայն ուսերով և կարշնեղ բաղուկներով։ Եգիպտոսից ինձ հետ միևնույն քարավանով ներգաղթած քարտաշ վարպետ Տրդատ Լեյլեկյանն է։ Ուրախ տրամադրությամբ սեղմում է ձեռքս և նստում է կողքիս։ Զրուցում ենք։ Տրդատի անունը կարդացել էի «Սովետական Հայաստան» թերթում, Հայաստանի սովետականացման երեսնամյակի առթիվ պատվոգրի արժանացած ատախանովական քարտաշների անվանացուցակում։ Այդ թվականից ի վեր, առաջին անգամ եմ հանդիպում առաջավոր վարպետին։ Շնորհավորում եմ նրան։

— Այստեղ բուն իսկ մեր արհեստի տեղն է,— ասում է Տրդատը։— Արտասահմանում չէի կարող երևակայել, որ մի երկրում կարելի է այսքան այլազան ու հարուստ շինության քարեր գտնել, այսքան բուռն շինարարություն կատարել։

Տրդատը, որ լավ քարտաշ-մարմարագործ էր, Եգիպտոսում առիթ չուներ իր սիրելի արհեստը ի գործ դնելու։ Ուներ մի ժամանակ արհեստ ևս, որով կարողանում էր մի համեստ ապրուստ ապահովել ընտանիքին. Աղեքսանդրիայի Կան դը Սեզար թաղամասում աշխատեցնում էր մի փոքրիկ փուռ և պատրաստում էր «լահմ-ուլ-աճին» (արաբերեն մի բարդ բառ, որ նշանակում է միս և խմոր), արաբական երկրների հայերին սիրելի մի ուտելիք։

— Մի օր համեցեք մեզ մոտ,— ասում է Տրդատը։— Այգեձորում կառուցել եմ լավ տուն, եկեք ու տեսեք։ Ավելի ճիշտ, եկեք երկու ամիս հետո։ Իմ այգու մի անկյունում կառուցում եմ մի փոքր փուռ, որպեսզի հանգստի օրերը «լահմ-ուլ-աճին» պատրաստեմ իմ ընտանիքի և ձեզ նման բարեկամների համար։ Երկու ամիս հետո մի կիրակի համեցեք և անուշ արեք։

Պատասխանելով իմ հարցին, Տրդատն ասում է, թե մեծ աղջիկը այս տարի ավարտել է բուժակ-քույրերի դպրոցը, իսկ փոքր աղջիկը գնում է միջնակարգ դպրոց։

Տրդատը ծայր աստիճան երջանիկ է։

Հասնում եմ տրամվայի վերջնակայանը և հրաժեշտ տալիս այս անխոնջ ատախանովականին, որ իր ներկա աշխատանքի կիսով կարող է ճոխության մեջ ապրեցնել իր ընտանիքը, բայց որ աշխատանքը սահմանափակել չի իմանում, ի փառս Հայրենիքի շինարարության, ի փառս հայրենասիրական շինարարներին։

***

Հասնելով մինչև այստեղ, տեսել ենք ճանապարհի երկու կողմերը։ Գյուղի հատուկ շքեղ տեսարաններին կողքին և այնպիսի տեսարաններ, որ հատուկ են փոքրաքաղաքների — Շիրվանզադեի անվան լրիվ միջնակարգ դպրոցի հսկա պատկառելի շենքը, Հայկական ընդարձակ ու գեղատեսիլ դրախտանոցը, որտեղ ցուցափեղկերում ցուցադրված են, ճաշակավոր հարդարումով, հայ կլասիկների և սովետահայ գրողների երկեր շքեղ կազմերով։ Այստեղ ծախվում են, բացի գրքերից, գրենական պիտույքներ, մեծահասակների թե դպրոցականների համար։ Լսել ենք այս ու այն տնից ռադիոներից հնչող եղանակներ, երգեր։ Տրամվայի աշխ

ու ձախից այցելել են ավտոներ։ Մի քանի քայլ հեռուն՝ բանկը, փոստը, լուժկեռները, քաղաքի հատուկ հրեուլթներ են։ Այս կոմիտասի փողոցի շարունակությունը կազմող 64-րդ փողոցի վրա է ակումբի նորակառույց երկհարկանի, սյունազարդ շենքը, որտեղ հավաքված է մեծ բազմություն կինոֆիլմ տեսնելու։ Ուրիշներ եկած են դիրք վերցնելու։ Կան, որ սեղանների առջև հակած, օրվա թերթերն են ընթերցում։ Երիտասարդներ, պատանիներ խաղում են շախմատ և ուրիշ կուլտուրական խաղեր։ Ակումբից քիչ հեռու է № 51 լրիվ միջնակարգ դպրոցի քառահարկ, հսկա և շքեղ շենքը, որտեղ հաստատված է նաև պատանիների սպորտ-դպրոցը (մարմնակրթանքի դպրոցը)։

Եվ այս բարձրագիր վայրերից միշտ տեսանելի են Մասիսը, Արարատյան դաշտը, Երևանի համայնապատկերը։ Ամեն ինչ գրգռում է տեսողությունը, լսողությունը։ Զրերի

Նոր-Արաբկիրի հնագույն բնակիչների հետ, այցելել նրանց տները, տեսնել, թե ի՞նչպես են աշխատել ու ապրել նրանք սկզբնական շրջանին, ի՞նչպես են այժմ։

***

Ընդունված է, թե ժուռնալիստները բախտավոր մարդիկ են, թե պատահականությունը հաճախ օգնում է նրանց, իրենց ստանձնած մխիթարելու։

Ահա դեպի Նոր-Արաբկիրի կուլտուրական շուկան տանող լայնարձակ փողոցի վրա հանդիպում ենք բարեկամուհիներից մեկին, որը մի առ մի ճանաչում է սմբոզ Միկոյան նոր ռայոնի, բայց հատկապես բուն Նոր-Արաբկիրի բոլոր բնակիչներին։

Խնդրում եմ նրանից, որ ինքն անձամբ տանի ինձ նրանց տները, եթե ժամանակ ունի։ Նա հոժարակամ ընկերանում է ինձ։

— Ահա ճիշտ այստեղ է ապրում, մի քանի քայլի վրա, Նոր-Արաբկիրի հնագույն

Նոր-Արաբկիրի նորակառույց № 51 լրիվ միջնակարգ դպրոցը

նվագային ձայնին միախառնվում են անամերձ այգիների ծառերից կաթկթող դայլայլները թռչնիկների։ Տներից, այգիներից դալիս են երգերի և նվագների հաճոյական ձայներ։

Մտածում եմ, որ այս ժրաջան, ուրախ մարդկանց բարօրությանն ու երջանկությանը ֆիզիկական միջավայր հանդիսացող այս սիրունատես շենքերը, այս փարթամ այգիները, այս առատահոս ջրերը գոյություն չունեին դեռ քսանհինգ տարի առաջ, քսան տարի առաջ, շաբաթներ՝ դեռ հինգ տարի առաջ։ Հետաքրքրական կլիներ ծանոթանալ բնակիչներից և նրա զարգացման ամենաակտիվ մասնակիցներից մեկը՝ Սեդրակ Ածդահարյանը։ Մեծ շինարար է Սեդրակ աղան։ Ինչպես կոչում են նրան հին Արարկիրից եկած մեր բնակիչները, նրա հասակի և հարգելիությանը պատճառավ, շարունակելով իրենց հին ծննդավայրի տրադիցիաները։ Չկա, չի եղել ավանի համար օգտակար մի նախաձեռնություն, մի ձեռնարկ, որին իր ամենագործնական մասնակցությունը բերած չլինի նա։ Այժմ էլ, չնայած, որ ավելի քան 70 տարեկան հասակ ունի, մեր ռայոնի բարեկարգման հանձնաժողովի նախագահ է։

Մոտենում ենք խնամված մրգածառերով շրջապատված մի սիրուն տան։ Հուսամայիր տեսնում է մեզ Սեդրակ Աժդահարյանը և գալիս է շեմքի վրա մեզ դիմավորելու ուրախ արտահայտություններով։

— Իհարկե ուրախ կլինես, Սեդրակ աղա,— ասում է նրան ուղեկցուհիս,— ահա և Թոռնիկի տեր դարձար։

— Հա՛, հարսս ու Թոռնիկս դեռ երեկ են վերադարձել ծննդատնից, շատ առողջ են,— ասում է Նոր-Արաբկիրի նահապետը ժպիտների մեջ լողացող դեմքով։

Առաջնորդվում ենք լավ կահավորված հյուրասենյակը։ Շուրջդ ամեն ինչ շնչում է ունևորություն, երջանիկ կյանք։ Սեդրակ աղայի բնակարանը ունի չորս ընդարձակ սենյակ։ Բայց նշանավոր է մանավանդ իր տնամերձը ամբողջ Նոր-Արաբկիրում։ Այդքան լավ խնամված, այդքան շատ ու լավ աճած մրգածառերով տնամերձ այգի ոչ որ չունի դեռևս Նոր-Արաբկիրում։ Հայաստանում աճող բոլոր տեսակի ծառերը հասցրել է այս անխոնջ աշխատողը, այս եռանդալից մարդը, որ միաժամանակ որմնադիր է, ատաղձագործ, այգեգործ, անասնապահ։

Զրուցում ենք հնից-նորից։

— Ի՞նչպես եք հիմնել Նոր-Արաբկիրը, մի քիչ պատմեցեք,— դիմում եմ ես ծերունի, բայց աշխույժ շինարարին։

— Ես 1908 թվի օսմանյան այսպես կոչված Սահմանադրությունից հետո հին Արաբկիրից գաղթեցի Կոստանդնուպոլիս։ 1924 թվին, արտասահմանից առաջին ներգաղթողներից մին եղա մեր նոր, Սովետական Հայրենիքը։ 1925-ին մի օր, Աբովյանի վրա հանդիպում եմ մի քանի արաբկիրցիներ։ Նրանք ասում են ինձ, որ ինձ են փնտրում, ինչպես և ուրիշ հին արաբկիրցիների։ Ամերիկայից եկել են Արաբկիրի հայրենակցական միության ներկայացուցիչներ՝ Մկրտիչ Ղազիկյանն ու Միսակ Վարդանյանը. ծրագիր կա Հայաստանում հիմնել Նոր-Արաբկիր անունով մի ավան և այնտեղ համախմբել հին արաբկիրցիներին։ Գնում ենք ներկայացուցիչների մոտ։ Սկսում ենք նոր ավանի հիմնադրության համար բարեհարմար վայր փնտրել։ Օրերով, երկու ներկայացուցիչների հետ շրջում ենք Կիրովական, Լենինական և ուրիշ տեղեր։ Ոչ մի տեղ մեր սրտով չէ։ Սկսում ենք փնտրել Երևանի շրջակայքում։ Մի օր էլ, իջնում էինք Քանաքեռից։ Ամերիկայից եկած երկու ներկայացուցիչներն էին, Մարգար Քեպապչյանն էր, ես էի և ուրիշներ, որոնց թվում և մեր Պետությունի կողմից մեզ ընկերացող ինժեներներ։ Կանգ առանք մի վայրում բոլորս մեկ, լուրջանչյուրս մեր ներսում որոշելով, որ դուրս ենք մեր որոնած բարեհարմար վայրը։ Ա՛յն տեղն էր, ուր կան այժմ Հայուսվածեղենի արտելը և հարակից շենքերը։ Վայրը քարքարուտ էր. չկար ջուր, չկար բուսականություն։

— Իսկ ինչո՞ւ նման տեղ ընտրեցիք,— ընդմիջում եմ ես։

— Վայրը բարձրադիր էր, կլիման, օդը՝ հրաշալի։ Զանգվից, Քանաքեռից ջուր բերելու հնարավորություն կար։ Մոտ էինք Երևանին։ Մնացյալը վստահեցինք մեր Պետությանն հոգատարությանը։ 1925 թվի նոյեմբերի 29-ին, Հայաստանի սովետականացման հինգերորդ տարեդարձի օրը, նույն վայրում հանդիսավորապես հիմնվեց Նոր-Արաբկիրը։ Առաջին տարիներին կային դժվարություններ, չկային քաղաքի հետ հաղորդակցության միջոցներ. գնում գալիս էինք հետիոտն։ Չկար ջուր, չկար ծառ։ Սկսեցինք տնկել առաջին ծառերը, իսկ նրանց ջրելու համար ջուրը դույլերով բերում էինք Զանգվից։ Բայց շուտով ունեցանք և՛ ջուր և՛ ամեն ինչ, իսկ այժմ, տեսնո՞ւմ եք։

Հրաշալի, ծաղկուն այգուց վերադառնում ենք հյուրասենյակ, որտեղ տանտիկինները պատրաստել են սուրճ, լիկյորներ, հայրենական սքանչելահամ շոկոլադներ և քաղցրավենիք։ Խմում ենք առաջին բաժակը Նոր-Արաբկիրի ամենահին բնակչի և հիմնադիրներից մեկի նորածին Թոռնիկի կենացը։

***

— Բանաստեղծ Վահագն Դավթյանին ճանաչո՞ւմ եք,— հարց է տալիս ուղեկցուհիս. երբ դուրս ենք գալիս Սեդրակ Աժդահարյանի բնակարանից։

— Վահագնին ո՞վ չի ճանաչում. սովետական երիտասարդ բանաստեղծների մեջ ամենաաչքի ընկնողներից է նա, շատ տաղանդավոր։ Նրա «Առաջին սերը», «Աշխարհի առավոտը» ժողովածուները, և հատկապես «Տուրուպանյան երկրում» պոեմը ամենաջերմ ընդունելության են արժանացել թե՛ գրողների և թե՛ ընթերցող հասարակության կողմից։ Այդ պոեմը հրատարակվեց մի քանի անգամ, մի քանի շարաթվա ընթացքում, հայերեն և ռուսերեն։

— Գիտե՞ք, որ Վահագնը հին արաբկիրցու տղա է. ինքն իսկ ծնվել է հին Արաբկիրում։

— Մի՞թե. այդ ես չէի իմանում։

— Քանի որ հին արաբկիրցիներ ձեզ ուզում տեսնել, գնանք նրանց մոտ։ Վահագնը այս օրերս Մոսկվայումն է, բայց հայրը, այս ա-

վանի ամենաառաջավոր աշխատավորներից Արամը, տանը կլինի։

Գնում ենք ուղիղ, լայն փողոցով, մեր ոչակողմը թողնելով Նոր-Արաբկիրի կոլտնտեսային շուկան։ Վարդադույն մեծ շենքի խանութներից դուրս են գալիս տնային տնտեսուհիներ, զանազան մթերքներով ծանրաբեռնված։ Շենքի դեմը, ընդարձակ ծածկի տակ, վաճառասեղանների առաջ կոլտնտեսականները վաճառում են իրենց բերքերը՝ կանաչեղեն, ձու, մեղր, յուղ, դետնախնձոր և այլն։

***

Անցնում ենք մի երկհարկանի, սիրուն տան առաջից։ Որմերի հետևից բարձրացել են տնամերձ այգու սլացիկ բարդիները։

— Այս էլ է հին արաբկիրցու տուն,— ասում է ուղեկցուհիս,— այստեղ ապրում է Հաբեթ Ջիրքինյանը, որ 1928 թվին ներգաղթել է հին Արաբկիրից։ Առենոք աշխատում էր Հյուսվածեղենի արտելում։ Այժմ «Կարմիր ջուլհակ» արտելի նախագահն է։

— Ծանոթացել եմ,— պատասխանում եմ ես,— ոչ շատ ժամանակ առաջ։ Նա Միկոյան ռայոնի դեպուտատներից է. ծանոթացել եմ հենց ռայոնական սովետի երկրորդ սեսիայի օրը։ Նրա հետ էր և հին արաբկիրցիներից Ծուռիկյանը, նա էլ «Կարմիր ջուլհակ» արտելի դեկավարներից է։ Հաբեթը Սուդանում՝ Օմդուրմանում, ունի եղբայր. կարոտով սպասում է, որ նա էլ վերադառնա Հայրենիք։ Միմյանցից բաժանվել են դեռ երեխա. Հաբեթն ասում էր, թե գուցե չճանաչեն իրար, եթե հանկարծ հանդիպեն։

Շեմքի վրա են Հաբեթի մայրը, կինը։ Հարցրնում ենք, թե Հաբեթը տա՞նն է։

— Քաղաք է իջել,— պատասխանում է մայրը,— բայց մենք տանն ենք. համեցեք։

Առարկում ենք, թե ժամանակ չունենք, թե ուրիշ մի օր կանցնենք, բայց հնարավոր չի լինում խուսափել Հաբեթի մոր պնդումից։ Մտնում ենք ներս։ Վեց սենյակով լուսավոր այդ բնակարանը բարօրության, հրշանկության բույն է, շնորհիվ աշխատանքին Հարութի և իր երիտասարդ կնոջ՝ Վարդուհու, որը նույնպես հին արաբկիրցի ծնողներից է։ Աժդահարյան Մարտիկի դուստրը։ Ջիրքինյան ընտանիքը ունի երեք երեխա, միմյանցից սիրուն և կայտառ։

Ուզում ենք մի քանի րոպե ոտի վրա ծանոթանալ և գնալ, բայց այդ անհնարին է լինում։ Մայր Ջիրքինյանը սոփոում է, որ նստենք։ Հին արաբկիրցիների ավանդական հյուրասիրությունից խուսափել անհնարին է։ Մինչ հարսը ղնում է հյուրասիրությունները տեսնելու, մայր Ջիրքինյանը խոսում է մեզ հին Արաբկիրից, տանկական ջարդերից ու հալածանքներից, Նոր-Արաբկիրի սկզբնական տարիներից, այժմյան բարգավաճությունից։

— Այժմ ո՞չ մի բան անհրաժեշտն ունենք,— ասում է մայր Ջիրքինյանը,— այն անգամ ավելորդը։ Տղան կարողացել է դնել սեփական ավտո։ Ափսո՞ս, որ տանը չէ. թե չէ, ավտոյով կտաներ ձեզ, ուր որ ցանկանում եք գնալ։

Մայր Ջիրքինյանի միակ դավն է, որ Սուդանում է իր մեկ տղան, պանդխտությունն մեջ։ Խոսում է նրա մասին, պառավական աչքերը լցվում են արցունքով և ասում է.

— Սուդանում շատ է շոգ, ասում են։ Որ դիս դար և մեր այգում, մեր բարդիների տակ հովանա՞ր, մայրական բաղումներիս մեջ կրկեի՞ նրան։ Իմ բոլոր մյուս ցանկությունները կատարվել են, մնում է այս մեկը։

— Այդ էլ կլինի, մա՛յրիկ,— մխիթարում ենք որդեկարոտ մորը։

***

Արամ Դավթյանի տանն ենք։ Բացում եմ նրա որդու՝ Վահագնի «Աշխարհի առավոտը» ժողովածուի 11-րդ էջը և կարդում «Իմ կյանքի լեգենդը» վերնագրված բանաստեղծության առաջին տողերը՝

Ես չեմ անցել կյանքիս նախաշավիղն անգամ.
Ու նոր է գեռ բացվում այդն իմ ոսկենամ,
Բայց աշխարհի կնստում ոտնահետքերն իմ կան.
Եվ իմ կյանքը արդեն լեգենդի է նման։

. . . . . .

Ես չեմ հիշում։

Սակայն պատմում է մայրն իմ ծնե.
Որ ծնվել եմ հեռու նվերատ գետի ափին,
Եվ առաջին իմ բույլ հիշն եմ միանյուսել
Եև ջրերի վրա ախուր խշխշացող
Բարդիների երգին ու սոսափին։
Հայրս, որ ջուլհակ է եղել ամբողջան,
Ամեն հյուսվող բնիկ իր խուլ երգն է հյուսել.
— Եվ այդ երգն է եղել իմ մանկության վկան։

. . . . . .

Ես չեմ հիշում։

Դարձյալ մայրս է պատմում քարի,
Որ ձգվել է ճամբան մեր տնակից այն խեղճ.
Որ զնգացել են զանգերը ուղտերի
Ու ինձ բերել այստեղ, այս քաղաքը շքեղ.
Որ ապրում եմ հիմա...
Նկատիս, որ կյանքն իմ լեգենդի է նման...
Ես՝ նվերատի ափին ծնված մանուկն այն բույլ.
Ես՝ տառապած ու խեղճ այն ջուլհակի որդին.
Մեծացել եմ իբրև առասպելի մանուկ,
Երջանկության անհոգ երգն ու շունչը շքեղիս։
Մեծացել եմ և մեր տնակի տեղ այն հին.
Սառանգել եմ մի մեծ, մի նոյակապ երկիր,
Ապագայով, երգով ու արևով հարուստ։

Վահագնի կյանքի լեգենդը միայն նրան հատուկ չէ։ Կարող են նույն լեգենդը իրենց հաշվին պահել հին Արարկիրից ներգաղթած շատ ու շատ հայրենադարձների զավակներ։ Նույն լեգենդը կարող կլինեն շուտով իրենց հաշվին վերցնել նաև նոր հայրենադարձների որդիները, դուստրերը։

Արամի ընտանիքի տասնվեց անդամները զոհ են գնում տաճկական յաթաղանին։ 1915—1916 թվերի շարդից ազատվում են միայն Արամն ու իր փոքր եղբայր Հարությունը։ Մի քանի տարի երկու եղբայր կորցրնում են միմյանց, ծառայում տաճիկ տերերի դռները, որպես բատրակ։ 1920 թվականին նրանք դտնում են իրար, հաստատվում իրենց ծննդավայր հին Արարկիրում։ Արամը ամուսնանում է և զբաղվում պապենական արհեստով՝ ջուլհակությամբ։ Արարկիրում ծնվում է Վահագնը 1923 թվին։ Արամը չի ուզում ապրել հին Արարկիրում, որտեղ տեսել էր դաժան զուլում։ Երբ իմանում է Սովետական Հայաստանի մասին, վերցնում է իր ընտանիքին, իր եղբորը և գալիս նախ Կրասնոդար, 1924 թվին, ապա՝ Սովետական Հայաստան, 1927 թվին։ Արամը հաստատվում է Արարկիրում և աշխատում Հյուսվածեղենի արտելում, որ այն ժամանակ միակ արդյունաբերական ձեռնարկությունն էր Նոր-Արարկիրում։ Եղբորը՝ Հարությունին ուղարկում է դպրոց, ապա՝ համալսարան, ամուսնացնում է նրան։ Երկու եղբայր միասնաբար կառուցում են իրենց այժմու բնակարանը։ Հարությունը, որ ուսուցիչ էր, Հայրենիքի առաջին իսկ կանչին գնում է ռազմաճակատ և զոհվում Խերչում։ Ռազմաճակատ գնում է և Արամի միակ մանչ զավակը՝ Վահագնը, բայց նա վերադառնում է հաղթական մարտերից հետո, ի մխիթարություն իր ընտանիքին և ի փառս հայ գեղարվեստական դրականության։

Արամը, որ հիսնամյա մի վեհասահուն տղամարդ է հիմա, ունի յոթ սենյականի երկհարկանի բնակարան, մրգածառերով լիքը այգի, բանջարանոց։ Հին քանդված օջախի տեղ, նրա վերապրած և վերընձյուղած գերդաստանը ապրում է այս շեն ու ճոխ բնակարանում։ Արարկիրցիները սիրում են փոքր ինչ շարունակել նահապետական ավանդությունները։ Արամը, իր կինը, իր տղան ու հարսը, իր աղջիկն ու փեսան, թոռնիկները ապրում են նույն բնակարանում։ Նույն բնակարանումն են նաև Հայրենիքի համար զոհված Հարությունի այրին և զավակը։

Բանաստեղծի մայրը հարգարժան է ճաշասեղան, իր հարսի և աղջկա օգնությամբ, մինչ Արամը դառն հուշեր է պատմում հին Արարկիրից և հակադրում է դրանք իր այժմյան երջանկավետ կյանքին։

Ճաշակում ենք հայրենի համադամնելը։ Խմում ենք Արարատյան դաշտի անապակ գինին։ Խմում ենք Նոր-Արարկիրը կառուցողների կենացը, որոնց թվում նշանակելի տեղ ունի ինքը՝ մեր հյուրընկալը։ Իրոք, նա շատ գործուն արդյունաբերական և հասարակական աշխատանք է տարել Նոր-Արարկիրում, 1927 թվից ի վեր, և միշտ էլ շարունակում է մնալ պատնեշի վրա, ինչպես սիրում են ասել մեր Սիբիրի եղբայրները։

Շնորհակալություն եմ հայտնում ինձ ուղեկցող տիկնոջ և բաժանվում ենք։

Նոր-Արարկիրում պատրաստ ուզում եմ վերջացնել մեկ-երկու նոր հայրենադարձների այցելությամբ։

Նոր-Արարկիրի կոլտնտեսական շուկայի հետևում, մի քանի հարյուր մետր հեռավորության վրա, միմյանցից սիրուն տներ են կառուցած Սիբիրից, Հունաստանից և Եգիպտոսից եկած հայրենադարձներ։ Սա մեկը, երկհարկանի, ճաշակով կառուցված մի տուն, շուրջ 600 քառակուսի մետր տնամերձ այգիով, պատկանում է Եգիպտոսից 1947 թվին ինձ հետ միևնույն քարավանով ներգաղթած՝ իմ հին ընկեր ատամնաբույժ Զարեհ Մինեճյանին։ Երկու տարի է միայն ինչ նա կառուցել է այս տունը և ապրում է այստեղ, բայց տնամերձում արդեն նա աճեցրել է որոշ քանակությամբ պտղատու մատղաշ ծառեր. մի քանիսը ծաղկել են արդեն այս գարնան, ինչպես վկայում էր Զարեհը։

— Զարեհ քեռի՜,— կանչում են հեռվից երեխաները, ճանաչելով նրան։ Զարեհը նստում է մեր կողմը ուգալիս դեպի մեզ, իրեն հատուկ ոգևորությամբ, ուրախ քացագանչություններ արձակելով։

— Տե՛ս, ի՞նչ տուն եմ կառուցել,— ասում է նա իրավացի հպարտությամբ։ Իրոք, կառուցել է վեց սենյակով երկհարկանի սիրունատես տուն, իրեն և երկու տղաների համար, որ ամուսնացան այստեղ։ Երկրորդ աղան՝ Գեորգը, որ ամուսնացել է Հունաստանից եկած մի օրիորդի հետ, իր անհրաժեշտ հետ տուն է կառուցել Նոր-Արեշ ավանում, բայց այդ տունը նա փոխանցելու է մի ուրիշի, որպեսզի գա և բնակվի հոր կողմից կառուցված տանը։

Հավաքվում ենք տան ընդարձակ վերանդան, երկրորդ հարկի վրա, մշակված տնամերձին հանդիպակաց։ Այնտեղ են Զարեհի կինը՝ Լյուսին, տղան՝ Ազատը, և ուս նոր հարսը՝ Թամարան։

— Քիչ առաջ ՝ՔՔՔ գայիք,— ասում է տիկին Լյուսին,— այստեղ էր նաև Գեորգը. նր

կնոջ և նորածնի՝ փոքրիկ Զարեհի հետ, որը ոչ միայն անունով, այլ դեմքով էլ շատ է նման պապին։

Զարեհը, որ հիսուն տարեկանից պակաս է և քառասուն տարեկան հազիվ ցույց կտա, արդեն իսկ պապիկ է դարձել։ Շնորհավորում ենք նրան։

— Այնտեղ, Եգիպտոսում, տնտեսական պայմանները այնպիսի էին, որ աղաներս քսան, քսաներկու տարեկանին չէին կարող ամուսնանալ, ընտանիք կազմել։ Եթե արդեն մեծ-հայր եմ, դա Հայրենիքում մեր վայելած պայմանների շնորհիվ է։ Ազատը և Գեորգը երկուսն էլ առաջավոր քանվորներ են Երևանի Մեքենաշինական մեծ գործարանում։ Երկուսն էլ շատ են հարգված, ջերմապես գնահատված։ Երկուսի էլ պատկերները քանիցս հրատարակվեցին թերթերում։ Թամարա՛, ո՛ւր թերթերը։

Հարսը շտապում է մանել սենյակներից մեկը, և դուրս է գալիս ձեռին թերթեր, պատվոգրեր, որտեղ պանծացվում են Ազատի և Գեորգի աշխատանքային սխրագործությունները։

Հայր Մինեճյանը աշխատում է ատամնապրոտեզարանում, հենց Նոր-Արարկիրում, իր տան մոտ։

— Եգիպտոսում քսանհինգ տարի աշխատեցի։ Նստում էի վարձքով մի հին տան մեջ։ Այստեղ եմ շուրջ երեք տարուց ի վեր, և արդեն տեր եմ վեց սենյականի նորակառույց բնակարանի, 600 քառակուսի մետր պարտեզով...

— Եվ հարաններդ, թոռնիկի,— ավելացնում է Լյուսին, որը բաժանում է ամուսնու խնդությունը։

Մինեճյանները առանձին չեն, որ ապրում են բարելավված պայմաններում։ Այսպիսի՛ լավ պայմաններում են ապրում հայրենադարձներից բոլոր նրանք, ովքեր աշխատում են եռանդով, ովքեր պատվի գործ են համարում ստեղծագործ, աղնիվ աշխատանքը։

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐ, ՀԻՇԱՏԱԿԻ ԵՐԿՈՆԵՐ

ՊՏՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ 30-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ.— Ալեքսանդր Մյասնիկյանի անվան Պետական հանրային գրադարանում բացվել է ցուցահանդես՝ նվիրված գրադարանի 30-ամյակին։ Ցուցադրված են գիրագրամաններ, գրքեր և այլ նյութեր, որոնց այցելուներին պատմում են անցած 30 տարում Պետական հանրային գրադարանի մեջ բերած նվաճումների և այն աշխատանքի մասին, որ կատարում է Հանրային գրադարանը, «Գիրքը ժողովրդին» պատգամը կենսագործելու ուղղությամբ։

ԴԵՐԱՍԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐԵԼՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ 15-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԵԿՈ.— Հոկտեմբերի 2-ին Հայկական թատերական ընկերությունում տեղի ունեցավ հայ մեծատաղանդ դերասան Հովհաննես Արելյանի մահվան 15-ամյակին նվիրված երեկո։ Արելյանի կյանքի և բեմական գործունեության մասին զեկուցեց թատերագետ Ս. Մելիքսեթյանը, որը նշեց տաղանդավոր արտիստի դերը հայ թատերական արվեստի զարգացման գործում։ Արելյանի մասին հետաքրքիր հուշեր պատմեցին Դ. Դեմիրճյանը, Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստներ Վ. Վաղարշյանը, Վ. Վարդանյանը, Տ. Շամիրխանյանը և Վ. Միրզոյանը։

Արելյանի մահվան 15-ամյակը նշեց նաև Գ. Սունդուկյանի անվան Պետական թատրոնը։ Արելյանի մասին հուշերով ու տպավորություններով հանդես եկան ժողովրդական արտիստներ Վ. Վաղարշյանը, Վ. Փափազյանը, Ա. Դուլակյանը, Գ. Ջանիբեկյանը և ուրիշներ։ Թատրոնի ստեղծագործական անձնակազմն այցելեց Հովհաննես Արելյանի գերեզմանը և թարմ ծաղիկներ դրեց արտիստի շիրիմի վրա։

ԳՐՈՒՅՑԵՍՈՐՆԵՐ Գ. ԱՐԵՇՅԱՆԻ ԵՎ Գ. ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ.— Հուլիսի 30-ին Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության նախագահ Մ. Պապյանը Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի պատվոգրեր հանձնեց գիտության վաստակավոր գործիչ, բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Գ. Արեշյանին և բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Գ. Մելքոնյանին, որոնց իրենց ծննդյան 70-ամյակի և գիտա-մանկավարժական ու բժշկական գործունեության 40-ամյակի կապակցությամբ պարգևատրվել էին Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի պատվոգրերով։

Ընդունելով պատվավոր պարգևը, դոկտոր-պրոֆեսոր Գ. Արեշյանը և դոկտոր-պրոֆեսոր Գ. Մելքոնյանը շնորհակալություն հայտնեցին Սովետական Հայաստանի կառավարությանը իրենց գիտական և հասարակական գործունեությունը բարձր գնահատելու համար և խոստացան, որ չեն խնայի իրենց ջանքերը սովետական բժշկական գիտության հետագա զարգացման, ժողովրդական առողջապահության գործի ավելի բարելավման համար։

Վերջում Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության նախագահ Մ. Պապյանը շնորհավորեց պարգևատրվածներին և ցանկացավ նրանց նորանոր հաջողություններ իրենց գիտական-մանկավարժական, հասարակական աշխատանքում։

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՇԱՎԱԽՄԲԵՐ

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՇԱՎԱԽՄԲԵՐԸ ԵՐՋԱՆՆԵՐՈՒՄ.— Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Բուսաբանական ինստիտուտի և Բուսաբանական այգու գիտական աշխատողներից կազմված մի շարք արշավախմբեր մեկնել են Սևանի ավազանի, Աշտարակի, Գորիսի, Սիսիանի, Ղափանի, Մեղրու շրջանները։ Գիտական արշավախմբերը ուսումնասիրելու են անտառների, արոտավայրերի և բուսականության բնույթն ու տեսակները, նրանց բնաշխարհի առանձնահատկությունները։

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ.— Այս տարի դպրի աշխատանքներ են կատարվում Հայաստանի ճարտարապետական հուշարձանների վերականգնման ուղղությամբ։

Ճարտարապետական հուշարձանների պահպանման հանձնախմբի վերականգնման խմբերը Աշտարակի շրջանում լիովին ավարտել են հայկական հին ճարտարապետության 7-րդ դարին վերաբերող Զորավար (Եղվարդի մոտ) և Մանկանոց (Օշական) հուշարձանների վերականգնման աշխատանքները։ Նույն շրջանում ավարտվել է 13-րդ դարին պատկանող Տեկեր վանքի դամբի վերականգնումը։

Իջևանի շրջանում աշխատանքներ են սկսվել 11—12-րդ դարերի հուշարձան՝ Հաղարծինի վանքի վերականգնման համար։

Երիտասարդ ճարտարապետների երկու խումբ մեկնել են Այրավերդու և Իջևանի շրջանները՝ չափագրելու Խորակերտ և Հաղարծին բարդ հուշարձանները։

Շուտով Ախտալայի և Ապարանի շրջանները կմեկնի հանձնախմբի մի արշավախումբ՝ հայկական հին ճարտարապետության հուշարձանները ուսումնասիրելու համար։

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՋԱՆՆԵՐՈՒՄ.— Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պետական պատմական թանգարանը Ապարանի և Այրավերդու շրջաններում պատմական գիտությունների թեկնածու Հ. Մնացականյանի ղեկավարությամբ կատարեց մի շարք մանր պեղումներ, որոնց ընթացքում հայտնաբերվեցին հնագիտական բազմաթիվ առարկաներ։

Այսպես, օրինակ, Ապարանի շրջանի Ջաջուռ

գյուղում պեղվեց քարարկղային մի դամբարան, որը պատկանում է առաջին հազարամյակի ոկզբներին (մեր թվականությունից առաջ)։ Այս դամբարանում հայտնաբերվեցին բազմաթիվ կավե անոթներ և մարդկային կմախքի մնացորդներ։

Ալավերդու շրջանի Դաշաղան գյուղի Հնեվանի ձոր կոչվող վայրում կատարված պեղումների ժամանակ բացվեց 10,5 մետր տրամագծով շրջանակաձև մեկ դամբարան։ Դա պատկանում է երկրորդ հազարամյակի երկրորդ կեսերին (մեր թվականությունից առաջ)։ Դամբարանի տակ բացվեցին երեք գերեզմանափոսեր, հայտնաբերվել են 98 սանտիմետր երկարությամբ քառակողմ սուսեր, դաշույնի անագապղնձե պատյաններ, նիզակի ծայրեր, զարդակոճակներ և այլ սարքեր ու զարդարանքներ։ Գտնված սուսերը երկրորդ օրինակն է Հայաստանում։ Նույնատիպ տեղական ծագում ունեցող սուսեր առաջին անգամ դրտնրվել է Դաշաղանից մոտ երեք կիլոմետր հեռավորության վրա, Զորագլխի հիդրոէլեկտրակայանի շինարարության ժամանակ պատահաբար բացված դամբարաններից մեկում։

Հնեվանի ձորում բացված մի այլ դամբարանում հայտնաբերվեցին նկարչական նետի ալաք, երկաթե կնոջ դաշույն և նիզակի ծայր։

Այս հայտնաբերումները մի անգամ ևս հաստատում են, որ Հայաստանում նշված ժամանակաշրջանում, անագապղնձե զենքերի և զարդարանքների մասնավոր բավականաչափ զարգացած է եղել և որ կարևորն է, բնիկ տոհմերն ու ցեղերը հազարամյակներ առաջ օգտվել են Ալավերդու պղնձահանքերից և այդ հիմքի վրա պատրաստել իրենց զենքերն ու զարդարանքները։

ՈՌՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՀԱՄԱՐ.— Ընթացիկ տարում ղեկավարելով են բուության վերափոխման աշխատանքները։ Հատուկ մի նիշչափաչափ անցյալ տարվանից չորս անգամ ավելի մեծ տարածության վրա անց է կացնում հետախուզություն, հողի մաշման դեմ պայքարելու և անտառների նախագծման ուղղությամբ։ Անցյալ տարի այս աշխատանքը կատարվում էր միայն Սևանի ավազանի հինգ շրջաններում, իսկ այս տարի՝ հանրապետության 26 շրջաններում։

Արշավախումբն ավարտել է նախնական ամբողջական հետախուզումները Երևանի շրջակա տարածքներին, Գետառի ավազանում, Աղստաֆա գետի ու նրա վտակների ավազանում, ինչպես նաև Սևանի լճի շուրջը։

Հայկական ՍՍՌ Անտառային տնտեսության մինիստրությունում տեղի ունեցավ արշավախմբի մասնակիցների խորհրդակցությունը տեղի գիտա-հետազոտական հիմնարկների ներկայացուցիչների հետ։ Խորհրդակցությունը քննարկեց կատարված աշխատանքի արդյունքները և նշեց հետագա հետախուզումների ծրագիրը։

ՈՒՍՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ԱՎԱՐՏՈՒՄԸ ԲԱՐՁՐԱԿՈՒՅՑ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.— Սովետական Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում ավարտվեց 1950—1951 ուսումնական տարին։

Հարեվերջի քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանությանը մասնակցեցին մոտ 10.000 ուսանողներ և ուսանողուհիներ։

Երևանի Պետական համալսարանի, Հայկական, Ռուսական և Լենինականի մանկավարժական ինստիտուտների ֆիզիկական ֆակուլտետներում, Ստար լեզուների ինստիտուտում քննությունները անցան նոր ծրագրերով։

Պետական համալսարանի, Գյուղատնտեսական, Պոլիտեխնիկական, Բժշկական ինստիտուտների և մյուս բարձրագույն ուսումնական հաստատությունների մի շարք ֆակուլտետների ուսանողների մեծ մասը քննությունների ընթացքում մասնագիտական շատ առարկաներից ցուցաբերեց բարձր գիտելիքներ։

Պետական համալսարանի և Պոլիտեխնիկական ինստիտուտի մեծ թվով ուսանողներ իրենց արտադրական գործնական վարժությունն անց կացրին Սովետական Միության այլնայլ վայրերում։

Այս տարի հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունները երկրին տվեցին ավելի քան 2.000 երիտասարդ մասնագետներ։

ԵՐԵՎԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ.— Ավարտվեցին Երևանի Հեռակա մանկավարժական ինստիտուտի ամառային պարապմունքները։ Հայաստանի բոլոր քաղաքներից ու շրջաններից, ինչպես նաև հարևան հանրապետությունների ինստիտուտի պարապմունքներին մասնակցում էին ավելի քան 3.000 ուսանող։ Ինստիտուտն այս տարի տվեց 249 շրջանավարտ, որոնց մեծ մասը գյուղական դպրոցների դասատուներ են։ Ֆիզիկական և պատմության ֆակուլտետների ուսանողները ավելին իրենց առաջին շրջանավարտներ՝ թվով 36 մարդ։ Ինստիտուտի 29 առաջավոր շրջանավարտներ արշավաստուգի են գնացել։

ՖԱԲՐԻԿԱ-ԴԱՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ.— Հայաստանի Աշխատանքային ռեզերվների վարչության Ֆաբրիկա-գործարանային ուսուցման դպրոցներում ավարտվեցին շրջանավարտների որակավորման քննությունները։ Երևանի, Կիրովականի և Դաշտաձորի Ֆաբրիկա-գործարանային ուսուցման դպրոցներն ավարտեցին 355 երիտասարդ կառուցող բանվորներ և հանքագործներ, որոնք արդեն աշխատանքի են անցել հանրապետության ձեռնարկություններում և նորակառույցներում։

ԵՐԵՎԱՆԻ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ.— Աշխատանքային ռեզերվների Երևանի Արհեստագործական ուսումնարանը տվեց իր հերթական շրջանավարտները։ Հանրապետության գոր-

ծարանները և նորակառույցները աշխատանքի մեկնելու 130 երիտասարդ որակյալ բանվորներ՝ խառնարաններ, փականագործներ և այլ մասնագիտությունների աշխատողներ։ Օգոստոսի 15-ին իրենց շրջանավարտները տվեցին նաև երկաթուղային և մյուս բոլոր արհեստագործական ուսումնարանները։

1951—1952 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ.— Ռեսպուբլիկայի դպրոցներում նախապատրաստական աշխատանքներ կատարվեցին նոր ուսումնական տարին կազմ ու պատրաստ սկսելու համար։ Ավարտվեցին դպրոցական շենքերի, գույքերի, ուսուցիչների բնակարանների և ուսանողական հարկադրաբարանների նորոգման աշխատանքները։ Բազմաթիվ դպրոցների աշխատանոցներ, լաբորատորիաներ ու գրադարաններ հարստացվել են նոր ստացվորումներով ու գրականությամբ։ Ապահովվել է անհրաժեշտ քանակությամբ վառելիք։ Նոր ուսումնական տարում ռեսպուբլիկայում բացվելու են 27 նոր յոթնամյա և 6 միջնակարգ դպրոց։ Աշակերտների թիվը զգալիորեն ավելացվելու է։ Սեպտեմբերին շահագործման է հանձնվելու դպրոցական 12 նոր շենք։

ՈՒՍՄԱՆ ԵՐԱԳԻՐԵՐ ՈՒ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ.— Հայկական ՍՍՌ Կոնսերվատորության մինիստրության հրատարակչությունը բաժին արդեն լույս է ընծայել 5—7-րդ դասարանների հայոց և 2—10-րդ դասարանների ռուսաց լեզուների ուսման ձրագրերը, այդ լեզուների առարկաների դնահատման չափանիշները, 5—7-րդ դասարաններում հայոց լեզվի դասավանդման մասին մեթոդական նամակը, «Դպրոցական ֆիզկուլտուրնիկի դրքույկը», «Աշակերտների կողմից մաթեմատիկայից կատարվող տիպիկ սխալները և նրանց վերացման միջոցառումները» և այլ մեթոդական ձեռնարկներ։ Տպագրության են հանձնված աշխարհագրության, ՍՍՌՄ ժողովուրդների, հին, միջին և նոր դարերի պատմության, երգեցողության, նկարչության ու կենսաբանության առարկաների ձրագրերը։ Այս տարի հրատարակվելու են տասնյակ ուսումնական մեթոդական նամակներ ու գրքույկներ։ Ավարտվել է 1951—1952 ուսումնական տարվա համար 1—10-րդ դասարանների դասամատյանների տպագրումը։

ՆՈՐ ԲԱԺԻՆՆԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՔԻՄԻԿՈ-ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՏԵԽՆԻԿՈՒՄՈՒՄ.— Այս տարի Երևանի Քիմիկո-տեխնոլոգիական տեխնիկումի վերլուծական քիմիայի, մեքենագիտական և տեխնոլոգիական (արվեստագիտական) բաժիններն ընդունելու են 120 մարդ։ Բացի նշած բաժիններից, այս տարի տեխնիկումում բացվելու են սինտետիկ կաուչուկի (բազմադրական ռետինի) տեխնոլոգիայի և մեքենագիտական ստացավորման երեկոյան բաժիններ, որտեղ Երևանի արդյունաբերական ձեռնարկությունների աստիճանավորները, ասենք արտադրությունից կտրվելու, դատական մասնագիտական կրթություն։ Նոր բացվող բաժիններում ընդունվելու է 50 մարդ։

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՆՈՐ ՇԵՆՔ ԵՐԵՎԱՆՈՒՄ.— Սբոնիկիձեի պողոտայի և Բերիայի փողոցի անկյունում ավարտվել է Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Գյուղական և կոլտնտեսային շինարարության գլխավոր վարչության տասնչորսներորդ դպրոցի նոր հարկ շենքի կառուցումը։ Շենքում կառավարվելու դասարաններ, լաբորատորիաներ, աշխատանոցներ ու արհեստանոցներ։ Մի ամբողջ հարկ կգրավի հանրակացարանը, որը նախատեսված է հարյուր մարդու համար։ Դպրոցի ուսանողները Հայաստանի շրջաններում արտադրական գործնական աշխատանք անցնելուց հետո, սեպտեմբերի 1-ից պարապմունքները կշարունակեն նոր շենքում։

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՆՈՐ ԴՊՐՈՑՆԵՐ.— Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Արվեստի գործերի վարչությունը այս տարի երաժշտական նոր դպրոցներ է բաց անում Կիրովականում և Ստեփանավանում։ Կիրովականում, բացի նշած երաժշտական 7-ամյա դպրոցից, բացվել է երաժշտական ուսումնարան՝ դաշնամուրի, ջութակի, թավջութակի, փողային, մայնական, ժողովրդական գործիքների և խմբավարական բաժիններով։ Ստեփանավանի շրջանում նոր ուսումնական տարվանից կսկսվեն Կիրովականի երաժշտական դպրոցի բաժանմունքի պարապմունքները։ Բաժանմունքը կունենա դաշնամուրի, ջութակի և թավջութակի բաժին, ուր կընդգրկվեն 40 աշակերտ։ Այժմ սկսված են ընդունելության քննությունները։ Ստեփանավանի շրջանային կենտրոնում բացվող երաժշտական դպրոցի համար շրջանային Սովետի գործադիր կոմիտեն հատկացրել է նոր, հարմար շենք։

ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.— Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններում աշխույժ եռուզեռ է։ Ամեն օր ռեսպուբլիկայի տարբեր բաժանքներից ու շրջաններից, ինչպես նաև հարևան ռեսպուբլիկաներից բազմաթիվ երիտասարդներ են գալիս Երևան՝ բարձրագույն ուսումնական հաստատություններն ընդունվելու համար։

ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ.— Օգոստոսի 20-ին ավարտվեցին Երևանի Պետական համալսարանի 1951—1952 ուսումնական տարվա ընդունելության քննությունները։ Ընդունող հանձնաժողովը անընդհատ շարունակում է համալսարանի այլևայլ ֆակուլտետներում ուսանողների լրացման աշխատանքները։ Բոլոր ֆակուլտետներում այս տարի ընդունելությունները տեղի են ունենում խիստ մրցման պայմաններում։ Որոշ ֆակուլտետներում մի տեղի համար դիմել են 4—5 հոգի։ Ընդունելության քննությունները ցույց են տալիս, որ այս տարի համալսարան է դիմել նախորդ տարիների համեմատությամբ գիտելիքների առավել հարուստ պաշար ունեցող երիտասարդություն, որը մեծ հակումներ է ցուցաբերում առավելապես դեպի ճշգրիտ գիտությունները։ Ընդունվող ուսանողների համար ստեղծված են բոլոր պայմանները։ Շրջաններից և հարևան ռեսպուբլիկաներից ընդունված բոլոր ուսանողներն այս տարի կապահովվեն հանրակացարանով և այլ հարմարություններով։

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ ԲԱԶՄԱՁԱՎԱԿ ՄԱՅՐԵՐԻՆ.— ՍՍՌՄ Գերագույն Սովետի 1951 թվականի հուլիսի 1-ի հրամանագրով Հայկական ՍՍՌ-ից 18 մայրեր ստացել են «Հերոսուհի մայր» պատվավոր կոչում և «Հերոսուհի մայր» շքանշան ու ՍՍՌՄ Գերագույն Սովետի պատվոգիր։

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի 1951 թվականի հուլիսի 12-ի հրամանագրով Երևան քաղաքի Միկոյանի, Մոլոտովյան և Սպանդարյանի շրջանների մի շարք մայրեր պարգևատրվել են շքանշաններով և մեդալներով։ Ութ երեխա ծնած և դաստիարակած 7 մայր ստացել են «Մայրական փառք» 2-րդ աստիճանի շքանշան, վեց երեխա ծնած և դաստիարակած 24 մայր՝ «Մայրության մեդալ» 1-ին աստիճանի մեդալ, հինգ երեխա ծնած և դաստիարակած 21 մայր՝ «Մայրության մեդալ» 2-րդ աստիճանի մեդալ։

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի 1951 թվականի օգոստոսի 12-ի հրամանագրով Երևան քաղաքի Միկոյանի, Մոլոտովյան, Սպանդարյանի և Ստալինյան ռայոնների մի շարք մայրեր պարգևատրվել են։ Ութ երեխա ծնած և դաստիարակած 1 մայր ստացել է «Մայրական փառք» 1-ին աստիճանի շքանշան, ութ երեխա ծնած և դաստիարակած 4 մայր՝ «Մայրական փառք» 2-րդ աստիճանի շքանշան, յոթ երեխա ծնած և դաստիարակած 5 մայր՝ «Մայրական փառք» 3-րդ աստիճանի շքանշան, վեց երեխա ծնած և դաստիարակած 9 մայր՝ «Մայրության մեդալ» 1-ին աստիճանի մեդալ, հինգ երեխա ծնած և դաստիարակած 38 մայր՝ «Մայրության մեդալ» 2-րդ աստիճանի մեդալ։

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ԱՌՂՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՄԲԱԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՎՈՐՆԵՐԻՆ.— ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահությունը, 1951 թվականի հուլիսի 3-ի, 11-ի, 25-ի և 30-ի հրամանագրերով պարգևատրել է Հայկական ՍՍՌ գյուղատնտեսության, խաղողագործության և բամբակագործության մի շարք առաջավորների՝ շքանշաններով և մեդալներով։ «Լենինի շքանշան» ստացել է 18 մարդ, «Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշան» 62 մարդ, «Աշխատանքային արիության համար» մեդալ՝ 145 մարդ, «Աշխատանքային դիրքանշության համար» մեդալ՝ 156 մարդ։

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ԷԼԵԿՏՐԻՖԻԿԱՑԻԱ ԵՎ ՌԱՐԵԿԱՐԳՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ԳԻՏԱ-ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ.— Վերակառուցումից հետո բացվեց Հայկական ՍՍՌ Միջնարարների Սովետին կից Կուլտուր-լուսավորական հիմնարկների գործերի կոմիտեի Գիտա-լուսավորական թանգարանը։ Բազմաթիվ նկարներ, մոդելներ, մակետներ, լուսանկարներ և այլ նյութեր այցելուներին պատմում են տիեզերքի կառուցվածքի, արևակնային համակարգության, երկրագնդի, կյանքի, մարդու ծագման ու նրա զարգացման մասին։ Թանգարանում ներկայումս նախապատրաստական աշխատանքներ են կատարվում նոր բաժիններ կազմակերպելու համար։

ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ ԵՐԵՎԱՆԻ ԲՆԱԿՋՈՒԹՅԱՆ.— Երևանի քաղաքային Սովետի գործադիր կոմիտեն Ստալինի պողոտայի շարունակությունում շահագործման հանձնեց բնակելի հինգ շենք։ Չորս հարկանի, բոլոր հարմարություններով օժտված այդ շենքերում բնակարան ստացան 200 ընտանիք։ Մինչև սեպտեմբեր ամիսը պողոտայի այս մասում շահագործման կհանձնվեն վեց հարկանի երկու կենտրոնական շենքերը՝ մոտ 2.600 քառակուսի մետր բնակելի տարածությամբ։ Ուժեղ թափով առաջ են դնում շինարարական աշխատանքները։ Սկսվել է նա մի նոր մեծ շենքի կառուցումը։ Ամբողջ օրը չի դադարում հողհան մեքենաների հնչյունը։ Քանդվում են հին տները, հարթվում է ճանապարհը դեպի Հաղթանակի կամուրջ։

ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆՈՒՄ.— Հոկտեմբերյանի կոնսերվի գործարանի բանվորական ավանում շահագործման հանձնվեց 3—4 բնակարան ունեցող վեց բնակելի շենք։ Շահագործման է հանձնվել նաև գործարանի մանկապարտեզի և մանկամսուրի նորակառույց շենքը։

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆԻ ՆՈՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ.— Հոկտեմբերյանի շրջանային հիդրոէլեկտրակայանի գործարկումից հետո, սկսվեց երկրորդ՝ Հայկական 600 կիլովատանոց հիդրոէլեկտրակայանի շինարարությունը։ Այն կառուցվում է Հոկտեմբերյանի մայր ավի վրա։

ՌԻՆԻՎԵՐՍԱԳԻ (ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՆՈՒՆԻ) ՆՈՐ ՇԵՆՔ ԱՊԱՐԱՆՈՒՄ.— Ապարանի շրջկենտրոնում կառուցվում է Հասարակական խանութի երկհարկանի նոր շենք։ Առաջին հարկում տեղավորվելու է խանութը, իսկ երկրորդ հարկում՝ դրամարկղերը։ Արդեն ավարտվում է շենքի կառուցման քարային աշխատանքը։

ԿԱՐՄԻՐՎԱՆԻ ՆՈՐ ՋՐԱՄԲԱՐԸ.— Կարմիրվանի գյուղը շահագործման հանձնեց 1.200 խորանարդ մետր տարողությամբ նորակառույց ջրամբար։ Այստեղ կուտակված ջրով ոռոգվելու են ավելի քան 30 հեկտար մերձարևադարձային բույսերի, խաղողի և պտղատու այգիներ։

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԷԼԵԿՏՐԻՖԻԿԱՑՈՒՄԸ ԱԶԻԶԲԵԿՈՎՈՒՄ.— Ազիզբեկովի շրջանի գյուղերում այս տարի զգալի աշխատանք է կատարվում գյուղատնտեսական աշխատանքների էլեկտրիֆիկացման ուղղությամբ։ Դրա համար կան էլեկտրաէներգիայի մեծ աղբյուրներ։ Շրջանում գործում է չորս էլեկտրակայան, ավելի քան 2.300 կիլովատ ընդհանուր կարողությամբ։ Այժմ շրջանի վեց գյուղերում կայանքներն աշխատում են էլեկտրա-

չարժիչներով, որ մեծապես խնայում է մթոցները և արագացնում կալասումը։ Էլեկտրականությունը մուտք է գործում պնասնարու

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ՆՈՐԱՅՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՐՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՎՐԱ[1]

3) Ս. Փրկչի վանք և եկեղեցի, Երուսաղեմ.— *Այս փոքրիկ վանքն ալ կգտնվի Սիոն բլուրին վրա, բայց պարիսպեն դուրս։ Կառուցված է նախապես Կայափա քահանայապետին պատկանող տան տեղվույն վրա։ Ունի փոքրիկ եկեղեցի մը, որուն դավիթը թաղված են վերջին երեք դարերու ընթացքին պաշտոնավարող պատրիարքներեն և լուսարարապետներեն շատեր։ Վանքին կից է քարաշեն որմով պատված գերեզմանատունը, ուր կհանգչին Ս. Հակոբյանց հանգուցյալ միաբաններն ու ժողովրդյան մեծ բազմություն։ Պաղեստինի բռժանումեն առդին, այս վանքը ենթարկված է մեծ ավերումներու, և հրեից զինվորական գոտին մեջ գտնվելուն համար կմնա թափուր և անմատչելի։*

4) Ս. Ծննդյան վանք, Բեթղեհեմ.— *Հիսուսի ծննդյան տեղվույն վրա բարձրացող միջադդային մեծ եկեղեցվույն կից է հայապատկան սույն կարևոր վանքը։ Քարաշեն և երկհարկանի հաստատություն մըն է, ամրակառույց և հաստաբետ-պատերով։ Սկրրդ հարկին վրա կպարունակե եկեղեցի մը, նվիրված Ս. Աստվածածնի անվան։*

Ս. Աստվածածնա տաճարին մուտքը, Գեթսեմանի

5) Ս. Նիկողայոսի վանք և եկեղեցի, Հոպպե։— *Մոլահայաց շինք մըն է սա, որ Միջերկրականի կապույտ ջուրերեն անմի-*

1. *Սկիզբը ամսագրի 1951 թվի ապրիլ-հունիս համարում։*

չապես վեր բարձրացող բլրակի մը վրա թառած է։ Հին ժամանակ նավով եկող ուխտավորներու կայանն էր այն։ Եկեղեցին պարզ շենք մըն է, փոքր և ցած, ուր մինչև վերջերս կկատարվեր ամենօրյա պաշտամունք։

6) Ս. Դեորգա վանք և եկեղեցի. Դեսլն. — Հոպպեեն գեպի Երուսաղեմ երկարող ճանապարհն վրա ուխտավորական կայան մը հանդիսացող Ռեմլե քաղաքին մեջ այ հայերը վաղուց ունեցած են իրենց վանքը։ Փոքր շենք մըն է եկեղեցին, ուր այժմ տարին մեկ անգամ Ս. Պատարագ կմատուցվի, երբ Ս. Գեորգի տոնին առթիվ ուխտավորներ կգալեն հոն շրջակա հայաբնակ բաղաքներեն։

Գ.) Ս. ՀԱԿՈԲՅԱՆՑ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԱՆ ԳԵՏՆԻ ՎՐԱ

Ս. Հակոբյանց միաբանության գլխավոր պարտականությունը եղած է անհիշատակ դարերն ի վեր սուրբ տեղյաց մեջ հայոց իրավունքներուն պաշտպանությունը մշտընչենական պաշտամունքներու կատարումով։ Այդ սպառիչ գործունեության հետ միասին Ս. Հակոբյանց միաբաններեն շատ մը իրենց պարապո ժամերը հատկացուցած են այլևայլ աշխատություններու մշակութային գետնի վրա։ Հաջորդական բազմաթիվ սերունդներու այդ կարգի աշխատությունները այսօր կներկայացնեն քանակով և որակով պատկառելի գործ մը։ Տեսնենք մի առ մի անոնց գլխավորները. մոտավորապես ժամանակագրական կարգով.

I) Գրչագրություն.— Երբ տակավին չէր հնարված տպագրական մամուլը, գիրքերը հարկ էր բազմացնել ընդօրինակությամբ։ Ս. Հակոբյանց նման մեծ միաբանությունմը, իր բազմաթիվ եկեղեցիներով պետք ուներ ծիսական և կրոնական անհամար գիրքերու։ Այդ գիրքերուն մեծ մասը իրենք միաբաններն էին, որ կհայթայթեին գիշեր-ցերեկ գրիչ շարժելով։ Հնագույն դարերուն գործածված ձեռագրերը անշուշտ հինցած ու քայքայված ըլլալուն կնեռվեին մեկ կողմ և անոնց տեղ կդրվեին նորեր։ Այդ պատճառավ ԺԴ. դարեն առաջ օրինակված ձեռագիրներեն գրեթե բան մը չէ մնացած, անկե ասդին օրինակվածներեն կգտնվին հետզհետե ավելի թիվով։ Ուրեմն մենք ունինք վեց հարյուր տարիներ անընդհատ գրչագրական աշխատանք ընող վանք մը.

Սիոնի սարը և Ս. Հակոբյանց մայրավանքը (նախակողմը)

ուր օրինակված ձեռագիրներեն կրնանք բսել թե մեզի հասած են այնքան մեծ թիվով հատորներ, որուն ոչ մեկ վանք կրնա հավասարիլ։ Հաղարե ավելի այդ ձեռագիրներուն մեծ մասը կմնա տեղվույն վրա, Երուսաղեմի մեջ, մնացյալը ցրված է, հայ ժողովուրդին նման, աշխարհի ամեն կողմերը։

Գրչագրության կողքին կրնանք հիշել նաև մանրանկարչությունը, որ որոշ չափով մշակված է Երուսաղեմի հայ վանքերուն մեջ։

2) Մատենադարան.—Տպագրության գյուտին ընդհանրացումեն հետո, հետզհետե պիտի շատանային տպագիր մատյանները և Ս. Հակոբյանց միաբանության ուսումնասեր անդամները ընդհանրապես պիտի ունենային իրենց անհատական փոքրիկ գրադարանները։ Միաբաններու վախճանումով անոնց ունեցածը կմնար վանքին։ Այս ձևով անոնց անհատական գրադարաններեն հավաքված գրքերով կկազմվեր վանական մատենադարան, որուն սկիզբը կրնանք դնել Գրիգոր Պարոնտեր պատրիարքի ժամանակ։ Դար մը հետո իր համանունը, Շղթայակիր ուսումնասեր պատրիարքը, ավելի ևս ճոխացուց և կազմակերպեց վանական մատենադարանը, որ միաբանության հաջորդական սերունդներուն պիտի մատակարարեր մտավոր սնունդ։ Ներկայիս Ս. Հակոբյանց վանուց Կյուլպենկյան մատենադարանը իր ուրույն շենքին մեջ կպարունակե հայերեն և այլ լեզուներով հարուստ հավաքածո մը, թիվով մոտ 30.000, որ կներկայացնե Մերձավոր Արևելքի մեջ մեծագույն հայ մատենադարաններեն մին։

3) Տպարան.— Ս. Հակոբյանց տպարանը, հիմնված 1833-ին, մին է եղած Օսմանյան կայսրության դավառական քաղաքներուն մեջ հաստատված հնագույն տպարաններեն։ Հոդ տված են բազմաթիվ եկեղեցական մատյաններ, ինչպես նաև մատենագրական, պատմական, գրական և բանասիրական երկեր։ Երուսաղեմի տպարանին պատմությունը գրած է Մեսրոպ եպիսկոպոս Նշանյան, անոր հիմնարկության տարեդարձին առթիվ։

4) Դպրանոց.— Ս. Հակոբյանց դպրանոցին նորագույն շրջանը ավելի քան մեկ դարու հնություն ունի։ Վաղագույն ժամանակներու մասին հատակ և լայն տեղեկություններ կպակսին։ Դպրանոցի պատմությունը շարունակական ելևէջներու հաջորդություն մը կներկայացնե, այսինքն հրեմն եղած է արդյունավոր և պայծառ, և հրեմն նսեմացած և աղքատ։ Դպրանոցի համար երկու բնդարձակ շենքեր կառուցած է Հովհաննես պատրիարք Զմյուռնիացի, Թվականես ՃԻՇՏ դար մը առաջ։

Սրբոց Հակոբյանց Մայր Տաճարը, Երուսաղեմ

5) Նախակրթարան.— Ինչպես տարի առաջ իրեն ապշկանց վարժարան հաստատված փոքրիկ ծաղիկը այժմ դարձած է վիցամյա նախակրթարան մը իր քառամյա մանկապարտեզով։ Երկուքը միասին այժմ կպարունակեն ավելի քան 500 հայ մանուկներ, տղա և աղջիկ, որոնք իսկապես տոհմիկ շունչով կգաստիարակվին։ Դպրոցին հոյակապ շենքը կառուցված է քսան տարի

առաջ և մին է Երուսաղեմի գլխավոր ցավագույն շենքերեն։

6) Սիոն.— Ս. Հակոբյանց միաբանությունը իր պաշտոնաթերթը ունեցած է առաջին անգամ 1860-ական թվականներուն, որ տասնյակ մը տարիներ հրատարակվելի վերջ կանգ առած է։ Երկրորդ շրջանը սկսավ 1927-ին և անկե ի վեր կշարունակվի ավելի կամ նվազ ընդարձակությամբ,

Ս. Գլխագրի մատուռը, Երուսաղեմ

բերումներուն համաձայն։ Սիոնի քանհինգամյա հավաքածոն արժեքավոր նպաստ մը կրնա համարվիլ հայագիտության մայրին մեջ, իր պարունակած բնագիրներով և ուսումնասիրություններով։

7) Թանգարան.— Հայի պատրիարքի օրով ձեռնարկված է թանգարանի մը կազմության և այլազան հնություններ բովբերված են այդ նպատակով։ Բայց, դժբախտաբար, հետագային հարկ եղած խնամքը զլացված է և թանգարանին վերաբերող առարկաներ ցրված են հոս հոն։ Հարմար շենքի մը հատկացումով շատ դյուրին պիտի ըլլա Ս. Հակոբի մեջ կազմակերպել հայկական թանգարան մը, որուն պակասությունը զգալի թերի մրն է ապրին այդ հոյակապ հաստատության մեջ։

8) Ձեռագրատուն.— Երուսաղեմի ձեռագրատունը կպարունակե հայերեն ձեռագիրներու մեծագույն հավաքածոն, ի բաց առյալ Հայաստանի Պետական մատենադարանը։ Մեր ձեռագիրներուն թիվը այժմ կանցնի 3.700-ը։ Սույն հավաքման առաջին ցուցակը ասկե մոտ դար մը առաջ կազմած է Տիգրան Սավալանյան, որ համառոտակի կներկայացնե 1.700 ձեռագիրներ։ Երկրորդ ձեռնարկը կպատկանի Սահակ կաթողիկոս Խապայանի, որ բնորոշ և մանրամասն ցուցակագրած է ավելի քան 2.000 հատորներ։ Մասնակի ցուցակ մը կազմեց Մեսրոպ եպիսկոպոս Նշանյան, նկարագրելով Աստվածաշունչներն ու հնագույն ավետարանները։ Այս բոլորը սակայն ցարդ կմնան անտիպ։ Ավելի հաջողաձեռն դուրս եկամ պերճշնորհ Արտավազդ արքեպիսկոպոս Սյուրմելյան, որ իր կազմած ցուցակը կրցավ հրատարակել վերջերս։ Սա կպարունակե թ. 1—140 և երկու տասնյակ այլ հաջորդական կարգով ընտրված ձեռագիրներ։

Ընդհանուր առմամբ, կրոնական նյութեր բովանդակող ձեռագիրներ են մեր ունեցածները, բայց շատ մեծ արժեք կներկայացնեն մանրանկարչական տեսակետ։ Բազմաթիվ հայագետներ և բանասերներ օգտագործած են Երուսաղեմի ձեռագրատունը, այնուհանդերձ տակավին շատ ճոխ շտեմարան մրն է այն, և հայագիտության դրեթե ամեն ճյուղերուն համար քիչ կամ շատ արժեք ներկայացնող ձեռագիրներ հետզհետե կուտան իրենց նպաստը, ճոխացնելով հայկական ուսմանց, գիտությանց և արվեստներու պատկառելի դանձարանը։

ՅՈՒՑԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ[1]

№ 56

ԱԻԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 269։— Գրակները՝ 17, յուրաքանչյուրը 12 թերթից։— Մեծությունը՝ 18,5×14×5 սմ.։— Նյութը՝ մագաղաթ։— Կազմը՝ արժեքապատ տախտակ։ Առաջին երեսին բանդակված է Հիսուսի խաչելությունը։ Կազմի չորս կողմի անկյուններում բանդակված են մեկական հրեշտակ, իսկ խաչի աջ և ձախ կողմերում՝ երեք ողբացող կանանց պատկերները։ Մյուս երեսում բանդակված է Տիրամայրը՝ Հիսուսին գրկած, նստած գահի վրա։ Տիրամոր պատկերից մեկ-սմ. հեռավորությամբ բանդակված են երկու հրեշտակներ, որոնց ձեռքում պահված է մի թաց։— Գրությունը՝ երկայուն։— Վիճակը՝ բավական։— Դիրը՝ բոլորգիր։— Տողերը՝ 36։— Զարդարությունը՝ ունի բազմաթիվ տերունական նկարներ, խորաններ, կիսախորաններ, լուսանցազարդարություններ, թոչնագրեր, կենդանագրեր և ծաղկազարդեր։ Ձեռագիրը մանրանկարչության արժեքավոր հուշիկում է— ունի բազմաթիվ հիանալի նկարներ։— Պահպանակները՝ սոլիից երկու թերթ թուղթ, վերջից մի էջ և մի թերթ մագաղաթ և երկու թերթ թուղթ դատարկ։— Ժամանակը՝ 17-րդ դար։

№ 57

ԳԻՐՔ ՁԵՌՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Թերները՝ 102։— Գրակները՝ 12, յուրաքանչյուրը 8 թերթից, միայն վերջինը 16 թերթից։— Մեծությունը՝ 26,6×20,1×3,2 սմ.։— Նյութը՝ հաստ մագաղաթ։— Կազմը՝ կաշեպատ տախտակ։ Երկու երեսների վրա կան ճեշտամով նկարված գեղեցիկ զարդեր։ Ծածկված է կանաչ մետաքսյա ծաղկաձարդ կտորով։— Պահպանակները՝ սկզբում և վերջում երկուական թերթ թուղթ։—Վիճակը՝ շատ լավ։—Գրությունը՝ երկայուն։— Գատարկ բզքեր՝ 1, 100, 101 և 102։— Տողերը՝ 23։ — Գիրը՝ բոլորգիր։— Զարդարությունը՝ կան շատ գեղեցիկ խորաններ, կիսախորաններ և ձեռնադրության նկարներ։ Ներդաշնակորեն գործածված են որդան կարմիրը, ոսկեգույնը և բազմաթիվ այլ գեղեցիկ գույներ։ Կան բազմաթիվ խիստ գեղեցիկ զարդագրություններ, թոչնագրեր և լուսանցազարդություններ։ Բոլոր էջերում ենթադիր երկայուն գրությունը շրջանակված է արժեքազարդ երկու շրջանակներով, վերևում ունենալով զարդագրված ոսկեզոծ երկու գմբեթներ։ Սույն ձեռագիրը մանրանկարչության շատ գեղեցիկ նմուշներից մին է։— Գրիչը և ծաղկողը՝ Երեմիա եպիսկոպոս Օշականցի։— Պատվիրատուն՝ Սիմեոն կաթողիկոս Երանցի։— Ժամանակը՝ 1769 թ.։— Վայրը՝ Էջմիածնի վանք։

1. Շարունակված 1950 թվի մայիս-հունիս, հուլիս-օգոստոս, սեպտեմբեր-հոկտեմբեր, նոյեմբեր-դեկտեմբեր և 1951 թվի հունվար-մարտ և ապրիլ-հունիս համարներից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 2ա.— Տիտղոսաթերթի վրա՝ Գիրք (թոչնագիր) ձեռնադրության որ պարունակեալ ունի զ'ի միոյ աստիճանէն մինչեւ եօթն աստիճան բահանայության։ Ընդ սոցին եւ զմտանուոր եւ զծայրագոյն զաւազանատուրիւն վարդապետութեանցն։

Որ որպէս թէ վերստին ի լոյս ածեցեալ լաւապէս սրբագրութեամբ եւ բազմաւ աշխատասիրութեամբ ի բազմաց հնոց եւ լրնտիր օրինակաց։

Եւ գրեցեալ եւ ծաղկեալ սերտ սիրով եւ ջերմ հաւատով ի սուրբ եւ ի քրիստոսաբոյ Արոռս Ամենայն Հայոց Էջմիածին (ոսկեզոծ).

Ի վայելումն սոյնոյ սրբոյ Աթոռոյս եւ ի սմա գտեղեալ հաւազատիցն, ի փառս Աստուծոյ, եւ ի դիւրութիւն տուողաց եւ առողացն սրբասէր անձանց։

Ի թուոջ Փրկչին մերոյ ՌՉԿԹ (1769 թ.) եւ ի թուականութեանս հայոց ՌՄԾԸ (1769 թ.)։

Թ. 3ա.— Սկիզբն աստիճանաց կղերիկոսաց, որք են սաղմոսերգուք եւ ասլաածուք եւ այլն ըստ իւրաքանչիւր կարգի։

Թ. 35ա.— Կարգ ձեռնադրութեան քահանայութեան։

Թ. 53ա.— Գիրք մասնաւոր եւ ծայրագոյն զաւազանի վարդապետական իշխանութեան, որ է չորեքտասան աստիճան, ըստ թուոյ չորեքտասանից աստիճանաց սրբոյ եւ ուղղափառի հաւատոյ եկեղեցւոյն Քրիստոսի։

Թ. 53բ.— Կանոն մասնաւոր զաւազանի վարդապետական իշխանութեան, որ է չորս աստիճան, ըստ արարողութեան սրբոյ եկեղեցւոյ Հայաստանեայց։

Թ. 64ա.— Կանոն ծայրագոյն զաւազանի վարդապետական իշխանութեան, որ է տասն աստիճան ըստ աւանդութեան սրբոյ եւ ուղղափառի եկեղեցւոյս Հայաստանեայց։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 3ա.— (Կիսախորանի չորս բոլորը մեծատառ կապարերով գրված)։

Հոգիդ Աստուած, Թարեաց տուիչ,
Աղբիւր շնորհաց եւ կեցուցիչ,
Նուաստ դրչիս Երեմիայ,
Լեր օգնական եւ կազդուրիչ։

Թ. 3ա.— (Ոսկեզոծ ծաղկամանի վրա գրված է մեծատառ անունը)։

ԵՐԵՄԻԱ։

Թ. 23բ և 83բ.— Երեմիա (գրված ոսկեզոծ ծաղկամանի վրա)։

Թ. 35ա.— Եպիսկոպոս (գրված ոսկեզօծ ծաղկամանի վրա)։

Թ. 35ա.— (Կիսախորանի չորս բոլորը մեծատառ գրված է)։

Ես Յիսուսի նուաստ ծառայ,
Եպիսկոպոսս Երեմիա,
Ըղձեռացրս իմոց վաստակ
Եւու վասն հոգւոյս յիշատակ,
Ի դուռն իմոյ մաքուր ծնողի՝
Սուրբ Աթոռոյս Էջմիածնի։

Թ. 53բ.— (Կիսախորանի չորս բոլորը մեծատառ գրված է)։

Զօժանդակ հոգւոյդ յաւարտ դիս ածող,
Յարկեանս իմ լինիմ գոհացող,
Պետս Երեմիա, գծող եւ ծաղկող։

Թ. 63ա.— (Մաղկեփնջի մեջ կնքված է կնիքով)։

Վ. Երեմիա Տ. (կապգիր)։

Թ. 65ա.—(Կիսախորանի չորս բոլորը մեծատառ գրված է)։

Փառք քեզ շնորհատու Հոգի,
Որ զայս ըստ քոյդ նպաստի
Գրեալ, ծաղկեալ, յեպր ած,
Ի Երեմիա վարդապետէ։

Թ. 95բ—99բ.— Յիշատակարան Սուրբ Գրքոյս։

Փառք համագոյ եւ միասնական անբաժանելի Սուրբ Երրորդութեանն, Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ։ Որ կարողացոյց զանարժանութիւնս իմ, հասուցանել յանկ եւ ի կատարումն զմատեանս զայս սուրբ եւ շնորհաբաշխ։ Որում ցանկացող եղէ հոգւով շատ եւ փափագեցայ մեծաւ սարփմամբ ես ամենանուաստ ծառայս ծառայից Տեառն, եւ լցեալս ամենայն վիրօք Երեմիա անարդիւն վարդապետս Յոշականցի, որ եմ բազմաժամանակեայ նստար գահոյս սրբոյ եւ մեծի, եւ շնորհաձին զաւակ եւ յետնեալ ծառայ արժանաժառանգ գահակալի սորին Տեառն Սիմէօնի գերերչանիկ եւ սրբազան Կարապետ-կոսի Ամենայն Հայոց Երեւանեցւոյ, առ ի ստանալ զսուրբ գիրքս զայս ձեռնադրութեան իմով աշխատութեամբ եւ ձեռագրով, եւ ընծայել ի դուռն սրբոյ եւ քրիստոսաիջի Աթոռոյս մեծի, ի յիշատակ հոգեւոր եւ անջնջելի ինձ յետնելոյս։ Զի որպէս ըղձալի է ծնողաց թողուլ զաւակ յերկրի, զի յիշեսցին նոքօք յապագայս, նոյնպէս եւ ըղձալի է հոգեւոր յիշատակաթուղաց թողուլ ի վերայ երկրի զյիշատակ հոգեւոր, զի յիշեսցին նովաւ յապագայ ժամանակս, եւ որպէս թէ կենդանի մնասցեն նովաւ անուանք իւրեանց ի վերայ երկրի։

Եւ մանաւանդ որ մեծն է քան զայս, երանի տայ աստուածարան մարգարէն Եսայի այնոցիկ, որք ունիցին զաւակ ի Սիոն։ Որում երանութեան եւ իմ տենչացեալ հոգւով, զհոգեւոր զաւակս զայս իմով երկամբ ստացեալ, եւ յիշատակ յաւիտենական ի նորս այս սուրբ Սիոն, ի քրիստոսակերտ տաճարս սուրբ, այնու յուսով եւ ակնկալութեամբ, զի ի շնորհաբաշխութեանցն սրբոց, որք կատարեցին սովաւ, ինձ եւս մասն հանցէ։ Աստուած։ Նաեւ որովհետեւ ծնող է իմ հոգեւոր Աթոռս այս սուրբ, եւ կաթամբ սորին եմ զարգացեալ ի մանկութենէ իմմէ, եւ ըստ իմում չափու պշնորհս ընկալեալ, անբաւական դոլով զտրիտուրն հոգեւոր պարգեւաց սորին հատուցանել, զայս զուզնաքեալ աշխատութիւնս իմ, իբրու պտուղ որդիական եւ առ ի զարդ հոգեւոր լուսատու ծնողիս իմոյ ընծայեցի։ Զի որք մեծագոյնք եւ կարողագոյնքն են քան զիս, զմեծամեծ եւ պշափտենական յիշատակս ընծայեն սրբոյ մօրս լուսոյ ըստ կարողութեան իւրեանց, ոմանք զգիրս շարադրելով, ոմանք զշինուածս առնելով, եւ յոդունք զոսկեզէն եւ զարծաթեզէն յիշատակս ընծայելով։ Բայց ես առ այսպիսի անկարող զոլով, զոր ինչ ունիմս զայն ընծայեցի ըստ լո(ւ)մայի այրուոյն։ Եւ թէ վասն է՞ր զայս գիրքս գրեալ ընծայեցի սրբոյ տաճարիս եւ ոչ զայլս. նախ վասն մշտապէս պիտոյանալոյն, եւ յեկեղեցւոջ միայն գործածելոյն։ Եւ երկրորդ՝ զի վայել էր սրբոյ Աթոռոյս ունիլ զայսպիսի ծաղկափթիթ, չքնաղ եւ հայրապետավայել գիրք մի ձեռնադրութեան։ Զի տպագրեալն վասն անշքեղութեանն եւ պարդարուն ո՛չ լինելոյն, անվայելուչ է հայրապետական հանդիսին։ Իսկ գրչեայքն, որ ինչ գտանէին, այնք եւս անշքեղք էին, մանաւանդ աւելիք եւ պակասք եւ սխալաշատք։ Սակս այսորիկ եւ սրբազան տէրն իմ վերոյ յիշեցեալ, սատար եղեւ ըղձի եւ դիտման իմոյ, եւ պրաղում օրինակս ի մի վայր ածեալ մեծաւ աշխատութեամբ եւ սրբագրութեամբ, ի լոյս էած զկարեւորսն ձեռնադրութեան կարգին, լցուցանելով զթերիսն եւ բառնալով զաւելորդսն, եւ ետ զրել իմոյ նուաստութեանս մեծաւ հարկադրութեամբ։ Ընդ որում գրեցոյց նաեւ զչորեքտասան աստիճանս մասնաւոր եւ ծայրագոյն զաւազանի վարդապետութեան, ժողովելով զհարկաւորսն եւ զվայելչագոյնսն յանչափ եւ յանհամեստ հրկարութեանցն, որք ի տպագրեալն զտանին։ Զոր եւ ես մեծաւ ըղձի եւ կաթոգին ոիրով գրեալ յաւարտ հասուցի, կրկին առնելով, որպէսզի մինն հայրապետն առնուցու ի ձեռն եւ մինն խարտուփլակն։ Որք երկոքեանքն եւս ամենեւին համաձայնք եւ յար եւ նմանք են իրերաց։ Զորս եւ մեծաւ տաժանմամբ ծալկեցի եւս վայելչապէս իմով ձեռամբ։ Որոյ գրութեան եւ երինազարդութեան կատարումն եղեւ ի ՌՄԻԲ (1773) թուականիս մերում եւ ի (3 սմ. բաց է թողված) ի սուրբ

Աթոռս Էջմիածին, ի մեծասանեցորդի ամի վեհափառ հայրապետութեան Տեառն Սիմէոնի գերիմաստ եւ երջանիկ Կաթողիկոսի Ամենայն Հայոց, հոգեւոր եւ բարեմերախտ տեառն իմոյ օրհնածին ծնողի։ Որ ի տղայական հասակէ իմմէ մինչեւ ցայս կէտ խնամատար լինելով ինձ որպէս հայր եւ ծնող, արժանացոյց եւս զանարժանութիւնս իմ շնորհաց քահանայութեան, վարդապետութեան եւ եպիսկոպոսութեան։ Որում Տէր զկեանս երկարս եւ խաղաղական պարդեւեսցէ, եւ յետ աստեղծս սրբոյ տեսութեան իւրոյ արժանացեալ ընդ սուրբ եւ երջանիկ հայրապետացն պսակազարդեսցէ։ Որ յառաջին ամէ հայրապետութեանն իւրոյ, մինչեւ ցայժմ ոչ դադարեցաւ ի շինարարութեանց եւ բարեմաց արդիւնաւոր գործոց։ Զի զարտաքին պարիսպն սրբոյ Աթոռոյս ի հիմանէ նորապէս շինեաց, զսեղանատունն եւ զատանիս եկեղեցւոյն նորոգեաց, շուրջ զեկեղեցեաւն զգրմուզս եւ փորել, սակս զիջութեան սրբոյ եկեղեցւոյն եւ շրջակայ բնակութեանցն։ Զմոմատունն, զդպրատունն, զդոմսն անասնոց մեծ եւ ընդարձակ եւ ուրոյն պարսպօք նորապէս շինեցոյց, հանդերձ այլ եւս բազում շինութեամբք։ Զրազանիսն եւ զքարվանսարայն եւս եւ նորապէս ի հիմանց շինել։ Զդեղս էջմիածնի քակեալ հեռացոյց ի պարսպէն սրբոյ Աթոռոյս, եւ նորապէս շինեաց եկեղեցեաւն հանդերձ։ Հաստատեաց եւ զտպագրատուն ի սուրբ Աթոռոջս։ Մեծացոյց զվերի այգին դնելով զայլ այգի եւ խառնելով ընդ նմա, եւ յարտաքուստ եւս պանչէն վայրս ի ներս առնելով, եւ զայլ այգիս եւս ստացաւ վասն սրբոյ Աթոռոյս հանդերձ այլ եւս մլքօք, դխոտահարս, զրընձահանս եւ զայլս այսպիսիս։ Եւ զՑօշական դեղն, որ ի բազում ամաց հետէ տաճկաբնակ էր լեալ, զտաճիկսն վարեալ անտի, վերստին հայաբնակ արարեալ։ Եւ զեղվարդ, Աշտարակ, Մօղնի եւ Ագուռատուն գիւղորայսն, որք ի վաղուց ժամանակաց մուլք են լեալ սրբոյ Աթոռոյս, բայց տաճկունք յափշտակեալ եւ օտարացուցեալ էին, այժմ յետս առեալ ի տաճկաց, սեփականեաց սրբոյ Աթոռոյս։ ԶՀաշտարխան բոլոր երկրաւն Ռուսաց, որք զինքնագլուխ առաջնորդ հաստատեալ անդ եւ ի գանձասարցիսն յարեալ հեռացեալ էին որպէս թէ ի սրբոյ Աթոռոյս, վերստին առ սուրբ Աթոռս դարձոյց եւ տէրունի արար։ Արար եւ զկարսայ երկիրն տէրունի։ Եւ զայլ բազում շինարարութիւնս եւ զմեծագործութիւնս արար, զորս մի (ը)ստ միոջէ թուելն երկարութիւն բերէ բանիս, քանզի յոլովք են յոյժ զորս Տէր ի փառս իւր համ(ա)ռելով վարձատրեսցէ։ բստ իւրոյ արժանւոյն։ Որ եւ տակաւին ոչ դադարի ի շինարարութեանց եւ յարդիւնական գործոց, թէպէտ եւ պաշարեցեալ եւս է մեծագունիւք հոգոք սակս ներկայիս եղելութեանցս։ Քանզի այս ահա ե (5) ամ է, յորս պատերազմ մեծագոյն յարուցեալ ի մէջ երկուց հզօրագոյն թագաւորութեանցն օսմանցւոց եւ ռուսաց, տակաւին ոչ դադարի։ Որք ահագին զօրութեամբ զմիմեանս բախելով պաշխարհ ամենայն սասանեցուցին, դայն կոյս գեղոյն Դանուբայ բովանդակապէս բռնակալեցին ռուսք, երեւելի պատերազմօք եւ մեծագոյն յաղթութեամբք։ Յորոց պատճառաց վրդովեցան ամենայն տեղիք, բազմացան աւազակք եւ ապստամբք, յաճախեցան յափշտակութիւնք եւ գրկանք, գերեվարութիւնք եւ աւերութիւնք, փակեցան ճանապարհք, հատան երթեւեկութիւնք կարավանաց։ Յորոց կարի յոյժ վշտացեալ աղգս մեր խղճալի կային ի վիշտս եւ ի տառապանս մեծագոյնս։ Եւ սրբոյ Աթոռոյս եւս եղեն վնասք մեծագոյնք, զի պակասեցան երթեւեկք նուիրակաց եւ ուխտաւորաց, եւ նուազեցան մուտք այդեանց։ Սակս այսոցիկ կայր ի մեծ հոգս եւ ի տրտմութիւնս սրբազան տէրս մեր, մորմոքելով միշտ ի վերայ բանաւորի հօտի իւրոյ։ Որոց Աստուած լիցի այցելու եւ պարդեւեսցէ ամենայն աշխարհաց զխաղաղութիւն իւր սուրբ։ Արդ, զբաւ տալով բանիցս, հայցեմ ի սիրելի հարցդ եւ եղբարցդ իմոց, զի ի վայելելն ձեր զաշխատութիւնս իմ կամ ի հանդիպելն ձեր սոցայ ընթեռնելով կամ զբօսնելով, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զբազմերախտ տէրն եւ ծնօղն իմ հոգեւոր զՍիմէօն գերիմաստ Հայրապետն, հանդերձ ծնողօք եւ ազգակցօք իւրովք, հոգեւորօք եւ մարմնաւորօք։ Եւ զբստ մարմնոյ ծնօղսն իմ, զհայրն իմ Միրումն, զմայրն իմ Գիւլումն, զեղբայրն իմ Գրիգորն զհանգուցեալն ի Քրիստոս, եւ զորդիս նորին Յարութիւնն, Զաքարիայն եւ զկարապետն։ Եւ զնախապատիւ սպասաւորն եւ աշակերտն սրբազան Վեհին մերոյ զսենեկիից եւ զկարգակից եղբայրն իմ զՄկրտիչ քաղցրաբարոյ եպիսկոպոսն։ Որ ի մանկութենէ եղբայր զոյով իմ համշիրակ, կալաւ առ իս զնշխարս սէր եղբայրութեան մինչեւ ցայժմ, յամենայն կարիս իմ օգնական եւ ձեռնտու լինելով ինձ, որում Տէր լիցի վարձահատոյց։ Եւ միւս զաշակերտն սրբազան Վեհին մերոյ եւ զհարազատն իմ Խաչակ գիտնական վարդապետն, որ ի տղայութեան ժամանակին զոյով առ իս ըստ հրամանի սրբազան Վեհին, սպասաւորեաց ինձ ի բազում ժամանակս, եւ մինչեւ ցայժմ որդիական սիրով ունելով առ իս զհարազատութիւն, յայսմ գրքոյս եւս ձեռնտու եղեւ ինձ, ուղղելով զդրչասխալսն։ Հուսկ յետոյ եւ զիս

Երեմիա ամենանուաստ վարդապետս, որ իմով ձեռամբ գրեցի եւ ծաղկեցի զսոսա, յիշեսջիք ի Քրիստոս, զի արժանացուսցէ զիս ողորմութեանն իւրում հանդերձ ամենիւք վերոյ յիշեցելովքն։ Եւ զուք յիշեալ լիջիք յողորմութիւնս եւ ի գթութիւնս մարդասիրին Քրիստոսի յաւուր մեծի գալստեան իւրոյ։ Ամէն։

(Հիշատակարանում ընդգծված բառերը ընագրում գրված են ոսկեզօծ տառերով)։

№ 58

ԳԻՐՔ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Թերթերը՝ 98։ Գրակերը՝ 12, յուրաքանչյուրը 8 թերթից, միայն առաջինը 6 թերթից և 9-րդ ու 10-րդ պրակները 10-ական թերթից։— Մեծությունը՝ 27,1 × ×20,2×3,4 սմ.։— Նյութը՝ հատ մագաղաթ։— Կազմը՝ կաշեպատ տախտակ, երկու երեսների վրա կան ճնշումով նկարված գեղեցիկ զարդեր։— Պանպանակները՝ սկզբում և վերջում կան երկուական թերթ թուղթ։— Վիճակը՝ շատ լավ։— Գրությունը՝ երկսյուն։— Գլատակ բզբեր՝ թ. 98։— Տողերը՝ 23։— Գիրը՝ բոլորգիր։— Զարդագրությունը՝ նույնը ինչպես նախորդ ձեռագրինը։ Սույն ձեռագիրն ևս 18-րդ դարի հայ մանրանկարչության լավագույն նմուշներից մին է։— Գրիչը և ծաղկողը՝ Երեմիա եպիսկոպոս Օշականցի։— Գլատվիրատուն՝ Սիմեոն կաթուղիկոս Երևանցի։— Ժամանակը՝ 1769 թ.։— Վայրը՝ Էջմիածնի վանք։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 2ա.— Նախորդ ձեռագրի թ. 3ա-ի հար և նման։

Թ. 2ա և 90ա.—Եպիսկոպոս (գրված ոսկեզօծ ծաղկամանի վրա)։

Թ. 21բ.— Երեմիա (գրված ոսկեզօծ ծաղկամանի վրա)։

Թ. 33ա.— Նախորդ ձեռագրի թ. 35ա-ի նման։ Միայն տեղի սղության պատճառով օի դուռնս բառերը չեն գրվել։

Թ. 50բ.— (Կիսախորանի չորս բոլորը մեծատառ ոսկեզօծ գրված է)։

Հոգւոյն Սրբոյ աղբերն շնորհաց,
Որ աւարտել ինձ զայս շնորհեաց,
Նուաստ ծաղկօղս Երեմիա,
Ըզդոհութիւն մեզ փառս տայ։

Թ. 59բ.— Վ. Երեմիա Տ. (կնիքով ինքված, կապգիր)։

Թ. 61ա.— (Կիսախորանի չորս բոլորը մեծատառ ոսկեզօծ գրված է)։

Օգնութեամբ քով Սուրբ Հոգի,
Զիրգ հոգւոյս ի հուն հանի,
Ի փառս անուան քում մեծի։

Թ. 93ա—97ա.— Նախորդ ձեռագրի հիշատակարանին (թ. 95բ—99բ) հար և նման, բառ առ բառ։

№ 59

ՄԱՇՏՈՑ

Թերթերը՝ 224։— Գրակերը՝ 15, յուրաքանչյուրը 12 թերթից։— Մեծությունը՝ 17×13×3,5 սմ.։— Նյութը՝ գեղեցիկ թուղթ։— Կազմը՝ կաշեպատ տախտակ։— Վիճակը՝ բավականին վնասված, սակայն մատագրում նորոգված է։ Թերթեր 7ա—26բ, 50ա—60բ, 222բ—224բ հետագայում ավելացված են և տարբեր ձեռագրով են։— Գրությունը՝ միասյուն։— Տողերը՝ 15։— Գիրը՝ բոլորգիր։— Զարդագրությունը՝ կան հասարակ կիսախորաններ, յուանեցազարդագրություններ, և թոչնագրեր։— Գրիչը՝ Սիմեոն երեց։— Գլատվիրատուները՝ Մարիամ և ձեռղները՝ Միրզա և Քարիանէ։— Ժամանակը՝ 1620 թ.։— Վայրը՝ Շուշ (Ազատամ)։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 42ա.— Եւ ստացող գրոցս յիշեցէք Մարիամն եւ իւր ծնաւղքն։ Եւ զիս զանարժան Սիմէոն գծողս։

Թ. 99ա.— Աւրինակ Բ (2) Լր, մէկն չէր գրած, անմեղադիր լերուք։

Թ. 147ա.—Ջստացող գրոցս Մարիամն, և ծնաւղքն Միրզէն, Քարիանէն եւ ինձ մեղապարտ գծ(ողս)։

Թ. 218ա—222ա.— Յիշատակարան գրոցս.— Փառք... Արդ, գրեցաւ սուրբ գիրքս, զոր արարեալ է սուրբ հարն Մաշտոց վարդապետի։ Զոր հաւաքեալ ունի յինքեան զեւիՊն խորհուրդ եկեղեցւոյ։ Ի թուականիս հա(յ)ոց ՌԿԹ (1620 թ.) ամին։ Տանուտէրն կարիճն է, որ է նահանջ։ Եւ գրուեցաւ ի Շաւշ քաղաքն պարսից, որ կոչի Ասպահան, ի գեաւղն ի մէջ Նոր Ջուղայոյ, ի կաթողիկոսութիւն Տեառն Սուրբ Էջմիածնեայ Մելքիսէթին։ Առաջնորդութիւն գեաւղիս Մեսրոպ արքեպիսկոպոսի։ Ի թագաւորութեան պարսից Շահապասին, թիւն ՌՄԴ-ին (1604 թ.) եկեալ աշխարհս հայոց, բազում աւեր էած, գեաւղ եւ քաղաք, ժողովեաց բազում անթիւ քրիստոնեայսն ի յափն լԱրասխ գետոյն։ Զաւրքն թագաւորեաց շրջապատեալ վին քրիստոնեայքն, ի մէջ նոցա էին գիշեր եւ ցերեկ մի, եւ ի մուտ արեգականն վերդովումն եղեւ ի մէջ հեթե(ա)լին, եւ ի քրիստոնէիցն անցուցին յայն կոյս գետոյն, ի մէջ գետոյն քրիստոնեայք շատ շրախեղդ ելան եւ անթիւ դերի վարեաց զազգս հայոց, մեծ եւ փոքր, կանայք եւ տղայք, եւ բերեալ ի Շաւշ քաղաքն Ասպահան, ի վերայ Զանգարոյ գետոյն եւ անդ կեցեալ ամիսս երիս, եւ յետոյ եղեւ հրաման թագաւորին, բնակեցաք ի գեաւղ եւ քաղաքս, եւ ի պանտոկին, եւ անդ կեցեալ ամս երկուս եւ երիս, ի(նչպես) կու հրամայէ մարդարէն Դաւիթ։ Խառնակեցան ընդ հեթանոսս եւ ուսան զգործս նոցա, խառնէալ էին ի մէջ այլ ազգեաց եւ քրիստոնեայքն ուսեալ էին ամենայն գործք

այլ ազգնացն։ Եւ յետոյ հասաւ ի վերայ կնոջն, բնակութիւն տան եւ տեղիք, եւ սկիզբն արարեալ կ(ի)աղիս, շինեցին տունս եւ բնակութիւնս եւ կարգեցին եկեղեցիս երկոտասանս, եւ յետոյ բազում շարաշար նեղէին քրիստոնեայքն թէ ուրանիք զՔրիստոս Աստուած, զծնունդ սուրբ աւազանին, եւ զանանք ահեղագիրս բերեալ է ի մէջ քրիստոնէիցն եւ թէ ոչ ուրանայք զՔրիստոս Աստուած, եւ զուք զանանց կերակուր եղէք. եւ յահէ թագաւորին, երկոյ միտ եղան քրիստոնեայքն, թէ ինչպէս կու լինի մեր ճարս. շատ շարաշար տանջեցին, միաբանեցան եկան։ Մրմահ թագաւորին է մնացէլ, հրաման եւ թագաւորն փարաւոն զաւրականացն՝ կամ առաջի զաղանացն ընկեցէք կամ սունատեցէք։ Եկին զաւրականքն, ժողովեցին մեծ եւ փոքր ի միատեղ։ Արտասուքն այնպէս եկեալ որպէս ջուր առուի։ Բռնութեամբ սունատեցին, այր եւ կանայք, քահանայք եւ աղայք, մեծ եւ փոքր։ Ի թիւն ՌԿԸ (1619 թ.) տարեմտին նաւասարդի ամսոյն տասնուհինգին, նշան յերկնից երեւեցաւ մէջ յարեւելեան մէջ հարաւային. մէկն նմանէր թիւրոյ, մէկն նմանէր խանջալոյ, եւ բազում վիշտք եւ նեղութիւնք հատուցին քրիստոնէիցս, եւ ամենայն քրիստոնեայքս ի մեծ տարակուսանք եւ յապաւինեալ եմք Աստուած, զի ինքն լինի նոցա վրէժխնդիր, սիրտ թագաւորաց քաղցրանա(յ) ի վերայ հաւատացելոց։ Աստուած ազատէ քրիստոնեայքն ի ձեռաց չար թագաւորէն, որպէս Մովսէս ազատեաց փարաւոնի դերութենէն, վերջն Աստուծոյ է գիտելի թէ ինչպէս կուլին ի մեր ճարս. Աստուած միայն գիտէ։

Շնորհի։ Տեառն սկսայ եւ ողորմութեամբ նորին կատարեցի։ Զեռամբ սուտանուն մեռեալ ոգւոյ Սիմէոն իրիցու եւ իմով տկար անձամբս սկսա(յ), եւ ամենակարող զաւրութեամբն Աստուծոյ կատարեցի զսա լաւ ի յընտիր աւրինակէ։

Ես Գարիանէս, արդ ի յայս դառն ժամանակիս, ստացայ այս պատուական գանձիս եւ լուսալիցայ մարգարտիս, տվի գրրել յիշատակ զստերն իմոյ Մարիամին, որ հանդուցեալ է առ Քրիստոս։ Ըստ Տեառն բանին, որ ասէ թէ երանի որ ունիցի զաւակ ի Սիոնի եւ ընդանի յերուսաղէմ, եւ զարձեալ ասէ Տէրն թէ վաճառեաց զամենայն զինչս իւր եւ գնեաց զայն մարգարիտն։ Աղաչեմ զպատսարրազան քահանա(յ)ցդ, յորժամ կարդայք կամ աւրինակէք, յիշեսջիք ի սուրբ եւ յերկնաթռիչ յաղաւթս ձեր Մարիամն, եւ ծնաւղքն իւր Միրզումն, Գարիանէն, եւ եղբայրն իւր Յակոբն, հանդուցեալ եղբայրն իւր Էվաղն, եւ ամենայն արեան մերձաւորացն եւ ազգականացն, մեծի եւ փոքրու, ամէն կարդացողաց եւ լսողաց։

Ով եղբարք մանկունք եկեղեցւոյ, անմեղադիր լերուք զի կ(արս) այս էր, կարդալով կամ աւրինակելով, բերան մի յիշեցէք յերկնաթռիչ յաղաւթս ձեր զանարժան Սիմ՛ոն գծողս, եւ ծնողն իմ Սահակ, Սօլթանն, եղբարքն իմ Մխիթարն, Աստուածատուրն, պապն իմ Տէր Ղազարն, որ հանդուցեալ են առ Քրիստոս։ Յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք. ամէն։

Դարձեալ յիշեցէք զուսուցիչն իմ Ստեփանոս քահանայն, իմաստուն, հանճարեղ, հեղ եւ (հ)անդարտ, եւ ծնաւղսն Տէր Մարտիրոսն, Թանակն, ամէն։

Դարձեալ յիշեցէք եկեղեցւոյ միաբանքն նախ զդասապլուխ Տէր Մխիթարն, զաւագ Լրեց Տէր Սուլթանոս, Տէր Դաւիթն, Տէր Յակոբն, միւս Տէր Դաւիթն, Տէր Անանէն, Տէր Յովանէսն, Տէր Սարգիսն, Տէր Սիմ՛ոնն, Տէր Պետրոսն, միւս Տէր Յովանէսն, փոքր Տէր Ոսկանն։ Ով եղբարք, որ կարդայք կամ աւրինակէք, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր եւ Աստուած զձեզ յիշէ յիշողացդ եւ յիշեցելոցդ եւ ի միւսանգամ գալրոտեանն, ամէն։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 2ա.— Ես (կ) Կարապետ, եւ Մովսէս(ի)։

Թ. 26բ.— (Հուանցքում կապրով գրված է)։

Դրիգորիս Ղուկասեան։ (Սա անունն է այն գրչին, որ ձեռագրի ընկած 22—26-րդ թերթերը գրել է հետագայում նոր գրով։ Կա գրի և թանաքի նույնություն)։

Թ. 224ա.— Թվին ՌՄԾԸ-ումն (1809 թ.) բայբուռնապետ Երզանիկ Ղազար վարդապետն եկաւ Նուէրբին ի թիվ 1773-ի։

Թ. 224բ.— Թվին ՌՄ (1751 թ.), թվին 128 (Աղարիայի թվական) յունվարի 9-ի (3)։

Ես սունատուն Օհանէս նուաստս գրեցի....

№ 60

ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 301։— Գրակները՝ 23, յուրաքանչյուրը 12 թերթից, միայն վերջինը 14 թերթից։ Սկզբում առաջին պրակից առաջ կան 3 պրակ ես տեքստական նկարների և համարարքաոի, 7, 6 և 10 թերթանոց բաղկացած։ 2-րդ և 3-րդ թերթերի մէջն եղել է սկզբում մի թերթ, իսկ 8-րդ և 9-րդ թերթերի միջև երկու թերթ տեքստական նկարներով, որոնք հետագայում կորվել և հանվել են։— Մեծությունը՝ 18,7×14×6,1 սմ։— Նյութը՝ մայրուր սպիտակ մագաղաթ— Կազմը՝ արծաթապատ տախտակ։ Կողքի առաջին երեսում կա խաչելությունն նկարը, իսկ երկրորդ երեսում ճնշումով նկարված է Քրիստոսը, շրջապատված մարդկանցով։ Երկու կողքերը միացնող արծաթ պահպանակի վրա սիրուն կերպով նկարված են 12 առաքյալներ։—

Գանգրանակներ՝ սկզբում կա մի թերթ մագաղաթ, իսկ վերջում՝ երկու թերթ։— Վիճակը՝ բավարար։— Գրությունը՝ երկսյուն։— Տողերը՝ 22։— Գիրը՝ բոլորգիր։— Զարդագրությունն՝ կան բազմաթիվ գեղեցիկ տերունական նկարներ, խորաններ, կիսախորաններ, լուսանցազարդություններ և թռչնագրեր։ Կան նաև առաքյալների, սրբերի, մարդկանց, կենդանիների, թռչունների, հրեշտակների, դազաններ, ծառերի և ծաղիկների նկարներ։ Ամեն նկարի մեջ գործածված են ոսկեգույն, որդան կարմիրը և ուրիշ գեղեցիկ գույներ։ Սույն ձեռագիրը հայ մանրանկարչության գեղեցիկ նմուշներից մին է։— Ժամանակը՝ 16—17-րդ դար։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 328բ.— Աւրհնութիւն որ կարդայ, գովութիւն որ լսէ, փառք տուողին, եւ յիշատակ գրչիս, ամէն։

(Սույն ձեռագրի գիրը և նկարները խիստ նմանություն ունեն № 53 և № 55 ձեռագրերին։ Շատ հավանաբար այս երեք ձեռագրերի և՛ գրիչը և՛ ծաղկողը նույն մարդիկն են եղել)։

№ 61
ԱԻԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 281։— Գրակները՝ 23, յուրաքանչյուրը 12 թերթից։— Մեծությունը՝ 18,8×12,7×6,5 սմ.։— Նյութը՝ մագաղաթ։— Կազմը՝ մանիշակագույն թավշապատ տախտակ։ Առաջին երեսում կա ձվաձև արծաթյա մի սկավառակ, որի վրա փորագրված է Ս. Երրորդության նկարը, իսկ երկրորդ երեսում կա շքեղանկաձև բրոնզյա մի սկավառակ, որի վրա կպցված է խաչյալ Քրիստոսը։— Վիճակը՝ կազմը պոկված է և պրակները մի քիչ թուլացած։ 146-րդ և 147-րդ թերթերի մեջտեղից կտրված է երկու թերթ, ինչպես նաև վերջից պակասում է երկու թերթ։— Գրությունը՝ երկսյուն։— Դատարկ թերթեր՝ 1ա, 2բ, 3ա, 4բ, 5ա, 6բ, 7ա, 8բ, 224բ և 225ա։— Տողերը՝ 20։— Գիրը՝ բոլորգիր։— Զարդագրությունը՝ կան ավետարանիչների նկարներ, կիսախորաններ, թռչունների և գազանների, ծառերի և ծաղիկների նկարներ, խաչեր և լուսանցազարդություններ։ Որպես գույն մեծ մասով գործածված է որդան կարմիրը։ Նկարները հասարակ են և զուրկ որևէ գեղարվեստական արժեքից։— Ժամանակը՝ 15-րդ դար։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 224ա.— Աւրհնութիւն որ կարդայ, գովութիւն որ լսէ, փառք տուողին, եւ յիշատակ գրչիս, ամէն։

№ 62
ԺԱՄԱԳԻՐՔ

Թերթերը՝ 127։ Գրակները՝ 11, յուրաքանչյուրը 12 թերթից։ Մի քանի պրակներից 1—2 թերթ ընկել են։— Մեծությունը՝ 14,4×10×2,6 սմ.։— Նյութը՝ թուղթ։— Կազմը՝ կարտոն, թղթով ծածկված։— Վիճակը՝ բավարար։— Գրությունը՝ միասյուն։— Դատարկ թերթեր՝ 1ա, 126ա։— Տողերը՝ 23։— Դեղումներ՝ ճնշումով։— Գիրը՝ նոտրգիր (բոլորգիր են միայն 1բ, 2ա, 126բ, 127ա, 127բ էջերը)։— Զարդագրությունն՝ կան մի քանի հասարակ կիսախորաններ, լուսանցազարդություններ և ծաղկագրեր։— Գրիչը՝ Տանիկ Կոստանդնուպոլսեցի։— Ժամանակը՝ 1666 թ.։— Վայրը՝ Սեբաստիա։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 90ա.— Արդ, դրեցաւ ժամակարգութեան գիրս ի թվականիս ՌՃԺԵ (1666 թ.) ամին, ի քաղաքն Սեբաստիա, ընդ Տովանեաւ Սուրբ Նշանին, Սուրբ Աստուածածնին եւ Սուրբ Կարապետին, եւ այլ սրբոցն, որ աստ հաւաքեալ կան։ Զեռամբ մեղաւոր եւ անպիտան, սուտանուն Ըստամպոլցի Տան(ի)կ գրչի։ Որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, անմեղադիր լերուք, զի կարիքս իմ այս չափ էր։ Ի Հայրապետութեան Յակոբ կաթողիկոսին եւ ի յառաջնորդութեանն Մելքիսէթ վարդապետին։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 64ա.— Ո՞վ դու եղբա(յ)ր ի միտ առնես,
Տէր ողորմեաս քաղցր կառնես,
Հանապազ զԱստուած աղաչես,
Հոգ(ւ)ոյն Սրբոյ յնոր(հ) խնդր(ես)։

Թ. 90բ.— Դրոյս պարան Մելքոնին կեն(ա)ի(ցի՛)։ Ոսկեկին, որդոցն Գրիգորին, Փօլատին եւ Տէր Թորոսին, Մուզամին, մահաւսի Ղարիպին։

№ 63
ԱԻԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 397։— Գրակները՝ 26, յուրաքանչյուրը 12—16 թերթից։— Մեծությունը՝ 18,8×13,5×8,5 սմ.։— Նյութը՝ դեղնած թուղթ։— Կազմը՝ կաշվապատ տախտակ, ոսկյա բարակ թերթիկով պատված։ Առաջին երեսում ճնշումով նկարված են Հիսուսը և Մարիամ Աստվածածինը, ինչպես նաև երկու հրեշտակներ և երկու սրբեր։ Կան նաև ծաղիկներ, տերևներ և ճյուղեր։ Երկրորդ երեսում դարձյալ ճնշումով նկարված է Հիսուսը մոր գրկում, իսկ չորս կողմը կան շրջանակաձև դարդարանքներ։ Կազմի երկու կողերն էլ ծածկված են ոսկով։ Կոնակի մասը, այսինքն կարի կողմը, բարակ և երկար երկու ոսկեզրած արծաթ շերտեր մանր օղակներով իրար միացնում են կազմի առաջին և երկրորդ ոսկեպատ երեսները։ Երկար այս երկու շերտերի վրա շատ նուրբ արվեստով փորագրված են գեղեցիկ զարդանկարներ՝ ծաղիկներով, տերևներով և ճյուղերով։ Միջնադարյան հայ ոսկերչության գեղեցիկ նմուշներից մին է սա։ Գրքի բաց կողմը կա մի շերտ ոսկյա բարակ խավ, որի վրա ճնշումով նկարված են 4 խաչեր և 10 ազավնիներ։ Այս շերտը 4 տեղերից վնասված լինելով, երեք ազավնիները պոկվել և կորել են։ Վնասված այս մասը հետագայում մեխված է թիթեղյա մի կտորի վրա։ Կազմի երեք երեսների վրա կան 96 հատ կապույտ, կանաչ, կարմիր և սպիտակ, մեծ ու փոքր ապակյա

հատարակ բարեր,— Պանպանակեներ՝ սկզբում և վերջում կան երկուական թերթ մագաղաթ. միջին բոլորգիր վրացերենով գրված— Վիճակը՝ բավարար, սակայն թղթերը բավականին դեղնած և կեղտոտած— Երությունը՝ երկոյուն— Դատարկ թղթեր՝ 1ա, 118բ—120ա, 187բ—189ա, 304բ—306ա, 397բ— Տողերը՝ 27ա— Գիրը՝ բոլորգիր— Զարդագրությունը՝ կան տեղեկական նկարներ, խաչաններ, կիսախաչաններ, լուսանցազարդություններ և ժապավենաձև նեղ հրեշտակների, թռչունների, ժապիկների և այլ անարժեք նկարներ,— Գլխիր՝ Ազարիա երեց— Պատվիրատուն՝ Խոջա Քարիմ-ն— Ստացողը՝ Կիրակոս— Վերջին կազմողը՝ Զիրաբ— Նորոգողը՝ Տեր Սահակ— Ժամանակը՝ 1484 թ.— Վայրը՝ Վանի Սուրբ Աստվածածնի եկեղեցին։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 10ա.— Զմեղաւոր Կիրակոս աղաչեմ յիշման արժանի առնէք միով Աստուած (ո)դորմ(ե)տիւ։

Թ. 118ա.— Յիշեցէք ի սուրբ յաղաւթս ձեր զխոջա(յ) Քարիմն եւ զորդին իւր զԽոջէն, եւ զկենակիցն իւր զգայուստն եւ Աստուած զձեզ յիշէ, ամէն։

Թ. 186բ.— Սուրբ աւետարանչին Մարկոսի բարեխաւսութեամբն ողորմեա Քրիստոս Աստուած ստացողի սուրբ աւետարանիս Խոջայ Քարիմին եւ կենակցին իւրոյ Գուլստանին, եւ որդոյն իւրոյ Խոջին, ամէն։

Թ. 204բ.— Մէկորին Գ (3) անուն ասա եւ զմեղուցեալ գծողս յիշեայ։

Թ. 234ա.— Վարդավառին կարդա եւ զիս յիշեայ։

Թ. 304ա.— Արդ, աղաչեմ զձեզ, հարք եւ եղբարք, յիշեցէք ի սուրբ եւ ի մաքրափայլ յաղաւթս ձեր զԽոջայ Քարիմն եւ զկենակիցն իւր զԳուլստանն, եւ զանդրանիկ որդին իւր զԽոջէն, որոյ Տէր Աստուած ընդ երկայն աւուրս առնէ զնա, ամէն։

Թ. 392ա—397ա.— (Փ)առք եռակի մի տէրութեանն...

(Ա)րդ, յանդելեալ կատարեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ անարժան և սուտանուն երիցու Ազարիայի, որ զանունս ունիմ եւ զգործս ոչ։ Ի քաղաքս Վան կոչեցեալ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի տաճարիս, ի Թուաբերութեանս հայոց ՋԼԳ (1484 թ.), ի դառն եւ ի վշտաշատ ժամանակիս, որ չգիտեմք թէ ինչ տի լինի հայոց ազգիս, ի թիւնաւոր աւձից միջիս։ Շիւարեալ կանք ողորմելի, սպառեալ կանք մեղաւք հանապազ ի հոգս աշխարհի։ Աղաւթք եւ աղաչանք չունենք առ Աստուած որ մեզ ողորմի։ Զսէր աշխարհիս ունինք Աստուծոյ եղեալ թշնամի։ Հազարբերան լալ պիտի, թէ զի՞նչ տանք մեք պատասխանի, յորժամ Արարիչն դալ եւ քննալ լինի ամենի։ Եկայք արդարոցն ասէ, զմեղսասէրքն զատապարտէ։ Աւաղ ու խղդար աւաղ ճշմարիտ որ այս տի լինի։ Դարձեալ աղաչեմք զձեզ, զմանկու(ն)ցդ սուրբ Միոնի, յորժամ հանդիպիք տառիս, յիշեցէք զստացաւղն յաղաւթի, զմեռեալ տառապեալ դերի վհողացեալքն ի դերեզմանի, Քրիստոս ողորմի ա(ա)ցէք. որ հանգչին ի յաթեվանի եւ ձեզ ողորմի Քրիստոս ի յահեղ աւուրն մեծի, ի յաջակողմեան դասուն ձեզ պսակ փառաց պատրաստի, զեկայքն լսել տա(ս) ձեզ ժառանգել զդրախտն Ադենի, ամէն եղիցի։ եղիցի։

Դարձեալ աղաչեմք զմանկունսդ սուրբ եկեղեցոյ, յորժամ հանդիպիք տառիս, յիշեցէք զստացող սուրբ աւետարանիս, այսմ աստուածեղէն և երկնապարգեւ զանձիս եւ լուսափայլ մտրդարաիս, ցանկացողք եղեն սրբասէր եւ բարեմիտ տանուտէրքն Խոջայ Քարիմշէն, Խոջայ Խդրշէն եւ Խաւայ Աստոմն. եւ փափաքեցին սմա որպէս մի եղբերուն, որ ի յոլովութենէ հրահանգ մասինն բաղձա(յ) աղբերց ջրոյ ըստ բանի երջանկին Դաւթի։ Պասքեալ հացին կենաց եւ ապաւինեալ ի մարդն ճշմարիտ եւ ի զառն Աստուծոյ, զոր պատմէ աւետարարքառն Մա(տ)թէոս, վրատահացեալ յառեւծն խրոխտական ի հզօրն Յիսուս, զոր ծանուցանէ Մարկոս, աւծանդակեալ յիղն պարարակ եւ ի զուարակն արդիւնական, զոր յայտ առնէ քաջարանն Ղուկաս։ Թուն հարեալ արծուաթռիչ բարձրութեանն որ բերէ ի վերայ միջնոդան (?). որպէս զրէ որդին աւրինաց, որ բերէ դաւրինակ աստուածարանն Յովհաննէս։

(Ա)րդ, զայս պատուական ակս շաթիւդայ, առեալ իւրեանցն պաշար երկնաձիգ ճանապարհին, որ տանի առ հանդերձեալ կեանս, ստացան ի վայելումն անձանց իւրեանց եւ յիշատակ հոգոց իւրեանց եւ ծնաւղաց իւրեանց, հաւրն Թումին եւ մաւրն Շարմէլէքին, եւ այլ ամենայն արեան մերձաւորացն, ամէն։

Դարձեալ յերես անգամ աղաչեմ զձեզ, յիշեցէք ի սուրբ եւ ի մաքրափայլ աղաւթս ձեր, զրարեմիտ եւ զհեղահոգի տանուտէրն զԽաւջայ Քարիմշէն, որ փափաքելի սիրով ստացաւ զսուրբ աւետարանս ի հալալ վաստակոց իւրոց, յիշատակ հոգոյ իւրոյ եւ ծնաւղաց իւրոց Թումին եւ Շարմէլէքին, եւ կենակցին իւրոյ Գուլստանին, եւ զաւակաց իւրոց Սաֆարշին, Ամիրզատին եւ Գուլամփաշին, փոխեցեալոցն ի Քրիստոս, եւ զդեռաբոյս ծաղիկն իւր զԽաւջէն, որոյ Տէր Աստուած ընդ երկայն աւուրս առնէ զնա, ամէն։ Արդ, աղաչեմ զձեզ, յիշեցէք ի սուրբ յաղաւթս ձեր զԽաւջա(յ) Խդրշէն եւ զկոզակիցքն իւր զԱղուին եւ զմիւս կոզակիցն զԱհլի Փաշէն եւ զնորին զաւակսն զԽաւջ(այ) Սմրատն եւ

կնաւոյ Միրաքն, եւ զմիա կողակիցն զԷկի խաթունն, եւ զդեռաբոյս ծաղիկն իւր զԱալիխան Ղուլին, որոյ Տէր Աստուած ընդ երկայն աւուրս արասցէ զնոսա մինչ ի խորին ծերութիւնն, ամէն, եւ զողորմեսցի Քրիստոս Աստուած մեր Ագուպ խաթունին եւ Ահլի Փաշին, Էդդանին եւ Մուհուր Սայիթանին՝ փոխնցելոցն ի Քրիստոս, եւ յի բերանով Աստուած ողորմի ասացէք եւ Աստուած ձեզ ողորմեսցի, ամէն։

Դարձեալ յիշեցէք ի սուրբ յաղաւթս ձեր զկնաւոյ Ատոմն եւ զնորին կենակիցն զԳուլում Փաշէն, եւ զաւակսն իւր զԴովլաթ Ղուլին, եւ զՇահնիաթն, եւ զմիւս Դովլաթ Ղուլին զփոխեցեալն ի Քրիստոս եւ յի բերանով Աստուած ողորմի ասացէք եւ Աստուած ձեզ ողորմեսցի, ամէն։

Դարձեալ յիշեցէք ի սուրբ յաղաւթս ձեր զկնաւոյ Խդրշէն եւ զեղբայրն իւր զՄիրիջանն, եւ զնորին կողակիցն զԹաթար խաթունն, եւ զնորին զաւակսն զԱհիջանն, Տէր Աստուած փրկեսցէ զնա յամենայն չարէ, ամէն, (հետո ավելացված է) եւ զՓարի խաթունն, զփոխեցեալն ի Քրիստոս։

Դարձեալ յիշեցէք ի սուրբ յաղաւթս ձեր զկնաւ(այ) Խդրշէն, եւ զորդին իւր զկնաւոյ Սմբատն եւ զնորին կողակիցն զԳուլստանն, եւ զորդին զԿարապետն, եւ զքուերքն իւր զԲնքուշն եւ զԹուրան Մէլիքն, զԹարթիփշէն եւ զկնալաթ խաթունն, եւ զմեծ պապն զՇաքարն եւ զԱտոմն, եւ զքեռիքն զկնաւ(յ) Բախշայիշն եւ զնորին որդին զՍիւամոնն, եւ զմիւս քեռին զՄաղթումն, զԲանդարն եւ զնորին որդին զԱտոմն, եւ զհաւրաքոյրն զՓաշէն, եւ զմաւրաքոյրն զկնաթունշէն, եւ ուղիղ սրտի Աստուած ողորմի ասացէք։

Արգ, յերես անգեալ աղաչեմ զձեզ, յիշման արժանի արարէք զմեղուցեալ զծողս զԱզարիայ եւ զծնաւղսն իմ եւ զուսուցիչ զկարապետ քահանայն, որ նահատակեցաւ ի յԱրճէշ քաղաքի, եւ զմայրն իմ զՍաղղաթ, եւ զայլ ամենայն արեան մերձաւորքն մեր, զկենդանիք եւ զհանգուցեալքն ի Քրիստոս, եւ յի բերանով Աստուած ողորմի ասացէք, եւ Աստուած ձեզ ողորմեսցի յողջագդ եւ կարոցացողիդ, եւ նմա փառք յաւիտեանս, ամէն։

(Այս տեղից գրությունը տարբերվում է)։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զնոջայ Քարիմշէն, որ զարդարեաց զժամատունն Պետրոսի առաքելոյն, եւ զթարմէն կապեցաւ Ինքն Քրիստոս Որդին Աստուծոյ բարեխաւսութեամբ սուրբ առաքելոցն, զերկնային խորանն, զհրեշտակաց տեղին եւ զտառագաստն լուսեղեն պարդեւէ նոջայ Քարիմի հոգուն եւ իւր ննջեցելոցն, ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զնոջայ Քարիմշէն, որ զչուրջառն է տուեալ եւ զբուրվառն յառուսաց է բերեր եւ դրեր ի դուռն Պետրոսի առաքելոյն։ Քրիստոս Որդին Աստուծոյ ի յանմահական սեղան կերակրէ զնոջա(յ) Քարիմշի հոգին եւ անթառամ պսակաւն պսակէ, եւ յանուանէ կոչէ՝ թէ եկ ծառայ բարի եւ հաւատարիմ, մուտ յուրախութիւն Տեառն քո եւ պանվաղջան ուրախութիւն նմա պարգեւէ, ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զնոջա(յ) Քարիմշէն, որ զերկաթայգիր աւետարան եւ զմաշթոցն է բերեր եւ դրեր ի դու(ռ)ն սուրբ առաքելոյն Պետրոսի եւ Պողոսի։ Ով եղբարք եւ մանկունք սուրբ եկեղեցոյ, որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեցէք եւ յի բերանով եւ յոյսոր սրտի Աստուած ողորմի ասացէք։

Քահանայն եւ զնոջայ Քարիմշէն եւ զեղբայր Խդրշէն, որ եռուն զսոսկայի սուրբ աւետարանն ի դուռն սուրբ Պետրոսի առաքելոյն անջինջ յիշատակ հոգոյ իւրեանց, եթէ որ (յ)անդնարար հեռացնէ կամ ծռի կամ դրաւէ, անէծք Կայենի տացէ։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Ոսկյա կողքի առաջին երեսում գրված է)։

Վերեւը՝ Տուփս յիշատակ է նոջայի որդին։

Ներքեւը՝ Յովհաննէս Ռ կիս ...

(Ոսկյա կողքի երկրորդ երեսում գրված է)։

Վերեւը՝ նոջա(ի) Սարգիսն.

Ներքեւը՝ նոջա(յ) Գրիգորն։

(Ոսկյա կողմի բաց կողմը գրված է)։

նոջայ Աւտ. նոջայ Աւիս. նոջայ Ս(ա)ֆար. նոջայ Արան։

Թ. 118ա.— Զվերջին կազմող սուրբ աւետարանիս Տէր Սահակ եւ զծնողս իմ զՄովսէս եւ զմայրս իմ Լուսինաս, եւ զկողակիցն իմ զՄրոսն եւ զորդոյն՝ զՍուքիասն եւ Յարութիւն, եւ զսոսին՝ Գոմիդէն, Աալիխան, Նազլուխան, Բէկզադէն, յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք, ամէն։

Թ. 118ա.— Զվերջին կազմող սուրբ աւետարանիս բարեմիտ եւ աստուածասէր այրս Աստուծոյ Զիրաք, բանզի արար լաւ բարութիւն եւ նա Ճարոգել զսուրբ աւետարանս յիշատակ հոգոյ իւրոյ եւ ծընողացն, հարսն Շիրաքին եւ մարսն Մարգարտին, եւ կողակցոյ Յուրիխանին, եւ որդոցն՝ Ուտուֆին եւ Մարխասին, եւ զսոսին՝ Փարիխանին եւ Լալիխանին, Թոլվախանին, եւ եղ(բ)արն Ալիսասին, Սիմէոնին, Վարդանիսին, եւ քոյրն խաթունաղին, զկենդանին եւ զհանգուցեալսն եւ որք հանդիպիք սմա կարդալով եւ կամ տեսանելով, յի բերանով եւ ուղիղ մտաք Աստուած ողորմի ասացէք Զիրաքին եւ Աստուած ձեզ ողորմեսցի ի միւս անգամ դալստեանն, ամէն։

(Շարունակելի)

ՀԱՆԳԻՍ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ Տ. ԳԵՈՐԳ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐՍԼԱՆՅԱՆԻ

Հունիսի վերջերին Կոստանդնուպոլսից ստացված հեռագիրը գուժեց Հայ Եկեղեցու հավատարիմ հոգևորական, նվիրված հայրենասեր ու էջմիածնասեր, Կոստանդնուպոլսի պատրիարքական նախկին տեղապահ Տ. Գեորգ արքեպիսկոպոս Արսլանյանի ողբերգական մահը։

Բովանդակալից ու բեղուն, կորովի ու հաստատակամ է եղել հոգելույս սրբազանի ավելի քան ութսունամյա կյանքը։

վում է վարդապետ Սեբաստիայի առաջնորդ Տ. Պետրոս եպիսկոպոսի կողմից և վանահայր նշանակվում Ս. Նշան վանքում։ Այնուհետև առաջնորդական պաշտոններ է վարում Ակնա, Մալաթիայի, Խարբերդի, Ռոտոսթոյի և Ադանայի թեմերում։

Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին, Գեորգ Ծ. վարդապետ Արսլանյանը, լինելով Ադանայի թեմական առաջնորդ, իր հոտի հետ միասին ենթարկվում է

Հանգուցյալը ծնվել է 1867 թվին Ակնա Բինկյան գյուղում։ Կրթություն ստացել է Բինկյանի Մեսրոպյան և Կոստանդնուպոլսի Կենտրոնական վարժարաններում։

1896 թվից սկսած, նա նվիրվում է հայ մանուկների, առավելապես որբերի դաստիարակության գործին, վարելով նախ Բինկյանի դպրոցի, ապա, հաջորդաբար, Տիվրիկի, Սեբաստիայի և Եվդոկիայի որբանոցների տեսչությունը։ 1900 թվին նա Ֆեոնադզրսուլթանական Թյուրքիայի կազմակերպած համահայկական հալածանքներին։ 1915 թվին նա իր հոտի հետ աքսորվում է Սիրիայի անապատները և համազգային աղետի ահարկու վշտի ազդեցության ներքո կաթվածահար է լինում և երկար պառկում Հալեպում։ Ապաքինումից հետո նա կրկին ստանձնում է Ադանայի առաջնորդության պաշտոնը։ Աննկուն եռանդով ու երիտասարդական կորովով, անդոզ ու անդադար, դիշեր-ցերեկ աշխատում

է ահավոր աղետից վերապրած ու տարագրությունից վերադարձած ժողովրդին սնուցանելու, հագվեցնելու, տեղավորելու, որբանոցներ հիմնելու, դպրոցներ վերաբանալու, անապատաններին պատսպարելու, փլատակները կառուցելու ծանր ու դժվարին գործերի կազմակերպմանը։

1921 թվին նա տեղափոխվում է Կոստանդնուպոլիս և նշանակվում Բերայի քառոզիչ։ Իր մեծ արժանիքների համար, 1922 թվին Էջմիածնում ձեռնադրվում է եպիսկոպոս՝ երջանկահիշատակ Գեորգ Ե. Կաթողիկոսի կողմից։ Նույն թվի վերջին ընտրվում է պատրիարքական տեղապահ և հաջողությամբ վարում է այդ պաշտոնը մինչև 1927 թիվը։ Երկրորդ անգամ տեղապահ է ընտրվում 1945 թվին և այդ պաշտոնը վարում մինչև իր մահվանից մի քանի ամիս առաջ։

Հանգուցյալ սրբազանը բացառիկ հաստատակամություն և նվիրվածություն է ցուցաբերում առանձնապես վերջին տարիներս Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի միասնականությանն պաշտպանման գործում։ Ուքսունամյա պատկառելի հասակում նրա մղած պայքարը հակասահմանադրականների և հակէջմիածնականների դեմ բարձր է գնահատված բոլոր գիտակից ու եկեղեցասեր հայերի առավել ևս Ամենայն Հայոց արդարադատ Հայրապետի՝ Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսի կողմից։

Հոգելույս սրբազանը, բացի վարչական և հովվական գործունեությունից, ունի նաև գրական վաստակ։ Սկսած 1890-ական թվականներից, նա աշխատակցել է բազմաթիվ թերթերի, հանդեսների և տարեցույցների։ Առանձին գրքերով հրատարակվել են նրա մի շարք արժեքավոր աշխատությունները։

Տերը լուսավորե նրա հոգին։

ԵՐՎԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ

Խորը ծերության հասակում, երկար հիվանդությունից հետո, կնքեց իր մահկանացուն հայագիտ Երվանդ Հովակիմի Շահազիզը։

Դժվար է հակիրճ խոսքերով որոշել նրա տեղն ու դերը հայ իրականության մեջ. նա հանդես է եկել որպես մանկավարժ, պատմաբան, բանասեր և հասարակական գործիչ։

Շահազիզը ծավալել է գիտական խոշոր գործունեություն։ Նա հայ գիտական մտքի բազմավաստակ այն մշակներից մեկն է եղել, որ աչքի է ընկել իր ինքնուրույնությամբ, խորաթափանց մտքով, կուռ տրամաբանությամբ, սկզբունքային համառությամբ, աշխատասիրությամբ և ընդհանրացումների մեծ կարողությամբ։ Նրա կյանքը մշտական



Երկար, շա՜տ երկար տարիներ Երվանդ Շահազիզը անձնվիրաբար ծառայել է իր սիրելի ժողովրդին։ Անկեղծ հայրենասերն իր ամբողջ գիտությունն ու եռանդն ի սպաս է դրել իր Հայրենիքի կուլտուրայի ու գիտության զարգացման վեհ գործին։

Շահազիզը մեծ սիրով ու եռանդով աշխատել է մանկավարժության ասպարեզում։ Նա եղել է պահանջկոտ ու աշխուժ տեսուչ, սիրված ու հարգված ուսուցիչ և աչքի է ընկել իր հոգատար վերաբերմունքով դեպի աշակերտությունը։

տքնություն է եղել հանուն հայ գիտական մտքի հարստացման ու զարգացման։ Մերուն ազարդ գիտնականը երբեք գրիչը վար չի դրել։ Եվ աշխատանքը նրան հասցրել է խոշորագույն գիտնականի աստիճանին։

Երվանդ Շահազիզն իր բազմամյա ու անխոնջ գործունեությամբ հայ պատմա-բանասիրական գրականության գանձարանը հարստացրել է բազմաթիվ մեծարժեք գործերով, որոնք կարևորագույն ներդրումներ են հայ հասարակական կյանքի ու կուլտուրայի ուսումնասիրության համար։ Շահա-

ղիզը գրել է ուսումնասիրություններ պատմության և ազգագրության հարցերի շուրջը։ Այդ ուսումնասիրությունների շարքին են պատկանում նրա «Նոր-Նախիջևանը և նոր-նախիջևանցիք», «Պատմական ակնարկներ», «Հայոց վանքերը և նրանց դերը հայոց կյանքում», «Հին Երևանը», «Ջերմեզիա և չերմեզանայք», «Աշտարակի պատմությունը» և այլ գործեր։

Շահազիզը անգնահատելի աշխատանք է կատարել, հատկապես, գրականագիտության բնագավառում։ Խորապես գիտակցելով ու գնահատելով գրական փաստաթղթերի արժեքը, նա մեծ եռանդ է հանդես բերել այդ փաստաթղթերի հավաքման և ուսումնասիրության գործում։ Շահազիզը կազմել է Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Ս. Շահազիզի հեղինակությունների հետ կապված փաստաթղթերի ժողովածուները, որոնց անվանել է «դիվաններ՝ օժտելով դրանք արժեքավոր ծանոթագրություններով։ Դիվաններում զետեղված նյութերը նպաստում են հիշյալ գրողների կյանքի ու գործունեության առավել փաստալից ու կոնկրետ պատկերացմանը։ Տասնինններորդ դարի հայ հասարակական կյանքի և կուլտուրայի պատմության տեսակետից ևս շատ հետաքրքիր նյութեր կան դիվաններում։ Հարկ է նկատել, որ դիվանները անսպառ ու բազմաբովանդակ նյութեր են տալիս թե՛ բանասերին և թե՛ պատմաբանին։

Երվանդ Շահազիզը բացառիկ սեր է ունեցել կենսագրական ժանրի նկատմամբ. գրել է Մ. Էմինի, Մ. Գոգոլյանի, Գ. և Ս. Պատկանյանների կենսագրությունները, Գ. Սունդուկյանի կենսագրական նոթերը, Խ. Գալֆայանի կյանքը և Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Ս. Շահազիզի լիակատար կենսագրությունները։ Վերջին երեքը արժանի են բարձր գնահատության։ Դրանք կատարյալ գոհարներ են։ Բազմաթիվ են Երվանդ Շահազիզի գիտական խոշոր գործերը։

Բացի վերոհիշյալներից, նա գրել է չափազանց մեծ թվով հոդվածներ, որոնք նվիրված են պատմագիտական, բանասիրական խնդիրներին։ Նրա այդ հոդվածները լույս են տեսել հայ պարբերական մամուլում։ Շահազիզի գրեթե բոլոր գործերն անգնահատելի գանձեր են հայ կուլտուրայի և պատմության ներկա և ապագա ուսումնասիրողների համար։

Երվանդ Շահազիզը հայ գիտնականների հին սերնդի երջանիկ ներկայացուցիչներից մեկն եղավ։ Իր հետևելով հայ գիտնականների անցյալի անհրապույր ուղին, նա թեակոխեց Սովետական լուսապայծառ դարաշրջանը, երբ հայ կուլտուրան ու գիտությունը աննախընթաց չափով զարգացան և ծաղկեցին։

Շահազիզն ապրեց գիտնականի երջանկությունը, տեսնելով իր գիտական-հասարակական չափազանց բեղմնավոր գործունեության բարձր գնահատությունը և իր հարազատ ժողովրդի գուրգուրանքն ու հոգատարությունն իր վերաբերմամբ։

Բարձր գնահատելով Երվանդ Շահազիզի բազմամյա բեղմնավոր աշխատանքը հայ կուլտուրայի ու հասարակական գիտության բնագավառում, Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Գրականության ինստիտուտի գիտական խորհուրդը 1944 թվականին նրան տվեց գիտությունների դոկտորի գիտական աստիճան, առանց դիսերտացիայի պաշտպանության։

1946 թվին Հայաստանի կառավարությունը Ե. Շահազիզի ծննդյան 90 և գիտական-հասարակական գործունեության 65-ամյակի կապակցությամբ շնորհեց նրան գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում։

Մեծանուն գիտնականը Մայր Աթոռ Ս. Էջմիածնին մոտիկ կանգնած մտավորականներից էր և Նորին Ս. Օծության Գեորգ Զ. Կաթողիկոսի մտերիմ բարեկամը։ Ազգային-Եկեղեցական ժողովի կողմից նա ընտրվել էր Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ, և նա պարտաճանաչությամբ կատարեց իրեն վստահված պատասխանատու պարտականությունը մինչև իր մահիճ ընկնելը։

Ե. Հ. Շահազիզը «Էջմիածին» ամսագրի գործուն աշխատակցող բանասերներից էր։ Ամսագրի գրեթե բոլոր համարներում նա ունի 19-րդ դարի հայ հասարակական գործիչներին նվիրված ուսումնասիրություններ կամ հուշեր, որոնք բացառիկ արժեք ունեն հայոց պատմագիտության և գրականագիտության համար։

Երվանդ Հովակիմի Շահազիզի հիշատակը միշտ վառ կմնա մեր բոլորիս սրտերում։

ԼԵՎՈՆ ԱՃԵՄՅԱՆ

Հովսեփ Գրիգորյանից (Ճեմարանցի) և Երվանդ Շահադիդից հետո դաժան մահը խլեց մեզանից նաև մեր ամսագրի հարգված աշխատակից Լևոն Աճեմյանին։

Լևոն Գեորգի Աճեմյանը ծնվել է 1888 թվին Վան քաղաքում, մանկավարժի ընտանիքում։ Իր ծննդավայրի Հայոց կենտրոնական դպրոցն ավարտելուց հետո, ուսումնածարավ պատանին, բազմապիսի դժվարություններ հաղթահարելով, 1906 թվին անցնում է Կովկաս՝ էջմիածնի Գեորգյան Ճեմարանում սովորելու համար, բայց չի հաջողվում ընդունվել։ Կովկասից նա անցնում է Պարսկաստան և երեք տարի ուսուցչական պաշտոն վարում Ուրմիայի հայոց ծխական դպրոցում։

Ուսումնատենչ երիտասարդն այնուհետև գալիս է Կոստանդնուպոլիս և շարունակում իր կրթությունը Հայոց կենտրոնական վարժարանում։ Ավարտելով վարժարանը, նա, ավելի պատրաստված, վերսկսում է մանկավարժական իր գործունեությունը։ 1912—1915 թվերին, որպես ուսուցիչ, ծառայում է Տյորթ-Յոլի (Կիլիկիա) Քելեկյան որբանոցում։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հանգուցյալը ճաշակում է այն բոլոր տառապանքները, ինչ որ բաժին էր ընկել մեր արևմտահայ հայրենակիցներին։ Թյուրք կառավարության մշտական հետապնդումից ազատվելու համար, 1918 թվին նա հաստատվում է Աղեքսանդրիայում՝ աշխատելով որպես մանկավարժ հայկական դպրոցներում։ Նա հետագայում աշխատում է նաև Գահիրեի Նուպարյանի անվան հայոց դպրոցում որպես տեսուչ և Գալստյանի անվան հայոց դպրոցում՝ որպես ավագ դասատու։ Մանկավարժական աշխատանքին զուգընթաց, հանգուցյալը ունեցել է հասարակական բեղուն և եռուն գործունեություն։

Աճեմյանը, առանց պետական կամ այլ օժանդակության, 1925 թվից մինչև 1947 թիվը, ամբողջ 22 տարի, հրատարակել է «Փունջ» մանկական երկշաբաթաթերթը։ Արտասահմանյան պայմաններում, այդ ուղղակի հերոսական գործ է հանդիսացել, որ պահանջում էր ժամանակի, աշխատանքի և դրամական միջոցների տեսական զոհողություն։ Նա կազմել է նաև հայոց լեզվի և հայ ժողովրդի պատմության նախնական և միջնակարգ դասարանների դասընթացները, որոնք մինչև օրս էլ գործ են ածվում արտասահմանյան հայկական դպրոցներում։

Ամբողջ քառորդ դար, իր դառն պանդխտության մեջ, այս հայրենասեր գործիչը մշտապես խանդավառված էր Սովետական Հայաստանի ծաղկումով ու վերելքով։ Եվ երբ Հայրենիքի դռները բացվեցին տարագիր հայության համար, Աճեմյանը առաջիններից մեկը եղավ, որ վերցնելով իր ընտանիքը, Հայրենիք եկավ եգիպտահայ հայրենադարձների առաջին քարավանի հետ։

Նա հոր դահոս երջանկություն ունեցավ ապրելու և աշխատելու իր սեփական, հարազատ պետության հովանու ներքո, սեփական, հարազատ ժողովրդի հոգատարությամբ շրջապատված։ «Էջմիածին» ամսագրի համար գրի առած իր չերմաշունչ հոդվածներով և ակնարկներով, որոնք մեծ մասամբ պատկերում էին Հայրենիքի պայծառ առօրյան, նա հաղորդակից էր դարձնում Սփյուռքի հայությանը իր տպավորություններին։

Հայրենիք եկած հենց առաջին օրերից, Աճեմյանը աշխատում էր Ալեքսանդր Մյասնիկյանի անվան Պետական հանրային գրադարանում, որպես ավագ բիբլիոգրաֆ։ Նա օրինակելի և բարձրորակ աշխատող էր համարվում և վայելում էր գրադարանի ղեկավարության և աշխատակից ընկերների հարգանքն ու գուրգուրանքը։

Հանգուցյալ Աճեմյանը՝ այս ազնիվ հայրենասերը, երբեք չի մոռացվի բոլոր նրանց կողմից, ովքեր մոտիկից ծանոթ են նրա համակրելի կերպարին։

Հարգա՞նք իր անթառամ հիշատակին։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, առաջին մաս

(Հայպետհրատ, Երևան, 1951 թ., 345 էջ)։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի նախաձեռնությամբ մի խումբ մասնագետներ կազմել են հայ ժողովրդի պատմության դասընթացը երկու հատորից, որոնցից առաջին հատորը ընդգրկում է հնագույն շրջանից մինչև Արևելյան Հայաստանի միակցումը Ռուսաստանին (XVIII դարի առաջին քառորդը), իսկ երկրորդ հատորը՝ հայ ժողովրդի պատմության նոր և նորագույն շրջանները։

Հույս տնտած հատորը բաղկացած է վեց բաժիններից՝ ա) Նախնադարյան համայնական և սարկատիրական հասարակությունը Հայկական լեռնաշխարհում, բ) Հայկական սարկատիրական պետության առաջացումն ու զարգացումը, գ) Վաղ ֆեոդալիզմի դարաշրջան, դ) Զարգացած ֆեոդալիզմի դարաշրջան, ե) Հայաստանի տնտեսական, քաղաքական և կուլտուրական անկումը XIV—XV դարերում և զ) Հայաստանը Իրանի և Թյուրքիայի լծի տակ և հայ ազատագրական շարժումները։

Դասագիրքը բացվում է Արարատների գունատիպ նկարով։ Ներածական մասում տրված է Հայաստանի պատմական համառոտ աշխարհագրությունը։

Հայ ժողովրդի պատմությունը սկսում է «Նախնադարյան-համայնական հասարակությունը» գլխով։

Այս գլխին հաջորդում է «Հնագույն ցեղային միությունները ու պետությունները Հայկական լեռնաշխարհում» գլուխը, ուր բերված են արժեքավոր տեղեկություններ Հայաստանի նախաբնիկների մասին՝ հնձերի, ուրարտի-միտանիների, Հայաստանի բնակիչների, նաիրյան ցեղերի մասին։ Ավելի հանդամանորեն տրված է Ուրարտուի պատմությունը. ոգ. տագործված են Սովետական Հայաստանում կատարված պեղումներից հայտնաբերված նոր հարուստ տվյալները։

Դիտական նոր մեկնաբանություն է տրված հայ ժողովրդի կազմավորմանը, հայերին համարելով տեղաբնակ ժողովուրդ՝ Հայաստանի նախաբնիկների ձուլումից առաջացած։

Ընդարձակ տեղ է տրված հայկական քաղավորությունների առաջացմանն ու միավորմանը, Արտաշեսյան անկախ քաղավորության հիմնվելուն (Տիգրան Մեծ, Արտավազդ և մյուսները)՝ շեշտադրելով հայ ժողովրդի պայքարը հռոմեական գաղութարարների դեմ։

Հատուկ ուշադրություն է դարձված հայ գրի և դրականության ստեղծման վրա V դարում՝ կանգ առնելով մեզ հասած մատենագրական կարևոր երկերի և պատմական հուշարձանների վրա։

Դասագրքում ընդարձակ տեղ է տրված հայ ժողովրդի հերոսական պայքարին պարսկա-բյուզանդական զավթիչների դեմ IV—V դարերում։

Սկզբնաղբյուրների հիման վրա մշակված և ավելի կոնկրետացված են հայ ժողովրդի պայքարը խալիֆայի դեմ VII—X դարերում և Հայաստանի տնտեսական տեղաշարժերը խալիֆայի շրջանում։ Մեծ ուշադրություն է դարձված սոցիալական շարժումների վրա (պավլիկյաններ, թոնդրակեցիներ և այլն)։

Ընդարձակ տրված է նաև հայ ժողովրդի պատմությունը X—XIV դարերում— հայ ժողովրդի պայքարը բյուզանդական ագրեսիայի և սելջուկների դեմ և հայկական քաղավորության անկումը, հայ և վրաց ժողովուրդների պայքարը սելջուկյան լեմիրությունների դեմ, Կիլիկիայի հայկական քաղավորության ծագումն ու զարգացումը, նրա հասարակական-քաղաքական կարգը, Հայաստանը մոնղոլական տիրապետության ժամանակներում, Հեթում-Թիմուրի արշավանքները և այլն։

Հաջող լուսաբանված են Իրանի ու Թյուրքիայի տիրապետության շրջանները ու հայ ժողովրդի պայքարը՝ ուսաց օգնությամբ ազատագրվելու պարսկա-տաճկական արյունոտ լծից։

Պետք է նշել, որ ներկա դասագիրքը, ի տարբերություն մինչև այժմ գոյություն ունեցող հայ ժողովրդի պատմության դասագրքերի, կազմված է գիտական բարեխիղճ տվյալների հիման վրա— ճշտված են պատմական շատ իրադարձություններ, նոր մեկնաբանություններ են տրված նրանց։ Ներկա դասագրքում, քաղաքական պատմությունից բացի, խոշոր տեղ է տրված սոցիալ-տնտեսական հարաբերություններին։ Հարուստ են առանձնապես գիտությունը, կուլտուրային և գրականությանը վերաբերվող բաժինները, որոնք տրված են գրեթե բոլոր ժամանակաշրջանների համար։

Դասագրքի վրա աշխատել են Պատմության ինստիտուտի լավագույն մասնագետները՝ պրոֆ. Բ. Բ. Պիոտրովսկին, դոց. Բ. Ն. Առաքելյանը, դոց. Մ. Ս. Հարությունյանը, դոց. Ս. Տ. Երեմյանը, պրոֆ. Գ. Գ. Մելիքայանը և պրոֆ. Ա. Ռ. Հովհաննիսյանը։ Գիրքը խմբագրել են դոց. Բ. Ն. Առաքելյանը և Ա. Ռ. Հովհաննիսյանը։

Գիրքը ձևավորված է շատ ճաշակավոր։ Գրքում տեղավորված են բազմաթիվ արժեքավոր նկարներ, որոնք պարզ են և տիպական։ Կան մեր գրչության արվեստից բերված գունատիպ գեղեցիկ նմուշներ։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի նախաձեռնությամբ լույս տեսած հայ ժողովրդի պատմության ներկա դասընթացը շնորհակալ գործ է։

Ա. Ա.

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՂԱՅԱՆ ԷԴՎԱՐԴ, «Վատիներեն լեզվի քերականություն», *գիրք 1-ին, Հնաբանություն։ Պետական համալսարանի հրատարակչություն, Երևան, 1950 թ., 180 էջ, տիրաժ՝ 1.000։*

«Հայ ժողովրդի պատմություն», *1-ին մաս։ Խմբագրություն՝ Բ. Ն. Առաքելյանի և Ա. Ռ. Հովհաննիսյանի։ Հեղինակներ՝ Պիոտրովսկի Բ. Բ., Առաքելյան Բ. Ն., Հասրաթյան Մ. Ս., Երեմյան Ս. Տ., Միքայելյան Գ. Գ., Հովհաննիսյան Ա. Ռ.։ (Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտ)։ Հայպետհրատ, Երևան, 1951 թ., 346 էջ, իլյուստրացիաներով, տիրաժ՝ 25.000։*

ՂԱՓԱՆՑՅԱՆ ԳՐԻԳՈՐ, «Լեզուների ծագումնաբանական դասակարգման հիմունքներ և լեզվի զարգացման ստադիալականության մասին Ն. Մարի հայացքների քննադատություն»։ *Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1951 թ., 27 էջ, տիրաժ՝ 2.000։*

ԱԹԱՅԱՆ ՌՈԲԵՐՏ, «Ջեռնարկ հայկական ձայնագրության»։ *(Երևանի Կոմիտասի անվան Պետական կոնսերվատորիայի թեորետիկ-կոմպոզիտորական ամբիոն)։ Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 60 էջ, տիրաժ՝ 1.000։*

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՍԱՄՍՈՆ, «Ալեքսանդր Սպենդիարով»— *կոմպոզիտոր։ (Կենսագրական և ստեղծագործական ակնարկ)։ Հայպետհրատ, Երևան, 1951 թ., 110 էջ, տիրաժ՝ 1.000։*

ՀՈՎՆԱՆ ԳՈՒՐԳԵՆ, «Մարսիվ Գորկին և հայ կոլտուրան»։ *(Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության ինստիտուտ)։ Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1951 թ., 269 էջ, տիրաժ՝ 3.000։*

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՉԳԵՆ, «Մաքուր ժամանակագրություններ 13—18-րդ դ. դ.»։ *(Մատենադարանում պահվող ձեռագրերից քաղված)։ (Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտ, «Նյութեր հայ ժողովրդի պատմության», գիրք 3-րդ)։ Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1951 թ., 452 էջ, տիրաժ՝ 1.200։*

ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ, «Երկեր»։ *Հայպետհրատ, Երևան, 1951 թ., 493 էջ, տիրաժ՝ 5.000։*

ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ ԳԱԲՐԻԵԼ, «Երկերի լիակատար ժողովածու», *4 հատորով, հատոր 1-ին («Գիշերվան սարը խեր է», «Խաթաբալա», «Օսկան Պետրովիչն էն կինքումբ», «Եվ այլն կամ նոր Դիոգինեսա», «Էլի մեկ գոհ»)։ Տեքստը պատրաստեց և ծանոթագրեց Ռ. Զարյան։ (Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտ)։ Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1951 թ., 590 էջ, տիրաժ՝ 5.000։*

ՇԻՐԱԶ ՀՈՎՀԱՆՆԵՍ, «Գիրք խաղաղության և սիրո»։ *(Բանաստեղծություններ և պոեմներ)։ Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 138 էջ, տիրաժ՝ 5.000։*

ՍԵՐՎԱՆՏԵՍ ՄԻԳԵԼ, «Հնարամիտ Հիդալգո Դոն Կիխոտ Լամանչեցի», *հատոր 2-րդ, խմբագրություն և առաջաբան Հ. Մամիկոնյանի։ Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 570 էջ, նկարազարդ, տիրաժ՝ 5.000։*

ՖՅՈԴՈՐՈՎ Ա. Ֆ., «Ինդիատակյա մարդկությունը գործում է», *գիրք I և II։ Գրական մշակում Եվգ. Բոնդարենկոյի, թարգմանություն Ա. Վարդապետյանի։ Հայպետհրատ, Երևան, 1951 թ., 584 էջ, տիրաժ՝ 6.000։*

ՇԻՐՎԱՆԶԱԴԵ, «Երկերի լիակատար ժողովածու», *հատոր 6-րդ («Գիշխանուհի», «Եվգինե», «Ունե՞ր իրավունք», «Պատվի համար», «Արմենուհի», «Զար ոգիս», «Նամուս»)։ Հայպետհրատ, Երևան, 1951 թ., 603 էջ, տիրաժ՝ 10.000։*

ՌՈՒՄԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ, «Երկերի ժողովածու», *հատոր 1-ին։ (Բանաստեղծություններ, լիպենդներ, յայլադներ, առակներ, 1881—1922 թ. թ.)։ (Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտ)։ Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 788 էջ, տիրաժ՝ 5.000։*